

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱՐՎԱՆ Ա. ԿԱՅԹՈՂԻԿՈՍ — Հայրապետական Պատգամ՝ ՄԵԾԻ Տան Կիլիկիոյ  
Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովին ..... 575

**ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ** ..... 583

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

ԽՄԲ. — Վեհափառ Հայրապետին ցարդ իրապարակած  
Կոնդակներուն եւ Օրինութեան Գիրերուն հաւաքածոն ..... 601

## ՀԱՅ ՄՈՐ ՏԱՐԻ

ԳԵՂԱՆԻ ԵԹԻԵՄԵՉԵԱՆ — «Տիկնայք փափկասունք» ..... 605

## ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ

ԹԱՎԱՐ ՏԱՍՏԱՊԵՏԵԱՆ — Հայ Սուրբեր մինչեւ ԺԵ. Դար (Վաւերագիրներ) ..... 607

## ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ

ՉԱՐԵՅ ԱՐՁ. ԱՉԱՌՈՐԵԱՆ — Սերտողութիւն Մատթեոսի Աւետարանին ..... 611

Տ.Ա. — Ներածութիւն Սուրբ Գիրքի սերտողութեան ..... 623

ՎԱՐԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Վերակենդանացումի մասին ..... 628

ՄԱԿԱՐ ՎՐԴ. ՎՃԳՎՐԵԱՆ — Սրբութիւնն ու անարատութիւնը (Մաքրութիւնը) ..... 635

ԲԱՐԲԱՐ ԹՈՓՃԵԱՆ — Ջուրը Աստուածաշունչին մէջ ..... 645

## ԾԻՍԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱՐՁ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — Ծիսական գիտելիքներ ..... 648

## ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՒՐԱԿԱՆ

ԿՈՐԻՒՆ ԱՐՁ. ՊԱՊԵԱՆ — Պայազատ Ռոստոմ Խան Էնակօլօփեանց ..... 652

ՆԱՐԵԿ ԱՐՁ. ԱԼԵԽՄԵՉԵԱՆ — Եկեղեցւոյ պատմութիւն (Թրգմ.) ..... 667

## ՅՈԳԵՒՐՈ ԳԵՂԱՐՈՒԵՍ

ՅԱԿՈԲ ՄԱՍՈՒԿԵԱՆ — Օրիներգ՝ Սուրբ Ներսէն Ծնորհալի Հայրապետին ..... 672

ՄԱՐԻԱՆԱ ՊԵՐԹԻՉԵԱՆ-ՂԱՉԱՐԵԱՆ — Վերքերովդ բժշկուեցայ,  
Բժշկուած ազգեր ..... 674

## ԱՐԽԻՒՏԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ

ԽԱՉԻԿ ԶՐՆՅ. ԳՈՅՈՅԵԱՆ — Գոյափոխութիւն բարոյական աշխարհին մէջ (Բ.) .. 676

## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ — Քրիստոնեան հանդերձեալ կեանքին մէջ  
ի՞նչ յոյս եւ ակնկալութիւն ունի ..... 685

<b>ՊԱՐԳԵՒՏՐՈՒՄ</b>	692
<b>ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ</b>	694
<b>ՏՕՆԱԿԱՆ</b>	697
<b>ՄԻԶ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ</b>	699
<b>ԼՈՒՐԵՐ ԴՊՐԵՎԱՆՔԵՆ</b>	701
ՆԱՐԵԿ ԱՐՅ. ԱԼԵՍԵՉԵԱՆ — Տեսական Տեղեկագիր	705
ԹՐԻՍՏՈՓՈՐ ՄԻԹՎԵԼԵԱՆ — «Դպրեվանքի մատենաշար»ի հրատարակութեան առիթով	712
ՎԻԳԵՆ ՍՐԿ. ՋԻՒԶԼԵԱՆ — Դպրեվանքի նորահաստատ երիզաշարը	713
<b>ՁԵՌԱՆԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ</b>	715
ԾԱՐԵ ԵՊՍ. ՓԱԼՍՈՍԵԱՆ — Ծառայութեան մէջ ծաղկիլ, պտղաբերիլ եւ երշանկանալ	717
ՊԱՐՈՅՐ ԱԲԴ. ԾԵՐՆԵՉԵԱՆ — ԻԱ. դարը եւ Դպրեվանքին առաքելութիւնը	720
<b>ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ</b>	722
<b>ԹԵՄԱԿԱՆ</b>	726
<b>ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ</b>	727
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՈՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԵ	732

## ՓՈԽԱՌԱ ԽՄԱՋԱՐԱԿԱՎԱԼԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ա.Ր.Ս.Մ Ա. Կ.Մ.Պ.Ղ.Ի.Կ.Ո.Ս.Ի  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՐԸ

### ՄԵԾԻ ՑԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

12-15 ՅՈՒՆԻՍ 2013

Ա.ՆԹԻԼԻՍ.Ա, ԼԻԲԱՆԱՆ

Հայրապետական օրինութեամբ, Քրիստոնէական ջերմ սիրով ու ազգային վառ ապրումներով կ'ողջունենք ձեզ, որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոսութեան Ազգ. Ընդհանուր ժողովի պատգամաւորներ:

Մեր Սուրբ Արքունի ենթակայ թեմերուն կողմէ ընտրուած էք, որպէսզի հաւաքարար Քննարկումի ու արժենորումի ենթարկէք Հայրապետական մեր Սուրբ Արքունի կատարած առաքելութիւնը՝ անցնող շուրջ հինգ տարիներու ընթացքին: Արդարեւ, ինչ որ կը կատարուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոսութեան կողմէ, սովորական իմաստով գործունեութիւն չէ, այլ՝ իր էութեամբ, խորքով ու նպատակով հաւատի առաքելութիւն է ու ազգային ծառայութիւն: Եկեղեցին ու ազգը սերտօրէն շաղախուած են մեր Սուրբ Արքունի հաւաքական կեանքին, առաքելութեան ու ծառայութեան մէջ: Տարանցատումի որեւէ փորձ՝ խոտոր կը համեմատի մեր եկեղեցւոյ կոչումին եւ պատմութեան ընթացքին մեր ժողովուրդի կեանքէն ներս եկեղեցւոյ

կեղրոնական ներկայութեան եւ ունեցած առանցքային դերակատարութեան:

Արդարեւ, Մեր Կաթողիկոսական ընտրութեան եւ օժման առաջին իսկ օրէն, հետեւեալ երեք սկզբունքները դարձուցինք Մեր հովուապետական ծառայութեան հիմքը, հէնքը ու նպատակը.— Առաջին, եկեղեցին սուկ կառոյց չէ, այլ՝ Քրիստոսակեղրոն սիրով, հաւատքով ու յոյսով շաղկապուած մեր ժողովուրդի գաւակներուն ամբողջութիւնն է: Երկրորդ, Մեծի Տաճի Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը սուկ վայր չէ, այլ՝ իր էութեամբ ու կոչումով հաւատքի վկայութիւն է ու ժողովրդանուէր ծառայութիւն: Երրորդ, Կաթողիկոսարանը սուկ վարչական կեղրոն չէ, այլ՝ իր թեմերով ու ժողովուրդով Կաթողիկոսութիւն է: Ոչ միայն Մեր պատգամներուն նամրով յանախակի կերպով շեշտեցինք այս երեք սկզբունքներուն կենսական կարեւորութիւնը, այլ փորձեցինք զանոնիք կեանիք ու գործի վերածել Մեր նախաձեռնած ծրագիրներուն, կատարած աշխատանքներուն ու ծաւալած փոխ-յարաբերութիւններուն նամրով:

Մեծի Տաճի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեանիքին ու վկայութեան վրայ նետուած հպանցիկ ակնարկն իսկ բաւարար է ըմբռնելու, հոգեւոր ու ազգային այս կեղրոնին կողմէ կատարուող բազմատարած առաքելութեան ու լայնածաւալ ծառայութեան հարազատ բնոյթը, իւրայատուկ շեշտը ու նշմարիտ նպատակը: Իր բազմազանութեամբ ու այլազանութեամբ, իր խորքով ու ծաւալով, իր որակով ու քանակով փաստօրէն պետութեան մը համազօր գործ է որ կը կատարուի Անթիլիասի Մայրավանքին մէջ: Կաթողիկոսարանին կողմէ կատարուող ծառայութիւնը հաւաքական նիզի արդիւնք է, ուր ներկայ են հոգեւորական թէ աշխարհական, ժողովական թէ պաշտօնեայ, իւրաքանչիւր բան մը դնելով, Աւետարանի բառերով՝ «զոյի չափ զկեանս իւր» (Մը 12.44), ազգին ու եկեղեցւոյ ծառայութեան պրագան զանանականին մէջ: Եւ ինչ որ կը փորձենք կատարել ո՛չ պարագայական է եւ ոչ ժամանակավրէպ, այլ ընդառաջում է մեր ժողովուրդի կեանիքն ներս յառաջացող մտահոգութիւններուն ու հրամայականներուն: Արդարեւ, մեծ ակնկալութիւններ ունի մեր ժողովուրդը դարաւոր այս Սուրբ Աթոռէն: Զենք կրնար, իրաւունք չունինք անտեսելու մեր ժողովուրդին տակաւ անող կարիքներն ու սպասումները: Զենք կրնար, իրաւունք չունինք լուռ ու անտարբեր մնալու մեր ժողովուրդը յուզող տեղական կամ համահայկական խնդիրներուն ու մարտահրաւերներուն նկատմամբ: Եկեղեցին իր պատերէն անդին՝ պէտք է երթայ ժողովուրդին, նոյնանայ իր ժողովուրդի տագնապներուն ու երազներուն հետ, բարձրագոյն աստիճանի նուիրումով ծառայելով ժողովուրդին ու դառնալով նշմարիտ ու քաջ հովիւը ժողովուրդին, որ Աւետարանի բացատրութեամբ՝ «զանձն իւր դռէ ի վերայ ոչխարաց» (Յի 10.11):

Ա՛յս գիտակցութեամբ ու տեսիլքով Դպրեվանքին մէջ կը կազմաւորուին մեր հոգեւորականները: Ա՛յս հաւատքով ու նուիրումով մեր միա-

բանները կը կատարեն իրենց առաքելութիւնը ժողովուրդի կեանքէն ներս: Հո՞ս է, յանանառու ու նպատակալաց ծառայութեան մէջ, Հայրապետական այս Սուրբ Արքունին հզօրութիւնը ու մեծութիւնը, վարկը ու որակը: Հետեւարար, հարկ է ըլլալ նախանձախնդիր ու խստապահանջ այս Սուրբ Արքունին ծառայութեան նկատմամբ:

Կաթողիկոսարանի ծառայութիւնը ժողովուրդին ուղղուած ըլլալով, միշտ ենթակայ է վերատեսութեան ու վերաբննութեան՝ նկատի ունենալով ներկայ աշխարհի յարափոփոխ պայմանները եւ անոնց անմիջականօրէն ենթակայ ու տարբեր միջավայրերու մէջ ապրող մեր գաղութները: Անհրաժեշտ է հետեւարար, համապարփակ հայեցակէտով ու արժեչափով քննել ու արժեւորել մեր Արքունին ծառայական առաքելութիւնը: Անհրաժեշտ է նաև, որ մեր մօտեցումը ըլլայ ապագայատեսիլ. այլ խօսնով, կատարուածէն անդին պէտք է մեր միտքերը սեւենենք կատարուելիքին եւ երէկէն՝ վաղուան վրայ: Ա՛յս հայեցակէտով դիտելով մեր ժողովուրդի ներկայ կեանքը, եւ այդ կեանքէն ներս մեր եկեղեցոյ ու յատկապէս ՄԵծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հիրայատուկ դերը, պիտի ուզենք երեք քնազաւառներ մատնանշել, որոնք, Մեր կարծիքով պէտք է դառնան մեր Սուրբ Արքունին յառաջիկայ շրջանի առաքելութեան ու ծառայութեան կիզակէտը.—

### **1.— Հարկ է Սփիտքը մղել դէպի վերակազմակերպում ու վերակենաւուրում:**

Ցեղապանութենէն ետք, երբ մեր ժողովուրդը պարտադրաբար Սփիտք դարձաւ, իր կեանքը վերակազմակերպեց՝ կրօնական, կրթական, մշակութային ու ազգային կառոյցներուն շուրջ: Սփիտքը շուտով դարձաւ մեր հաւաքական գոյապայքարին ու պահանջատիրութեան ամուր կոռուանը: Այսօր, սակայն, Սփիտքը ներքին մաշումի ու գունաքափումի մէջ է՝ հակառակ իր ստեղծած բազմազան ու այլազան կառոյցներուն, իր ունեցած տնտեսական լայն կարելիութիւններուն ու Հայաստանէն արտագաղթի մնայուն հոսքին: Համաշխարհայնացումը իր արժեքներով ու արժեչափերով, կենցաղակերպով ու մշակոյթով սկսած է մեր ինքնութեան արմատները կրծել, մեր ինքնահասկացողութիւնը աղօտել, մեր գաղութներուն ներուժը ջլատել: Այս վտանգին դիմաց, մեր գաղութները ընդհանրապէս ինքնակղզիացման մէջ կը փորձեն տեսնել իրենց ապահովութիւնը, սուկ եղածը պահելուն մէջ կը փնտուն իրենց պաշտպանութիւնը ու անցեալին նայելուն մէջ կը փորձեն տեսնել իրենց ինքնութեան պահպանումը: Նման մտածելակերպ ու գործելակերպ Սփիտքը պիտի առաջնորդէ դէպի ինքնախայքում, եթէ ան շուտով համաշխարհայնացած աշխարհի իրականութիւններուն ու մարտահրաւերներուն համահունչ միջոցներուն դիմելով վերակազմակերպումի ու վերակենսաւորումի հաւաքական ընթացք չնշդէ՝ իր մարդկային, հոգեմտաւոր ու նիւթական կարողականութեան ամբողջական ներոյժով ու լարումով:

**Այս ծիրէն ներս Մեր մտածման սեւեռակէտը կ'ուզենք դարձնել մեր թեմերը:** Արդարեւ, մեր թեմերուն կազմակերպչական ներքին դրուածքը ու աշխոյժ գործունեութիւնը անկասկած արժանի է յատուկ ուշադրութեան ու բարձր գնահատանիքի: Միաժամանակ սակայն, մեզ շրջապատող յարափոփոխին պայմաններուն ու նոր մարտահրաւերներուն դիմաց մեր թեմերը կոչուած են համապատասխան միջոցառումներու դիմելու թէ՛ կազմակերպչական, թէ՛ մարդոյժի եւ թէ ժողովուրդի հոգեւոր ու ազգային կարիքներուն ընդառաջելու իմաստով:

Ժողովուրդի կեանքէն ներս հոգեւոր ու բարոյական արժեքներու կենագործումը՝ եկեղեցւոյ առաքելութեան վերաշխուժացումով, անյետաճգելի առաջնահերթութիւն է: Արդարեւ, եթէ չկարենանք Հայ ընտանիքի սրբութիւնը պահպանել՝ անոր նուիրական յարկին տակ հոգեւոր ու բարոյական առողջ մթնոլորտի ստեղծումով, եթէ չկարենանք նորահաս սերունդները հայօրէն կազմաւորել՝ Հայ դպրոցէն ներս քրիստոնէական ու հայեցի դաստիարակութիւնը վերակազմակերպելով, եթէ չկարենանք մեր ժողովուրդի վեհ իտէաններով ու ծգուումներով թրծել մեր երիտասարդները՝ ազգային, մարզական ու մշակութային կառոյցներուն շուրջ համախմբելով զանոնք, մեր ազգի ապագան պիտի մթագնի Սփիւրքի մէջ:

Սփիւրքի կազմակերպման ու գոյատեւման մէջ ճակատագրական եղաւ դերը եկեղեցւոյ. նո՞նյը պէտք է ըլլայ այսօ՛ր Սփիւրքի վերակազմակերպման ու վերակենսաւորման մէջ: Մեր թեմական կառոյցները ու յատկապէս մեր ծուխները, որոնք կը կազմեն հիմքը թեմի կամ գարութի կեանքին, պէտք է դուրս գան իրենց ներամփոփ գոյավիճակէն ու ինքնակեդրոն գործունեութենէն՝ աւետարանչական ու դաստիարակչական առաքելութիւնը ու ազգային ծառայութիւնը դարձնելով իրենց առաքելութեան մդիչ ոյժը: Մեր եկեղեցւոյ ծառայական առաքելութիւնը վերանորոգելու ու կենսագործելու մէջ առանցքային է դերը հոգեւոր դասուն: Հոգեւորականն է որ մեր եկեղեցին իր աստուածային խորհուրդով ու քրիստոսաւանդ պատգամով, իր պայծառակերպիչ առաքելութեամբ ու ազգակերտ ծառայութեամբ պիտի տանի ժողովուրդին: Հետեւարար, հոգեւորականի պատրաստութիւնը մեր Սուրբ Արքունին համար միշտ կը մնայ առաջնահերթութիւն: Մեր Միարանութեան թիւը շուտով պիտի հասնի 56-ի: Թիւէն աւելի մենք պիտի շարունակենք որակի՞ն վրայ շեշտը դնել: Դժբախտարար սակայն, Քահանայ Հայրերու ներկայ պատկերը, բանակի թէ որակի իմաստով, չի համապատասխաներ մեր կեանքի պայմաններուն ու պահանջներուն: Մեր թեմերը կարեւոր դեր ունին այս մտահոգիչ կացութիւնը դարմանելու մէջ:

Տարբեր միշավայրերու մէջ ապրելով մեր թեմերը բնականաբար տարբեր կարիքներ ու մարտահրաւերներ կը դիմագրաւեն: Տարբերութիւնները պահելով հանդերձ հասարակաց մտահոգութիւններուն ու խնդիրներուն նկատմամբ, հարկ է որդեգրել ընդհանրական ու հաւաքական մօտեցում: Մեր թեմերը հեռու պէտք է մնան ինքնակեդրոն գոյավիճակի ու ինքնա-

նպատակ գործունեութեան առաջնորդող գործելակերպերէ: Տեղականը ու համահայկականը, ապակեդրոնացեալ ու համարատու գործելակերպերը պէտք է իրարու հետ սերտորէն ներդաշնակուին՝ Մեծի Տանն կիլիկիոյ Կաքողիկոսութեան համայնական կեանին ու առաքելութեան ծիրէն ներս: Նման մօտեցում առաւել որակ ու կենսունակութիւն պիտի տայ քեմերու կեանին ու գործունեութեան, ինչպէս նաև առաւել հզօրութիւն՝ մեր Սուրբ Արքուին առաքելութեան:

## **2.— Հարկ է երիտասարդութիւնը շաղախել մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժեքներով:**

Մեր պատգամներուն, իրատարակութիւններուն եւ ընդհանրապէս աշխատանքներուն մէջ կեդրոնական տեղ ենք յատկացուցած երիտասարդութեան՝ զայն նկատելով ո՞չ թէ սոսկ մեր ապագան, այլ՝ մեր ներկա՛ն: Անցեալ Ազգ. Ընդհանուր Ժողովին առանձին նիստ յատկացուցինք երիտասարդութեան. նաև ներկայ Ազգ. Ընդհանուր Ժողովին օրակարգի գլխաւոր հարցերէն մէկն է երիտասարդութիւնը: Երիտասարդութեան յատուկ բաժնմունք հաստատեցինք Կաքողիկոսարանէն ներս: Նո՞յնը թելադրեցինք մեր թեմերուն: Համագումարներ, հանդիպումներ ու դասախոսութիւններ կազմակերպեցինք: Հակառակ այս կարեւոր նախաձեռնութիւններուն, Մեր արժեւորումով, արդիւնքը ցարդ բաւարար չէ:

Արդարեւ, ամէն բան վարդագոյն տեսնելու եւ փոքր յաջողութիւնները մեծ իրագործումներու պատմութանով ներկայացնելու փորձութենէն մեր Սուրբ Արքուը միշտ հեռու է մնացած: Գիտե՛նք, որ իրատեսութիւնը կրնայ յունետեսութեան առաջնորդել: Միաժամանակ կը հաւատանք, որ իրապաշտ մօտեցումը ու ինքնամննական ոգին կը կազմեն լուրջ աշխատանքին իրաւ արժեչափը ու յաջողութեան գաղտնիքը: Լայն չափով տեղեակ ըլլալով մեր թեմերու ներքին կեանին ու բազածանօթ ըլլալով ընդհանրապէս Սփիւրքին, կրնանք անվարան հաստատել, որ այսօր մեր երիտասարդութեան պարզած պատկերը մտահոգիչ է: Երիտասարդութիւնը ընդհանրապէս մեր կեանին լուսանցքին վրայ է, ոմանք նոյնիսկ՝ լուսանցքէն դուրս: Եթէ այսօր երիտասարդութիւնը մեր կեանին մէջ ներառող ազդու միջոցներու չդիմենք, վաղը կրնայ ո՞ւ ըլլալ:

Մեր կառոյցները, ներառեալ եկեղեցին, փաստորէն չեն կրցած կապահել արագ ու արմատական փոփոխութեան մէջ գտնուող ներկայ աշխարհի վերիվայրումներուն, հոն յառաջացող հոսանքներուն, փշող հովերուն ու կատարուող գարգացումներուն անմիջականօրէն հաղորդ մեր երիտասարդութեան հետ: Արդարեւ, անցանկապատ ընկերութեան մաս կազմող Հայ երիտասարդը ինչպէ՞ս պիտի կարենայ իր ինքնութիւնը պաշտպանել: Համաշխարհայնացման մշակոյթին ազդեցութեան տակ ապրող Հայ երիտասարդը ինչպէ՞ս պիտի կարենայ կառչած մնալ իր մշակութային ար-

**ԺԵՄԱՆԵՐՈՒՅ:** Ընտանիքի բոլորովին տարբեր հասկացողութեան լայն տեղ տուող ներկայ ընկերութեան մէջ, Հայ երիտասարդը ինչպէ՞ս պիտի կարենայ պահպանել Հայ ընտանիքի կառոյցը, սրբութիւնն ու կոչումը, որպէս հիմքը իր ազգային գոյութեան: Տեսական հարցադրումներ չեն ասոնք, այլ՝ մեր առօրեային հետ աղերս ունեցող լուրջ մտահոգութիւններ: Եթէ Մեր մատնանշած երեւոյթները երեկ յատուկ էին միայն արեւմտեան ընկերութեան մէջ ապրող Հայ երիտասարդին, այսօր անոնք մաս կը կազմեն նա՛եւ Միշին Արեւելքին մէջ ապրող Հայ երիտասարդի կեանքին:

Այս մտահոգիչ երեւոյթները կը ստիպեն մեզ, որ Հայ երիտասարդութեան նկատմամբ մեր աւանդական ըմբոնումները վերատեսութեան ենթարկենք եւ փորձենք Հայ երիտասարդը դիտել այսօրուա՛ն ընկերութեան կեանքին մէջ՝ հեռու ամէն տեսակ բացասական ու վանողական մօտեցումներէ: Արդարեւ, ինչպէ՞ս կրնանք Հայ երիտասարդը, առանց կտրելու համաշխարհայնացումի մշակոյթէն, ինչ որ կարելի չէ, ուղղել դէպի Հա՛յ կեանք՝ անոր ներարկելով գէք մեր հոգեւոր, բարոյական, ազգային ու մշակութային արժեքներու, աւանդութիւններու ու իտէալներու ոգին: Բնականարար, սա դիւրին աշխատանք չէ. սակայն մեր եկեղեցւոյ, Հայ ընտանիքին ու Հայ դպրոցին եւ մեր կառոյցներուն համար ան պէտք է դառնայ ամէնօրեայ տագնապ, անյետաձգելի առաջնահերթութիւն ու հաւաքական նիզ:

Երիտասարդութեան գործօն մասնակցութիւնը մեր կեանքին՝ կը նշանակէ մեր համայնական կեանքը կազմող կառոյցներուն երիտասարդացում, անոնց մօտեցումներուն մասնագիտականացում եւ անոնց գործելակերպերուն ու գործունեութեան վերանորոգում: Անհրաժեշտ է ձերքագատուիլ կաղապարուած տեսակէտներէ, զմուսուած մտածողութենէ, սոսկ եղածը պահելու մտավախութենէն եւ մեր կեանքը վերակազմակերպելու ու վերաշխուժացնելու կամքով շաղախուած ու տեսիլքով զապանակուած ընթացք նշյելէ: Երիտասարդութեան դերը նշդորոշիչ է այս գծով:

### **3.— Հարկ է պահանջատիրական մեր պայֆարին տալ նոր որակ եւ ուժականութիւն:**

Մեր ազգային պահանջատիրութիւնը, Ցեղասպանութեան նանաչումով ու մեր մարդկային ու ազգային իրաւունքներու հատուցումով, եղաւ զօրեղ կոռուաններէն մէկը Սփիտքի ամբողջականութեան պահպանման, անոր գոյատեւման ու հզօրացման: Ո՛չ մէկ ընկրկում ու նահանջ ներելի է մեր պահանջատիրութեան նկատմամբ: Սփիտքը իր ամուր վճռակամութեան փաստը տուած է ու միշտ պատրաստ է տալու:

Ազգովին կը պատրաստուինք նշելու 20-րդ դարու մարդկային առաջին հաւաքական ոճիրին՝ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը: Ընթացիկ ամեակ չէ որ պիտի նշենք: Հետեւարար, սովորական մօտեցումներով պէտք

չե կազմակերպենք այս վճռադրոշմ հանգրուանը մեր ժամանակակից պատմութեան: Աշխարհաքաղաքական տարբեր պայմաններով ու շահերով յատկանշուող ներկայ աշխարհին մէջ, 100-ամեակի կազմակերպումը մարտավարական ու ուղամավարական նոր մօտեցում կը պահանջէ:

Առաջին հերթին, անհրաժեշտ է միասնական ոգիով ու միակամ կեցուածքով աշխարհին ներկայանալ: Հո՞ս է մեր հաւաքական ոյժին աղբիրը: Ցեղասպան Թուրքը պէտք է գիտնայ, որ Հայ ժողովուրդի կեանքէն ներս առկայ տարբերութիւնները կը չբանան համահայկական կշիռ, իմաստ ու նպատակ ունեցող հարցերուն ու մարտահրաւերներուն դիմաց եւ թէ՝ ինք միշտ պիտի ծախողի՝ Հայաստանի եւ Սփիւրքի երբեմն տարբեր շեշտաւորումները բաժանարար որակումներով ներկայացնելու իր նիզին մէջ: Միջազգային համայնքը նաև պէտք է իմանայ, թէ՝ ամբո՞ղջ Հայ ժողովուրդը, Հայաստանի թէ Սփիւրքի մէջ, նո՞յն ու անխախտ կեցուածքը ունի Ցեղասպանութեան նկատմամբ:

Երկրորդ, նաև հրամայական է որ մենք առաւե՛լ վճռակամութեամբ կառչած մնանք մեր ժողովուրդի պահանջատիրութեան: Տասնամեակներ շարունակ մեր ժողովուրդի իրաւունքներու վերատիրացման պայքարին մէջ շեշտեցինք Ցեղասպանութեան նանաչումը: Ժամանակը հասած է, որ առանց անտեսելու Ցեղասպանութեան նանաչման իմանահարցը, յատուկ կարեւորութիւն ընծայենք Ցեղասպանութեան հատուցման՝ նանաչումը ու հատուցումը նկատելով զիրար լրացնող մէկ ու անբաժանելի ամբողջութիւն: Այս մօտեցումով անցեալ տարի նոյն այս սրահին մէջ կազմակերպեցինք միջազգային համագումար, միջազգային օրէնքի մասնագէտներու ու դատաւորներու մասնակցութեամբ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաքողիկոսութիւնը պիտի շարունակէ այս գործընթացը: Արդ, այիս աւանդական ձեռնարկներու ծիրէն ներս պէտք չէ սահմանափակենք մեր աշխատանքը: Հարկ է լրջօրէն նկատի ունենալ միջազգային համայնքներն ներս ցեղասպանին ներկայ դիրքը, Ցեղասպանութիւնը ժխտող իր լայնածաւալ ու հետեւողական գործունէութիւնը, ինչպէս նաև մեզ շրջապատող կրօնա-քաղաքական պայմանները: Եւ աւելի՞ն, անհրաժեշտ է մեր պահանջատիրութիւնը լսելի դարձնել իրաւական ու քաղաքական այնպիսի միջոցներով, որոնք համահունչ են միջազգային օրէնքներուն ու մեծ պետութիւններու աշխարհաքաղաքական շահերուն:

Երրորդ, ինչպէս Երեւանի մէջ 100-ամեակի ձեռնարկները համակարգող յանձնաժողովի նիստին ըսինք՝ յիշելը, յիշեցնելը ու պահանջելը պէտք է դառնան մղիչ ոյժը Ցեղասպանութեան 100-ամեակի առիթով կազմակերպուելիք բոլոր աշխատանքներուն: Հայաստանը որպէս պետութիւն, եւ Սփիւրքը որպէս Ցեղասպանութեան հետեւանքով սփիւրքացած ժողովուրդ, բնականարար տարբեր շեշտով ու ոնով հարկ է որ արժեւորեն այս անկիւնադարձային հանգրուանը մեր պատմութեան: Սակայն, անհրաժեշտ է որ Հայաստան ու Սփիւրք պատմական, իրաւական ու պահանջատիրական

նո՞յն ենթահոդին վրայ կանգնած նո՞յն ուղղուածութեան մէջ ըլլան՝ ներքին ներդաշնակութիւն յառաջացնելով իրենց երբեմն տարբեր շեշտաւորումներուն միջեւ: Այս բոլորէն առաջ ու վեր, մեր սպասումն է որ 100-ամեակի առիթով Հայաստանի պետութիւնը Ցեղասպանութեան նաևաշման պահանջով դիմէ Միջազգային Արդարութեան Ատեան (International Court of Justice): Նման ժայլ, վստահարար կարեւոր նուանում պիտի ըլլայ մեր պահանջատիրական պայքարին մէջ:

Ցեղասպանութիւնը ապրած եւ իր Կաթողիկոսական կայքէն ախսորուած ծերունազարդ Սահակ Կաթողիկոս Հայ ժողովուրդի կեանքին ամէնէն ողբերգական պայմաններուն մէջ իր պահանջատիրական ձայնը բարձրացուց: Նո՞յնը կատարեցին իրեն յաջորդող մեր Հայրապետները: Նո՞յնը պիտի շարունակենք կատարել ՄԵՇԻ յանուն իրաւագրկուած մեր ժողովուրդին ու իր սրբազն դատին:

Իր ժողովուրդի մտահոգութիւններուն ու մարտահրաւէրներուն, պայքարին ու պահանջատիրութեան հետ ինքնինքն նոյնացուցած ՄԵԾԻ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պիտի շարունակէ մնալ՝ վերանորոգ հաւատնով, նուիրումով ու տեսիլքով.

Հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու ու իտէալներու աննկուն առաքեալը.

Ազգային միասնականութեան ջերմ շատագովը.

Իր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներուն ժաշ պաշտպանը:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

12-15 ՅՈՒՆԻՍ 2013

ԱՆԹԻԼԻԱՍ, ԼԻԲԱՆԱՆ

**Զորեքշաբթի 12 Յունիս 2013-ի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի նախագահութեամբ լացումը կատարուեցաւ ու ընթացք առաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովը Անժիխասի Մայրավանքի Վեհարանի Դաշյիճին մէջ: Սոյն ժողովը չորս տարին մէկ անգամ կը գումարուի, արժեւորում կը կատարէ անցնող շրջանի գործունէութեան, եւ Միաբանութենէն ու Թեմերէն ընտրուած պատգամաւորներու աշխոյժ մասնակցութեամբ նոր ուղիներ կ'որոնէ Ա. Աթոռի գործունէութիւնը առաւել աշխուժացնելու համար, ի ինդիր Հայ եկեղեցւոյ ու մեր ժողովուրդի կեանքի ծաղկումին:**

Բացման նիստին, յետ դիւանի ընտրութեան եւ օրակարգի ու ժամանակացոյցի որդեգրման, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը տուաւ իր Հայրապետական պատգամը: Նորին Սրբութիւնը իր պատգամին մէջ անդրադարձաւ ժողովուրդի սպասումներուն մասին, ըսելով. «Մեծ ակնկալութիւններ ունի մեր ժողովուրդը դարաւոր այս Սուրբ Արքունք: Զեթե կրնար, իրաւունք չունինք անտեսելու մեր ժողովուրդին տակաւ անող կարիքներն ու սպասումները: Զեթե կրնար, իրաւունք չունինք լուս ու անտարեր մնալու մեր ժողովուրդը յուզող տեղական կամ համահայկական խնդիրներուն ու մարտահրաւերներուն նկատմամբ»: **Ապա, Վեհափառ Հայրապետը գլխաւոր երեք կէտերու մասին անդրադարձաւ.-**

- 1) Սփիւռքը վերակազմակերպելու վերակենսաւորել:
- 2) Երիտասարդութիւնը շաղախել մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժեքներով:

3) Պահանջատիրական պայքարին նոր որակ եւ ուժականութիւն տալ:

**Սփիւռքը վերակազմակերպելու եւ վերակենսաւորելու մասին խօսելով, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Սփիւռքի կազմակերպման ու գոյատեման մէջ նակատագրական եղաւ դերը եկեղեցւոյ. նոյն պէտք է ըլլայ այսօ՛ր Սփիւռքի վերակազմակերպման ու վերակենսաւորման մէջ: Մեր քեմական կառոյցները ու յատկապէս մեր ծուխները, որոնք կը կազմեն հիմքը ուրեմի կամ գաղութի կեանքին, պէտք է դուրս գան իրենց ներամփոփ գոյավիճակէն ու ինքնակեդրոն գործունէութենէ՛ աւետարանչական ու դաստիարակչական առաքելութիւնն ու ազգային ծառայութիւնը դարձնելով իրենց առաքելութեան մղիչ ոյժը»:**

**Երիտասարդութիւնը մեր կեանքին մէջ ներկայութիւն դարձնելու մասին անդրադառնալով, Նորին Սրբութիւնը ըսաւ. «Երիտասարդութեան գործօն մասնակցութիւնը**



մեր կեանքին՝ կը նշանակէ մեր համայնական կեանքը կազմող կառոյցներուն երիտասարդացում, անոնց մօտեցումներուն մասնագիտականացում եւ անոնց գործելակերպերուն ու գործունեութեան վերանորոգում: Սնիրաժեշտ է ձերբազատուիլ կաղապարած տեսակտներէ, զմուսուած մտածողութենէ, սուկ եղածը պահելու մտավախութենէն եւ մեր կեանքը վերակազմակերպելու ու վերաշխուժացնելու կամքով շաղախուած ու տեսիլքով զսպանակուած ընթացք նշտեէ: Երիտասարդութեան դերը նշդորոշիչ է այս գծով»:

**Իր պատգամին վերջին բաժինով Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ պահանջատիրութեան անհրաժեշտութեան, ու մանաւանդ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ունեցած դերին մասին, եւ հաստատում կատարելով ըսաւ. «Յեղասպանութիւնը ապրած եւ իր Կաթողիկոսական կայքէն ախսորուած ծերունազարդ Սահակ Կաթողիկոս Հայ ժողովուրդի կեանքի ամէնէն ողբերգական պայմաններուն մէջ իր պահանջատիրական ձայնը բարձրացուց: Նոյնը կատարեցին իրեն յաջորդող մեր Հայրապետները: Նոյնը պիտի շարունակենք կատարել ՄԵՇՔ՝ յանուն իրաւագրիկուած մեր ժողովուրդին ու իր սրբազն դատին:**

Իր ժողովուրդի մտահոգութիւններուն ու մարտահրաւէրներուն, պայքարին ու պահանջատիրութեան հետ ինքինն նոյնացուցած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, պիտի շարունակէ մնալ՝ վերանորոգ հաւատենալ, նուիրումով ու տեսիլքով:

Հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու ու իտէկներու աննկուն առաքեալը,

Համահայկական մտածողութեան առաջընթաց շահակիրը,

Ազգային միասնականութեան շերմ շատագովը,

Իր ժողովուրդի բնաբարուած իրաւունքներուն բազ պաշտպանը»:

**Ժողովի երկրորդ նիստը յատկացուեցաւ Ազգային Կեղրոնական Վարչութեան Կրօնական Ժողովի ատենազրութեան ներկայացման՝ տեսապնակի ճամբով, որ ամփոփ գիծերու մէջ տեսալսողական միջոցով պատկերացում տուաւ կատարուած աշխատանքներու մասին անցնող քառամեակին, որ քաղուած էր աւելի քան 150 էջերէ բաղկացած ընդարձակ տեղեկագիրէն: Ապա, յաջորդական երկու նիստերով տեղի ունեցաւ քննարկումը սոյն տեղեկագիրին: Արտայայտուած գաղափարներն ու արծարծուած մտածումները կը միտէին կրօնական դաստիարակութեան զարկ տալ,**

նախանձախնդրութեամբ մօտենալով մեր եկեղեցւոյ արժէքներուն, յատկապէս որոնելու համար միջոցներ՝ երիտասարդութիւնը եկեղեցւոյ մօտեցնելու, ինչպէս նաեւ խօսուեցաւ ու բացատրութիւններ արուեցան, սկզբունքով յառաջիկայ Սեպտեմբերին Ա. իջմիածինի մէջ, երկու Գահակալներու՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա.ի նախագահութեամբ գումարուելիք Եպիսկոպոսական Ժողովի մասին:

Ժողովը դրականօրէն արտայայտուեցաւ այն բոլոր աշխատանքներուն մասին, որոնք մեր եկեղեցին կը բանան օտարներուն, ծանօթացնելով մեր արժէքները, յատկապէս միջեկեղեցական յարաբերութեանց կալուածէն ներս:

Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան, իջմիածին-Անթիփաս փոխ-յարաբերութեան, Հայ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան, Հայ երիտասարդութեան նկատմամբ հոգածութեան, Հայ յարանուանութեանց հետ յարաբերութեանց եւ իւրաքանչիւր տարին Կաթողիկոսութեան կողմէ յատուկ լուսարձակի տակ բերելու աշխատանքները դրական որակուեցան, հակառակ սահմանափակ մարդոյժին ու նիւթական համեստ պայմաններուն:

Օրուան վերջին նիստը յատկացուեցաւ Ազգային Կեղրոնական Վարչութեան Քաղաքական ժողովի ատենագրութեան ներկայացման՝ տեսապնակի ճամբով, որ ամփոփ գիծերու մէջ տեսալսողական միջոցով պատկերացում տուաւ կատարուած աշխատանքներու մասին անցնող քառամեակին, որ քաղուած էր մօտ 140 էջերէ բաղկացած ընդարձակ տեղեկագիրէն:

Երկրորդ օրը, 13 Յունիս 2013-ին առաւօտուն Տէրունական Աղօթքով ու Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր ժողովը շարունակեց իր աշխատանքները, գլխաւորաբար կեղրոնանալով Կեղրոնական Վարչութեան Քաղաքական ժողովի տեղեկագիրին վրայ:

Իրերայածորդ նիստերով նաեւ քննարկումը տեղի ունեցաւ տպագրուած լայնածաւալ տեղեկագիրին, որ կ'ընդգրկէր Քաղաքական ժողովին իրագործած ծրագիրները, սկսերով ազգային, տեղական մակարդակին, մինչեւ համասփիւռքեան, համահայկական ու միջազգային մակարդակը: Ժողովականները իրենց հարցումները ուղղեցին Քաղաքական ժողովի անդամներուն եւ իրենց հարցումներուն պատասխանները ստացան:

Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական օրհնութեամբ Քաղաքական ժողովին կողմէ կատարուած աշխատանքներուն զծով, ամբողջական արժեւորումը տեղի ունեցաւ Ազգ. Ընդհ. ժողովի մասնակիցներուն կողմէ, յատկապէս գնահատելով սահմանափակ մարդոյժով ու նիւթական նուազագոյն կարելիութիւններով իրագործուած հսկայական ծրագիրները:

**Ապա, յատուկ կերպով խօսուեցաւ հետեւեալ կէտերու մասին.-**

1) Արեւմտահայերէնի պաշտպանութեան Յանձնախումբի մասին, թէ ինչ հեռանկարներ կան իրագործելիք, ինչպէս նաեւ ազգային վարժարաններէն ներս կրօնի դասաւանդման մասին:

2) Մնայուն հիմնադրամ յառաջացնելու գաղափարը կը մնայ անհրաժեշտ ու այժմէական: Նորին Մրբութիւնը այս ուղղութեամբ լայն բացատրութիւն տուաւ եւ



շեշտեց անհրաժեշտութիւնը մնայուն հիմնադրամ ունենալու, որպէսզի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը տնտեսական դժուարութիւններ չունենայ:

3) Հայկական պահանջատիրութեան գծով, Վեհափառ Հայրապետին միջազգային տարրողութեամբ կատարած աշխատանքը, եւ Կաթողիկոսարանէն ներս թէ դուրս տեղի ունեցած միջազգային գիտաժողովները լուսարձակի տակ բերին Կիլիկեան Ա.Աթուլին հետեւողականութիւնը այս առնչութեամբ: Անդրադարձ եղաւ ներկայ տարւոյս Ապրիլ 24-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.ի միատեղ ստորագրած պահանջագիրի մասին: Տակաւին, խօսուեցաւ Յեղասպանութեան 100-ամեակին իրադործուելիք ծրագիրներու ու նպատակներու մասին: Այս ծրիէն ներս նաեւ խօսուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ, Ղարաբաղի մէջ կառուցուած «նոր կիլիկիա» գիւղի մասին:

4) Սուրբահայ Գաղութի մասին յատուկ կերպով խօսուեցաւ եւ բացատրութիւններ տրուեցան Սուրբիոյ ներկայ կացութեան եւ սուրբիահայութեան դիմագրաւած դժուարութիւններուն մասին, եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու պատկան թեմերու միջոցաւ կատարուած օժանդակութիւններուն: Վեհափառ Հայրապետը յատուկ կերպով եւ մանրամասնօրէն բացատրութիւններ տուաւ սուրբահայութեան օժանդակութեան համար հաւաքուած նիւթական գումարներուն եւ անոնց գործուղման մասին: Նորին Սրբութիւնը ըստ. «Ամբողջական նուիրումով պիտի շարունակենք աջակցիլ ու օժանդակիլ սուրբահայութեան»:

5) Յունաստանի տնտեսական վիճակի տագնապի մասին ալ խօսուեցաւ, յատկապէս մեր յունահայ թեմին կրած ազդեցութիւնը այդ տագնապէն: Յունաստանի պատգամաւորներէն մին, մանրամասնօրէն բացատրութիւններ տուաւ այդ ուղղութեամբ եւ խօսեցաւ թեմին դիմագրաւած դժուարութիւններու մասին:

6) **Անթիլիաս-Եջմիածին փոխ-յարաբերութեանց հարցը եւս մասնաւոր կերպով օրակարգի նիւթ զարձաւ լրնթացս ժողովի:** Այս գծով, կրկին անգամ վերահաստատուեցաւ մեր Ս. Աթոռին յանձնառութիւնը՝ եղբայրական ոգիով շարունակել գործակցութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հետ, ի խնդիր մեր եկեղեցւոյ ու ազգի ներքին միասնականութեան պահպանման:

7) Հայաստանի պետութեան հետ Մեծի Տաճար Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գործակցութիւնը եղաւ սիրայիր: Մեր Ս. Աթոռին ազգային թէ միջազգային գործունէութիւնը ու արժէքը ծանօթ է Հայաստանի իշխանութիւններուն եւ գնահատուած անոնց կողմէ:

8) Խօսուեցաւ նաեւ Ս. Աթոռին կողմէ իրազործուած շինարարական ծրագիրներուն, թէ Կաթողիկոսութեան պատկանող կալուածներուն վրայ կատարուածներուն եւ թէ Ղարաբաղի մէջ «Նոր Կիլիկիա» գիւղի շինութեան: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ արդէն իսկ կատարուած որոշ շինարարական աշխատանքներուն, որոնք կ'իրազործուին մեր թեմերուն, ինչպէս նաեւ ազգային բարերարներու գործակցութեամբ ու աջակցութեամբ: Շինարարական գլխաւոր աշխատանքներէն են, Անթիլիասի Մայրավանքին մէջ կանգնած Ապրիլեան Նահատակներու Յուշարձանի վերանորոգումը. Պիքֆայայի մէջ Միաբանական չէնքի կառուցում, Ապրիլեան Նահատակներու Խորանի կառուցում, Ապրիլեան Յուշարձանի շրջապատի վերադասուրում, ինչպէս նաեւ Ճիպէյի մէջ՝ Թուչնոց Բոյնի ամէնէն հին շինութիւնը Յեղասպանութեան թանգարանի վերածելու ծրագիրը:

**ՎԵհափառ Հայրապետը ընդհանուր արժեւորում կատարելով կատարուած քննարկումներուն, իր խօսքը ամփոփեց հետեւեալ երկու մտածումներով.-**

«ա) Մեր կատարած գործը առաքելութիւն է: Մենք գնահատականի կարիք չունինք, արժեւորումի կարիքն ունինք, որպէսզի մեր կատարած գործը ըլլայ աւելի կատարեալ ու արդիւնաւու:

բ) Մեր կատարած գործը չի' սահմանափակուիր որոշ շրջագիծի կամ որոշ թեմերու նեղ սահմաններուն մէջ, այլ՝ համահայկական տարողութիւն ունի: Այս հայեցակետով հարկ է մօտենալ մեր Ս. Աթոռին առաքելութեան:

**Ազգային Ընդհանուր Ժողովի երկրորդ օրը միայն կատարուած աշխատանքի վերաբերում չեղաւ, այլ՝ բոլոր հարցերուն քննարկումէն բխած նոր ուղղութիւններ ճշգումի առիթ եղաւ:**

**Երկրորդ օրուան ժամանակացոյցին մէջ երկու նիստեր յատկացուած էին.-**

ա) Հայ ժողովուրդի իրաւունքներու հետապնդումի եւ Յեղասպանութեան 100-ամեակի ուղղութեամբ կատարուած աշխատանքներուն:

բ) Սուրբահայութեան ներկայ կացութեան մասին Բերիոյ Հայոց Թեմէն ղրկուած զեկոյցին, եւ սուրբահայութեան մասին պատրաստուած բանաձեւի ընթերցումին:

գ) Քրիստոնէական Դաստիարակութեան գրասենեակին կատարած աշխատանքներուն:

**Իւրաքանչիւր զեկոյցի աւարտին, կատարուեցան քննարկումներ եւ լուսաբանութիւններ:**



**Երկրորդ օրուան ժողովական նիստերու աւարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ, Միաբաններն ու ժողովականները բարձրացան Պիքֆայա՝ Մեծի Տաճն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սիրտը հանդիսացող Դպրեվանքը, ուր ներկայ գտնուեցան Կաթողիկոսութեան «Շնորհալի» երգչախումբի՝ Հայ Մօր տարուան առիթով հրամցուցած համերգին եւ Դպրեվանքի Ամավերջի հանդէսին:**

**14 Յունիս 2013-ի առաւոտուն Մեծի Տաճն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Հնդհանուր ժողովը շարունակեց իր աշխատանքները:**

**Առաջին նիստը յատկացուած էր երիտասարդութեան: Ներկայացուած երկու զեկոյցներէն ետք, ժողովականները հարցումներ հարցուցին ու ստացան պատասխաններ: Լայնօրէն անդրադարձ եղաւ, թէ ներկայիս ինչպէս կարելի է երիտասարդութիւնը մասնակից դարձնել մեր կեանքին, հայկական իրականութենէն հեռացած երիտասարդները ինչ կերպով կարելի է կրկին անդամ մօտեցնել մեր իրականութեան, երիտասարդական ֆորումներ յառաջացնել, համալսարանական ուսում ունեցող երիտասարդները ինչպէս կարելի է ներառել մեր եկեղեցւոյ հովանիին տակ ու օգտուիլ անոնց ուսումէն ու փորձառութենէն: Այս առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառն ալ յատուկ կերպով անդրադարձաւ երիտասարդութեան մասին, ու ըսաւ. «Պէտք է որ երիտասարդութիւնը ներկայութիւն դարձնենք մեր կեանքին մէջ: Պէտք է նիշդ ձեւերը գտնենք երիտասարդութեան հետ երկխօսութեան մէջ մտնելու: Անցած է հրահանգելու ժամանակը: Պէտք է երկխօսութեան նամրով իօսինք երիտասարդութեան հետ: Ի՞նչ է Հայ երիտասարդին ինքնութեան հասկացողութիւնը: Ինքնութիւնը ինքնանպատակ ու ինքնավախնան չէ: Հայ ըլլալ կը նշանակէ մասնակից դառնալ մեր կեանքին: Երիտասարդութեան դիմաց մեր կեանքին բոլոր դոները պէտք է բացուին: Մեր կեանքին մասնակցիլ, կը նշանակէ դեկապարութեան մաս կազմել: Մեր երիտասարդները այսօր իրենց բնեական**

ու մասնագիտական մօտեցումներով, հարցադրումներով ու առաջարկներով պիտի վերանորոգեն մեր կեանքը»:

**Ժողովի առաջին նիստի աւարտին, Նորին Սրբութիւնը իր խօսքը եզրակացուց, լսելով.** «Պետք չէ բացասական դառնանք: Մեր հաւաքական կեանքին փաստօրէն մասնակից է երիտասարդութիւնը: Սակայն անոր ներկայութիւնը պէտք է աւելի գործօն ու ամբողջական դարձնենք: Երկար տարիներ մեր կառոյցներուն առնչուած իտէալներու, սկզբունքներու ու աւանդութիւններու շուրջ կազմաւորեցինք մեր երիտասարդները: Համահայկական արժեքներու համակարգին շուրջ պէտք է համախմբենք մեր երիտասարդութիւնը: Սակայն, մեր համահայկական արժեքներու համակարգը պէտք է սերտ երկնօսութեան մէջ ըլլայ համամարդկային արժեքներու համակարգին հետ: Նեղ օղակներու մէջ չեն կրնար մնալ երիտասարդները. փակ դոներու առջեւ չեն կրնար սպասել երիտասարդները. անոնք մասնակից են համաշխարհայնացած աշխարհի մշակոյթին: Հետեւարար, Հայ երիտասարդութեան կազմաւորման մեր ոսկմավարութիւնը եւ մարտավարութիւնը պէտք է վերատեսութեան ենթարկենք»:

**Հայեցի դաստիարակութեան գծով երկու զեկոյցներ ներկայացուեցան, ուր յառուկ կերպով անդրադարձ կատարուեցաւ հայապահպանման կարեւորութեան, Հայդպրոցին եւ հայերէնաւանդ Հայ ուսուցիչին առանցքային դերակատարութիւնը շեշտելով, եւ մանաւանդ վերջերս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ջանքերով յառաջացած Արեւմտահայերէն Լեզուի պահպանման Յանձնախումբի մասին: Ժողովականները իրենց հարցումներով, քննարկումներով ու առաջարկներով հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութիւնը շեշտեցին: Նիստի աւարտին, Նորին Սրբութիւնը ընդհանուր բացատրութիւններ տալով, իր խօսքը եզրափակեց ըսելով. «Ներքին բախում գոյութիւն ունի մեր աւանդական մտայնութեան եւ ներկայ երիտասարդութեան մօտեցումներուն միջեւ: Խօնչ կը նշանակէ Հայ ըլլալ Սփիւռքի մէջ: Ո՞վ է Հայը: Խօնչ արժեքներու շուրջ պէտք է ձեւաւորենք Հայ երիտասարդը: Սփիւռքի մէջ Հայ ըլլալը որոշումի հարց է: Մենք Սփիւռքին մէջ որոշեցինք Հայ ըլլալ ու Հայ մնալ, եւ այդ ուղղութեամբ կառոյցներ ու հաստատութիւններ հիմնեցինք, եւ ամբողջական նուիրումով պայքարեցանք որպէսզի պահենք մեր ինքնութիւնը: Հայ ըլլալը ամենօրեայ տագնապ է: Պէտք է պատկանելիութեան զգացումը ամրապնդենք մեր երիտասարդութեան մօտ: Պատկանելիութիւնը տեսական յղացք չէ: Պատկանելիութիւնը մասնակցութեամբ պէտք է քարգմանուի եւ գործնապէս արտայայտուի մեր հաւաքական կեանքին մէջ: Հետեւարար, մեր կրթական կառոյցներէն ներս անհրաժեշտ է որ մարդակերտումի ու հայակերտումի մեր հին մեթոսները լուրջ վերափոխութեան ենթարկենք»:**

**Նիստէն ետք, ընթերցուեցաւ սուրբիահայութեան ի նպաստ յայտարարութիւն մը,** «Սուրբիահայութեան օժանդակութիւնը համազգային պարտականութիւն է» խորագիրով: **Յայտարարութեան ընթերցումէն ետք կատարուեցան քննարկումներ յայտարարութեան գծով:**

**Երրորդ նիստը յատկացուած էր միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեանց:** Երկու զեկոյցներ ներկայացուեցան, ուր մանրամասնօրէն նշուեցաւ Մեծի Տանն Կիմիկոյ Կաթողիկոսութեան աշխոյժ դերակատարութիւնը միջ-եկեղեցական ու միջ-կրօնական գործունէութեան մէջ, յանձինս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ

**Հայրապետին ու կիլիկեան Միաբանութեան:** Ներկայացուած գեկոյցներէն ետք քննարկումներ կատարուեցան, եւ միջ-եկեղեցական ու միջ-կրօնական գործունէութեան ծիրը, **Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան աշխարհագրական դիրքէն մեկնած յատկապէս, կարեւոր նկատուեցաւ յատկապէս քրիստոնեայ-խալամ երկխօսութեան ծիրէն ներս. այս վերջին կէտին մասին, Նորին Սրբութիւնը մանրամասնօրէն բացատրութիւններ տուաւ ժողովականներուն, յատակացներով թէ ինչ բանի վրայ կը կայանայ քրիստոնեայ-խալամ երկխօսութիւնը, ըսերով. «Այս երկխօսութիւնները չեն միտիր աստուածաբանական հարցերու մասին քննարկումներ կատարելու, այլ՝ կը միտին փոխադարձ հասկացողութիւն եւ տեղեկութիւններու ու փորձառութեանց փոխանակումն, կարենալ հաշու ապրելու համար նոյն ընկերութեան մէջ»:**

**Ապա, ընթերցուեցաւ Յեղասպանութեան 100-ամեակի մասին յայտարարութիւնը, եղան քննարկումներ ու առաջարկներ, որմէ ետք յայտարարութիւնը ժողովական-ներուն կողմէ միաձայնութեամբ ընդունուեցաւ:**

**Ազգային Ընդհանուր ժողովի օրակարգի վերջին նիստի ընթացքին, ընթերցուեցաւ Բանաձեւի Յանձնախումբին գեկոյցը, որմէ ետք քննարկումներ կատարուեցան:** **Ապա, թեմերէն առաջարկներ կատարուեցան:** Աւարտին, **Ազգային Ընդհանուր ժողովը կատարեց ընտրութիւնը յաջորդ քառամեակին համար, Կեղրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներուն:** Կրօնական ժողովի անդամ ընտրուեցան՝ Գերշ. Տ. Կորիւն Արք. Պապեան, Գերշ. Տ. Օշական Արք. Զօլոյեան, Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան, Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեան, Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարտիրոսեան, Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէքեան, Գերշ. Տ. Շահան Եպս. Սարգիսեան, Գերշ. Տ. Շահէ Եպս. Փանոսեան, Գերպ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Գերշ. Տ. Նուշեղ Արք. Վարդիկ Արք. Մարտիրոսեան, Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Գերշ. Տ. Շողէ Տող. Վարանդ Վրդ. Քաղաքական ժողովի անդամ ընտրուեցան՝ Պետրոս Գարանճեան, Սուլքէն Սարգիսեան, Արթիւր Նազարեան, Վիդէն Գասապեան, Տիգրան Ճինպաշեան, Արա Տէմիրճեան, Ճորժ Շահինեան, Վարդան Վարդանեան, Խաժակ Տիգրիճեան, Վահէ Եղանակեան, Տրդատ Մանկիկեան, Յակոբ Եղիուճեան եւ Տոքի Ժիրայր Պասմաճեան, որոնք զանազան թեմերը կը ներկայացնեն:

**Եղրափակելով Ազգային Ընդհանուր ժողովը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Հայրական իր խօսքը ուղղեց բոլորին, գնահատելով այն կապուածութիւնը եւ նուիրումը, զոր ցուցաբերեցին պատգամաւորները հանդէպ մեր եկեղեցւոյ ու ազգին: Նորին Սրբութիւնը ըսաւ. «Կաթողիկոսարանին մէջ կատարուող աշխատանքը չորս պատերու մէջ չի սահմանափակուիր, ոչ այ միայն Լիքանանի, այլ՝ մեր բոլոր թեմերուն համար է որ կը կատարենք մեր առաքելութիւնը: Հետեւաբար, թեմերուն մասնակցութիւնը կը նկատենք իրամայական: Թեմերը պէտք է Կաթողիկոսարանին հետ գործակցին: Անթիվասը իր ծառայութեամբ մնայուն ու կենդանի ներկայութիւն պէտք է դառնայ մեր թեմերէն ներս»:**

**Սուրիահայ գաղութին դիմագրաւած դժուարութիւններուն անդրադառնալով, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Սուրիահայ մեր գաղութին տագնապը համահայական խնդիր է: Պէտք է այս գիտակցութեամբ շարունակենք մեր աշակցութիւնը: Մենք այդ**



տեսլականով պիտի գործենք, որովհետեւ կը հաւատանք որ համահայակական մտածողութիւնը մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին ընդհանրական շահերուն առանցքը կը կազմէ»:

**Խօսելով Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան առաքելութեան մասին, Նորին Սրբութիւնը յատուկ կերպով շեշտեց, թէ՝ «համահայկական մտածողութիւնը, տեսիլքը, հայեցակետը մեր Սուրբ Արքուին ծառայութեան հիմքն է ու նպատակը։ Մեր ժողովուրդը այս Սուրբ Արքուն սպասում ունի, եւ մենք այդ գիտակցութեամբ է որ կը ծառայենք։ Մենք սպասաւորներն ենք մեր ժողովուրդին, եւ ինչ որ կ'ընենք մեր պարտաւորութիւնն է, մեր նուիրական կոչումն է։ Մենք գնահատանքի կարիքը չունինք։ Մեր գործը, ծառայութիւնը կը կատարենք պատասխանատուութեան ոգիով եւ համարատուութեան գիտակցութեամբ։ Մեր Աթոռը պիտի շարունակէ իր առաքելութիւնը։ Մեր Արքուն մեծութիւնն ու հզօրութիւնը իր ծառայութեան մէջն է»։**

**Հայրապետական եզրափակիչ իր պատգամի աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս գնահատեց բոլոր պատգամաւորները։ Ցատուկ գնահատանք արտայայտեց շրջանաւարտ Ազգ. Կեղրոնական Վարչութեան զոյզ ժողովներուն։ Շնորհաւորեց նոր ընտրուած զոյզ ժողովները եւ բարի ու արդիւնաւէտ աշխատանք մաղթեց անոնց։ Ապա, Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ» աղօթքով ու իր օրհնութեամբ փակեց Ազգային Ընդհանուր ժողովի աշխատանքները, որմէ ետք Միաբաններն ու ժողովականները միասնաբար երգեցին «Կիլիկիա» և ու «Ի վեհ բարձանց» մաղթերգը։**

**Երեկոյեան ժողովականները Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին զիխաւորութեամբ, Տրպապայէի «La Royal» պանդոկի «Ազուրէա» սրահին մէջ մասնակցեցան ճաշկերոյթի։ Ճաշկերոյթի ընթացքին գեղարուեստական յայտագիր ներկայացուեցաւ։**

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

**ՊԱՐԱՆՁԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏք Է ԴԱՐՁՆԵԼ ԱՌԱՆՑՔԸ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՆՇԱՎԱՆ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի նախագահութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անժիխասի Մայրավանքին մէջ զումարուող Ազգ. Հնդհանուր Ժողովը Կիլիկեան բոլոր թեմերը ներկայացնող աւելի քան հարիւր պատուիրակներու, Ազգ. Կեղրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներու եւ Հրաւիրեաներու ներկայութեան, յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի նշման։ Այս ուղղութեամբ տրուած գեկոյցներու ու կատարուած քննարկումներու լոյսին տակ, Ազգ. Հնդհանուր Ժողովը ընդգծեց հետեւեալ կէտերը—**

**1.— Ինչպէս Վեհափառ Հայրապետը Ազգ. Հնդհանուր Ժողովին ուղղած իր Հայրապետական Պատգամին մէջ շեշտեց, «Սովորական ամեակ պէտք չէ դառնայ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը։ Աշխարհաքաղաքական տարբեր պայմաններով ու շահերով յատկանշուող ներկայ աշխարհին մէջ, 100-ամեակի նշումը մարտավարական ու ուազմավարական նոր մօտեցում կը պահանջէ»։ Արդ, այս ծիրէն ներս կատարուելիք աշխատանքները, ծրագրումները ու յարաբերութիւնները, ներքին թէ արտաքին ճակատներու վրայ, յատակօրէն պէտք է արտայայտեն 100-ամեակին վճռական կարեւորութիւնը Հայ Ժողովուրդի ժամանակակից պատմութեան մէջ։**

**2.— Բնականարար իւրաքանչիւր գաղութ արդէն սկսած է ծրագրել 100-ամեակի նշումը՝ նկատի ունենալով իր ներքին դրուածքը ու շրջապատը։ Արդ, իւրաքանչիւր գաղութ կարեւոր դեր ունի կատարելիք ու իւրայատուկ նպաստ ունի բերելիք 100-ամեակի համազգային նշման։ Սակայն, տեղական նախաձեռնութիւններէն ու աշխատանքներէն անդին, անհրաժեշտ կը նկատենք համահայկական մաշտապով այնպիսի միջոցներու որոնումը, որով կարելի ըլլայ յաչ աշխարհին գործնապէս արտայայտել Հայ Ժողովուրդի միակամ ու ամուր կեցուածքը Ցեղասպանութեան ճանաչման ու հատուցման նկատմամբ։**

**3.— Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի նշումը առիթ պէտք է դառնայ վերանորոգ թափով շարունակելու մեր աշխատանքը Հայաստանի պետութեան, եկեղեցւոյ, Հայ Դատի մարմիններու ու քաղաքական կուսակցութիւններու ճամբով՝ ի խնդիր Ցեղասպանութեան ճանաչման ու հատուցման։ Այս շրջագիծէն ներս անհրաժեշտ է յատուկ աշխատանք տանիլ մասնաւրաբար այն երկիրներու կառավարութիւններուն մօտ, որոնք ցարդ չեն ճանչցած Հայոց Ցեղասպանութիւնը։**

**4.- Հայոց Յեղասպանութեան ճանաչման առընթեր Հայ ժողովուրդի բռնարարուած մարդկային իրաւունքներու հատուցումը կը նկատենք խիստ անհրաժեշտ:** Յեղասպանութեան ճանաչում՝ կ'ենթադրէ հատուցում: Այս ծիրէն ներս կ'ողջունենք 2012-ին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գումարած միջազգային համագումարը եւ Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ այս ուղղութեամբ շարունակուող աշխատանքները՝ յատկապէս եկեղեցապատկան ու ազգապատկան կալւածներու գծով: Կ'ողջունենք նաեւ եկեղեցապատկան կարուածներու վերադարձին գծով երկու Վեհափառ Հայրապետներուն հրապարակած միացեալ կոչը: Արդարեւ, քարոզչական, քաղաքական ու իրաւական երեսները Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն հարկ է սերտօրէն համազրել ու ներդաշնակել:

**5.- Կ'ողջունենք Հայաստանի պետութեան կողմէ Յեղասպանութեան 100-ամեակի նշման պետական յանձնաժողովի յառաջացումը: Նման քայլ, մեր ժողովուրդի միասնականութիւնը արտայայտող գոտեանդիչ երեւոյթ է: Միանգամայն մեր սպասումն է, որ Հայաստանն ու Սփիւռքը իր մէջ ներառող ու Հայաստանի Հանրապետութեան Նախագահի հովանաւորութիւնը վայելող այս Յանձնաժողովը սոսկ ձեռնարկները «համակարգող» մարմին չդառնայ, այլ՝ որոշակի ու յստակ որոշումներ առնէ՝ յատկապէս մեր ժողովուրդի պահանջատիրութիւնը շեշտող ու համայնշխարհին յիշեցնող:**

**6.- Կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Յեղասպանութեան 100-ամեակի ծրագիրները եւ կոչ կ'ուղղենք մեր բոլոր թեմերուն, գաղութներուն ու կազմակերպութիւններուն, միասնական ու պահանջատիրական ողիով ծրագրելու ու նշելու Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը:**

**7.- Եւ ի վերջոյ՝ արձագանգելով Վեհափառ Հայրապետի պատգամին, բոլոր միջոցներով հետապնդել Հայոց Յեղասպանութեան ճանաչումն ու Հայ ժողովուրդի արդար իրաւունքներու անժամանցելի պահանջատիրութիւնը միջազգային արդարութեան ատեաններուն հասցնելու կարելիութիւնները:**



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ԱԶԳ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

**ՍՈՒՐԻԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԶՈՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԴԱՄԱՋԳԱՅԻՆ  
ԱՊԱՇԱՅԵՐԹՈՒԹԻՒՆ Է**

**Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքին մէջ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի նախագահութեամբ գումարուող Ազգային Հնդ-  
հանուր ժողովը, իր քննարկումներուն, խորհրդակցութիւններուն ու որոշումներուն  
մէջ կարեւոր տեղ յատկացուց սուրիահայութեան: Արդարեւ, Վեհափառ Հայրա-  
պետին ու Ազգ. Կեղր. Վարչութեան կողմէ տրուած գեկոյցներուն, ինչպէս նաեւ  
սուրիահայութիւնը ներկայացնող պատուիրակներու փոխանցած տեղեկութիւննե-  
րուն ու մտահոգութիւններուն լրացին տակ, Ազգ. Հնդհանուր ժողովը մեր ժողո-  
վուրդի սիրելի գաւակներուն ազնիւ ուշադրութեան կարեւորութեամբ կ'ուզէ յանձ-  
նել հետեւեալ կէտերը:**

**1.— Ազգ. Հնդհանուր ժողովը բարձր գնահատանքով կ'ողջունէ սուրիահայու-  
թեան ցուցաբերած միասնական ողին, Սուրիական Հայրենիքին ամրօրէն կապուած  
մնալու ու իր համայնքային իրաւունքներուն տէր կանգնելու հաւաքական վճռա-  
կամութիւնը: Ժողովը իր խոր գնահատանքը կը յայտնէ սուրիահայութեան ծառա-  
յութեան լծուած մեր հոգեւոր ու համայնքի պատասխանատուններուն ու գաղութի  
կեանքէն ներս գործող բոլոր կառոյցներուն, որոնք հակառակ Սուրիային ներս  
ստեղծուած դժուար պայմաններուն, նուիրումով իրենց կարելին կ'ընեն մեր ժողո-  
վուրդի գաւակներուն կարիքներուն ընդառաջելու:**

**2.— Ազգ. Հնդհանուր ժողովը երախտագիտութեամբ անդրադարձաւ անցնող  
շուրջ երկու տարիներուն սուրիահայութեան զօրակցութեան ու օժանդակութեան  
գծով Վեհափառ Հայրապետին ու Ազգ. Կեղրոնական Վարչութեան տարած հետեւո-  
ղական աշխատանքներուն: Ան նաեւ իր ջերմ շնորհակալութիւնը յայտնեց Հայա-  
տանի պետութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, ինչպէս նաեւ մեր թեմե-  
րուն, գաղութիւններուն, կազմակերպութիւններուն ու անհատ ազգայիններուն սուր-  
իահայութեան օգնութեան գծով իրենց ցուցաբերած աջակցութեան համար:**

**3.— Սուրիահայութիւնը ո՛չ միայն պատմական ու կազմակերպուած համայնք է,  
այլ նաեւ իր կարեւոր տեղը ու դերը ունի Սփիւրքի Հայ կեանքի մշակութային,  
կրթական, մարզական, տնտեսական ու պահանջատիրական մարզերէն ներս: Հետեւ-  
աբար, սուրիահայ գաղութի վերականգնումը կը նկատենք համազգային առաջ-**

**Նահերթութիւն:** Այս համոզումով հարկ է մեր ամբողջական ու անվերապահ գօրակցութիւնը գործնապէս արտայայտել սուրբահայութեան նկատմամբ:

**4.— Մեկնելով այս իրողութենէն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը սուրբահայութեան օժանդակութեան հանգանակութեան կոչ ուղղեց։ Մեր ժողովուրդի զաւակները սիրով ընդառաջեցին Վեհափառ Հայրապետի կոչին։ Հաւաքուած գումարները Կաթողիկոսարանի ճամբով հանգրուաննային կերպով փոխանցուեցան սուրբահայութեան Շտապ Օգնութեան Մարմինին։ Մեծապէս հրամայական է որ այս գործընթացը շարունակուի եւ մեր ժողովուրդի զաւակները շարունակեն նեցուկ կանգնիլ սուրբահայութեան օգնութեան աշխատանքներուն։**

**5.— Սուրիոյ մեր համայնքը միշտ կը մնայ Եղախտապարտ Սուրբական Հայրենիքին ու իր ժողովուրդին։ Մեր ժողովուրդը երբեք չի մոռնար որ Հայ ժողովուրդին դէմ Թուրքիոյ գործադրած Ցեղասպանութենչն ետք, Սուրիոյ ժողովուրդը ընդունեց մեր բազմահազար զաւակները։ Սուրբահայութիւնը միշտ կը մնայ սուրբացի ժողովուրդի կողքին, ջատագով՝ արդարութեան, խաղաղութեան ու քրիստոնեայ իսլամ համակեցութեան ու միշտ պատրաստ՝ իր գործօն ու ամբողջական մասնակցութիւնը բերելու Սուրիոյ բարգաւաճման ու յառաջիմութեան ձգտող աշխատանքներուն։**

**6.— Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ։ Ընդհանուր ժողովը կը վստահեցնէ Սուրիոյ մեր սիրելի ժողովուրդին, որ այս Սուրբ Աթոռը իր թեմերով ու կազմակերպութիւններով կը մնայ գօրակից ու աջակից։ Վստահ ենք, որ Սուրիոյ մեր սիրելի քոյրերն ու եղբայրները պիտի ամրապնդեն իրենց ներքին միասնակամութիւնը, պիտի խորացնեն իրենց հաւաքական հաւատքը ու կռանեն իրենց կամքը՝ ի խնդիր սուրբահայութեան վերականգնումին ու վերածաղկումին։**



Ստորեւ կու տանք Ազգային Ընդհանուր Ժողովի ընթացքին ներկայացուած գեկոյցներէն հատուածներ:

### ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Արեւմտահայերէնը, գրաւոր թէ բանաւոր, այսօր խզուած է իր ծննդավայրէն կամ զինք սնուցանող շրջապատէն: Համաշխարհայնացումի համայնակու արշաւին դիմաց, յատկապէս թիւով փոքր ազգերու համար, նորահաս սերունդի ազգային դիտակցութեան ամրապնդումը աւելի քան ճակատագրական գերինդիր է, յատկապէս հայուն նման աշխարհացրիւ ազգի մը պարագային: Հայրէնի հողին վրայ բնականօրէն կը ձեւաւորուի ազգային ինքնութիւնը, հակառակ ներկայի ծաւալուն եւ մտահոգիչ արտահոսքին:

Այսօր պարզ է, հայեցի դաստիարակութիւնը նահանջի մէջ է, հետեւաբար նահանջի մէջ է լեզուն, մայրենին, հայեցի դաստիարակութեան հզօրագոյն եւ ամէնէն հաստու զէնքը: Այս իրողութիւնը ժիատել եւ կամ յամառիլ անտեսել՝ կը նշանակէ կոյր ձեւանալ եւ կամ պահուըտիլ մատի ետեւ:

Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր Ս. Աթոռը խոր գիտակցութեամբ կը մօտենայ, կրօնական-եկեղեցական իր առաքելութեան գուգահեռ, նաեւ հայեցի դաստիարակութեան եւ Արեւմտահայերէնին սպառնացող վտանգին: 2004-էն մինչեւ 2011 թուական, Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին բարձր նախագահութեամբ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցան համասփիւռքեան կրթական իրերայշնորդ երեք համագումարներ, որոնց իրենց մասնակցութիւնը բերին Հայ կրթական բնագաւառի շարք մը մանկավարժներ ու մասնագէտներ: 2011-ի համագումարը առաջարկ ներկայացուց նորին Սրբութեան, գործնական քայլերու դիմել: Վեհափառ Հայրապետը ընդառաջեց եւ իր խակ նախագահութեամբ կազմեց Արեւմտահայերէնի Պաշտպանութեան Յանձնաժողովը, որուն մաս կը կազմեն Սփիւռքի գրեթէ բոլոր շրջաններէն շուրջ 30 մտաւորականներ: Նման յանձնառու քայլի մը պատասխանատութիւնը միայն Կիլիկիոյ Մայր Աթոռը կրնար ստանձնել: Յանձնաժողովը, թէեւ դանդաղ, սակայն հաստատ քայլերով, միշտ Վեհափառին գլխաւորութեամբ, լծուած է լուրջ եւ հետեւողական աշխատանքի:

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԵԼԵՍՆ

### Միջոցներ մեր հունձքը առաւել արդիւնաւէտ դարձնելու...

ա) Զարկ տալ գոյութիւն ունեցող դպրոցներուն: Քաջալերել հայերէնի ուսուցիչները: Գրաւիչ ու մրցունակ դարձնել ուսուցչական ասպարէզը: Ծրագրել հայագիտական հիմնարկի վերահաստատումը՝ առաջքը առնելու համար հայերէնի ուսուցիչի, գործիչի չգոյութեան տագնապին՝ մօտիկ ապագային: Դասագիրքերու հրատակութիւնը առաջնահերթ համարել՝ օրինակ մանկապարտէզի դասագիրքերու հրատարակութիւնը: «Սան որդեգրելու» ծրագիրին հետեւողութեամբ՝ ապահովել հիմնադրամներ, կտակներ, մնայուն եկամուտի աղբիւրներ, 1.5 կրթական ծրագիրով գործող կրթական հաստատութիւններուն նիւթական լուծը թեթեւցնելու մտահոգութեամբ:

բ) **Այնպէս ինչպէս Արեւմտահայերէնի խտացեալ դասընթացքը, որ լաւ ընդունելութիւն գտաւ, կազմակերպել աւելի ընդգրկուն դասընթացքներ՝ հայկական կիրարական արուեստներու, երաժշտութեան, շարականներու, ճարտարապետութեան, կերպարուեստի մասին։ Դասընթացքին հետեւողները յայտնեցին, որ իրենց ծարաւը կրկնապատկուած է եւ հետաքրքրութիւնը առաւել սրած։**

գ) **Մասնագիտական խմբակներով՝ Արեւմտահայերէնի արդի արհեստագարժութեան նորամուտ բառապաշարը բիւրեղացնել, նոյնացնել տեղանուններու տառադարձութիւնը, քերականական, ուղղագրական այլազանութիւննը վճռել։**

ԳԵՂԱՆԻ ԷԹԻԿՄԷԶԵՍՆ

### ՀԱՅ ԴԱՏ

**Մեծ է նախ պատասխանատուութիւնը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որ Կիլիկիային մինչեւ Լիբանան, որպէս պատմակա՞ն ներկայացուցիչը Հայկական Սփիւրքին, ինչպէս նաև որպէս օրինական սեփականատկը բռնագրաւուած մեծաթիւ կալուածներու, վանքերու, եկեղեցիներու եւ դպրոցներու՝ իրաւական որեւէ գործընթացի մէջ կը վայելի «jus standi»-ի իրաւունքը, այսինքն՝ օրինական հետապնդումի կողմ հանդիսանալու օրինական տուեալները։**

**Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կրօնական, մշակութային ժառանգի թէ կալուածային սեփականութեան հատուցումը՝ կրնայ հիմքը հանդիսանալ ամբողջ ժողովուրդի զաւակներու արդար պահանջներու հատուցման։**

**Վերջապէս, մեր Սփիւրքը իր կուսակցութիւններով ու Հայ Դատի մարմիններով նորանոր ջանքերով իր ամբողջական ոյթերով պէտք է շարունակէ իր քարոզարշաւը, որ անպայմանորէն պէտք է արդիւնաւորուի, մանաւանդ քաղաքակա՞ն պայքարի մէջ։**

**Այդ քաղաքական պայքարը արդէն ծայր առած է 24 Ապրիլ 2013-էն սկսեալ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին նախաձեռնութեամբ, եւ զոյզ Վեհափառներու միակամ քայլով դրսեւորուած՝ թուրքիոյ ուղղուած յատա'կ պահանջատիրական իմաստալից յայտարարութեամբ։**

**Նախաքայլը առնուած է։**

**Հայրկ է շարունակել։**

ԴԱԿՏ. ՆՈՐՍ. ՊԱՅՐԱԳՏԱՐԵՍՆ

**Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որպէս Ցեղասպանութեան գոհ, ունի յատուկ դերակատարութիւն պահանջատիրութեան գործին մէջ։ Այդ դերակատարութիւնը արդէն գործնականացուած է եւ կարեւոր նախաձեռնութիւններ կատարուած կամ ընթացքի մէջ են։**

**Արդ, իր համայնչակական նախաձեռնութիւններուն մասնակցութեան կողքին Կաթողիկոսութիւնը՝**

**ա) Շարունակէ իր արդի թուրքիոյ մէջ եկեղեցապատկան կալուածներու հետապնդումը, իր ու Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան այս ուղղութեամբ ողջունելի միացեալ յայտարարութիւնը որպէս գործնականացում։**

**բ) Ստեղծել Ցեղասպանութեան փաստաթուղթեր եւ անհատական, եկեղեցական եւ ազգային կալուածներու վկայագիրերու ուսումնասիրութեան ու ցանկագրման կեղրոն։**

գ) Արդէն իսկ ճամբու ելած Ցեղասպանութեան թանգարանի ծրագիրը:

դ) Շարունակել միջ-կրօնական եւ միջ-եկեղեցական միջազգային համագումար-ներու ընթացքին արծարծել Հայ Դատու: 2015-ի համար նախաձեռնել քրիստոնեայ եկեղեցիներու հետ միջազգային Ցուշածօն արարողութիւն:

ե) Շեշտադրել մեր ժողովուրդին իրաւունքներու անժամանցելիութիւնը:

ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ

### ՄԻԶ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՄԻԶ-ԿՐՈՆԱԿԱՆ

Հայրենի հողի բացակայութեան, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր թեմերով կը փոխարինէ Հայրենիքը: Կը զբաղի ժողովուրդի ազգային, կրօնա-բարոյական դաստիարակութեամբ, որ կ'իրաքործուի Կիլիկիոյ Հայրապետին աչալուրջ եւ արծուարիր հսկողութեան տակ: Թեմերու այցելութիւններով կ'ամրապնդէ եկեղեցի ազգային կառոյցներ գործակցութեան կապը ազգային քաղաքական ղեկավարութեան հետ, պահպանելով համախոհ ու ներդաշնակ մթնոլորտը: Խակ իւրաքանչիւր տարի նուիրելով Հայ կեանքը յուգող թեմայի՝ ընտանիքի, մանուկներու, երիտասարդներու, մայրերու, կը հրաւիրէ աշխարհական թէ կրօնական զանգուածը միասնաբար քննելու ժամանակակից հոսանքներու ազդեցութիւնը Հայ կեանքի տարբեր գործօններու վրայ՝ զգուշացնելով իր հօտը սայթաքումներէ եւ այլասերումէ: Կիլիկեան Աթոռ ու թեմեր գործակցութեան քաղուած արդիւնքները արգասիքն են Վեհափառ Հայրապետին անտեղիտալի պահանջներուն, ազգի գոյութիւնը երաշխաւորող ներկայ եւ ապագայ ծրագիրները չզոհելու ազգակործան հաշիւներու, պահանջելով խստագոյն կեցուածքը թեմերու քաղաքական թէ կրօնական ղեկավարներէն:

Կիլիկեան Ս. Աթոռի հաստատած ըոլոր առաջնահերթութիւնները եւ ազգի լինելութեան ծրագիրներու բոլոր նախադրեալները կը բխին ազգային հաւաքական տեսլականէն: Անոնք կը կազմեն Հայ ժողովուրդի անժամանցելի դատին հետապնդումը, ամրագրուած ազգային գաղափարախօսութեան հենքին վրայ, ուր եկեղեցին կամուրջ կը հանդիսանայ աշխարհի հեռաւոր անկիւններու մէջ ծուարած Հայուն եւ Հայրենիքին միջեւ, Հայը Հայրենիքին կապող օրակը, ի՞նչ ալ ըլլան անոնց քաղաքական, գաղափարական պատկանելիութիւնները:

ՍԵՐԱ. ՄԱՐԿՈՍԵԱՆ-ԽԸԾԾԵԱՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր առաքելութեան ծիրէն ներս, խիստ կարեւոր եւ հիմնական կը նկատէ միջ-կրօնական յարաբերութիւնները, մասնաւորաբար իսլամութեան հետ, ու այս գծով ճիգ չի խնայեր անոր յաւելեալ աշխուժացման ու տարածման: Ան կը հաւատայ միջ-կրօնական յարաբերութեան կարեւուրութեան եւ անհրաժեշտութեան, մանաւանդ անոր ձգելիք դրական անդրադաներուն, որոնք կ'արտացոլան մեր ժողովուրդի կեանքին մէջ: Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր գործնական մասնակցութեամբ, չափաւորական կեցուածքներով, հաւասարակշռուած մօտեցումներով կը հաւատայ որ նման միջ-կրօնական յարաբերութիւնները, հիմնուած անկեղծութեան ու թափանցիկութեան վրայ, կ'ապահովեն ժողովուրդներու խաղաղ գոյակցութիւնը, սիրալիր յարաբերութիւնը եւ փոխադարձ յարգանքը:

**Քրիստոնեայ-իսլամ յարաբերութիւնը հիմնուած չէ կրօնական կամ աստուածաբանական երկխօսութեան վրայ, այլ՝ կեանքի երկխօսութեան, այսինքն՝ միատեղ ապրելու, միասնաբար մտածելու եւ գործելու սկզբունքներուն վրայ, փոխադարձաբար յարգելով իւրաքանչիւրին կրօնքը, մշակոյթը եւ կենցաղը։ Որպէս միաստուածեան կրօնքներ, կը գտնուին հասարակաց կէտեր Քրիստոնէութեան եւ իսլամութեան միջնեւ, որոնք կամուրջի դեր կրնան խաղալ սոյն յարաբերութիւնները աւելիով ամրապնդելու համար։**

ԴՐԱ. ԺԱՆ ՍՍԼՄՄՆԵՍՆ

### ԵՐԻՏԱՍՍԱՐԴԱԿԱՆ

Որեւէ մէկ ժողովուրդի բնականոն եւ առողջ յառաջնութացին մէջ, որեւէ մէկ ցեղի գոյութեան շարունականութիւնը ապահովող երեւոյթին մէջ, եւ ընդհանուրապէս որեւէ մէկ երկրի բարգաւաճման եւ այժմէականութեան հետ քայլ պահելու անխուսափելի հրամայականին մէջ, մեծ է եւ կենսական՝ երիտասարդութեան վերապահուած դերը։ Երիտասարդները եւ ներկան են իրենց ժողովուրդին, եւ՝ ապագան։

Անոնք ներկան են։ Նայնք մէր չուրջը, պիտի տեսնենք չնորհիւ արդի արհեստագիտութեան ընձեռուած դիւրութիւններուն, անոնք դարձան եւ տակաւին կը դառնան այլ երկիրներու մէջ, գլխաւոր դերակատարները մեծածաւալ մարդկային ալիքներով կազմուած ցոյցերու, որոնք կ'աւետեն «գարուն»-ներու ստեղծումը՝ առ ի պատրաստութիւն բարեփոխուող ապագայի, որուն զեկավարներն ու առաջնորդները պիտի ըլլան դարձեալ իրենք՝ երիտասարդները։ Հետեւաբար, եւ անոնք են ապագան։

Ա.ՍՏՂԻԿ ԳԱՆՏԱՀԱՐԵՍՆ

**Այսօր, երիտասարդութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն եւ յատկապէս թեմերէն կ'ակնկալէ։**

1) **Ստեղծել երիտասարդական շարժումներ ամէն թեմերէն ներս, իւրաքանչիւր եկեղեցին եւ զպրոցի չուրջ, ուր երիտասարդը իր կրաւորական դիրքէն պիտի անցնի գործունեայ, մասնակից անդամի դիրքին, ժողովուրդին առօրեայի տնօրինման եւ պատմութեան կերտման գործընթացին մէջ։**

2) **Յատուկ վերաբերմունք եւ հոգատարութիւն հանդէպ բոլոր ուսանողական, համալսարանական միութիւններուն, որովհետեւ անոնք են միջնորդն ու կապը նորօրեայ արհեստագիտութեամբ օժտուած կեանքին եւ ապրելառնին։**

3) **Յատուկ ծրագիրներ եւ միջոցառումներ պէտք է նախաձեռնուին, կասեցնելու համար համալսարանաւարտի հոսքը գաղութէն դէպի դուրս, այլ երկիրներ, իրենց ճակատագիրը որոնելու։ Անոնք են մէր ապագայ ոյժը։**

4) **Յատուկ օժանդակութիւն եւ գուրգուրանք հանդէպ արդէն իսկ ծնունդ առած Հայ Համալսարանաւարտներու Համախմբումին, որ ի մի պիտի խմբէ Սփիւռքի բոլոր Հայ Համալսարանաւարտները, կազմելու համար մեր մտաւորական համասփիւռքեան բանակը, որ զինուած պիտի ըլլայ գիտութեան տարրեր տեսակներով։**

5) **Այսօրուան նիւթականացած աշխարհի եսակեղրոնութեան մէջ, ընդհանրապէս մարդոց մօտեցումը նիւթական շահաւետութեան վրայ հիմնուած սկզբունքներով**

կեանքին, կը յուսանք ասոր դէմ ստեղծել ազգային-եկեղեցական գօտեպնդող մթնոլորտ մեր գաղութներուն մէջ, որ երիտասարդին անպայման պիտի փոխանցէ պատկանելիութեան զգացումը:

ՅԱԿՈԲ ՀԱՆՏԵՍՆ

### ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻՄԱԿՈՒԹԻՒՆ

**Քրիստոնէութիւնը** իր ծնունդէն սկսեալ եղած է մարտահրաւէրներու թիկունք տուող կրօնք: Այս հասկացողութեամբ ներկայ եւ գալիք ժամանակներու մեր մօտեցումը պէտք է ըլլայ մեր հայրերու որդեգրած ուղին: Ոսկեղարու մեր Հայրերը չփառանեցան լոյսի կեղոններէ իրենց ջահերը վառերով՝ զինուիլ ժամանակակից գիտութեամբ, լուսաւորելու համար Հայ կեանքը:

ա) Այս ուղղութեամբ առաջին հերթին կարեւոր է առաւել թափ տալ մարդոյժի՝ Քրիստոնէական Դաստիարակութեան լծուած եկեղեցական եւ աշխարհական մանկավարժներու, որոնք արդի գիտութեամբ զինուած՝ դիւրամատչելի, գրաւիչ, բայց մանաւանդ մասնագիտացեալ կերպով պատրաստեն դասագիրքեր, եւ տարբեր տարիքներու համար հոգեւոր սնունդի եւ այժմէական նիւթեր շօշափող հատորներ, յատուկ դասընթացքներով մարգեն ուսուցիչներ եւ ինչու չէ քարոզիչներ, ձայնասփիւռէն կանոնաւոր ծրագիրներով հնչեցնեն Հայ հոգիի հարազատ հաւատքի ձայնը, եւ նման միջոցաւումներով անաղարտ պահեն Լուսաւորիչի Կանթեղէն ճառագայթող շողերը:

բ) Ներկայ արհեստագիտութիւնը (Technology)-ն իր բոլոր ժխտական կարծուած սպառնալիքներով ունի նաեւ իր դրական երեսը, որ մեծապէս կրնայ ազդել, աշխուժացնել եւ նոր թափ տալ Քրիստոնէական Դաստիարակութեան: Քրիստոս եթէ սորվեցուց մեզի անիրաւ մամոնայէն բարեկամներ շահի (Ղկ 16.9), ուստի, պէտք չէ վարանինք համացանցը, որ այնքան թշնամի կը համարուի, նոյնքան մեզի բարեկամընել եւ Հայ հաւատացեալին սեփականութիւնը դարձնել:

ԺԱՆԻՆ ԴԱՆԻԵԼ ԵԱՆ-ՄԱՐԳԱՐԵՒՆ

Քրիստոնէական դաստիարակութիւն....երկու բառերու առանձին ու համատեղուած իմաստը որքանով ուղղահայեաց ընթացք ունի, նոյն ատեն հաւանաբար աւելի ազդու հորիզոնական, շարունակական ու dynamic շարժուն: Հաւանաբար զիտելիքները իրենց դերը ունին դաստիարակութիւն հասկացողութեան, սակայն Քրիստոնէական Դաստիարակութիւնը կեանքի ընթացք է անցեալով, ներկայով ու ապագայով:

Աստուածաշունչը կը կազմէ զլիսաւոր առանցքը Քրիստոնէական Դաստիարակութիւն բայց բաւարարուիլ միայն Աստուածաշունչով ամբողջական չէ երբ Հայ Առաքելական եկեղեցոյ ծխական, արարողական համակարգին յատկապէս Ա. Պատարագին մէջ կան բոլոր սկզբունքները ու սուեալները Քրիստոնէական Դաստիարակութիւնը համեմելու մեր ազգային եկեղեցական արժէքներով, հաստատելու մեր ինքութիւնը ու զանազանուելու յատկութիւնը: Նմանութիւնները լուսարձակի տակ առնելով յաճախ կը ստեղծուի բարենպաստ դաշտ առաջնորդուելու դէպի այլ ուղղութիւններ:

ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ԱԼԵՌԵՍՆ

ԱՐԵՎԱԿԱՆ



## ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՆԱՌՈՒԹԵՎՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՒՔԱԾՈՆ \*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիկար Յարության մասին «Մեսրոպ Մաշտոց»-ի շքանշանի  
տուուրեան արիթրով)

Հայրապետական օրինութեամբ եւ Հայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ձեզ  
Մեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոսութեան Անթիլիասի Մայրավաճրէն Աերս:

Մօսէն ճանչցած ըլլալով Զեզ եւ մեր ժողովուրդի կենաքէն ներս Զեր ունեցած ազգօգուտ գործունեութիւնը, հոգեկան խոր գոհունակուրթեամբ կ'ուզենք սա պահուն յուսարձակի տակ բերել մեր ժողովուրդին մատուցած Զեր նույիրեալ ծառայութիւնը:

Արդարեն, դուք եղաք մեր ժողովուրդի ձայնը լսելի դարձնող ազգային գործիչ Զեր գրիշով. խօսքով ու գործով: Հայ Դատի պաշտպանութեան ու անոր ի խնդիր տարրուած աշխատանքներու հետապնդման մէջ դուք ունեցաք առանցքային դերակատարութիւն: Որպէս հրապարակագիր, Զեր ստորագրած յօդուածներով ու որդեգրած յանդուգն կեցուածքներով արծարծեցիք մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն կեանքը յուզող խնդիրներ ու մարտահրաւերներ՝ իրապաշտ մօտեցումով. անխտական ոգիով ու անանձնական շահերու հետապնդումով: Դուք եղաք Հայրենի մեր ժողովուրդին ու Սփիտքի լայն խաւերուն միջեւ ստեղծուած կապը ամրապնդող մղիչ ոյժ: Թէ՛ Լինսի Հիմնարկին ճամբով եւ թէ անհատական նախաձեռնութիւններով զարկ տուիք Հայաստանի ու Ղարաբաղի մեր զաւակներու կեանքին բարելաման ազգային, ընկերային, մշակութային ու տնտեսական բնագաւառներէն ներս:

Ի գնահատութիւն Ձեր կատարած աշխատանքներուն եւ որպէս խթան նոր նախաձեռնութիւններու, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաքողիկոսութեան

## **Ա. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ՀՔԱՆՇԱՆ**

\* Յունիար 2010-ի բիով սկսանի հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Խոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: ԽՄԲՐ.:

Կ'առօթենք առ Բարձրեալն Աստուած, որ միշտ քաջառողջ ու կայտառ պահէ Ձեզ, որպեսզի նորանոր իրագործումներով առաւել են հարստանալ Ձեր կեանքը:

Ողջ լերուք ի Տէր. զօրացեալ շնորհօք Ս. Հոգույն եւ յաւետ օրհնեալ ի Սէնօ. Ամէն:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

**Տուակ Կոնդակսի ի Կարողիկոսարանի  
Ի դուռ Սայր Տաճարի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին  
Որ յԱլքիլսա, Լիքանան  
Ի 7-ն Նոյեմբերի, 2006 թուին Քրիստոսի, եւ  
Ի թուին Հայոց ՈւԾԵ.  
Ընդ համարաւ Շ/ՅԽԵ.**

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Մեսրոպ Քահանայ Գալստեանին Սեւ Ծաղկեայ Փիլոնի տուչութեան առիթով)

Ընդառաջելով Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ S. Բարգէն Եսպ. Չարեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհեմ

ՍԵՒ ԾԱՂԿԵԱՅ ՓԻԼՈՆ

կրելու արտօնութիւն՝ յրնթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք, որ Զեզի շնորհուած այս պատիը խթան պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Զեր քահանայական ծառայութիւնը՝ Հայ եկեղեց- ոյ անդաստանին ներս:

Կ'ապօթենք առ Բարձրեալի Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ, պարզեւենով Ձեզի բաջառողջութիւն և անսպառ կորով:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգոյն եւ յաւետ օրհնեալ ի Սէնջ. Ամբա՞:

Աղօթարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱԽՆԱԿԻ ԻԿԻՆՅԱՅԻ

## *Տուալ Գիր այս ի Կաթողիկոսարանի*

ՈՐ ԽԱՆՔԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի 26-Ա Դեկտեմբերի, 2006 թուին Քրիստոսի, եւ

*Ի բուին Հայոց ՈւնծԵ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## **ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵՎՆ ԵՒ ԳՆԱՀԱՏՄՆՔԻ**

(Տ. Վազգեն Քահանայ Ծմաւոնեանի  
Քահանայական Լանջախաչ տուչութեան առիթով)

Ընդառաջելով Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Սեպոհ Արք.  
Սարգիսեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Զեզի կը շնորհենք

### **ՔԱՀԱՏՄԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱՉ**

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք, որ Զեզի շնորհուած այս պատիւր խթան պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Զեր քահանայական ծառայութիւնը՝ Հայ եկեղեց- ոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Զեզ, պարգևելով Զեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

Ողջ լեբուք ի Տեր, զօրացեալ շնորհօք Ա. Հոգույն եւ յաւէտ օրհնեալ ի Սէնց.  
Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ**

*Տուսաւ Գիրս այս ի Կարողիկոսարանիս  
Որ յԱնրիլիսս. Լիրանան  
Ի 27-ն Դեկտեմբերի, 2006 բուին Քրիստոսի, եւ  
Ի բուին Հայոց ՌԱԾԵ.  
Հանդ համարաւ Շ/ՅԽԾ:*

## **ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵՎՆ ԵՒ ԳՆԱՀԱՏՄՆՔԻ**

(Տ. Մաշտոց Քահանայ Խաչատուրեանին  
Քահանայական Լանջախաչ տուչութեան առիթով)

Ընդառաջելով Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Սեպոհ Արք.  
Սարգիսեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Զեզի կը շնորհենք

### **ՔԱՀԱՏՄԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱՉ**

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք, որ Զեզի շնորհուած այս պատիւր խթան պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Զեր քահանայական ծառայութիւնը՝ Հայ եկեղեց- ոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Զեզ, պարգևելով Զեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

Ողջ լերուք ի Տեր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգույն եւ յաւէտ օրհնեալ ի Սէնջ.  
Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուալ Գիրս այս ի Կարողիկոսարանիս  
Որ յԱնրիլիսս, Լիքանան  
Ի 27-ն Դեկտեմբերի, 2006 թուին Քրիստոնի, եւ  
Ի բուփն Հայոց Ունծեց.  
Հանդ համարաւ Շ/ՅԾ.*

### **ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵՎՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՔԻ**

(Տ. Խաչատուր Քահանայ Յարութիւնեանին  
Քահանայական Լանջախաչ տուշութեան առիթով)

Ընդառաջելով Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Սեպուհ Արք.  
Սարգիսեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

### **ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ**

կրելու արտօնութիւն՝ յրնթացս տօնական օրերու Եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք, որ Ձեզի շնորհուած այս պատիւր խթան պիտի հանդիսանայ առաւել նույրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ Հայ Եկեղեցւոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթննք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեալս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ, պարգևելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

Ողջ լերուք ի Տեր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգույն եւ յաւէտ օրհնեալ ի Սէնջ.  
Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուալ Գիրս այս ի Կարողիկոսարանիս  
Որ յԱնրիլիսս, Լիքանան  
Ի 27-ն Դեկտեմբերի, 2006 թուին Քրիստոնի, եւ  
Ի բուփն Հայոց Ունծեց.  
Հանդ համարաւ Շ/ՅԾԱ.*

## ՀԱՅ ՄՈՐ ՏԱՐԻ

### «ՏԻԿՆԱՅՔ ՓԱՓԿԱՍՈՒՔ»

Հազարաւոր տարիներ առաջ, յոյն պատմագիր՝ Քսենեֆոն «Նահանց Բիրուն»-ի դիրքին մէջ անդրադարձած է Հայ կնոջ մասին, ի տարբերութիւն շրջապատի երկիր-ներուն եւ ժողովուրդներուն, ան գտած է Հայաստանի ձիւնածածկ, զետնափոր տու-ներուն մէջ՝ քաղաքակիրթ կենցաղ: Ուշագրաւ գտած է մանաւանդ Հայ կինը՝ իր տի-րական ներկայութեամբ, աշխուժութեամբը այդ տուներէն ներս:

Հեթանոսական շրջանի մայրական իշխանութեան գոյութիւնը, Անահիտ չաստ-ւածուհիի պաշտամունքը՝ այլ վկայութիւններ են, Հայ կնոջ հանդէպ վերապահուած վստահութեան, եւ պաշտամունքի աստիճանին հասնող խոր յարգանքին: Վստահու-թիւնն ու յարգանքը՝ կերտած են Հայ կնոջ յանձնառու կերպարը:

Յաղթանակէ ետք անպայման յարգանքի տուրք մատուցելը Անահիտի ոսկեձոյլ արձանին՝ երախտագիտութեան խոր արտայայտութիւնն էր մեր թագաւորներուն, չաստուածուհիին հանդէպ, որուն չնորհիւ ձեռք բերուած էր գոյատեման նոր հան-դրուան: Ան էր խորհրդանիշը հայութեան, բերրիութեան, բեղմնաւորութեան եւ մանաւանդ՝ զգաստութեան:

Քիչ կ'անդրադառնանք, որ Անահիտ չաստուածուհին, որպէս խորհրդանիշը զգաստութեան, կը մարմնաւորէր մայրութեան առաքինութիւններէն՝ արթնութիւ-նը, խելացիութիւնը, պարկեցտութիւնը, համեստութիւնն ու ժուժկալութիւնը, առա-քինութիւններ, որոնք բնազդական մայրութիւնը կը հասցնեն գիտակցական մայրու-թեան մակարդակին:

Հոգիի ու միտքի արթնութեամբ, Հայ մայրերը ո՛չ միայն պահպանած են իրենց ընտանիքները, այլ՝ յատկապէս պատմական վերիվայրումներու ընթացքին, անոնք կամակատարութեան, համեստութեան ծիրէն բարձրացած են մինչեւ զոհարերու-թեան սեղան: Սանդուխտ Կոյս կրնար ընտրել հօր արքունիքին հանդիսար: Փառան-ձեմ՝ օտար պալատի մէջ կրնար թագուհիի իր հանգամանքը պահպանել: Անոնք նահա-տակութեան ուղիէն քալած են, հաւատարիմ մնալու համար իրենց սկզբունքներուն, հաւատքին:

Յատկապէս այսօր, Վարդանանցի երգերով թրթուուն դարձեալ Եղիշէ կը պատմէ մեզի «Տիկնայք փափկասուն»-ի ձորձերուն, մոխիրին, ապաշխարանքին մասին: Խո-կումը, ներհայեցողութիւնը, պահը կշռադատելու որոշումը, պարզեւեցին մեզի Վար-դանը փոխարինող՝ Վահան Մամիկոնեանն ու Նուարսակի դաշնագիրը: Այսօր մեր դէմ կը ցցուին մեր բերդերուն զոց դարպանաները, որոնց ետին, անտէր մնացած մայ-րեր, կիներ, քոյրեր՝ կը մերժեն ընդունիլ ուխտադրոյժ իրենց հարազատները: Միջնա-րերդը պահպանելը աւելի խոր զգացողութիւն էր իրենց համար, քան պարզապէս զո-յատեւելու պահանջը: Բնազդօրէն զեղեցիկ երեւելու կնոջական առանձնայատկութե-

**նէն կամքին հրաժարիլը, «Տիկնայք փափկասունք»-ին, կը հարթէ ճամբան իշամսայի Մելիքութեան իշխանուհիներուն, որոնք ափ-ափ կուտակած են իրենց ոսկեղէններն ու մարգարիտները, Հայիձորը զինելու համար:**

Հոգիի ու միտքի արթնութիւնը, զգաստութիւնը՝ ցեղային առանձնայատկութիւններով գոյատեւելու, կը գտնենք Աւետիս Ահարոննեանի «Արիւնու Թթիւմոր»-ին, Դանիէլ Վարուժանի «Դերենիկին», Կոստան Զարեանի «Տատրագոմի Հարս»-ին եւ բազում այլ գեղարուեստական գործերու մէջ, բայց մանաւանդ մեր օրացոյցներուն մէջ: Անոնք արթնութեան կոչեր են, աւելի քան՝ քնարեր մեղեղիներ: «Արի իմ սոխակ»-ը, «Զարթիր Լաօ»-ն, «Դա շապիկն է այն բաց մարդուն»՝ գէնք բարձրացնելու աղաչանքներ են, Սողոմոն Թէջլիքեանի վրիժառութեան ենթահողը՝ տառապած իր մօր նայուածքին յաճախանքը եղած է, անոր երազներուն լնդմէջն:

Բարութիւն, ազնուութիւն, ներողամտութիւն, հոգատարութիւն, համբերատարութիւն, սէր, նուրիում՝ արհամարհելի առաքինութիւններ չեն, սակայն անձնուրացութիւնը գերիվեր է այս բոլորին: Հայ մայրեւու աղօթքը, որ «Տէրը հասնի բոլոր զաւակներուն, ապա՝ իր» ուրիշ երանգ ունի: «Ըլլային»-ները, «Հայերէնները» եթէ չհնչին տուներէն ներս, պիտի չունենայինք այսօր Մեծարենցի «Հիւղը» եւ մանաւանդ «Արդի մարդուն Հայր մերը», «Տուր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական...»: Նոյնը առաւել կամ նուազ չափով՝ կարելի է ըսել Կոմիտասի հաւաքագրած երգերուն, Ռուրէն Զարդարեանի առասպելներուն, Սրուանձտեանցի հեթաթներուն համար:

Որակաւոր վարկ պահելու արժանապատուութեան զգացողութիւնը, ազնուականութիւնը, այլ կարեւոր բարեմասնութիւնը եղած է Հայ կողք: Ցնցիչ է «Մայրիկ» տեսաերիզին երաժշտութիւնը: Նոյնքան տպաւորող է տնեցիններուն ճիզը՝ խղճալի չերեւելու: «Արարատ» տեսաերիզին մէջ, լուսարձակի տակ առնուած, Արշիլ Կորքիի բաճկոնին փրթած կոմակը, քաղաքակրթութեան կորուսար կարծես կ'ահազանդէ: Վարդան Տէրունեանի գաղթակայանէ մը առնուած լուսանկարներու հաւաքածոյին մթութիւնը կը պայծառանայ՝ տաշտի մէջ մանուկին լոգանք տուող մօր ժպիտով, շարանշարան ձեռագործ հիւսող կիներու կեղրունացած աշխատանքով:

Տուներու տունը՝ Հայրենիքն է: Սողոմոն Տարօնցիի զուգահեռականը՝ մօր եւ Հայրենիքի միջեւ, մայրութեան եւ Հայրենի հողին միջեւ՝ զգաստութեան եւ բերրիութեան կշիռն է: Եթէ մայրը որպէս արթուն պահակ՝ սնուցած իր կաթին հետ կը փոխանցէ մայրենի լեզուի քաղցրութիւնը, դարերէ մեզի հասած աշխատունակ եւ քաղաքակիրթ ըլլալու ցեղային առանձնայատկութիւններու գիտակցութիւնը կը լուսաւորէ անոր ուղին դէպի գերազոյն նպատակները, արդարացուցած կ'ըլլայ Հայ մօր իր պարտականութիւնը:

Հայ կինը ճգնաժամերուն եւ բազուկ, եւ թիկունք եղած է: Յոյս ներշնչած է: Խաղաղ օրերուն՝ թողած է ետին ոսկեղարի հետքեր՝ Հաղբատ ու Սանահին: Դաշոյն կապած է իր մէջըին՝ երը հնչած է փողը պայքարի: Կոչուած է Սօսէ Մայրիկ:

2013-ը «Հայ Մօր» տարի հոչակուած է Վեհափառ Հօր կողմէ: Վերարժեւորման, վերընձիւղման, ինքնահաստատման կոչի տարի է 2013-ը: «Տիկնայք Փափկասունք»-ը՝ դարէ-դար կը յիշուին: Անոնք պատահական ճամբորդներու պէս չեն նայած մայրութեան սէզ ճակատին: Այսօր անոնք կ'ապրին, որովհետեւ յաջողած են պահպանել միջնարերդի ոգեղէն զանձերը:

## ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅ ՍՈՒՐԲԵՐ Մինչեւ ԺԵ. Պար (Վաւերագիրներ)

**25.2 Յ. ՄԱՆԱԳԵԼԱՆ - Հ. ԱՃԱՌԵԱՆ,  
Հայոց նոր վկաները, էջ 32-39:**

Միիթարայ վարդապետի մականուն կոչեցեալ Գոշ,  
Ներբողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալն Խոստրով:

Զուարձանան ժողովուրդք նմանապէս ի յիշատակ կանուխ եւ անագան վկայից,  
զի մի է հաւաքումն հեռաւորութեան ժամանակին, որ առ Տէր մերն: Քանզի յանցեալ  
եւ ի ներկայ եւ յապառնի այլայլի, այլ ոչ զտիրապէսն փափագ: Վասն զի բնաւորապէս  
եւ ոչ պատահմամբ զնա ստացեալ ունիմք: Ըստ որում ոչ հուր եւ ոչ սուր եւ ոչ այլ ինչ  
ներհակ՝ հատանել զնա ի զանազան կարէ ժամանակի, զի յատացողէ աղաւաղին է եւ  
արծարծին: Նա եւ ոչ զիտէ ընտրել երեսս իրը ճոխի եւ աղքատի, առն եւ կնոջ,  
մանկան եւ ծերոյ, կուսի եւ երիտասարդի: Այլ զիւրն գտեալ արժանի բնակէ եւ ի  
նոսին ներգործէ: ապականչօքն զօրանայ եւ ի խափանիչսն սքանչելի լինի: ի վեր քան  
զկարիս ամբառնայ մարմնոյ: անհայր ուսուցանէ եւ անմայր: զմի եւեթ զիտել որ  
պատճառն է բնաւից: խնդայ ընդ չարչարանս, մեծարէ զվիշտս, կերակրի նախա-  
տանօք, ուրախանայ հայածանօք, ճոխանայ աղքատութեամբ, բերկրի տնանկու-  
թեամբ, մեւտանի կենդանի, յառնէ մեռեալ, ատէ զաշխարհ, գարշի որ ի նմա, խոկայ ի  
տուէ, հսկէ ի զիշերի, զարթուցանէ զանձն, հեղու զարտասուս, հաստատի հաւատով,  
միխիթարի յուսով, զօրանայ սիրով, զոչէ արիապէս եւ ելանէ նահատակ: պատրաստ  
զանձն ունի եւ սպասէ ժամու: Հայցէ աղօթիւք պատահիլ պատերազմին, եւ եթէ մարտ  
ճակատու ոչ իցէ՝ մարտաղիրն նախայօժար պսակէ կամօք: ի զէպ ժամանակի յօրինէ  
զործօք եւ կրկնապատիկ հատուսցէ վարձս, եւ եթէ լուեալ հալածիչքն ի նորին լինին  
զօրութենէ, սակայն յառաջ զարժանիսն ձգէ Հանդիսախն: վարէ զթագուցեալն իրը  
հողմով հրոյ զրոց սէրն: պատճառանաւ փորձանաց նահատակս ցուցանէ: որովք ի  
խոր զարմատն ձգէ, իրը առունկ ի սաստկութենէ շարժեալ հողմոյ: Եւ որպէս ի  
հանդերձից օժանդակութեամբ ոմանք այլոյ մերկանան ձեռօք: նմանապէս եւ ի  
մարմնոյ նոքա, հակառակօք զհակառակն զործեն նման Տեառն: Հալածեալք լինին ոչ  
յաշխարհէ միայն, այլ եւ ի մարմնոյ, զի երանութեանն արժանացին: Ժանեան անփո-  
փոխ զերանութիւնն, որպէս զնորին իսկ զտուողն: Վասն այնր եւ իւրաքանչյուրքն  
զնոսս ծնան ժամանակ: Եւ որպէս առաջնորդն յիշատակօք նորոգին միշտ, նմանապէս  
եւ նորքն պատուելով ընդ առաջնոսն առ ի մէնջ փառաւորին տօնիւք: Եւ զոր օրինակ  
առաջին է չարչարանօք խաչի վկայ Տէր եւ զենման նորա միշտ յեկեղեցի լինի խոր-  
հուրդ, նորոգ զնոյն ցուցանելով, որպէս նորք եւ հինք արժանացեալք վկայութեան,  
միով կոչին եւ զարդարին անուամբ: Ցաղազս որոյ եւ մեք զմերս կոչեմք պսակաւոր

վկայ նոր, եւ ընդ հինսն մեծարեմք տօնիւ, զԽոսարով ասեմք մանուկ եւ հանդիսաւոր նահատակ. զարքայանունն եւ զկրօղն կոչմանն, զերեւելին զաւառաւ եւ զպանձալին աշխարհաւ, զնշանաւորն եւ բնակութեամբ. զգեղեցիկն հասակաւ, զառոյդն մարմնով, զպատանին տիօք, զշառաւեղն քաջ յարմատոց բարեաց. Եւ զի թեպէտ զովութիւն վկայից յերկրէ եւ ի մարմնոյ զպատճառն ոչ ունի, այլ զի ի միասին նմա ամենայն եկին, յարմարեցաք սակաւուք. Եւ դարձեալ մերձ զանկաւորն դիցուք. պատւականն յանարդաց, մեծն ի փորունց, երեւելին յաննշանից, փարթամն յաղքատաց, ճոխն ի խոնարհաց, փառաւորն յանփառից, մեծատունն ի տնանգաց, իմաստունն ի տղիտաց, արին ի հեղգաց, պարկեշտն ի վաւաշոտից, արթունն ի քնչածաց, զուարթունն ի թմրեցելոց, լուսաւորն ի խաւարելոց, ամփոփեալն ի ցնուելոյ, արդարն յանիրաւաց, ընդրեախի բիւրուց, զօրաւորն ի ակարաց, խրախուսեալն ի միամարախց ծուլից, սպառազէնն ի զենընկեցաց, ծաղիկն ի ձմերանի, ակն ի վիմաց, մարգարիտն յաւազից, բարերախտիկն ի վատարախտից, գնողն ազարակին եւ ի նմա ծածկեցելոյ գանձին, ստացողն անզին մարգարտին, խաչակիրն Քրիստոսի, նախանձաւորն Տեառն վկայիցն, զտողն ճանապարհին անյայտ բազմաժամանակեայ եղելոյ, աշակերտն Տեառն միամիտ:

Զսա տեսեալ բանսարկուն նախանձի անզիտանալով վկատարածն. թոյլ եւ կոչման տայ չնորհ, զծածկեալն յայտնել զհամբեռութիւն. ի ձեռն զկինն առնու զէն չարն, կարծելով նմանապէս յաղթել, ամաչի գնայ ունայն. Զմի եղ զորոզայթ եւ յերկուս կարծէր յաղթել. փշրի որոզայթն, դատարկանայ խորհուրդն: Կինն էր թակարթ եւ յաղթել կարծէր պուռնկութեամբ եւ ուրացմամբ. պարտի յայսմ. փոխի յայլ զրպարտել զնահատակն տայ. հրապարակալուր զիրն առնէ. մատնի եւ ի բանդ մտանէ. հարցափորձի, խոստմունս բազում ընդունի, ի վեր քան զբնաւն ելանէ պատրանս, զմի եւ եթ փութացուցանել, եթէ անպարտ ի զրպարտութեանց է. զի մի տղեղն ծածկիցի անուամբ սքանչելին վկայութիւն. քանզի առաջի զծմարտութիւն ուրանալ եղին եւ զկեալ. դիւրապատիր զմանկութեան կարծեն զժամանակ. ներեն զղանալ. իսկ նա կրթութեան առնու պատճառս զմիջոց աւուրցն. խորհի զբազումս առաքինացեալս մանկունս եւ վկայեալս, զոր ոչ ուսաւ ի գրոց, ուսաւ հոգւով: Զմանկունս, ո՛վ զուք, թերեւս ի դէպ էր ասել դատաւորին չարի, կարծէք յաղթիլ յախտից. այդ ձերոց օրինացդ է եւ ոչ քրիստովնէից. զոր եւ ոչ յարութիւն առանց հեշտութեան խոստովանիք առանց ախտից եւ ոչ ծերք ձեր ողջախոհանան եւ երիտասարդք ձեր պարծանս զհշտութիւն վարկանին. այլ մեզ մաքրութիւն առաւել պատուի եւ մահ վասն հաւատոյ տօնի: Մայր վկայի անվարժ եւ անտեղեակ հայրն գրոց, հարկաւորեն ստիպեն. «Բանիւք, որդեակ, ասս եւ ազատեալ կալ զծմարտութիւն ուր եւ կամիս»:

Իսկ նա ուսեալ հոգւով զհրամանն Տեառն ոչ ուրանալ բանիւ առաջի մարդկան, զի մի առաջի Հօր ուրացի եւ նա, ոչ ընդունի. ի բաց զերես դարձուցանէ. սաստէ եւ ի ձեռաց ոչ կերակրի նոցա: Եւ եթէ զգրոց նոցա ոչ երկրորդէ, զնոյն զօրութեամբ ցուցանէ. «Զիա՞րդ զձեր ի կորուստ զմնունդ դարձուցանէք. ո՞չ ապաքէն Քրիստոսի հաւատացեալք՝ զուք Նմա եւ Նորին հաւատոց զիս ընձայեցաք, զիա՞րդ եւ մոլար մատնէք օրինաց: Զծնողաց պարտին որդիք ժառանգել զաւանդ. զոր ի ձէնը ընկալայ, ոչ ուրանամ զհաւատ, զի մի նախատինք ձեզ եղէց: Եթէ կարծիք ինչ էին մերոց կրօնից, ի դէպ էր խնդրող ծշմարտին լինել. բայց արդ յամենայն ազգաց վկայի աներկբայ եւ հաստատուն մերս լինել. նաեւ նոյն ի հալածացս վկայի եւ ի իրատն յայտնի. զի ի մահուանէ զերծանիլ ուսուցանեն, ոչ զչար ինչ թողուկ օրէնս եւ առնու բարի: Ոչ կարեմ ի սաստ անկանել օրինացն, եւ տեղի տալ չարախօսացն զձէնջ եւ մեռանել: Ամօթ մեծ է ինձ ընդ հասակալիցս, ի հրապարակի նախատիլ. զիա՞րդ սրտի

տարացյ խոցման, յորժամ զհաւատացեալ եղբարս յեկեղեցի ժողովեալ տեսանիցեմ եւ զիս մերժեալ: Հնագանդիլ ծնողաց խրատու, առողջից օրէնք ուսուցանեն եւ ոչ հրանդաց: նոյն եւ ի Տեառնէ յայտ է, զի թողու զայնպիսի ծնողսն հրամայէ: Պատուելի էիք ինձ մինչեւ ցայս վայր: այսուհետեւ զառաջինն պատուեմ պատճառ զԱստուած: Հեռի կացէք յինչն՝ որ հեռացուցանել զիս ի Տեառն խորհիք: ի բաց գնացէք, որ ոչ զզօրութիւն գիտէք պատուիրանաց: զի նա մարդասիրութեամբ է պատճառ եւ զուք հարկիւ բնութեամբ: վասն որոյ ամփոփիս լիցի պատիւն: Ո՞ւր զնորայն մոռացայց զշարչարանսն վասն մեր: ի ձէնջ ի դէպ էր ինձ խրատիլ ի համրերութիւն, այլ զուք լքանիլ ուսուցանէք: Զիա՞րդ ոչ մօրն նմանիս եւթանց մանգանցն՝ որ առ Մակարայեցիսն. զի փոխանակ միոյ եւթն ետ ի մահ իրեւ զօրինակ բազմաց: միթէ չէ՞ն նորա խանդաղատանք եւ կամ որդիատեաց էր մայր: այլ զի խրատեալ զիտէր յօրինացն, եթէ մահ վասն Աստուծոյ անմահութիւն է: Եւ թէ առանց դպրութեան զայս ոչ գիտէք, միթէ տօնի ո՞չ լուայք քառասուն վկայիցն, եթէ զի՞նչ ասաց կամ զի՞նչ գործեաց մանկանն Մեղիտոնի մայր: Մահ միայն զերեւելիս կարծէք չար, այլ այս պատճառ բարեաց առ Աստուծոյ է: եւ մեռելութիւն աներեւոյթ հոգւոյ կենօք յաւտենից մահ է: Խնայէք յիս իրը որդեսէրք, զիա՞րդ ոչ իմանայք, եթէ չար եւ ատելութիւն է մեծ՝ ծնողաց զորդույ ոչ կամիլ զկորուստ: ապա ընտրել արժան է, զի այս կարծեցեալ կորուսո՝ յաւտենից է գիւտ, եւ զիւտս այս՝ անվախճան կորուստ: Ընդէ՞ր զբարին յաչաղէք զիմ: Նախանձ եւ ոչ մի ինչ է ծնողաց: Զայն ինչ ընկալայ, զոր ի ձէնջ ոչ ուսայ: գախ որում ակն ոչ ունէի: Ընկալայ, որ ի վեր է քան զարժանն իմ: ճանապարհ ցուցաւ ինձ բարի: ի սրախ գիտութիւնս աղաղակէ՝ մի՞ յապաղել. եթէ հեղգամ՝ ե՞ր ապա զսա զտից: Սիրելի աշակերտաց շնորհս է: եթէ կայր յոզի իմ այսմ տենչանք՝ մինչեւ ցարդ ոչ գիտէի, այժմ ըորըոքեցաւ իրը հուր եւ ոչ տայ ինձ հանգիստ. ծանեայ ճշմարիտ զսէր Տեառն յիս լինել. եթէ ողջակիզօք եւ պատրագօք հայցել մինչեւ ցայժմ էի շահասէր, թող թէ բնաւին ոչ երի ..... տաս ..... էի ..... թենէ ..... ձր ..... զոր ..... բազմաց կանխաւ պատահեաց, որոց նախանձն մերձ էր, եւ կրթութիւն յաճախ, ոչ են զարմանք, այլ այս է հիանալի, զի ոչ զոք տեսի վկայ եւ զօրացուցիչ, այլ եւ հակառակ որպէս եւ զուք: Թո՞յլ տուք ինձ մեռանել յաղազս նորա, որ վասն իմ մեռաւ, եւ չարչարել յաղազս Զարչարեցելոյն. թէպէտ հաւասարել ոչ է ծառայիցս Տեառն, սակայն զյօժարութիւն ցուցանելի է: Ընդունի, զի բարերար է, եւ յիւրսն եւս յաւելու փառաց: վասն իւր առնէ զիմս, որ առնէ այժմ: Հաստատէին եւ զմիտս հաւատացելոց, եթէ մինչ ի կատարած ընդ մեզ է: պատուէ զժամանակս ի ձեռս իմ: ոչ տայ թոյլ մոռանալ զհանդէս վկայութեան. ճշմարտէ զպատմութիւնս յաղազս նահատակաց: առատ զինքն ցուցանէ եւ պատրաստ ի բաշխել բարիս: Մի՛ զայժմուս տեսանիցէք զիշտս եւ խորվիցիք, այլ ի կատարած անդր նայիցիք:

Փոխանակ բանդիս՝ դրախտն, եւ ընդ կապանացս՝ արձակումն ի մեղաց. քաղցին՝ հացն կենաց, եւ ծարաւին՝ ջուր մշտարուխ. ընդ ապականութեան մարմնոյ ծաղկի անապականութիւն, ընդ վախճանելի կենաց՝ անվախճանն: Եթէ զուք անդիտանայք, յինչն ոչ է ծածկեալ. լուարուք յայտնապէս՝ ոչ պատրիմ: Զբագում հասակակիցս տեսի մեռեալ վայրապար. հարկաւոր առաջի կայ մեռանել, ընդէ՞ր կամաւոր ոչ գործեցից եւ պասկեցայց:

Եւ լուեալ զայս զնացին խնդութեամբ եւ տրտմութեամբ՝ երկոքումը բաժանեալ. յաղթին ի բնութենէ կարեաց, սգան դառնապէս առաջի աչաց զմահն տեսանելով որդւոյն սիրելոյ, միսիթարին ի կատարածի՝ ուսեալք զպատիւ վկայից: Բայց եւ հալածչացն ցաւին ոզիքն, զի ի մեռեալ զյոյս նոցա ունել ասաց եւ վկայեաց, եթէ «կենդանի է Բանն աստուծոյ. կենդանի է եւ մարմնով, եւ զալոց է նա դատել զկեն-

դանիս եւ զմեռեալս, վասն որոյ ոչ ուրանամ եւ զպատիր ձեր ընդունիմ զբան եւ հաւանիմ մոլար ձեր օրինացդ եւ զհետ զամ հետին մահու, զի այդ է անուն մոլորեցչին ձերոյ»:

Եւ զայս լուեալ հատանէ վճիռ դատաւորն քարկոծ լինելոյ: Եւ պատճառ, զի ամենեքեան հաղորդեացին արդարոյն մահու եւ պսակեսցին: Եւ զայս իսկ քարոզն աղաղակէր: Այլ սակայն խորհուրդ է եւ այս վկայից, որոց կամ է բագում անդամ վասն Տեառն մեռանել: Կամօք բազմացն իբրու բազում անդամ մեռանին: Կապի եւ ընդ տունկս ի բժշկութիւն ճաշակման տնկոյն առաջնոյ, եւ ի հաղորդութիւն չարչարեցելոյն ի փայտի: Ընդունի զքարանցն բազմութիւն նման նախավկային: աղօթէ, թէ եւ ոչ յայտնի, սակայն ի սրտի, ըստ որում տեսանէ Տէր: հաւատալի է, թէ եւ ոչ առանց վերին տեսչութեան յաշնպիսում ժամանակի վկայք լինին, եւ հաստատէ զայս բանալն երկնից առաջի վկային, այլ ըստ պատշաճի յայտնին կամ ծածկին: Եւ եթէ նմա այս պատահեաց եւ մեզ ոչ յայտնեցաւ, Տեառն գիտելի է: Աւանդէ զհոգին ի ձեռս Աստուծոյ, ննջէ զքուն քաղցրութեան, զուարձանան հրեշտակք, բերկրին սուրբք, ցնծան հաւատացեալք, պարտի բանսարկուն, ամաչեն դեւք, զահի հարկանին հալածիքն, սակայն յայլ յեղանակ փոխին շարժեալք ի չար հոգւոյն: Մախի հրով ի նախատինս հաւատացելոց, եւ զի մի՛ պատուեացին նշխարք պատուական վկային՝ ընդ հուր անցանի անծախելիին՝ նման երից մանկանցն: զի եւ ո՛չ ի հերսն մերձեցաւ եւ ոչ զկապանս ելոյծ: Գիտեն պատկառել եւ տարերք ի կշտամբանս յանդգնելոցն, զի այնմ, որ զուրն շիջոյց բնութեան, շիջաւ իրաւացի եւ հուրն: եւ զի յայտ լիցի, եթէ հուրն հանդերձեալ զարդարս լուսաւորէ եւ կիզու զմեղաւորս: Եւ բանզի սուրբք հրովն որ ի Տեառնէ արկաւ միշտ բորբոքեալ են, որով եւ ամենայն շիջան ի հուր, անմատոյց շիջանելի լինին հրոյ, անշիջանելեաւն ձուլեալք: Եւ զի յանդ ելեալ մեղմանան զործօղք չարի, բայց չարագոյնք քան զչարսն անյազ են: Վասն այնորիկ ընդ ամենայն օրինակս անցուցին տանջանաց. ընդ կապանս, ընդ բանդ, ընդ ժարաւ, ընդ բանս անարգանաց, ընդ քարկոծանս մահու: Ընդ քարշանս զկնի մահու, ընդ հուր ի կատարածի, հազիւ ապա լուեալ զադարեցին: Բազում անդամ ի սրբոց մահու հանդարտ .....ի խս..... որ ..... մե ..... ան ..... ուն ..... բար ..... զդեւս, զի զկնի մահու ոչ յանդգնին: Նահանջին ապա այնուհետեւ պատկառեալք յանծախութենէ հրոյ: Զամայն եւ յագին չարանախանձիցն կամք: ի հանգիստ եւ զքաջն փոխեն վկայ, զանխանալով ի քարկոծչացն ծնողքն, ի սեպհականն իւրեանց տեղի ի հասարակ հաւատացելոցն զնելով շիրիմս, անգիտանան զօրինակ .....:

(Այս ընդարձակ վկայաբանութիւնը տեսնել նաեւ «Արարատ», 1897 թ., Յունուար, յաւելուած, էջ 37-41):

ԹԱՐԱՐԱՐ ՏԱՐԱՐԱՐ ՊԵՏԵԱՆ

(Շաբ. 57)

## ՍՈՒՐՊՐ ԳՐԱՅԻՆ

### ՍԵՐԸՆՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

**Ի. Գլուխ**

#### ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ (1-15)

Շարաբ երեկոյէն եսո՞, երբ Կիրակին կը բացուէր, Մարիամ Մագդաղեմացի եւ միւս Մարիամը գերեզմանը տեսնելու եկան: Յանկարծ զօրաւոր երկրաշարժ մը եղաւ, եւ Աստուծոյ հրեշտակը երկիթէն իշմեռվ՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած ժարը եւ նստաւ անոր վրայ: Անոր տեսէր փայլակի կը նմանէր, եւ հագուստները ճիւմի պէս ներմակ էին: Պահապամները երբ ասիկա տեսան, սարսափեցան եւ մեռելի պէս եղան: Հրեշտակը կիմերում ըստ:

- Դուք մի՛ վախնաք. գիտեմ որ խաչուած Յիսուսը կը փնտոէք: Հու չէ, որովհետեւ յարութիւն առաւ, իմշպէս ըսած էր: Եկէ՛ եւ տեսէ՛ այն տեղը, ուր դրուած էր: Ամմիջապէս գացէ՛ եւ ըսէ՛ իր աշակերտներուն՝ թէ յարութիւն առաւ: Ան ձեզմէ առաջ Գալիիա կը հասնի եւ հոօ պիտի տեսնէ՛ զինք: ահա ըսի ձեզի:

Կիմերը վախով, բայց միեւնոյն ատեն մեծ ուրախութեամբ դուրս ելան գերեզմանէն եւ վազեցին՝ պատմելու համար աշակերտներուն:

Յանկարծ Յիսուս հանդիպեցաւ անոնց եւ ըստ:

- Ողջո՞յն ձեզի:

Կիմերը մօտեմալով՝ փարեցան անոր ոտքերուն եւ երկրպագեցին անոր: Յիսուս ըստ:

- Մի՛ վախնաք, գացէ՛ եւ ըսէ՛ իմ եղբայրներուս՝ որ Գալիիա երթան. հո՞ն պիտի տեսնեն զիս:

Երբ կիմերը գացին, պահապամներէն ումանիք ժաղաք եկան եւ իմչ որ պատահած էր պատմեցին աւագ ժահանաներուն: Աւագ ժահանաները եւ երեցները հաւաքուելով՝ խորհրդակցեցան եւ առատ դրամ տուին պահապամներուն եւ ըսին.

- Բաէք՝ որ «իր աշակերտները գիշերով եկան եւ գողցան մարմինը, երբ մենք բնացած էինք»: Եւ եթէ կառավարիչին ականջը հասնի ասիկա, մենք զայն կը գոհացնենք. անհո՞գ եղէ՛ դուք:

Պահապամները դրամը առին եւ ըրին իմչ որ պատուիրուած էր իրենց: Եւ այսպիսով այս լուրը տարածուեցաւ հրեաներուն մէջ միմշեւ այսօր:

**Աստուծոյ կամքով եւ ողորմութեամբ Մատթէոսի Աւետարանին սերտողութեան վերջին գլուխը հասած ենք ահա:**

**Բոլորիս ծանօթ դրուագ է ասիկա:**

«Նարաք երեկոյէն ետք, երբ Կիրակին կը բացուէր», կ'ըսէ: **Այս առնչութեամբ եթէ Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննէսի աւետարաններուն նայինք, կը կարդանք հետեւեաները-**

1) «Մարիամ Մագդաղենացի, Յակոբոսի մայրը՝ Մարիամ, եւ Սոլոմէ գացին խունկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան» (*ՄՌ 16.1-2*):

2) «Կիրակի առաւօտ շատ կանուխ, Մարիամ Մագդաղենացի, Յովհաննան եւ Յակոբոսի մայրը՝ Մարիամը, ուրիշ կիներու հետ գերեզման եկան՝ իրենց հետ բերելով իրենց պատրաստած խունկերը» (*ՂԿ 24.1*):

3.- «Կիրակի առաւօտ կանուխ, մքնշաղին, Մարիամ Մագդաղենացի գերեզման գնաց» (*ՅՀ 20.1*):

**Երեք աւետարանիչներուն «առաւօտ կանուխ, արեւածագին»-ը, մէկուն «առաւօտ շատ կանուխ»-ը, միւսին ալ «առաւօտ կանուխ, մքնշաղ»-ը կը լուսաբանեն Մատթէոսի «Նարաք երեկոյէն ետք, երբ Կիրակին կը բացուէր»-ը: Հետեւարար, կիներուն այցելութիւնը Յիսուսի գերեզմանին՝ ո'չ թէ տեղի ունեցած էր երեկոյին յաջորդած ժամերուն, այլ՝ լուսաբացին:**

**Մատթէոսի համաձայն, ուրեմն, Մարիամ Մագդաղենացի եւ Յակոբի եւ Յովհէսի մայրը՝ Մարիամ, Յիսուսի գերեզմանը կ'այցելեն:**

«Յանեկարծ զօրաւոր երկրաշարժ մը եղաւ, եւ Աստուծոյ երեշտակը երկինքէն իշնելով՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած ժարը եւ նատաւ անոր վրայ», կ'ըսէ: **Ոմանց միաքին մէջ այն տպաւորութիւնը կրնայ ստեղծուիլ, թէ Յիսուս յարութիւն առաւ այս «երկրաշարժ»-ի պահուն: Սակայն Աւետարանիչը Յիսուսի յարութեան մասին չի խօսիր: Գուցէ հարց արուի, որ եթէ Յիսուս յարութիւն չառաւ այս «երկրաշարժ»-ի պահուն, ապա ինչո՞ւ հրեշտակը գլորեց գերեզմանի մուտքին դրուած քարը: «Պէտք է ժարը գլորուէր որ Յիսուս յարութիւն առնելով դուրս գար գերեզմանէն»՝ կը մտածեն ոմանք:**

**Յարութիւն առնելու համար՝ Յիսուս քարի գլորուելուն պէտքը չունէր: Քարը հրեշտակին կողմէ գլորուեցաւ ո'չ թէ Յիսուսի համար, այլ՝ կիներուն համար: Յիշեցէք Մարկոսի տուած տեղեկութիւնը, թէ մինչ կիները գերեզման կ'երթային՝ իրարու կը հարցնէին. «Ո՞վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին դրուած քարը» (*ՄՌ 19.3*): Արդ, հրեշտակին ըրածը՝ անոնց համար էր: Հետեւարար, յարութիւնը տեղի ունեցած էր քարին գլորուելէն առաջ:**

**Ե՞րբ յարութիւն առաւ Յիսուս:**

**Ոչ ոք գիտէ կամ կրնայ գիտնալ:**

**Եկեղեցական աւանդութիւններուն նայելու պարագային, կրնանք հասկնալ, թէ իւրաքանչիւր եկեղեցի ո՞ր ժամուն կատարուած կը համարէ Յիսուսի յարութիւնը:**

**Օրինակ, Հայ եկեղեցւոյ աւանդութեան համաձայն, Զատկուան Ճրագալոցի Մ. Պատարագը կը մատուցուի երեկոյին աւարտելէն անմիջապէս ետքը, եւ յարութեան աւետիսը այն ատեն կը տրուի: Ուստի, Հայ եկեղեցին այդ ժամուն կատարուած կը համարէ Յիսուսի յարութիւնը: Գիտենք, որ ուրիշ եկեղեցիներ կէս գիշերին կը մատուցեն իրենց Մ. Պատարագը: Անոնց համար ալ, Յիսուս յարութիւն առած է այդ ժամուն:**

**Անշուշտ ժամերու տարբերութիւնը էական չէ: Մեզի համար կարեւորը այն է, որ**

**Յիսուս յարութիւն առաւ մեռելներէն, եւ վստահարար՝ նախքան հրեշտակին կողմէ քարին գլորուիլ:**

«Երկրաշարժ»-ը մեզի կը յիշեցնէ այն պահը, երբ Յիսուս խաչին վրայ իր հոգին աւանդեց: **Տեսանք որ այն ատեն ալ «Երկրաշարժ»-ի մը պատահիլը արձանագրուած է:** Յիսուսի մեկնումը երկրաշարժով եղաւ: **Արդեօք կրնա՞նք այս երկրաշարժին առիթով ալ տեսնել «Վերադարձ»-ը յարուցեալ Յիսուսի, որ քառասուն օրեր պիտի մնար երկրի վրայ՝ մինչեւ համբարձումը (տե՛ս Ղկ 1.3-9):**

«Սատուծոյ իրեշտակը երկիխնէն իշներով՝ գերեզմանի մուտքին դրուած քարը եւ նստաւ անոր վրայ»: **Հրեշտակին յանկարծական երեւումը թերեւս ոմանց համար համար կը յարուցանք:** **Անոնք որ աւետարաններուն պատումները քով-քովի կը դնեն եւ զանոնք բաղդատարար կը կարդան՝ չատ փոքրիկ տարրերութիւններ կը նշմարեն:**

**Մատթէոս եւ Մարկոս կը յիշեն, որ մէկ հրեշտակ միայն երեւցաւ: Մինչդեռ Ղուկաս եւ Յովհաննէս երկու հրեշտակներու կ'ակնարկեն: Այս եւ այլ տարբերութիւններ պարզապէս հետաքրքրական են եւ օգտագործած աւանդութիւններու տարբերութիւնները կը թելաղրեն: Աւանդութիւնները հնարուած չեն, այլ ճշմարիտ փորձառութիւններ կը պատմեն: Այնպէս ինչպէս յետ Յիսուսի մկրտութեան՝ հրեշտակները կը սպասարկէին անոր, յետ յարութեան ալ շուրջը կը յածէին՝ նոյնպէս սպասառութեան համար: Արդ, բնական է, որ զանոնք տեսնող մարդկային փորձառութիւնները տարբեր ըլլային եւ տարբեր աւանդութիւններ կտակէին:**

«Անոր տեսքը փայլակի կը նմանէր, եւ հագուստները ձիւնի պէս ներմակ էին»: **Տեսքին փայլակի կամ կայծակի նմանիը՝ պահապաններուն խիստ սարսափ պատճառելու համար էր: Հրեշտակը, սակայն, չէր ուզեր որ իր այդ տեսքը սարսափեցնէր նաև Յիսուսի գերեզմանը այցելող կիները: Ուստի, անմիջապէս կ'ըսէ. «Դուք մի՛ վախնաք»:**

**Իսկ անոր հագուստներուն ձիւնի պէս ճերմակութի՞ւնը:**

**Այցելու կիներուն նկատմամբ խաղաղութիւնը կ'արտայայտէ:**

«...գիտեմ որ խաչուած Յիսուսը կը փնտուէֆ: Հոս չէ, որովհետեւ յարութիւն առաւ, ինչպէս ըսած էր»: **Եւ հրեշտակը այսպէ՛ս կ'աւետէ Յիսուսի յարութիւնը: Հետաքրքրական է խօսքին հոգերանական կառոյցը: Հրեշտակը կիներուն նախ կը խօսի համաձայն անոնց ցանկութեան, որ էր խաչուած Յիսուսի մարմինը գտնել: Ապա կը յայտնէ Յիսուսի մարմինին չըլլալը այնտեղ, որովհետեւ յարութիւն էր առած: Այս յայտնութեան կը կապէ Յիսուսի կանխասացութիւնը՝ թէ ինք յարութիւն պիտի առնէր. կը յիշեցնէ զայն: Հրեշտակը իր յայտնութիւնը առաւել հաստատելու եւ կիներուն կասկածը փարատելու համար՝ անոնց կ'ըսէ. «Ենկէ եւ տեսէ՛ այն տեղը, ուր դրուած էր»:**

**Կիները գերեզման կը մտնեն եւ Յիսուսի մարմինը այնտեղ չեն գտներ: Եւ հրեշտակը անոնց կու տայ հետեւեալ պատուէրը. «Անմիջապէս գացէֆ եւ ըսէ՛ իր աշակերտներուն՝ թէ յարութիւն առաւ: Ան ձեզմէ առաջ Գալիլիա կը հասնի եւ հոն պիտի տեսնէֆ զինք. ահա ըսի ձեզի»:**

**Կիները վախով լեցուած էին: Թէեւ հրեշտակը չկախնալ յորդորած էր անոնց, սակայն իրապէս անկարելի էր այսպիսի փորձառութեան մէջէն անցնիլը առանց վախուննալու: Անշուշտ հասկնալի է, որ կիներուն ունեցած վախը զիրենք «մեռելի պէս» չէր դարձնէր: Անոնց վախը զինուորներուն սարսափը չէր, այլ այն երկիւղը որ կ'արթննայ հաւատացեալ հոգիին մէջ՝ ի տես հրաշալի դէպքի մը: Անոնք ըմբռնած էին Յիսուսի յարութեան յայտնութիւնը, այդ պատճառով ալ մեծ ուրախութեամբ դուրս**

կու գային գերեզմանէն եւ աշակերտներուն պատմելու կը փութային, երբ յանկարծ Յիսուս կը հանդիպէր իրենց եւ ողջոյն կու տար: Յարութենէն ետք՝ առաջին ողջոյնն է ասիկա. կեանքի յաղթանակին յայտարարութիւնը: Յիսուսի այս յանկարծական երեւումին վրայ, կիները կը մօտենային եւ գետին իյնալով կը փարէին անոր ոտքերուն ու կ'երկրպագէին: Այս կիները յաճախ գտնուած էին Յիսուսի շուրջ եւ անոր սպասարկած: Զայն երբեք չէին տեսած մարդկային ընկալման սովորական պարունակէն դուրս: Անկասկած, ճանչցած էին անոր մէջ աստուածայինին ներկայութիւնը, սակայն անկարելի էր որ պատկերացնէին այն՝ որուն առջեւ կը գտնուէին յարութեան այս պահուն: Անբացատրելի վիճակի մէջ էին, եւ երկիւղը զիրենք անմիջապէս կը մղէր պաշտամունքային արտայայտութեան, որ երկրպագութիւնն էր:

Յիսուս ինք եւս քաջ ըլլալ կը յորդորէ անոնց եւ կը պատուիրէ, որ երթան ու իր աշակերտներուն ըսեն, թէ Գալիլիա ուղղուին՝ զինք տեսնելու համար:

Ի՞նչ նշանակալից է Յիսուսի արտայայտութիւնը, որ իր աշակերտները՝ իր «Եղբայրներ»-ը կը կոչէ: Յարուցեալ Յիսուսի հետ ո՛չ թէ միայն կեանքը կը յաղթանակէ, այլեւ հաւատացեալներուն եղբայրութիւնը կը հիմնաւորուի:

Մկրնապէս, անոնք իր աշակերտներն էին: Նաեւ սկրնապէս անոնք ծառաներու պէս էին: Վերջին Ընթրիքի տաեն, կը տեսնենք որ Յիսուս կը յայտարարէ, թէ ալ զիրենք «ծառայ» չի ճանչնար, որովհետեւ Վերջին Ընթրիքին սեղանակցութեամբ՝ անոնց վերջնականապէս յայտնած էր Տիրոջ կամքը: Այն ատեն զանոնք իր «բարեկամ-ներ»-ը կոչած էր (ՅՀ 15.14-15): Իսկ ահա՝ յարութեան այս պահուն զանոնք իր «Եղբայրներ»-ը կը կոչէ:

Մարդկային սովորական ընկալումին համաձայն, Յիսուս հակառակ ընթացքով պէտք է ճանչնար իր աշակերտները, այսինքն՝ նախ եղբայրներ, ապա՝ բարեկամներ, եւ վերջապէս՝ ծառաներ: Վերջի վերջոյ, ինք իր յարութեամբ փառաւորեալ Տէրն էր: Սակայն Յիսուսի ճանչման ընթացքը այլ է եղած: Քրիստոս աշխարհ եկած էր մարդը փրկելու: Աստուծոյ ընտանիքին դուրս ինկած մարդը՝ ետ Աստուծոյ ընտանիքին մէջ առնելու: Անտոնք որ անդամ են այդ ընտանիքին՝ եղբայրներ են: Աստուծոյ փրկարժործական ծրագիրն է մարդոց եղբայրութեան հաստատումը՝ իրեն հետ մտերմութեան մէջ:

Պօղոս առաքեալ այս հոգեւոր եղբայրութեան առնչաբար գրած է. «Աստուած բարիին համար գործակից կ'ըլլայ անոնց՝ որոնք կը սիրեն զինք եւ իր ծրագիրին համաձայն իրեն կանչուած են: Որովհետեւ, Աստուած զանոնք սկիզբէն կը նանշնար եւ սկիզբէն ալ սահմանեց որ իր Որդիին հարազատ պատկերը ըլլան, որպէսզի Յիսուս բազմարիւ եղբայրներու մէջ անդրանիկը ըլլայ» (Հռ 8.28-29):

Կիներուն մեկնելէն ետք, պահապաններէն ոմանք քաղաք կ'երթան եւ պատահածը կը պատմեն աւագ քահանաներուն: Աւագ քահանաները եւ երէցները Ատեանը ժողովի կը կանչեն, կը խորհրդակցին եւ առատ դրամ կու տան պահապաններուն եւ կ'ըսեն.

- Ըսէ՞ որ «իր աշակերտները գիշերով եկան եւ գողցան մարմինը, երբ մենք էնացած էինք»: Եւ եթէ կառավարիչին ականջը հասնի ասիկա, մենք զայն կը գոհացնենք. անհո՞գ եղէ դուք:

Պահապանները շատ մտահոգ էին, որովհետեւ գիտէին, թէ Յիսուսի մարմինին անյայտացման հետեւանքով՝ կրնային մահուան դատապարտուիլ: Ուստի, աւագ քահանաները եւ երէցները կը հանդարտեցնեն զանոնք՝ խոստանալով, որ եթէ կառավարիչին ականջը համնէր լուրը՝ զայն կը գոհացնէին եւ հարցը կը փակէին:

**Պահապանները դրամը կ'առնեն եւ կ'երթան:**

«Այս լուրը տարածուեցաւ», կ'ըսէ: Ո՞ր լուրը: Եղելութիւնը ծածկելու ճիգի՞ն լուրը, թէ ամբողջ պատահածին լուրը, այսինքն՝ Յիսուսի յարութեան նաեւ: Աւետարանիչի խօսքին մէջ ճիշդ կ'ըլլայ տեսնել թէ՛ Յիսուսի յարութեան մասին շնորհները, եւ թէ շնորհները կրօնական իշխանաւորներուն եղելութիւնը ծածկելու ճիգին:

### ՅԻՍՈՒՍ ԿԵՐԵՒԻ ՏԱՄՆԸՄԷԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒԻՆ (16-20)

Իսկ տասներումէկ աշակերտները գացին Գալիլիա, այն լեռը ուր Յիսուս ժամադրուած էր իրենց հետ: Երբ տեսան զիթք, երկրպագեցին իրեն, բայց ոմանք տարակուածացան: Յիսուս մօտենալով խօսեցաւ անոնց հետ: Անպա ըստ:

- Ամէն իշխանութիւն տրուեցաւ ինձի երկինքի մէջ եւ երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը զիս որկեց, այնպէս ալ ես ձեզ կը որկեմ: Հետեւարար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք: Զանոնք մկրտեցէ՞ Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին անունով: Անոնց սորբեցուցէք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի. Եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը:

Յետ յարութեան, Յիսուս երեւումներ կամ յայտնութիւններ ունեցաւ: Եկեղեցւոյ կեանքին համար մեծ կարեւորութիւն ներկայացնող երեւում է ասիկա:

Հատուածը կը սկսի տասնըմէկ աշակերտներուն ակնարկութեամբ: Ուստի, կը մտածենք թէ անոնցմէ զատ ուրիշներ չկային Յիսուսի հետ այն հանդիպման ատեն:

Կորնթացիներու Առաջին Նամակին 15-րդ գլխուն սկիզբը, Պօղոս առաքեալ կը յիշէ իրեն հասած աւանդութիւն մը, եւ կ'ըսէ. «Ես ձեզի փոխանցեցի այն հաւատքը որ նախ ես բնդումնեցի. այն՝ որ Քրիստոս մեր մերքերուն համար մեռաւ, ինչպէս սուրբ գիրքերը կ'ըսէին, բաղրուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ, դարձեալ սուրբ գիրքերուն համաձայն, ու երեւցաւ Պետրոսին եւ ապա տասնըմէկ առաքեալներուն: Յետոյ երեւցաւ միատեղ խմբուած ինքն հարիւրէ աւելի հետեւրդներու...: Այնուհետեւ երեւցաւ Յակոբոսին եւ ապա բոլոր առաքեալներուն: Ի վերջոյ, բոլորէն յետոյ երեւցաւ նաեւ ինծի, վիժածիս» (Ա.Կր 15.3-8): Թէ հինգ հարիւրէ աւելի հետեւորդներուն հետ պատահած երեւումը ո՞ւր տեղի ունեցաւ՝ չէ ըսուած: Ոչ նամակին, ոչ ալ նոր Կտակարաննեան այլ էջի մէջ այդ դէպքին ակնարկութիւն կայ:

Գուցէ զարմանալի թուի, որ աւետարանիչները ինչո՞ւ այնքան կարեւոր դէպքի վրայ լուած են, մինչդեռ պէտք է արձանագրած ըլլային: Սակայն կարեւոր է անդրադառնալ, որ աւետարանիչները Յիսուսի կապուած շատ դէպքեր եւ շատ խօսքեր չեն արձանագրած: Միայն այն դէպքերը եւ խօսքերը յիշած են, որոնք իրենց նպատակին մէջ կը մտնէին: Օրինակ, Մատթէոսի նպատակը չէր եղած Յիսուսի բոլոր երեւումները թուել, ուստի ան միայն յիշած էր առաջին եւ վերջին երեւումները առաջինը՝ որովհետեւ յարութեան դէպքին անմիջապէս կը յաջորդէր եւ յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէր, իսկ վերջինը՝ որովհետեւ անմիջապէս կը կանխէր համբարձման դէպքը, եւ եկեղեցւոյ առաքելութեան համար Յիսուսի ուղեցուցիչ պատգամը կը բովանդակէր:

Վստահարար, Մատթէոս եւ Յովհաննէս առաքեալները այն հինգ հարիւրին մէջն էին: Իսկ Ղուկաս եւ Մարկոս նոյնիսկ եթէ մէջը չէին՝ բայց այն երեւման մասին տեղեակ ըլլալու էին: Դէպքը իրենց աւետարաններուն մէջ չէին արձանագրած՝ որովհետեւ պատահած եւ առաջարկութիւն կը ներկայացնէր:

Հետեւ իրենց գրութեան նպատակը ապացոյցներ կուտակել էքր: Նաեւ կարելի է մտածել, թէ աւետարաններուն գրառման թուականին եւ վայրին մէջ, ու հասցէին մօտ, Յիսուսի յարութիւնը իրականութիւն էր, որուն վրայ կասկած չկար: Մինչդեռ Պօղոս առաքեալի ժամանակ, որ աւետարաններուն գրառման թուականէն առաջ էր, Յիսուսի յարութեան շուրջ կասկածներ շրջան կ'ընէին: Եւ առաքեալին կը մնար՝ փարատելու համար ապացուցել:

**Եկեղեցւոյ կանուխ ժամանակներէն,** բազմաթիւ մեկնիչներ հինգ հարիւրին երեւումը կապած են Գալիլիայի մէջ Յիսուսի երեւումին: Անոնց համաձայն, Գալիլիայի լեռան վրայ Յիսուս միայն տասնըմէկին չերեւցաւ, այլ նաեւ գաւառի այն ըոլոր հետեւորդներուն, որոնք առաքեալներուն հետ փութացած էին իրենց Տէրը տեսնելու:

Լեռան մասին երկու ենթաղութիւն կայ. ըստ ոմանց՝ անիկա Այլակերպութեան լեռն է՝ Հերմոնը, եւ ըստ ուրիշներու՝ այն լեռը, ուրկէ Յիսուս Լեռան Քարոզը խօսած էր, որ Գալիլիայի լիճին մերձակայ բարձունք էր:

Գալիլիա գալը խորհրդանշական արարք է: Այն ժամանակ Գալիլիան մեծ մասամբ հեթանոսներով լեցուն էր, ուստի իր երկրաւոր հանդիպման վերջին ժամադրավայրը դարձնելով զայն՝ հեթանոսներուն մէջ աւետարանչութեան ուղղութիւնը ցոյց կու տար: Իր աշակերտները ոչպի հեթանոսները առաքելու համար Գալիլիա ժամադրութիւն՝ միաժամանակ կը պատմէ աւարտը Հին Ռւխտին եւ սկզբնաւորումը Նոր Ռւխտին: Գալիլիան դուռն է հեթանոս աշխարհին: Յիսուս իր աշակերտները կը հրաւիրէ, որ աւետարանչութիւնը չսահմանափակեն միայն երրայեցի ժողովուրդին մէջ, այլ զայն տանին ըոլոր ազգերուն:

«Երբ տեսան զինք, երկրպագեցին իրեն», կ'ըսէ: **Աշակերտներէն ոմանք պաշտամունքային երկրպագութեամբ** կը խոնարհին Յիսուսի առջեւ, որովհետեւ իրենց յարուցեալ Տիրոջ մէջ կը տեսնեն Աստուածութիւնը:

Գրաբարը յունարէն բնագիրին նրբօրէն հաւատարիմ՝ «Եւ ոմանք յերկուացան» կ'ըսէ: «Յերկուանալ» կը նշանակէ՝ երկու միտքի մէջ ըլլալ, վարանիլ: Ոմանք երկու միտքի մէջ էին կամ կը վարանէին: Անոնք գեռ չէին ճանչցած յարուցեալ Յիսուսի Աստուածութիւնը: Ուստի ներքին մղումը չունէին անոր առջեւ երկրպագելու եւ զայն պաշտելու:

Այդ երկմտանքը տեսնելով է, որ Պօղոս առաքեալ Տիմոթէոսի առաջին նամակին մէջ գրած էր. «Անհերթելիօրէն մեծ է աստուածպաշտութեան խորհուրդը, որովհետեւ Աստուած մարմինով երեւցաւ, եւ հոգիով արդարացաւ, հրեշտակներուն յայտնուեցաւ, ազգերուն քարոզուեցաւ, աշխարհի մէջ հաւատացուեցաւ, փառքով երկինք բարձրացուեցաւ» (Ա.Ճ. 3:16): **Այսօր ալ կարելի է նոյնպէս յայտարարել աստուածպաշտութեան խորհուրդին մեծութիւնը,** եւ հասկնալ մարդկային կարողութեան անբաւարարութիւնը զայն ըմբռնելու: Կարելի չէ միտքով ըմբռնել խորհուրդը, այդ պատճառով ալ անոնք որ հաւատքի խմորը ունին, սակայն իրենց միտքին կը վստահին՝ կ'իյնան երկմտանքի մէջ:

«Ամեն իշխանութիւն տրուեցաւ ինծի երկինքի մէջ եւ երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը զիս որկեց, այնպէս ալ ես ձեզ կը որկեմ»: **Սկիզբէն ըսեմ,** որ խօսքին երկրորդ բաժինը յունարէն հնագոյն ձեռագիրներուն մէջ չկայ: Անշուշտ որեւէ հարց չի յարուցաներ յաւելումը, որովհետեւ նախ կը համաձայնի յաջորդ համարին, եւ երկրորդ Յիսուս իր առաքելութեան կէսէն սկսեալ աշակերտները բարողելու եւ ուսուցանելու կը դրկէր:

«Ամեն իշխանութիւն տրուեցաւ ինձի երկինքի մէջ եւ երկրի վրայ»: **Ի՞նչ իշխանութեան մասին կը խօսի Յիսուս:**

**Յարութեամբ տրուած իշխանութեան:**

**Իսկ յարութեամբ ի՞նչ իշխանութիւն տրուեցաւ Յիսուսի:**

**Որպէսզի յարութեամբ տրուած իշխանութիւնը ճիշդ հասկնանք՝ յլշենք այն երկու խօսքերը, որ Յիսուս ըսած էր:**

**Առաջինը իր այլակերպութենէն անմիջապէս առաջ.** «Վաստահ եղէք, որ հոս գտնուղներն ումանի պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն Մարդու Որդին որ կու գայ իր բագաւորութեամբ» (**Մտ 16.28:**)

**Երկրորդը՝ Աստեանին մէջ.** «Ասկէ ետք պիտի տեսնէք Մարդու Որդին՝ ամենազօր Աստուծոյ աջ կողմը նստած. եւ պիտի տեսնէք որ կու գայ երկինքի ամպերուն մէջէն» (**Մտ 26.64:**)

**Այս երկու խօսքերը մէր դիմաց իրարմէ տարրեր նշանակութիւններ բանալով հանդերձ, հիմնական միտք մը կը բերեն մեզի, եւ այն միտքը կապ ունի յարութեան հետ: Յիսուս իր յարութեամբ ստացաւ թագաւորութիւնը, որ յաւիտեաններուն մէջ եւ իր Աստուծութեամբ ունէր, որովհետեւ ինք Որդին է ամենազօր Աստուծոյ աջ կողմը նստած:**

**Յիսուսի իշխանութիւնը՝ իր թագաւորութիւնն է:** **Այդ թագաւորութիւնը այս աշխարհի վրայ պիտի հասնի իր վախճանական տիրութեան, երբ իր երկրորդ գալուստին՝ Հօր փառքով պիտի յայտնուի, եւ Զարն ու անոր զօրութիւնները նուածէ վերջնականապէս, եւ ամէն ինչ իրեն ենթարկուի:**

«...գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք»: **Յիսուս իր աշակերտները կ'առաքէ համայն մարդկութիւնը իրեն աշակերտ դարձնելու: Նախապէս իր աշակերտներուն առաքելութիւնը սահմանափակած էր երրայեցի ժողովուրդին մէջ, իսկ հիմա զանոնք կ'առաքէ բոլոր ազգերուն մօտ տարածելու Աւետարանը, որ հրաւէր է մաս կազմելու Աստուծոյ թագաւորութեան:**

**Եկեղեցւոյ պատմութենէնք, որ աշակերտները սկզբնապէս պիտի տատամէսէին դէպի հեթանոս աշխարհ աւետարանչութիւն կատարելու մէջ: Այդ տատամսումը ցեղային-կրօնական եւ հոգեբանական պատճառներ ունէր: Ինչպէս կարելի էր երթալ ու քարոզել եւ ուսուցանել անոնց, որոնք պիդ կը համարուէին: Ինչպէս կարելի էր «ընտրեալ ժողովուրդ»-ին խոստացուած Աստուծոյ փրկութիւնը տանիլ ուրիշներուն: Եւ ինչպէս կարելի էր յարարերութիւն ունենալ եւ գործել օտար ազգերուն հետ եւ մէջ: Սակայն վերջի վերջոյ պիտի շարժէին Յիսուսի պատուէրին համաձայն, եւ անկէ քաջալերուած:**

«Զանոնք մկրտեցէք՝ Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին անունով»: **Ասկէ առաջ, Յիսուս իր աշակերտներուն երբեք մկրտելու հրահանգ տուած էր: Եթէ նկատի առնենք Մատթէոսի Աւետարանը՝ այդպիսի հրահանգ չենք գտներ: Իսկ Յովհաննէսի Աւետարանին մէջ կը կարդանք, որ Յիսուսի աշակերտները կը մկրտէին (Յհ 4.2): Եթէ կը մկրտէին, ապա ի՞նչ բանաձեռով կը մկրտէին: Այստեղ Յիսուս կու տայ բանաձեւ մը, որ է մկրտել Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին անունով:**

**Հետաքրքրական է նայիլ Առաքեալներուն Գործերը զիրքին: Անոր մէջ մկրտութիւններուն բանաձեւերն են. «Տէր Յիսուս Քրիստոսի անունով» (Գրծ 2.38), «Տէր Յիսուսի անունով» (Նոյն 8.16), «Յիսուսի Քրիստոսի անունով» (Նոյն 10.48), «Նազով-**

ըեցի Յիսուս Քրիստոսի անունով» (նոյն 4.10,12) է: **Հոն Ս. Երրորդութեան բանաձեւը չկայ: Ինչո՞ւ այս տարբերութիւնը, ինչպէ՞ս բացատրել:**

**Առաքեալներուն Գործերը գիրքին յիշած բանաձեւերը հերքումը չեն Ս. Երրորդութեան: Գիտենք, որ մկրտութեան նախապայմանը առ Յիսուս Քրիստոս հաւատքն էր, առանց անոր հաւատալու կարելի չէ մկրտութիւնը: Քրիստոնէական մկրտութիւնը պայմանաւորուած է Յիսուսի վրայ հաւատքով: Ան որ այդ հաւատքով կը մկրտութիւնում կամ կամ դառնայ եկեղեցւոյ, անկախ բանաձեւին տարբերութենէն: Առաքեալներուն Գործերը գիրքին մէջ տրուած բանաձեւերը՝ քրիստոնէական մկրտութեան նախապայմանը կը յայտնեն, ըստ որուն՝ առանց առ Յիսուս հաւատքին՝ կարելի չէ անդամ ըլլալ եկեղեցւոյ: Ան որ Յիսուսի անուամբ մկրտուած է կամ կը մկրտութիւնում միաժամանակ Ս. Երրորդութեան անունով մկրտուած կ'ըլլայ: Աստուծոյ Որդին անանջատելի է Հօրմէն եւ Ս. Հոգիէն:**

**Յիսուս Ս. Երրորդութեան անունը տալով, նոր յայտնութիւն է որ կը կատարէ:**

«Անոնց սորվեցուցէք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի»: **Այս Աւետարանին սկիզբը, կամ 4-րդ գլխուն վերջաւորութեան, մենք տեսանք որ Աւետարանիչը դիտումնաւոր կերպով կը շեշտէր Յիսուսի գործունէութեան երեք կարեւոր երեսները. ուսուցում, քարոզութիւն եւ բժշկում: Ուշագրաւ է, որ այստեղ Յիսուս իր աշակերտներուն կ'ըսէ, որ ուսուցանեն, եւ քարոզելու պատուէր չի տար: 10-րդ գլխուն մէջ, անոնց իշխանութիւնը տուած էր նախ բժշկելու, ապա քարոզելու (Մտ 10.1,7): Իսկ այստեղ իշխանութիւնը կու տայ ուսուցանելու: Մինչ իր գործունէութիւնը ուսուցումէն կ'անցնէր քարոզութեան եւ ապա բժշկումին, աշակերտներուն գործունէութիւնը բժշկութենէն կ'անցնէր քարոզութեան, ապա՝ ուսուցումին: Այս ընթացքներուն տարբերութիւնը ինչպէ՞ս կարելի է հասկնալ:**

**Յիսուս երկինքէն էր, ուստի նախ երկնաւոր ճշմարտութիւնը բերաւ մարդոց, ապա զայն աւետեց քարոզելով ու մարդիկը հաւաքեց իր վրկութեան ուռկանին մէջ, եւ բժշկութեամբ ալ ապացոյցը տուաւ իր յայտնած բարի լուրին եւ երկնաւոր ճշմարտութեան, միաժամանակ յայտնելով զալիք կեանքին անապականութիւնը եւ ցաւերէ ու հեծութիւններէ ազատ լինելակերպը:**

**Աշակերտներուն տրուած առաջին իշխանութիւնը բժշկութիւնն է, որովհետեւ մարդոց կողմէ առաջին սպասուածն է անիկա: Նախ պէտք է ծառայել մարդոց, ապա անցնիլ անոնց միտքերն ու հոգիները գրաւելու: Առանց ծառայութեան՝ խօսքերը օդին մէջ կը ցնդին: Ուստի, աշակերտները նախ կ'ունենան իշխանութիւնը բժշկելու կամ բժշկութեամբ ծառայելու, եւ ետքը՝ իշխանութիւնը մարդիկը խանդապառելու Աւետարանին հիմնական գաղափարներով, եւ վերջապէս՝ ուսուցմամբ խորացնելու անոնց հոգեւոր տեսողութիւնը:**

«...եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը»: **Մատթէոսի Աւետարանը այսպէս կը կնքուի: Յիսուսի այս խոստումը քաջալերանք էր թէ իր աշակերտներու անմիջական շրջանակին, եւ թէ քաջալերանք է բոլոր ժամանակներու եկեղեցին:**

**Յիսուս կը խոստանայ միշտ իրեն հաւատարիմներուն հետ ըլլալ, մինչեւ աշխարհի վախճանը: Եկեղեցին կայ այս խոստումով:**

(Շար. 41 եւ վերջ)

## ՀՈՒՍՔ ԲԱՆՔ

Մատքեսի Աւետարանին սերտողութեանց (1993-1994) աւարտին, իր տեղեկագիրը կարդալէ եւ շնորհակալութեան խօսքեր յայտնելէ ետք՝ Զարեհ Սրբազն հետեւեալ մտածումները արտայայտած է:

**Երեք տարիներու վրայ երկարած այս սերտողութիւններու ընթացքը կը նմանի շրջապայմի՝ ի խնդիր հոգեւոր փնտուսութի, եւ Քրիստոսի հետ ու Քրիստոսի հետքերով աշակերտութեան մէջ զնելու մեր անձերը: Եւ իրօք, այդպիսին եղան երեք տարիները: Աւետարանական ճանապարհներու վրայ քաղեցինք անդադար եւ անընդհատ փորձեցինք մազլցի:**

**Հիմա որ Մատթէոսի Աւետարանին սերտողութիւնները իրենց աւարտին հասցուցած ենք, զիս հետաքրքրող եւ թերեւս ձեզմէ շատերը հետաքրքրող հարցումս սա է.՝ ի՞նչ առուխն մեզի այս սերտողութիւնները:**

**Ինչքանո՞վ օգտուեցանք անոնցմէ: Նկատի չունիմ գործնական կամ օգտակար ծանօթութիւնները, որ քաղեցինք վստահարար: Նկատի ունիմ մեր հաւատքը:**

**Այս սերտողութիւնները ի՞նչ լոյս բերին իմ հաւատքիս: Ի՞նչ աշխարհ բացին իմ հոգիիս մէջ: Ի՞նչ նոր մղումներ ստեղծեցին իմ մէջս՝ դէպի աստուածային ճշմարտութիւնը ընթանալու: Ինչքանո՞վ նպաստեցին, որ իր ճշմարիտ պատկերին եւ ինքնութեան մէջ ճանչնամ Յիսուս Քրիստոսը: Սերտ եւ անմիջական շփումով ճանչնամ իմ Տէրս եւ անոր մնայուն ներկայութեան մէջ ըլլամ ու մնամ:**

**Ճամբորդութեան երկու ընթացակերպ կայ.՝**

**Մէկը դէպի Եմմառու զացող երկու աշակերտներուն կերպն է.**

**Միւսը՝ գերեզմանէն վերադարձող կիներունը:**

**Առաջինները տրտում էին եւ յուսարեկ: Իրենց համար Յիսուս երազ եղած էր: Երազի պէս ճանչցեր էին զայն եւ կորսնցուցեր. իրենց սիրտերը ափսոսանքով լեցուն էին: Նոյնիսկ յարութեան աւետիսաը չէր փոխած իրենց տրտում եւ յուսարեկ սիրտերը: Յիսուսի յարութեան ուրախութիւնը իրենց կողմէ չէր ընկալուած: Անոնք շփոթի մէջ էին. հաւատած՝ Յիսուսի յարութեան, թէ չհաւատալ:**

**Մինչեռ գերեզման այցի գացած կիները, հրեշտակին աւետիսը լսելով եւ թափուր գերեզմանը տեսնելով, ու յարուցեալ Յիսուսին հանդիպելով՝ խորապէս հաւատացած էին եւ երկրպագած Անոր, եւ մեծ ուրախութեամբ վագեր էին դէպի առաքեալներուն գունդը՝ հրաշալի լուրը անոնց աւետելու համար:**

**Այո՛: Երկու տեսակ ընթացակերպեր կան:**

**Մենք ալ եւ մեզմէ շատեր՝ Եմմառու զացող աշակերտներուն պէս ենք յանախ:**

**Կարդացինք Մատթէոսի Աւետարանը եւ սերտեցինք զայն: Փորձեցինք հասկնալ զայն եւ ճանչնալ որոշ ճշմարտութիւններ, շինիչ հարցումներու եւ յայտնաբերիչ մատնանշումներու վրայ՝ օգտակար խորհրդածութիւններ կատարեցինք: Սակայն,**

այդ բոլորը տակաւին մեր սիրտերուն չտուին այն բաւականութիւնը եւ ուրախութիւնը, որ մերը պէտք է ըլլային, բայց կը թուի թէ չեղան: Ինչո՞ւ…:

**Այո՛:** Յաճախ Եմմառս գացող աշակերտներուն պէս ենք:

Ուրախութիւնը մեր քովն է, մեզի ճամբորդակից, բայց մենք չենք անդրադառնար անոր ամենափոխիչ ներկայութեան, որովհետեւ մեր միտքերն ու սիրտերը ծանրացած են աշխարհի հոգերով, սուզերով եւ բերած շփոթներով: Բայց Եմմառսի աշակերտները ի վերջոյ ճանչցան յարուցեալ Յիսուսը: Զայն ճանչցան՝ երբ ան իրենց հետ սեղան նստաւ, հացը բեկանեց եւ իրենց տուաւ:

Այս սերտողութեանց ընթացքին, մենք ալ Տիրոջ հետ սեղան նստանք, եւ անոր Սրբազն Խօսքը հացի պէս ճաշակեցինք: Տէր Յիսուս մեզի հետ քալեց, մեզի հետ սեղանակից եղաւ, եւ իր Խօսքը հացի պէս բեկանեց ու բաշխեց մեզի, որպէսզի մեր ներքին աչքերը բացուին եւ մենք ճանչնանք զինք՝ իր յարուցեալ ինքնութեամբ, իր փրկարար գօրութեամբ եւ իր աստուածային փառքով:

Յիսուսի այս մերձաւորութիւնը մեզի եւ իր Խօսքին որպէս հաց բաշխումը՝ մեր ներքին աչքերը բացա՞ւ, ու մենք զինք՝ յարուցեալ Տէրը ճանչցա՞նք: Եւ այդ ճանաչումէն ետք՝ մեր սիրտերը ուրախութենէն թվուտացի՞ն:

**Եթէ ոչ,** կը սգամ սերտողութեանց ձախողութեան համար, եւ իմս կը նկատեմ յանցանքը, որ ներէք իմ անկատարութեանս եւ ապիկարութեանս:

Իսկ եթէ այո, նոյնիսկ եթէ՝ փոքր չափով, այն ատեն երանելի էք, որովհետեւ Տէր Յիսուսի ուրախութիւնը արդէն ձեր մէջ է. այն ուրախութիւնը՝ որ է նախաճաշակը անպատմելի ու փառաւոր հանդերձեալին: Այդ պարագային, ինծի կը մնայ ձեզի մաղթել որ այն Խօսքին ճաշակը միշտ մնայ ձեր մէջ եւ իր փոխակերպիչ գօրութեամբ ձեր կեանքերը պայծառակերպ պահէ:

**Թողլ տուէք,** որ իմ մաղթանք կնքեմ Պետրոս առաքեալի մէկ քաղցրագոյն խօսքերով. «Օրինեալ է Աստուած, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմութեամբ մեզ վերստին ծնաւ, որպէսզի Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն առնելով՝ ու առնեանք այն կենդանի յոյսը, թէ պիտի ժառանգենք անեղծ, անարատ եւ անթառամ կեանքը, որ երկինքի մէջ պահուած է մեզի համար: Եւ Աստուած իր գօրութեամբ կը պահէ ձեզ, որպէսզի ձեր հաւատենով հասնի իր պատրաստած փրկութեան, որ ժամանակի վախճանին պիտի յայտնուի: Ուրախացէք այդ փրկութեամբ, նոյնիսկ եթէ հարկադրաբար քիչ մը տրտմած էք հիմա, ձեր կրած պէս-պէս փորձութիւններուն պատճառով: Այդպիսով փորձուած ձեր հաւատքը շատ աւելի թանկագին է, քան կորստական ոսկին՝ որ կրակին մէջ կը փորձուի: Անոր համար ալ երբ Յիսուս Քրիստոս յայտնուի՝ պիտի գովէ ձեզ եւ փառքի ու պատիւի արժանացնէ: Որովհետեւ զինք չտեսա՞ր բայց սիրեցիք, եւ առանց զինք տեսնելու կը հաւատաք, ուրախանալով այն անպատմելի եւ փառաւոր իննութեամբ՝ որ ձերը պիտի ըլլայ, երբ ընդունիք ձեր հաւատքին պսակումը՝ հոգիներու փրկութիւնը» (**Ա.Պա 1.3): Ամէն:**

## ԳՄԲԷԹԸ

Ստորև՝ Երջ. Գարեգին Բ. Կաթողիկոսի սերտողութեանց երեկոներուն եզրափակիչ խօսքը: Հոգելոյս Զարեհ Սրբազնան՝ ինքն է, որ զայն «Գմբէթ» կոչած է:

**Ես կ'ուզէի խորունկ գնահատանքս եւ անսահման չնորհակալութիւնս յայտնել սիրելի Զարեհ Սրբազնին: Վստահ եմ, որ ամէնքդ ալ համաձայն էք, թէ առանց իր մղիչ ոյժին եւ յանձնառութեան, սերտողութեանց այս պահերը եւ հոգեւոր վայելքը պիտի չունենայիք:**

**Այս սերտողութեանց ամէնէն գեղեցիկ երեւոյթը այն է, որ ունկնդիրները կը մասնակցին: Ոչ թէ միայն կը լսեն, ոչ թէ հանդիսատես են, ոչ թէ ականջալուր են, այլ նաեւ խօսակից են:**

**Կ'ուզեմ երեք վկայութիւններ բերել, որոնք կը խորհիմ, թէ մեր միտքերը աւելի կը բանան հասկնալու Ս. Գիրքի անհրաժեշտութիւնը, կենսականութիւնը, եւ ընկերային կեանքին մէջ վճռական դերը:**

**Առաջին: Մեր պատմութեան մէջ, Ս. Գիրքի թարգմանութեան յառաջացուցած մեծ շարժումին ականատեսներէն մէկը՝ Ղազար Փարպեցի վկայած է, թէ ամբողջ ժողովուրդը Ս. Գիրքի աշակերտութեան մը վերածուած էր:**

**Երկրորդ: Պիտի զարմանաք ամէնքդ ալ, քաղաքական դեկավարի, մաքուր հոգիի տէր եւ մարդկային բարձր արժանիքներով օժտուած անձնաւորութեան մը վկայութիւնն է: Այդ անձնաւորութիւնն է Սիմոն Զաւարեան: Ան յիշած է, թէ իր ժամանակ Հայ ուսեալ դասին 9/10-րդը Ս. Գիրքին ծանօթ չէր: Ուստի, շշտած է կարեւորութիւնը Հրատարակչական ընկերութիւններու կողմէ «հին, բայց քարմ» Աստուածաշունչին լոյս ընծայումը եւ տարածումը:**

**Երրորդ: Արդի դարուն, Ս. Գիրքի ամենամեծ քարոզիչներէն մէկը՝ Պիլլի Կրահամ, իր վերջերս զրած մէկ գիրքին մէջ, որուն վերնազիրն է «Յոյս Խովզեալ Սիրտին» (Hope for the troubled heart), ըսած է. «Մենք (ակնարկութիւն ամերիկացիներուն) դարձած ենք Ս. Գիրքը չկարդացողութիւնը:**

**Վիճակագրական ուսումնասիրութիւն մը ի յայտ բերած է, որ թէեւ 90/100-ը ամերիկացիներուն Ս. Գիրք ունին, բայց 11/100-ը միայն զայն կը կարդայ օր աւուր:**

**Ս. Գիրքը կարդալու երկու նպատակ կայ.-**

- 1) Կարդալ՝ զիտնալու համար. եւ
- 2) Կարդալ՝ ապրելու համար:

**Ս. Գիրքի գործածութիւնը բազմաթիւ մասնագէտներու կողմէ արհեստ դարձած է. գիտութեան առարկայի փոխուած է, եւ միջոց՝ կեանք ու ապրուստ շահելու քան ապրելու աղբիւրի:**

**Ես հարց կու տամ. արդեօք գիրը այնքա՞ն կարեւոր է, որ մենք անոր մասին խօսինք, թէ գիրը կեանքի վկայութիւն մըն է, եւ մեր մէջէն անցնելով՝ կեանքին պէտք է ծառայէ:**

**Տակաւին նոր գիրք մը կարդացի, որուն մէջ ոչ մէկ տառ եւ ոչ մէկ բառ կար:**

**Գացի Խոր Վիրապ եւ իջայ Ս. Գրիգոր Լուսաւորիչի գուբը: Գիրքը, որ կարդացի այն հաւատքի գուբն է: Զայն կարդացի, եւ երբ դուրս եկայ այնտեղէն՝ կերպարանափոխուած էի:**

**Հստ ոմանց, 13 տարիներ, ըստ ուրիշներու՝ 15 տարիներ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ այդ գուբին մէջ ապրեցաւ: Ինչպէ՞ս ապրեցաւ: Ս. Գիրք ունէ՞ր կարդալիք այնտեղ: Ո՞չ: Ս. Գիրքը որ կարդաց՝ իր ամբողջ հաւատքն էր, որ իրեն կը յայտնէր Աստուծոյ ներկայութիւնը: Ս. Գիրքը՝ Ս. Գիրքը կ'ըլլայ, երբ զայն կը կարդանք ոչ թէ իրրեւ նշաններու ամբողջութիւն մը, այլ որպէս վկայութիւն Աստուծոյ ներկայութեան:**

**Որպէսզի Ս. Գիրքը կերպարանափոխող հոգեւոր ապրումի եւ ոյժի վերածուի՝ կենսական է զայն հաւատքով կարդալը: Զեմ ըսկը, թէ զիտութիւնը կարեւոր չէ, այլ անիկա պէտք չէ որ ինքնանպատակ ըլլայ: Շատ կարեւոր է, որ զիտութիւնը ծառայէ հաւատքի սնուցման:**

**Մեր հաւատքի ընդառաջումն է, որ Ս. Գիրքը Աստուծաշունչ կ'ընէ, անոր նշանները կեանքի եւ կենսատու զօրութեան կը վերածէ, որովհետեւ անոր մէջ կը տեսնէ վկայութիւնը Աստուծոյ ներկայութեան:**

Խմբագրեց՝

Գառնիկ Քինյ. Գոյունեան

ԶԱՐԵՎ ԱՐԲ. Ա.ԶՆԱ.ԻՈՐԵԱՆ



## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ 14 (Շաբ.)

**ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԲ ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲԻՐՆԵՐՈՒՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ**

**ՊԱՂԵՍՏԻՆ ԵՒ ԱՆՈՐ ՏՐՈՒԱԾ ԱՆՈՒՆՆԵՐ**

**Աստուածաշունչին մէջ Պաղեստին կոչուած է նախ Քանանի երկիրը, որովհետեւ այդ երկրին մէջ բնակեցաւ նոյի թորրան Քանանի սերունդը (Ծն 10.15-18): Յետոյ Յակոբի սերունդին Խորայէլ անունով կոչուեցաւ Խորայէլ երկիրը: Խոկ գերութենէն ետք ալ սկսաւ կոչուիլ Յուղայի երկիր (Յուղայաստան, Հրէաստան), որովհետեւ Յուղայի ցեղէն էին գրեթէ բոլոր անոնք, որոնք գերութենէն Պաղեստին վերադարձան: Կոչուած է նաեւ Աւետեաց երկիր, այսինքն՝ խոստումի երկիր, որովհետեւ Աստուած խոստացաւ ատիկա Արքահամին եւ անոր զաւակին (Ծն 12.7, 13.14-15): Կը կոչուի նաեւ Պաղեստին Փղտացիներուն անունով, որովհետեւ Փղտացիները կը բնակէին յիշեալ երկրի հարաւ արեւմտեան ծովեղերեայ սահմանին վրայ: Դարձեալ, Աստուածաշունչը այդ երկիրը կը կոչէ Սուլր երկիր (Զք 2.12): Երբեմն կը յիշու աշխարհ կամ երկիր անունով միայն (Ղկ 2.1, 4.25, 21.26; Գրծ 11.28: Ցկ 5.17): Այսպէս, Սողոմոնի համար ըսուած է թէ գետէն, այսինքն՝ Եփրատէն մինչեւ երկրի ծայրերը պիտի տիրէ (Սղ 72.8): Արարիան Հրէաստանի հարաւային կողմն էր, եւ Սարա քաղաքը՝ Արարիոյ վերջին ծայրամասը կամ սահմանագրութիւնը: Ուստի ըսուած է թէ Սարայի թագուհին երկրի ծայրերէն եկաւ լսելու Սողոմոնի իմաստութիւնը:**

**ՊԱՂԵՍՏԻՆԻ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԸ**

**Խորայէլի ամբողջ երկրին երկայնքն էր չուրջ 140 մղոն, Դանէ մինչեւ Բերսարէէ: Ընդարձակագոյն լայնքն էր 90 մղոն կամ 30 ժամ: Միջին լայնքն էր 50 մղոն: Ջրհեղին ետք, չուրջ 700 տարի հոն բնակեցան Քանանացիները, որոնք բաժնուած էին տասը ցեղերու կամ ազգերու (Ծն 15.19-21): Ասոնց մէջ Ամօրհացիներն էին ամէնէն զօրաւորը, հետեւարար եւ երբեմն այդ երկրին բոլոր բնակիչները կը յիշուին Ամօրհացի անունով (Ծն 15.16: Ամս 2.10): Երբ Խորայէլացիները մտան Պաղեստին, Փղտացիները, Մովաբացիներ, Մաղիանացիներ, Ամմոնացիներ եւ Ամառէկի ու Եղովմի որդիները կը բնակէին Քանանի սահմանակից երկիրներուն եւ ոմանք ալ Քանանի մէջ: Յետու տասներկու ցեղերէն իւրաքանչիւրին տուաւ բաժին մը, եւ որովհետեւ բաժին չտրուեցաւ Ղեւիի ցեղին, անոնց բնակութեան քաղաքները բաժնուեցան միւս ցեղերու բաժիններուն մէջ: Յովսէկի երկու որդիներուն, Եփրեմի եւ Մանասէի, երկու**

զատ բաժին տրուեցաւ: Եւ այսպէս Խսրայէլացիներու ցեղերուն տասներկու թիւը ամբողջացաւ:

Այս ցեղերէն Ասեր, Նեփիթաղիմ, Զարուղոն եւ Խսաքար բնակեցան Քանանի հիւ-սիսային կողմը: Այս բաժինը յետոյ կոչուեցաւ Հեթանոսներու Գալիխա:

**Եփրեմի եւ Մանասէի կէս ցեղը բնակեցան միջին մասին մէջ, որ յետոյ կոչուեցաւ Սամարիա:**

Յուղա, Բենիամին, Դան եւ Շմաւոն բնակեցան Հարաւային կողմը, որ յետոյ կոչուեցաւ Հրէաստան:

Ուրէն, Գաղ եւ Մանասէի միւս կէս ցեղը բնակեցան Յորդանանի անդիի (արեւելեան) կողմը: Այս մասը յետոյ կոչուեցաւ Փերիա, որ կը նշանակէ յայնկոյս կամ անդիի կողմը:

Սողոմոնի թագաւորութեան ժամանակ շատ ընդարձակուած էր Խսրայէլացինե-րու սահմանը, եւ ցեղերու բաժանումը այնչափ ճիշդ պահուած չէր: Ուստի Սողոմոն վերստին տասներկու մասերու բաժնեց իր ամբողջ տէրութիւնը եւ իւրաքանչիւր մասին վրայ դրաւ զատ-զատ գործակալներ (Գ.Թ.Գ. 4.7-19): Սողոմոնի մահէն ետք անոր որդիին՝ Ուրովամի ժամանակ Խսրայէլացիներու մէծ մասը անկէ ապստամ-բերով, հաստատեց զատ իշխանութիւն Խսրայէլի թագաւորութիւն անունով, որուն մայրաքաղաքը եղաւ Սեքար կամ Սիւրէմ: Խսկ Բենիամինի եւ Յուղայի ցեղերը, նաեւ Դանի եւ Շմաւոնի ցեղերն իրենց հերթին, մնացին Ուրովամի իշխանութեան տակ: Խսկ մայրաքաղաքը եղաւ Երուսաղէմը: Խսրայէլի թագաւորութիւնը, 254 տարի տե-ւելէ ետք, կործանեցաւ Ասորեստանի Սաղմանասար թագաւորին ձեռամբ, եւ յետոյ բոլոր երկիրը հետպհետէ անցաւ Քաղէացիներուն, Յոյներուն (Աղեքսանդրի յաջորդ-ներուն), Հրեաներուն (Մակարայեցիներուն) եւ Հոռոմէացիներուն ձեռքը:

Քրիստոսի ժամանակ հրեաներու երկիրը կամ Հրէաստանը կը բաժնուէր հինգ նահանգներու:-

Ա) ԳԱԼԻՒՒՄ- ուր կը մնար Քրիստոս ընդհանրապէս, եւ կը քարոզէր ու հրաշքներ կը գործէր: Անոր աշակերտներուն մէծ մասը Գալիխացի էին (Ես 9.15: Մտ 2.22, 26.69, 28.7-16: Ղկ 4.14-15): Այս գաւառը Երուսաղէմէն հեռու էր: Բնակիչները հաղորդակցութիւն ունէին Սամարացիներու հետ եւ անոնց լեզուն խորթ էր ու անմաքուր: Այս պատճառներով Գալիխան ատելի էր հրեաներուն:

Բ) ՍՍ.ՄԱՐԻԱ- որ կը պարունակէր երկրին միջին կամ կեղրոնական մասը, եւ Հրէաստանէն կը բաժնէր Գալիխան (ՅՀ 4.4):

Գ) ՀՐԵԱ.ՍՏԱՆ.- որ կը բաղկանար գրեթէ Յուղայի հին թագաւորութեան երկիրներէն:

Դ) ՓԵՐԻԱ. կամ ՅԱ.ՅԱԿՈՅՅ ՅՈՐԴԱՆԱՆՈՒ- որ կը պարունակէր 1- Արիլինիա ուր Լիւսանիասն էր Չորրորդապետը (Ղկ 3.1): 2) Տրաքոնիա, 3) Խոռորիա՝ Յետուրի անունէն (Ա.Մն 1.31), կամ Աւրան (Ղկ 47.16,18), 4) Գովզան (Ես 20.8), 5) Բասան, այսինքն՝ Հին Բասանի մէկ մասը, 6) Բուն Փերիա (Առնովնի եւ Յակորի մէջտեղ) ուր դիսասուեցաւ Յովհաննէս, եւ 7) Դեկապոլիս, տասը քաղաքներ (Մտ 4.25):

Ե) ԵՐՈՎԱՆ. կամ ՅԵ.ՅԵՅԻՆ ՅԵՐՈՎԱՆ. կոր Հոռոմէացիները կցեցին Պաղեստինի, որ եւ կը պարունակէր Հրէաստանի վերջին հարաւային մասերը եւ Արաբիոյ մէկ փոքր մասը:

Քրիստոսի ժամանակէն 37 տարի առաջ սկսելով մինչեւ մեր Տիրոջ ծննդեան տարին, գրեթէ բոլոր այս երկիրներուն վրայ թագաւորեց Հրէութիւնը ընդունող Հերովդէս Մեծը, որ Եղովմայեցի ընտանիքէ էր: Այս երկիրներէն առնուած տարեկան

Եկամուտը այն ատեն եօթը հարիւր տաղանդ կամ չորս միլիոն լիրա էր: Հերովդի մահէն ետք Հրէաստանի, Սամարիոյ եւ Եղովմի վրայ կը թագաւորէ իր որդին՝ Արքեղայոս, որ տասը տարի թագաւորելէ ետք կ'աքսորուի, եւ որուն ունեցած երկրները կը յանձնուին Հռոմայեցի կուսակալներուն: Այս կուսակալներէն մէկն էր Պիղատոս Պոնտացին, որ պաշտօնագուրկ ըլլալով անձնասպան եղաւ:

Նոյն Հերովդի մահէն ետք, Գալիլիա եւ բուն Փերիա տրուեցան Հերովդի ուրիշ մէկ որդիին՝ Անթիպաս Հերովդի, որ զիստել տուաւ Յովհաննէս Մկրտիչը եւ ծաղրեց մեր Տէրը, երբ Պիղատոս անոր մօտ զրկեց զայն: Անթիպաս Հերովդէս աքսորուեցաւ Սպանիա, 40 թուականին, ուր վերջապէս աքսորական վիճակով մեռաւ:

Տրաքոնիա եւ Խտուրիա տրուեցան Հերովդի երրորդ որդիին՝ Փիլիպպոս կոչուած Հերովդի (Ղկ 3.1), որ շինեց Փիլիպպեան կոչուած Կեսարիան (Մա 16.13), եւ հոն մեռաւ 34 թուականին:

Ազրիպաս Հերովդէս, Մեծն Հերովդի թոռը, թագաւորեց ամբողջ Երկրին վրայ, 41-44 թուականին: Այս վերջին տարուան ընթացքին սպաննել տուաւ Յակոբոս առաքեալը, իսկ ինքը մեռաւ Կեսարիոյ մէջ: Իր որդին էր միւս Ազրիպասը՝ Տրաքոնացիներուն Զորրորդապետը, որ Զորրորդապետ եղաւ նաև Գալիլիոյ: Պօղոս ասոր առջեւ փաստաբանեց Կեսարիոյ մէջ (Գրծ 25.13,26, 26): Երուսաղէմի կործանումէն ետք զնաց Հռոմ եւ հոն մեռաւ 100 թուականին: Այս Ազրիպասը վերջինն էր Հերովդիան ցեղին: Ազրիպաս Հերովդի մահէն ետք, Հրէաստան դարձեալ յանձնուեցաւ Հռոմայեցի կուսակալներու, որոնցմէ Փելիքս եւ Փեստոս կը յիշուին Գործք Առաքելոցին մէջ:

Պաղեստին ապառաժուտ եւ լեռնային երկիր է: Մակերեւոյթը, բարձրութեան եւ խորութեան կողմէ, տարրերութիւններ ունի: Լիրանանի բարձրագոյն գագաթները 10 հազար ոտք կամ 4.600 մեթր բարձր են Միջերկրական Ծովին, մինչեւ Յորդանանի գետին յատակը Տիբերիոյ լիճին քով, չուրջ 346 մեթր ցած է նոյն ծովին: Իսկ Մեռեալ Ծովուն քով այս ցածութիւնը կը հասնի 606 մեթրի, եւ Մեռեալ Ծովուն ջուրին երեսը 600 մեթր ցած է Միջերկրական Ծովու երեսէն: Լեռները Յեղրայէլի դաշտէն դէպի հարաւ հետզհետք բարձրանալով՝ Երուսաղէմի քով կը հասնի Մեռեալ Ծովուն մակերեւոյթէն 1.800 մեթր բարձրութեան, այնպէս որ յիշեալ ծովուն մօտակայ Երիքով քաղաքը, որ 20 մղոն միայն (7 ժամ) հեռու է Երուսաղէմէն, անկէ 1.572 մեթր ցած է: Յուղայի լեռնակողմը (Երուսաղէմի հարաւային կողմը) աւելի է լեռներու բարձրութիւնը: Ուստի եւ Գալիլիայէն Երուսաղէմ, եւ Եղիպտոսէն Հրէաստան երթալուն համար՝ ելլել, իսկ Երուսաղէմէն Գալիլիա եւ Հրաէստանէն Եղիպտոս երթալուն՝ իջնել կ'ըսուէր (Ղկ 10.30; Ք. 7.10; Գրծ 24.1): Տէ՛ս նաև Ծն 26.2, եւ 46.3):

Այս լեռներէն շատերը լցուն են քարայրներով: Անոնց կողերուն վրայ կան ընդարձակ արօտներ (Ամս 1.2): Ոմանց գագաթներուն վրայ գտնուած տափարակ բաժինները ժամանակին ծածկուած էին ցորենի արտերով: Զիթենի եւ թգենի կը բուսնէին ապառաժներու ճեղքուածներուն եւ ծերպերուն մէջ եւ ուր որ հողը որոշ խորութիւն ունէր: Հովիտները արգասաւոր էին եւ բազմարդիւն: Անապատներն անգամ որ հերկելու յարմար էին՝ կը նմանէին խոտաէտ եւ ծառազարդ ընդարձակ մարզագետիններու: Վերջապէս ամէն կլիմայի յատուկ բերքեր կրնային յառաջ զալ Պաղեստինի մէջ: Լեռներու միեւնոյն շարքին վրայ շատ տեղեր կը բուսնէին միանդամայն արեւադարձներուն թուզը եւ արմաւը եւ բարեկամուն գօտիի կաղնին եւ եղեւինը: Եթէ Երկրին կլիման ըլլար բոլորովին մեղմ եւ Երկրը արեւադէմ, ժողովուրդը

պիտի չկարենար ունենալ գործունեայ աշխուժութիւն եւ առնական բնաւորութիւն. իսկ եթէ հողը ըլլար բաւական ապառաժուտ եւ լեռնային, ժողովուրդը պիտի ստիպուէր իր պէտքերը հոգալու համար դաշինք կնքել դրացի հեթանոս ազգերու հետ: Բայց ձիթենի եւ ցորեն բուսցնող լեռներ, Լիբանանի ձիւնապատ գագաթները, Յորդանանի խոր եւ ջերմ հովիտը, արօսավայրերը եւ մշակութային վայրերը, որոնք միեւնոյն երկրին մէջ կը գտնուէին՝ կը յարմարէին Աստուծոյ ընարեալ ազգի կարիքներուն, եւ կը համապատասխանէին Աստուծաշունչի սա խօսքին. «Աղեկ երկիր մը...այնպիսի երկիր մը որ դաշտերէ ու լեռներէ բխող գետերով, աղբիւրներով ու խորունկ ջուրերով լեցուն է», եւայլն (**Բ.Օր** 8.7-9):

Դաւիթի ժամանակ այս երկրին բազմամարդութիւնը հաւանաբար 4 կամ 5 միլիոն էր (**Բ.Թղ** 24.9), կամ իւրաքանչիւր քառակուսի մղոնի կ'իջնար չուրջ 4 կամ 5 հարիւր մարդ: Այսպիսի բազմամարդութիւն կը տեսնուի հիմա Եւրոպայի ամէնէն մարդաշատ կողմէրը միայն: Ներկայի Սուրբիան, որ տարածութեամբ Դաւիթի տէրութեան քառապատիկն է, ատոր բնակչութեան ապրուստը հազիւ կը հայթայթուի, իսկ երկրին մեծ մասը բարեբեր չէ: Աստուծունչին մէջ Պաղեստինի հին արգասաւորութիւնը ընծայուած է Աստուծոյ յատուկ օրհնութեան, ինչպէս անոր ներկայ անարգասաւորութիւնը նոյն Աստուծոյ մեծ բարկութեան եւ սրտմտութեան (**ՏԵ՛Ս Ղւ 26.3-5: Բ.Օր** 7.12-14, 11.8-15, 28.1-12, նաեւ 16-24, 38-42, 29.23-25):

Պաղեստինի մէջ ամբողջ ամառը անձրեւ չի դար: Ցերեկը շատ սաստիկ տաք է, սակայն երեկոյեան եւ գիշերը գով է եւ առատ ցող կ'իջնէ, այնպէս որ անպատսպար ճամբորդները ամբողջովին կը թրջուին, թէպէտ շուտով կը չորնայ երբ արեւը ծագի (**ՏԵ՛Ս Բ.Թղ** 17.12: **Սղ** 133.3: **Ովս** 6.4, 14.5):

Ամրան ժամանակ ջուրը նուազ կ'ըլլայ, ուստի ջրհորներ եւ աղբիւրներ շատ յարգի են: Անգամ մը Արփմելիքի եւ Խսահակի միջեւ վէճ ծագած է ջրհորներու պատճառով: Եւ Մովսէս կը յիշատակէ մեծ չնորհքը, որով Աստուած Խսրայէլացիներուն պիտի տար ջրհորներ՝ զորս իրենք չէին փորած (**Բ.Օր** 6.11): Ջրհորներէն ոմանք շատ խորունկ էին, այսինքն ունէին չուրջ 160 ոտք կամ 73 մետր խորութիւն եւ անձրեւներու ջուրով կը լեցուէին միայն (**Սղ** 84.6): Անապատին մէջ ճամբորդները երեմն կ'երթան մինչեւ 80 մղոն եւ կամ երեք չորս օրուան ճամբայ առանց ջուր գտնելու: Եւ եթէ ջրհորի մը հանդիպին իսկ, անջուր կը գտնեն զանիկա: Ուստի սուտ վարդապետները Աստուածաշունչին մէջ անջուր աղբիւրներու նմանցուած են շատ գեղեցկորէն, որովհետեւ ի դերեւ կը հանեն իրենց հետեւորդներուն յոյսը (**Բ.Պտ** 2.17-18): Նոյն անապատներուն մէջ հեռաւոր դաշտի մէջ ջրանման վայրուն խարկանքն ալ յուսահատութեան ազդու օրինակ է, որովհետեւ սաստիկ ծարաւէ պապակած ճամբորդը հեռուէն տեսնելով աւազը՝ ջուր կը կարծէ զայն եւ փափաքելով կը վագէ հոն: Սակայն երբ անոր մօտենալով տեսնէ թէ խարուած է, անյուսութեան մէջ կ'իջնայ: Ուղտեր ու ճանապարհորդներ այս կերպով շատ անգամ խարուած են, որովհետեւ այն ինչ որ հեռուէն ջուր կը կարծէին, մօտենալով ուրիշ բանի կը հանդիպին, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ կիզիչ աւազ (**Յոր** 6.18: **Եր** 15.18):

Պաղեստինի արեւելեան հովը շատ վնասակար է բոյսերուն: Այս հովը ձմեռը չոր է եւ ցուրտ, իսկ ամառը չոր եւ ջերմ եւ շուտով կը գոսացնէ տերեւները (**Ծն** 41.6: **Եղ** 17.10, 19.12: **Ովս** 13.15): Նոյն հովը մեծ վնաս կու տայ նաւերուն, մանաւանդ **Միջերկրական Ծովուն** վրայ (**Սղ** 48.7): Ասիկա Եւրակիկոն կոչուած հովն է, որ պատճառ եղաւ Պօղոսի նաւու խորտակման (Գրծ 27.14): Արեւմտեան հովը կը բերէ

կարճատեւ տարափներ, իսկ երկարատեւ երաշտութենէ ետք սաստիկ անձրեւ (Գ.Թ.դ 18.44-45; Ղկ 12.54): Հիւսիսային հովը ցուրտ է եւ չոր (Առ 25.23; Յոր 37.9,22): Հարաւային հովը տօթագին է եւ մըրիկ կը բերէ (Ղկ 12.55; Զք 9.14): Երբեմն ամբողջ կարաւաններ կը ծածկուին այն աւագով, զոր այս հովերը կը յառաջացնեն: Երբ տաքին կը միանայ նաեւ վնասակար խորշակը, այն ատեն հովը կ'ըլլայ մահաբեր: Կը պատմուի թէ 1655-ին չորս հազար, 1688-ին չուրջ քսան հազար հոգի հեղձամահ եղած են այսպիսի խորշակէ (Ես 17.13, 32.2; Ովս 13.3): Աստուածաշունչին մէջ այս մրրիկներուն նմանցուած է այն արագութիւնը, որով երբեմն Աստուած իսկոյն կը ջնջէ չարերը (Առ 1.27, 10.25):

Յորենը ընդհանրապէս աշնան կը ցանուի Պաղեստինի մէջ, եւ գարնան կը հնձուի. ուստի աշնան անձրեւը առաջին՝ կամ սերմանելու անձրեւն է, իսկ գարնան անձրեւը՝ անագան՝ (վերջին) կամ հունձքի անձրեւ (Յվլ 2.23): Մին կենդանութիւն կու տայ ցանքին, միւսը կը լեցնէ հասկը: Ընդհանրապէս արեւմտեան կողմէն կու գան անձրեւները (Ղկ 12.54) անցնելով Միջերկրական Ծովէն: Հունձքի եւ ամրան ժամանակ անձրեւը անսովոր դէպք է Պաղեստինի մէջ, ուստի ժողովուրդին զարմանք կամ վախ կը պատճառէր, ինչպէս նկարագրուած է Ա.Թ.դ 12.17-ին մէջ:

Տ. Ա..

(Շար. 38)



## ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄԻ ՄԱՍԻՆ (Reincarnation)

**Վերակենդանացումի տեսութեան հաւատացողները կ'ըսեն, որ երբ բարի մարդը մեռնի՝ անոր հոգին կ'անցնի իրմէ աւելի բարի եղող անձի մը եւ վերստին աշխարհ կու զայ, որպէսզի ինքզինք կատարելազործէ: Իսկ երբ չար մարդը մեռնի՝ անոր հոգին կ'անցնի իրմէ աւելի չար եղող անձի մը, կրնայ նոյնիակ անցնիլ անասունի:**

**Վերակենդանացումի տեսութեան հաւատացողները իրենց տեսութիւնը կը հիմնեն հետեւեալ համարներուն վրայ.- Մատթէոս 17.10-13: Ղուկաս 1.17: Դ. Թագաւորաց 2.15: Նախ կարդանք այս համարները եւ ամփոփ բացատրութիւններ տանք անոնց վերաբերեալ.-**

**Առաջին (Մատթէոս 17.10-13)**

**Երբ Յիսուս կը խօսի իր խաչելութեան եւ յարութեան մասին, աշակերտները իր ուշադրութեան կը յանձնեն, թէ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն որ ատիկա պատահելէ առաջ, նախ Եղիան պիտի զայ: Յիսուս անոնց կը պատասխանէ. «Գիտցէք որ Եղիան արդէն իսկ եկած է»: Մատթէոս Աւետարանիչը կը հաստատէ, թէ «աշակերտները հասկցան թէ Յովիաննես Մկրտիչի մասին կը խօսէր ան» (Մտ 17.10-13, տե՛ս նաեւ՝ 11.14): Նախ պէտք է նկատի առնել, որ այստեղ որեւէ խօսք չկայ Եղիայի հոգիին Յովիաննէս Մկրտիչին անցնելուն կամ փոխանցուելուն մասին:**

**Յիսուս Եղիան եւ Յովիաննէսը իրարու կը նմանցնէ կամ իրարու հետ կը նոյնացնէ պարզ այն պատճառով, որ անոնց պաշտօնին, գործելակերպին, առաքելութեան եւ ինքնութեան միջեւ նոյնութեան եւ նմանութեան եզրեր շատ կան: Յիշենք մի քանին.-**

**1) Հին Կտակարանին մէջ, Եղիա մարգարէն պաշտօնը ունէր մարդոց դիմաց բանալու ճշմարիտ Աստուծոյ առաջնորդող՝ ճշմարիտ ճամբան, իսկ նոր Կտակարանին մէջ, Յովիաննէս Մկրտիչինք ունէր այդ պաշտօնն ու առաքելութիւնը:**

**2) Եղիա մարգարէն Բահաղի 450 սուտ մարգարէներուն մարտահրաւէր կարդալով, իսկ Յովիաննէս Մկրտիչ կեղծաւոր Փարիսեցիներուն մարտահրաւէր կարդալով՝ երկուքն ալ ժողովուրդին ցոյց տուած եղան աստուածպաշտութեան իսկական ուղին:**

**3) Յովիաննէս Մկրտիչ կը նկատուէր Եղիան, որովհետեւ Եղիայի նոյն բժախնդիր ու նախանձախնդիր հոգին էր որ կը գործէր իր մէջ: Ղուկաս խօսելով Յովիաննէսի մասին՝ կ'ըսէ. «Անիկա Տիրոց առջեւէն պիտի քալէ՝ Եղիայի հոգիով եւ զօրութեամբ լցուած, որպէսզի հայրերը իրենց որդիներուն ինտ հաշտեցնէ եւ անհնազանդերը առաջնորդէ արդարներու իմաստութեան, եւ այսպիսով Տիրոց գալուստին նախապատրաստուած ժողովուրդ մը պատրաստէ» (Ղկ 1.17): Նոյն այս բառերով կը փակուի Հին Կտակարանը (Մդ 4.6): Սա ցոյց կու տայ, որ Յովիաննէս Մկրտիչ Հին եւ նոր Կտակարանները իրարու ազուցող օղակն է:**

4) Յիսուս Յովհաննէս Մկրտիչը Եղիան կը նկատէ, որովհետեւ երկուքն ալ նո՛յն խօսելակերպը եւ նո՛յն գործելակերպը ունէին: Օրինակ, Եղիա կը յիշեցնէր ժողովուրդին, որ եթէ իրենց ընթացքը չփոխեն՝ երկինքն կրա'կ պիտի տեղայ եւ լափէ զիրենք, իսկ Յովհաննէս Մկրտիչ կը յայտարարէր, որ եթէ մարդիկ չապաշխարեն՝ Աստուած կամ Աստուծոյ խօսքը կացինի նման պիտի հարուածէ զիրենք ու կրակի մէջ նետէ (Մտ 3.10):

5) Թէ՛ Եղիա մարգարէն եւ թէ Յովհաննէս Մկրտիչ թագաւորներու դէմ դնողներ եղան: Եղիա դէմ դրաւ իր ժամանակի կնամոլ թագաւորին՝ Աքաարին, իսկ Յովհաննէս դէմ դրաւ իր ժամանակի կնամոլ թագաւորին՝ Հերովդիս Անտիպասին:

6) Եղիա հալածուեցաւ Աքաար թագաւորին կնո՞ջ՝ Յեգարէլին կողմէ, իսկ Յովհաննէս Մկրտիչ լուռ կերպով կը հալածուէր Հերովդիս Անտիպասի կնո՞ջ՝ Հերովդիայի կողմէ, մինչեւ որ իր մահն ալ Հերովդիայի կարգադրութեամբ եղաւ (Մտ 14.6-8):

7) Եղիան եղաւ նախակարապետը այն մարգարէներուն, որոնք մարգարէացան Մեսիային գալուստին մասին, իսկ Յովհաննէս Մկրտիչ եղաւ նախակարապետը Մեսիային:

8) Նմանութեան ուրիշ պգտիկ գիծեր ալ կային անոնց միջեւ: Օրինակ, երկուքն ալ ուղտի մազէ շինուած հազուստ կը հազնէին եւ երկուքն ալ իրենց մէջքին կաշիէ գօտի կը դնէին (Դ.ԹԳ. 1.8: Մտ 3.4): Երկուքն ալ անապատներու մէջ կ'ապրէին: Երկուքն ալ բարձրախօս ու համարձակախօս անձեր էին: Եւայն:

### Երկրորդ (Ղուկաս 1.17)

**Վերեւ յլշեցինք այս համարը, որ կ'ըսէ.** «ԱՅիկա (Յովհաննէս Մկրտիչը) Տիրոջ առջեւէն պիտի բալէ՝ Եղիայի հոգիով եւ զօրութեամբ լեցուած, որպէսզի հայրերը իրենց որդիներուն հետ հաշտեցնէ եւ անհնազանդները առաջնորդէ արդարներու իմաստութեան, եւ այսպիսով Տիրոջ գալուստին նախապատրաստուած ժողովուրդ մը պատրաստէ»:

**Բնագիրը չ'ըսեր թէ Յովհաննէս Մկրտիչ Եղիայի հոգին առած պիտի գայ, ոչ ալ կ'ըսէ թէ Եղիայի հոգին իր մէջ էր եկած ժամանակ:** Բնագիրը պարզապէս կը հաստատէ թէ Յովհաննէս Մկրտիչ «Եղիայի հոգիով եւ զօրութեամբ լեցուած» Տիրոջ առջեւ պիտի քայէ, կամ՝ ինչպէս հին թարգմանութիւնը կ'ըսէ՝ «Եղիային հոգիովը պիտի գայ»: Իսկ Եղիային հոգիով գալ կը նշանակէ՝ Եղիային հաւատքո՛վը գալ, Եղիային Աստուածապաշտ հոգիո՛վը գալ, Եղիային նկարագրային յատկանիշներովը յայտնուիլ, Եղիային սիրտին բծախնդրութեամբը գալ, Եղիային նախանձախնդիր հոգիովը գալ: Տակաւին, Եղիային հոգին ունենալ կը նշանակէ՝ ունենալ Եղիային գործելակերպը, աշխատելաձեւը, կեանքը, հաւատքը, բնաւորութիւնը, նկարագիրը, քաջութիւնը, զօրութիւնը, անվախութիւնը, համարձակութիւնը:

Յիսուս Յովհաննէս Մկրտիչը կը նմանցնէ կամ կը նոյնացնէ Եղիային հետ, որովհետեւ Յովհաննէս Մկրտիչ Եղիային նման նախանձախնդրութեան կրակով լեցուն հոգի՛ ունէր: Թէ՛ Եղիա մարգարէն եւ թէ Յովհաննէս Մկրտիչ մաքուր նկարագիր ունէին, նո՛յն գործելառը ունէին, նկարագրային նո՛յն գիծերը ունէին, իրենց առաքելութեան մէջ շատ նմանութիւններ ունէին, եւ այս բոլորը ցոյց տուինք նախորդ բաժինին մէջ ութը կէտերով:

**Եթէ Յովհաննէս Մկրտիչ Եղիա մարգարէին նման քաջ ու համարձակ էր, այդ չի նշանակեր որ Եղիայի հոգին իր մէջ մատած էր: Եթէ Յովհաննէս Մկրտիչին եւ Եղիա մարգարէին առաքելութեան միջեւ նմանութիւններ կային, դարձեալ, այդ չի նշանակեր որ Եղիայի հոգին փոխանցուած կամ անցած էր Յովհաննէս Մկրտիչին: Երբ անձի մը համար կ'ըսենք, «առիւծի հոգի՝ ունի», կամ՝ «առիւծի սի՞րտ ունի», այդ չի նշանակեր թէ տուեալ անձը առիւծէն անասնական բան մը առած է իր ներսիդին, այլ պարզապէս կը նշանակէ, թէ տուեալ անձը առիւծի նման քա՞ջ է, անվա՛խ է, հզօ՛ր է:**

**Երբորդ (Դ. Թագաւորաց 2.15)**

**Դ. Թագաւորաց 2.15-ին մէջ կը կարդանք. «Եղիայի ոգին Եղիսէի վրայ հանգչեցաւ»: Այս հաստատումը որեւէ ձեւով անկարելի է որ սխալ հասկացողութեան դուռ բանայ: Երբ կ'ըսուի՝ «Եղիայի ոգին Եղիսէի վրայ հանգչեցաւ», պարզապէս պէտք է հասկնալ, որ Եղիայի նախանձախնդիր ու աստուածապաշտ ողին էր որ Եղիսէի վրայ հանգչեցաւ, անոր քաջ ու մաքուր ողին էր որ Եղիսէի վրայ հանգչեցաւ, Աստուծոյ համար վկայող ու մարտնչող անոր ողին էր որ Եղիսէի վրայ հանգչեցաւ:**

**Եւ յետոյ, խօսքը Եղիայի ողին Եղիսէի վրայ հանգչելու մասին է եւ ո՛չ թէ անոր մէջ մտնելու կամ անոր փոխանցուելու մասին: Երբայերէն բնագիրին մէջ «հանգչեցաւ» բառին համար գործածուած բառը՝ (ո դ ։ – նա՛հա՛) բառն է, որ երբեք չի նշանակեր բանի մը մտնելը կամ փոխանցուիլը ուրիշ բանի մը մէջ, այլ պարզապէս կը նշանակէ բանի մը հանգչիլը ուրիշ բանի մը վրայ, օրինակ, ցողին հանգչիլը խոտին վրայ, կամ աղաւնիին հանգչիլը ծառի ճիւղին վրայ: Մեզմէ ո՞վ երբ կարդայ «աղաւնին հանգչեցաւ նիւղին վրայ» բառերը, կը համենայ որ աղաւնին գնաց ճիւղին մէջ մտաւ: Մեզմէ ո՞վ երբ կարդայ «Տիրոջ փառքը Սինա լերան հողերուն ու քարերուն մէջ մտաւ: Մէջը մտնելը ուրիշ բան է, վրան հանգչիլը՝ ուրիշ բան: Հետեւարար, Եղիայի [հ]ոգին Եղիսէին վրա՛յ հանգչեցաւ եւ ո՛չ թէ մէջը:**

**Եսայի մարգարէն խօսելով Յիսուսի մասին՝ կ'ըսէ. «Անոր վրայ պիտի հանգչի Տիրոջ Հոգին, իմաստութեան ու հանեարի Հոգին, խորհուրդի ու զօրութեան Հոգին, գիտութեան եւ Աստուծոյ վախին Հոգին» (Ես 11.2): Այս համարն ալ Հոգիի հանգչելուն մասին կը խօսի: Սուրբ Հոգին է որ կը հանգչի Աստուծոյ Որդիին վրայ: Կրնա՞նք ըսել որ Սուրբ Հոգին էր որ փոխանցուեցաւ Աստուծոյ Որդիին, որպէսզի կատարել յագործուի: Մեղա՛յ: Քրիստոս իր մարդեղութեան ժամանակ ունեցաւ իր սեփական մարդկային Հոգին եւ ատիկա Սուրբ Հոգիին հետ երբեք չի նոյնանար: Ուրեմն ի՞նչը հանգչեցաւ Քրիստոսի վրայ: Քրիստոսի վրայ հանգչողը, Տիրոջ Հոգին էր եւ Տիրոջ Հոգիին իմաստութիւնը, հանճարը, խորհուրդը, զօրութիւնը, գիտութիւնը, վախը (այս վերջինը կը նշանակէ՝ Աստուծոյ կամքին ներքեւ երկիւղով ապրիլը, մեզի օրինակ ըլլալու համար): Արդ, ինչպէս Սուրբ Հոգիին իմաստութիւնը, հանճարը, խորհուրդը, զօրութիւնը, գիտութիւնը, եւ վախը հանգչեցաւ Տիրոջ վրայ, նոյնպէս ալ, երբ կ'ըսէ՝ «Եղիայի ոգին Եղիսէին վրայ հանգչեցաւ», պէտք է հասկնալ որ Եղիայի զօրութիւնը, քաջութիւնը, հաւատքի կրա՛կը, համարձակութիւնը եւ այլ յատկանիշները հանգչեցան Եղիսէի վրայ:**

**Աստուծաշունչին մէջ երրեմն «հոգի» ըսելով չենք հասկնար անձի մը հոգին:**

**Օրինակները բազմաթիւ են. յիշեմ միայն մէկ օրինակ:** Ի՞նչ կը հասկնանք երբ հաւատացեալներուն համար կ'ըսուի. «Հաւատացեալներու ամբողջ բազմութիւնը մէկ սիրտ մէկ հոգի էք» (Գրծ 4.32): Հոս «մէկ հոգի» ըսելով կը հասկնանք որ անոնք մէկ հաւատք, մէկ համոզում, մէկ կամք էին, կը հասկնանք որ անոնք համերաշխ եւ համախորհուրդ կեանք ունէին: Նոյնն է պարագան «Եղիայի ոգին» կամ «Եղիայի հոգիով» բառերուն: Ասոնք Եղիայի անձնական հոգիին չէ որ կ'ակնարկեն, այլ՝ անոր հաւատքին, գորութեան, նկարագիրին, կամքին, առաքելութեան, աստուածային ճշմարտութեանց հանդէպ անոր ունեցած նախանձախնդրութեան: Ասոնք էին որ «փոխանցուեցան» Եղիսին եւ Յովհաննէս Մկրտիչին եւ ո՛չ թէ Եղիայի անձին հոգին:

**Հիմա խօսինք Աստուածաշնչական վկայութիւններով.-**

**Աստուածաշունչը յստակ կերպով ցոյց կու տայ, որ իւրաքանչիւր մարդ իր սեփական հոգին ունի.-**

1) **Պետրոս առաքեալ կը վկայէ,** որ **Յիսուս «մեռաւ մարմինով, բայց կենդանի մնաց հոգիով:** Եւ հոգիով այ՝ գնաց բարողեց բանտարկուած հոգիներուն, որոնք ատենօք չինազանդեցան Աստուծոյ...» (Ա.Պտ 3.18-20, 4.6): **Եթէ հոգիները ուրիշներուն մէջ մտնելով աշխարհ կը դառնան, ինչո՞ւ համար հոս յիշուած հոգիները եւս չեն մտած ուրիշին մէջ ու աշխարհ չեն դարձած, մանաւանդ որ, յստակ է թէ անոնք կատարելագործուելու կարիքը ունէին, քանի երկրի վրայ եղած ժամանակնին անհնազանդ գտնուած էին Աստուծոյ հանդէպ, ինչպէս բնագիրը կ'ըսէ:**

2) **Առաքեալը խօսելով անրարոյական արարք կատարողի մը մասին՝ կ'ըսէ.** «Այս անբարոյութիւնը գործողը իր մարմինով Սատանային կամքին ճգէք, որպէսզի մարմինը կրոսուի, եւ այսպիսով թերեւս հոգին փրկուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի դատաստանին օրը» (Ա.Կր 5.5): **Շատ կարեւոր է նկատի առնել որ Առաքեալը այստեղ կը խօսի մասնաւոր անձի մը մասին եւ անոր հոգիի փրկութեան մասին, «մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի դատաստանին օրը», որ կը նշանակէ թէ իւրաքանչիւր մարդ ՆՈ՛ՅՆ իր հոգին է որ կը պահէ մինչեւ դատաստանին օրը:**

3) «Այն ատեն հոգը երկիր պիտի դառնայ՝ առաջուան եղածին պէս, եւ հոգին Աստուծոյ պիտի դառնայ, որ զանիկա տուաւ» (Ժղ 12.7): **Այս համարը ամենայն յստակութեամբ կը պարզէ,** որ մարդուն մարմինը՝ հողէն առնուեցաւ ու դարձեալ հոգին պիտի յանձնուի, իսկ հոգին Աստուծոյ կողմէ առուեցաւ ու դարձեալ Աստուծոյ կը դառնայ: **Այո՛, Աստուծմէ տրուած հոգին՝ Աստուծո՛յ կը դառնայ եւ ո՛չ թէ կ'երթայ ուրիշի մը մէջ մտնելու:**

4) **Յիշենք աղքատ Ղազարոսին եւ մեծահարուստին առակը:** Յիսուս պատմեց թէ ինչպէս երբ Ղազարոս մեռաւ՝ անոր հոգին տարուեցաւ Արքահամի մօտ (Ղկ 16.22), իսկ մեծահարուստին հոգին՝ տարուեցաւ դժոխք (Ղկ 16.22-23): **Առակը մեզի ցոյց կու տայ, թէ Ղազարոս Արքահամի գիրկին մէջ էր, իսկ մեծահարուստը՝ դժոխքի կրակներուն մէջ:** Անոնց հոգիները աշխարհ չվերադարձան ուրիշ կերպարանքով: **Եթէ խակապէս հոգիները ուրիշներուն մէջ մտնելով կը վերադառնան աշխարհ, այս առակը չի կրնար շիտակ ըլլալ:**

5) «Մարդուն հոգին անոր մէջ ստեղծող Տէրը կ'ըսէ...» (Զք 12.1): **Այս վկայութիւնը բացորոշապէս ցոյց կու տայ, որ Աստուած նոր հոգի կը ստեղծէ իւրաքանչիւր մարդ արարածի համար, իր յղացման վայրկեանին:**

6) «Մարդուս հոգին ու շունչը իրեն կը հաւաքէ: Այն ատեն ամեն մարմին մէկէն կը մեռնի ու մարդը հող կը դառնայ» (Յոր 34.14-15): **Այս համարները կը հաստատեն որ**

**Աստուած մարդոց հոգիները քովը կը հաւաքէ:** Հարկաւ քովը հաւաքելէ ետք, զանոնք դարձեալ աշխարհ չի դրկեր: Այդ մասին բնա՛ւ չենք կարդար ո՛չ Աստուածաշունչին մէջ եւ ոչ ալ հայրերու գրականութեան մէջ:

7) **Պօղոս առաքեալ կը հաստատէ.** «Մարդիկ մէկ անգամ կը մեռնին եւ անկէ ետք Աստուծոյ դատաստանին կը յանձնուին» (Երր 9.27): **Առաքեալը մահէն ետք Աստուծոյ դատաստանին յանձնուելու մասին կը խօսի եւ ո՛չ թէ ուրիշի մը մէջ մտնելու եւ վերստին աշխարհ գալու մասին:**

8) «Հեզութեամբ ընդունեցէք ձեր մէջ սերմանուած Աստուծոյ խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել» (Յկ 1.21): **Առաքեալը ցոյց կու տայ թէ իւրաքանչիւր մարդ ի՞նքն է ինքնիր հոգիի փրկութեան պատասխանատուն, որ կը նշանակէ թէ իւրաքանչիւր անձ իր սեփական հոգին ունի, որ զայն չէ՝ առած ուրիշէն եւ ոչ ալ զայն կրնայ փոխանցել ուրիշին:**

9) **Յիսուս իր աջ կողմը խաչուող աւազակին կ'ըսէ.** «Կատահ եղիր, այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ» (Յկ 23.43): **Աւազակին մահէն ետք, անոր հոգին աշխարհ չդարձաւ, այլ՝ զնաց առ յաւէտ Քրիստոսի հետ ըլլալու:** Եթէ իսկապէս հոգիները ուրիշին մէջ մտնելով վերստին աշխարհ կու զան որպէսսպի կատարելազործուին՝ Յիսուս այս խօսքը պիտի չըսէր, որովհետեւ յիշեալ աւազակին հոգին ուրիշի մը մէջ մտնելով, անպայման պէտք էր վերադառնար աշխարհ, քանի կարիքը ունէր կատարելազործուելու:

10) «Աստուած ինք, որ խաղաղութիւն կը պարգևեէ, թող կատարելապէս սրբէ ձեզ, եւ ձեր ամբողջ եռթիւնը՝ հոգի, շունչ եւ մարմին, անարատ պահէ մինչչեւ մեր Տիրոց Յիսուս Քրիստոսի գալստեան Օրը» (Ա.Թօ 5.23): **Այս համարը զօրեղապէս կը բացայայտէ, թէ ամէն մարդ ունի իր սեփական հոգին, չունչը (միտքը) եւ մարմինը: Ինչպէս մեր միտքն ու մարմինը ուրիշէն չենք կրնար առնել եւ ոչ ալ կրնանք զանոնք ուրիշին տալ, նոյնպէս ալ մեր հոգիները չենք կրնար ուրիշէն առնել եւ ոչ ալ զանոնք ուրիշին փոխանցել:**

11) **Պօղոս առաքեալ կ'ըսէ.** «Կը ցանկամ այս կիանիքն ելլել եւ Քրիստոսի հետ ըլլալ» (Փլ 1.23): **Առաքեալը այս կեանքէն ելլելու եւ դարձեալ այս կեանքին վերադառնալու մասին չի խօսիր, այլ՝ երթալու եւ Քրիստոսի հետ ըլլալու մասին: Վկայութիւն, որ ցոյց կու տայ թէ մարդուն վախճանումին ժամանակ, անոր հոգին իր Արարիչին մօտ կը տարուի:**

12) **Երր Ստեփանոս կը քարկոծուէր, ըսաւ.** «Տէ՛ր Յիսուս, ընդունե՛ իմ հոգիս» (Գրծ 7.58): **Ստեփանոս իր հոգիին համար պիտի չգործածէր «իմ» ստացական ածականը, եթէ երբեք իր հոգին ուրիշէն իրեն փոխանցուած ըլլար, կամ եթէ անիկա իրմէ ուրիշին պիտի փոխանցուէր:**

Վերակենդանացումի անտրամաբանականութիւնը...-

1) **Ենթադրենք պահ մը որ Տիգամ անունով մարդ մը կար, որուն մահուան ժամանակ, անոր հոգին փոխանցուեցաւ Պրոգիմ անունով նորածին մանուկի մը: Իսկ Պրոգիմի մահուան ժամանակ, անոր հոգին փոխանցուեցաւ Բիթան անունով նորածին մանուկի մը: Իսկ Բիթանի մահուան ժամանակ, անոր հոգին փոխանցուեցաւ Տիգաս անունով նորածին մանուկի մը: Եթէ Տիգամը, Պրոգիմը, Բիթանը եւ Տիգասը նոյն հոգին ունեցեր են, այդ պարագային, դատաստանի օրը այդ հոգին որո՞ւ**

սեփականութիւնը պիտի նկատուի. Տիգամի<sup>o</sup>, Պրոգիմի<sup>o</sup>, Բիթանի<sup>o</sup>, թէ՝ Տարասի: Կարելի<sup>o</sup> բան է որ չորսը նոյն հոգին ունենան: Եթէ անոնցմէ միայն մէկը հոգին պիտի ունենայ, այդ պարագային, ի՞նչ պիտի ըլլայ վիճակը միւս երեքին: Յաւերժապէս պիտի բնաջնջումի<sup>o</sup>ն, թէ՝ նոր հոգիներ պիտի ունենան: Բայց նոր հոգի ունենալու համոզումը մենք չենք գտներ աշխարհի մէջ գոյութիւն ունեցող որեւէ մէկ կրօնքի մօտ, ոչ ալ որեւէ մէկ աղանդի մօտ: Ո՞չ եղած է նման համոզում կամ հաւատալիք եւ ոչ ալ պիտի ըլլայ:

2) Վերակենդանացումի տեսութեան հաւատացողները, հիմնուելով Մատթէոս 17.10-13-ի եւ Ղուկաս 1.17-ի վրայ, կ'ըսեն թէ Եղիայի հոգին փոխանցուեցաւ Յովհաննէս Մկրտիչին: Համաձայն վերակենդանացումի տեսութեան, հոգին կը փոխանցուի անձէ անձ եւ կ'անցնի կատարելագործումի եւ բիւրեղացումի հանգրուաններէ: Արդ, Եղիա մարգարէն ապրած է Յովհաննէս Մկրտիչէն 850 տարի առաջ: Այս 850 տարիները լեցնելու համար գոնէ 10-18 անձի կարիքը կայ: Որո՞նք են 10-18 այն անձերը որոնց փոխանցուեցաւ Եղիայի հոգին մինչեւ որ անիկա հասնի Յովհաննէս Մկրտիչին: Եթէ Եղիայի հոգին փոխանցուեցաւ 10-18 անձերու մինչեւ անոր հասնիլը Յովհաննէս Մկրտիչին, այդ պարագային, Եղիայէն մինչեւ Յովհաննէս Մկրտիչի ժամանակ, մենք պէտք է 10-18 անձեր ունենանք, որոնք աւելի՝ հզօր եւ աւելի՝ հաւատքով լեցուն ըլլան քան՝ Եղիա մարգարէն, բայց չունի՞նք այդպիսի անձեր, ո՛չ իսկ մէկ անձ: Եթէ իսկապէս Եղիայի հոգին փոխանցուեցաւ Յովհաննէս Մկրտիչին, այդ պարագային, Յովհաննէս Մկրտիչ տասը անգամ աւելի հզօր պէտք էր ըլլար քան Եղիան, քանի վերակենդանացումի տեսութեան հաւատացողները կ'ըսեն թէ հոգիի փոխանցումի նպատակը՝ հոգիին բիւրեղացումն ու կատարելագործումն է, բայց Յովհաննէս Մկրտիչը այդպիսին չէր:


3) Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «Reincarnation-ի, այլ խօսքով՝ վերակենդանացումի տեսութեան համաձայն, մարդը իր մահէն ետք ուրիշ վիճակի կ'անցնի որոշ նպատակով եւ այդ նպատակը պէտք է ըլլայ մարդուն աստիճանական կատարելագործումը: Նոյն տեսութիւնը կ'ըսէ թէ այն մարդը, որ ներկայ իր կեանքին մէջ, բարի ու կատարեալ կեանք ունեցաւ, կ'անցնի աւելի բարձր վիճակի, իսկ այն մարդը, որ ներկայ կեանքին մէջ ունեցաւ ոչ օրինակելի, չար կեանք, անիկա աւելի ցած վիճակի կ'անցնի: Եթէ երբեք առաջին սկզբունքը պիտի առնենք, թէ վերակենդանացման այս սկզբունքը մարդս աստիճանաբար մէկ կեանքէն միւսը բարձրացնելու կը ծառայէ, կը տեսնենք որ գործնական տեսութիւնը, որ երկրորդ տեսութիւնն է, այդ մէկը չի հաստատեր, որովհետեւ երբ մարդ աւելի նուազ աստիճանի կը մտնէ, օրինակ կենդանիի մը մէջ, անկէ վերջ ինչպէ՞ս կրնայ կատարելագործել իր կեանքը: Որքան ատեն որ մարդ է, մարդկային իր մտածողութիւնը ունի, ինքզինք կրնայ բարձրացնել, բայց անգամ մը որ մտաւ ոչ բանաւոր էակի, այսինքն՝ անսառնի մէջ, որ մտածողութիւն չունի, կը նշանակէ թէ ինքզինք չի կրնար բարձրացնել կամ կատարելագործել, եւ ասով կը ջրուի վերակենդանացման տեսութիւնը:

4) Վերակենդանացումի տեսութեան հաւատացողները երբեմն կ'ըսեն, որ բարի մարդուն մեռած ժամանակ, անոր հոգին կ'անցնի իրմէ աւելի բարի ու բարձր վիճակի մէջ եղող անձի, եւ երբեմն ալ կ'ըսեն, որ անիկա կը փոխանցուի նորածին մանուկի: Ո՞ր մէկն է շիտակը: Բարի մարդուն հոգին կը փոխանցուի իրմէ աւելի բարի եղող անձի<sup>o</sup> մը, թէ՝ նորածին մանուկի մը: Երկու տարբեր բացատրութիւններու գոյու-

թիւնը, պարզապէս անոնց հակասութիւնն է որ ցոյց կու տայ եւ անոնց ճշմարտութիւնն է որ կը հերքէ: Իսկ եթէ պահ մը ընդունինք, որ բարի մարդուն հոգին կ'անցնի իրմէ աւելի բարի ու բարձր վիճակի մէջ գտնուող անձի, այդ պարագային հարց կը ծագի, թէ՝ ո՞ւր կ'երթայ բարի ու բարձր վիճակի մէջ գտնուող անձին հոգին՝ իր մէջ ընդունելէ ետք ուրիշի հոգին:

5) Քիչ մը վերեւ յիշեցի այս խօսքը. «Աստուած ինք, որ խաղաղութիւն կը պարգևէ, թող կատարելապէս սրբէ ձեզ, եւ ձեր ամբողջ եռթիւնը՝ հոգի, շունչ եւ մարմին, անարատ պահէ մինչեւ մեր Տիրոց Յիսուս Քրիստոսի գալստեան Օրը» (Ա.Թս 5.23): Առաքեալը կը յիշէ որ մարդը ունի հոգի, շունչ (միտք) եւ մարմին: Անոնք որոնք կը հաւատան վերակենդանացումի տեսութեան եւ կը խօսին հոգիի կատարելագործումին մասին, հարց կու տանք անոնց, արդեօք միայն մարդուն հոգին կատարելագործումի կարիքը ունի. մարդուն միտքն ալ կատարելագործումի կարիքը չունի<sup>6</sup>, մարդուն մարմինն ալ կատարելագործումի կարիքը չունի<sup>7</sup>: Վերակենդանացումի տեսութեան հաւատացողները չեն գիտեր որ մարդ արարածը կազմուած է հոգիէ, միտքէ ու մարմինէ: Շա՛տ լաւ գիտեն: Եւ եթէ զիտեն, ինչո՞ւ համար կը խօսին միայն մարդուն հոգիի կատարելագործումին մասին եւ չեն խօսիր մարդուն միտքի ու մարմինի կատարելագործումին մասին: Տակաւին, չենք խօսիր մարդուն գործերուն ու գործելակերպին, մտածումներու ու մտածելակերպի կատարելագործումին մասին:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ



## ՄՐԲՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՆԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ (ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ)\*

**Ներքին եւ արտաքին մարդուն միջեւ եղած տարբերութիւնը**

31.- **Մենք եղբայրներս, որ այստեղ կը նստինք, արտաքին բոլոր երեւոյթներուն համաձայն՝ Աղամին նոյն եւ մէկ նմանութիւնն ու պատկերը ունինք: Սակայն արդեօք ներքնապէ՞ս ալ նոյն եւ մէկ պատկերը կը ներկայացնենք. նոյն ու մէկ դիտաւորութիւնը ու սիրտը ունի՞նք: Արդեօք բոլորս ալ նո՞յնն ենք՝ բարութեան, արդարութեան եւ աստուածպաշտութեան մէջ, թէ՝ մեզմէ ոմանք Քրիստոսի եւ անոր Հրեշտակներուն հետ հաղորդակցութեան մէջ են, իսկ ուրիշներ ալ՝ սատանային եւ պիղծ ողիներուն հետ, թէեւ բոլորս ալ, որ միասին այստեղ կը նստինք, որպէս մէկ մարդ կ'երեւնք եւ մեզմէ իւրաքանչիւրը նոյն Աղամին երեսը կը կրէ: Արդ, անձամբ կը տեսնես, թէ որքան մեծ է տարբերութիւնը աներեւոյթ էութեան՝ ներքին մարդուն եւ արտաքին մարդուն միջեւ: Որովհետեւ բոլորս ալ մէկ մարդու կը նմանինք, սակայն ատով հանդերձ մեզմէ ոմանք Քրիստոսի եւ իր Հրեշտակներուն հետ են, իսկ ուրիշներ ալ՝ սատանային եւ անոր պիղծ ողիներուն հետ: Սիրտը անվերջ եւ անյատակ խորութիւն ունի: Անոր մէջ կը գտնուին ընդունակութեան սենեակ, ննջարան, դռներ, անցքեր, բազմաթիւ գրադարաններ, հոն կան բարութեան եւ արդարութեան, ինչպէս նաեւ չարութեան եւ անիրաւութեան գործարաններ. այնտեղ կայ մահ եւ կեանք. հոն կը գտնուի արդար վաճառականութիւնը, ինչպէս նաեւ՝ հակառակը:**

Քրիստոս մարդուն սիրտին մէջ կը հաստատէ իր թագաւորութիւնը

32.- **Ենթաղրենք որ կայ սփանչելի դղեակ մը, սակայն լքուած է եւ գարշահոսութեամբ լեցուն է, որովհետեւ հոն նետուած կը գտնուին բազմաթիւ դիակներ. այդպէս ալ մարդուն սիրտը Քրիստոսի դղեակն է, որ սակայն ամէն տեսակ պղծութեամբ եւ բազմաթիւ պիղծ ողիներու ներկայութեամբ լեցուն է: Այդ պատճառով ալ, անհրաժեշտ է վերաշինել եւ վերակառուցել զայն, ինչպէս նաեւ վերադասաւորել անոր իւրաքանչիւր սենեակը, որովհետեւ Քրիստոս կու գայ իր սուրբերով եւ Հրեշտակներով հոն հանգչելու, բնակելու, քալելու եւ իր թագաւորութիւնը հաստատելու: Սիրտը նման է նաեւ նաւի, որ իր մէջ նաւարկելու համար բաւարար չափով անհրաժեշտ պիտոյքները ունի, ուր կայ նաեւ նաւապեստ, որ ամէն ինչ կը կարգաւորէ եւ իւրաքանչիւրին պարտականութիւնը կը սահմանէ. ոմանց սխալը կ'ուղղէ եւ ուրիշներուն ալ ճիշդ ճամբան ցոյց կու տայ: Ճիշդ նոյն ճեւով սիրտն ալ իր նաւապետը ունի, որ խիղճն է եւ որ միշտ մեզ կը դատապարտէ (ՏԵ՛ս Հո 2.13-15):**

---

\* Անապատական հայրերէն՝ Ս. Սակար մեծ ճգնաւորի տասնհինգերորդ քարոզը:  
Առաջին մասը՝ 85, Եղանակը՝ 82-78:

### Սիրտը եւ խիղնին իշխողները

33.- **Խիղճը բնաւ չ'անտեսեր եւ չի ձգեր այն մտածումները, որոնք մեղքին կ'ընդառաջնեն, այլ անմիջապէս կը դատապարտէ զանոնք:** Անիկա չի ստեր, այլ կը վկայէ այն բաներուն մասին, որ Վերջին Դատաստանին Աստուծոյ առջեւ պիտի ըսէ: Այնպէս կը թուի, որ անիկա յարատեր մեզ կը դատապարտէ: Ենթադրենք որ կառք մը, ձին եւ անոր սանձը կան, որոնք մէկ կառապանի հակալշիուին տակ են: Կառապանը երբոր ուղէ, կառքը առաջ կը տանի եւ երբոր ուղէ, նաեւ կարող է կեցնել զայն: Ան ո՛ր ուղղութեամբ որ ուղէ, ըստ այդմ կ'առաջնորդուի կառքը, որովհետեւ կառապանին իշխանութեան տակ կը գտնուի: Նոյնպէս ալ սիրտը իրեն կապուած բազմաթիւ իշխողներ ունի: Միտքն ու խիղճը կը յանդիմանեն ու կ'առաջնորդեն սիրտը, ինչպէս նաեւ կ'արթնցնեն բնական իշխողները, որոնք սիրտէն կը բխին: Եւ հակառակ անձը մէկ ըլլալուն, ան բազմաթիւ անդամներ ունի:

34.- **Այն պահէն որ Աղամ պատուիրանազանց գտնուեցաւ, օձը անկէ ներս սպրդելով՝ ինքզինք տէր դարձուց եւ Աղամի անձին կողքին երկրորդ անձի մը պէս եղաւ:** Որովհետեւ Տէրը կ'ըսէ, թէ ով որ իր անձը չ'ուրանար եւ զիս ամէն բանէ աւելի չի սիրեր, չի՝ կրնար ինծի աշակերտ ըլլալ (ՏԵ՛Ս ՂՂ 9.23, 14.26), ինչպէս նաեւ՝ «ով որ իր կիանքը իրեն կը պահէ՝ պիտի կորսնցնէ զայն» (ՄԹ 10.39):

### Անարատութիւնը եւ սրբութիւնը

**Երբ մեղքը մուտք գործեց անձին մէջ, անոր անդամին պէս եղաւ եւ մարմնաւոր մարդուն հետ միացաւ:** Ահա թէ ինչո՞ւ բազմաթիւ պիղծ մտածումներ յառաջ կու գան սիրտին մէջ: Ան որ իր անձին ցանկութիւնները կը կատարէ, չարին ցանկութիւններն է որ կատարած կ'ըլլայ, որովհետեւ չարը միախառնուած է անձին հետ: Իսկ ան որ ինքզինք Աստուծոյ կը հնազանդեցնէ, ինչպէս նաեւ թէ՝ իր անձին եւ թէ ալ իր մէջ յառաջացող ցանկութիւններուն դէմ կը բարձրանայ, կը նմանի անոր, որ իրեն կ'ենթարկէ թշնամիին քաղաքը եւ կը տիրէ անոր: Այդպիսին արժանի կը համարուի հասնելու արդարութեան Հոգիին բարձրագոյն աստիճաններուն, ինչպէս նաեւ Աստուծոյ զօրութեամբ կը վարձատրուի, որպէսզի մաքուր եւ անարատ ըլլայ: Աստուծած զայն իր նախկին վիճակէն շատ աւելի կը բարձրացնէ ու կը մեծցնէ, որովհետեւ կ'աստուածացնէ զայն եւ իրեն որդեգիր զաւակ կը դարձնէ: Մարդը իր հոգիին վրայ կը ստանայ երկնաւոր կնիքը, որովհետեւ Աստուծոյ ընտրեալները սրբութեան իւղով կ'օծուին եւ թագաւորներու նման կը դառնան:

35.- **Այսպէս է մարդկային բնութիւնը:** Մեղքի սարկութենէն եւ չարութեան խորերէն զուրս գալով, մարդը բարութեան եւ արդարութեան կը դառնայ: Կրնայ ըլլալ նաեւ ուրիշ մը, որ թէեւ Սուրբ Հոգիին միացած է եւ երկնաւոր երեւոյթներով զինովցած, սակայն ատով հանդերձ եթէ ան ուղէ՝ ապա կրնայ չարանալ: Առնենք կնոջ մը օրինակը, որ ցնցուակներ կը հագնի, անօթութենէ կը տառապի եւ ամբողջութեամբ՝ ոտքերէն մինչեւ զլուխ աղտոտ է, սակայն կրնայ ըլլալ, որ ան անխոնջ աշխատանքով հասնի մինչեւ թագաւորական բարձր աստիճանի, ծիրանի հագնի, թագ դնէ զյխուն եւ թագաւորին հարար ըլլայ: Ան վստահաբար երբեմն կը յիշէ իր նախկին խղճալի վիճակը եւ կը վախնայ, որ յանկարծ դարձեալ չվերադառնայ այդ վիճակին: Սակայն, երբեք կամովին չ'ընտրեր վերադառնալ իր նախկին ամօթալի վիճակին, որովհետեւ ատիկա

**մեծ ապուշութիւն կ'ըլլայ:** Նոյնպէս ալ բոլոր անոնք, որոնք անդամ մը ճաշակեցին Աստուծոյ շնորհքը եւ հաղորդակից դարձան Սուրբ Հոգիին, եթէ չզգուշանան եւ չհակեն իրենց անձեռուն, կը մարին եւ շատ աւելի վատ վիճակի մէջ կ'իյնան, քան իրենց նախկին վիճակը, երբ աշխարհի մէջ էին: Ասիկա սակայն, երբեք չի նշանակեր, որ Աստուծած փոփոխական է եւ անկարող է պահելու զանոնք եւ կամ Հոգին ինքն է, որ կը նուազի ու կը մարի (Ա.Թս 5.19), այլ անձեռը իրենք են որ շնորհքին հետ համաձայն չեն բնթանար եւ անոր հետ չեն գործակցիր: Այդ պատճառով ալ անոնք կը դանդաղին եւ կ'իյնան բազմաթիւ չարութիւններու մէջ: Որովհետեւ անոնք որոնք ճաշակեցին այդ շնորհքը, իրենց հետ միաժամանակ կ'ունենան ուրախութիւնն ու միխթարութիւնը, երկիւղն ու պատկառանքը, ինչպէս նաեւ՝ տիրութիւնն ու ցնծութիւնը: Անոնք ցաւ կը քաշեն թէ՛ իրենց հոգիներուն եւ թէ մարդկային ցեղին համար: Այդպիսիներուն արցունքները իրենց համար հաց են, իսկ լացն ու տիրութիւնն ալ՝ քաղցրութիւն եւ թարմացում:

### Հպարտութեան եւ պարծենելութեան վտանգը

**36.- Եթէ իր ստացած շնորհքին համար հպարտացող եւ գոռոզացող մարդ տեսնես, նոյնիսկ եթէ ան հրաշքներ գործէ եւ մեռեներ յարուցանէ, սակայն ինքզինք անպիտան եւ անարժան չնկատէ եւ չարունակէ հոգիով աղքատ ըլլալ եւ ինքզինք ուրանայ, մեղքը զինք կը խարէ, որովհետեւ նման անձը չ'անդրադառնար իրողութեան: Ուստի, պէտք չէ անոր հաւատալ, որովհետեւ քրիստոնէութեան նշանը հետեւեալն է. մարդ Աստուծոյ կողմէ պէտք է գովուի, մինչ ան ամէն ճիզ կը թափէ՝ խուսափելու մարդոց իր մասին կատարած զանազան արտայայտութիւններէն: Նոյնիսկ եթէ ոեւէ մէկ թագաւորի ամբողջ հարստութիւնը իր մօտ ունենայ, կը պահէ զայն եւ չարունակ կ'ըսէ, որ այդ հարստութիւնը սեփականութիւնն չէ, այլ ուրիշ մը զայն իր մօտ ի պահ դրած է: Կ'ըսէ թէ ինք աղքատ մարդ է, որովհետեւ սեփականատէրը երբոր ուզէ, կրնայ զայն իրմէ ես առնել: Իսկ եթէ մէկը ըսէ թէ ինք հարուստ է, ամէն ինչ առատութեամբ ունի եւ հետեւարար աւելիին պէտք չունի, այդպիսին քրիստոնեայ չէ, այլ՝ սատանայի եւ կորուստի անօթ է:**

**ԶԱստուծած վայելելու եւ բմբոշխնելու գծով մեր անօթը բնաւ չի լեցուիր ու չի յագենար: Մարդ ո՛րքան ճաշակէ եւ ուտէ անկէ, ա՛յդքան եւ աւելի կ'անօթենայ: Այսպիսի մարդոց Աստուծոյ հանդէպ ունեցած ջերմ սէրը անհնար է սահմանափակել, որովհետեւ ո՛րքան ածին եւ յառաջանան, ա՛յնքան իրենք զիրենք կը համարեն որպէս աղքատ մարդիկ, որոնք ոչինչ ունին եւ առաւել չափով կարիքաւոր են: Այդպիսիները հետեւեալ ձեռով կ'արտայայտուին՝ լսելով. «Ես արժանի իսկ չեմ, որ արեւը ծագի վրաս»: Ահաւասիկ, այս խոնարհութիւնն է իսկական քրիստոնէութեան նշանը: Իսկ եթէ մէկը ըսէ, թէ «կշտացայ ու լեցուեցայ», այդպիսին խարերայ է եւ ստախօս:**

### Այլակերպութիւնն ու մարմիններու փառաւորումը

**37.- Ինչպէս որ Տիրոջ մարմինը փառաւորուեցաւ աստուծային փառքով եւ անսահմանելի լոյսով, երբ թարբօր լեռը բարձրացաւ, այդպէս ալ պիտի փառաւորուին Սուրբերուն մարմինները եւ փայլակի պէս պիտի լուսաւորուին: Այն փառքը, որ Քրիստոսի մէջ կը գտնուէր, դուրս ճառագլթելով՝ ամբողջ մարմինը լուսաւորեց: Նոյնը կը պատահի նաեւ Սուրբերուն հետ: Քրիստոսի զօրութիւնը որ իրենց մէջ կը**

գտնուի, այն օրը իրենց մարմիններուն վրայ պիտի հոսի: Անոնք այժմէն իսկ իրենց միտքերուն մէջ մասնակից են Քրիստոսի էութեան եւ բնութեան, որովհետեւ զրուած է. «Քանի որ թէ Քրիստոս, որ մարդիկը իրենց մեղերէն կը սրբէ, եւ թէ սրբուողները՝ նոյն մէկ Հօր զաւակներն են» (Երր 2.11), նաեւ՝ «այն փառքը որ ինձի տուիր՝ իրենց տուի» (ՅՀ 17.22):

**Այնպէս ինչպէս բազմաթիւ ճրագները նոյն մէկ կրակէն կը փառին, այդպէս ալ Սուրբերուն մարմինները Քրիստոսի մարմինը ըլլալով՝ Քրիստոսի նման կ'ըլլան եւ ո՛չ թէ ուրիշ բան:**

Մահը, կեանքը եւ ընտրութեան ազատութիւնը

38.- **Աղամին հետ համեմատելով, ի՞նչ բանի մէջ կը կայանայ քրիստոնեաներուն առաւելութիւնը, հակառակ անոր, որ Աղամի մարմինը անմահ էր ու անփուտ, մինչ քրիստոնեաներ կը մեռնին եւ քայլայումի կ'ենթարկուին:**

Իսկական մահը տեղի կ'ունենայ մարդուս ներաշխարհին՝ սիրտին մէջ, եւ ծածկուած է: Ներքին մարդն է որ կը փանանա. ահա թէ ինչո՞ւ, երբ մէկը այդ ծածուկ փայրին մէջ «մահէն կեանքի անցնի» (ՏԵ՛ս ՅՀ 5.24), ապա իրօք յաւիտենապէս կ'ապրի եւ երրեք չի մեռնիր: Թէ եւ այդպիսիններուն մարմինը որոշ ժամանակի ընթացքին կը քայլայուի, սակայն վերստին յարութիւն կ'առնեն փառքով, որովհետեւ սրբուած են: Ահա թէ ինչու մենք քրիստոնեաներուն մահը հանգիստ եւ նինջ կը կոչենք: Եթէ մարդը անմահ ըլլար եւ մարմինն ալ՝ անփուտ, ապա ամբողջ աշխարհը այս զարմանալի իրականութիւնը, այսինքն՝ քրիստոնեաներուն մարմիններուն անապական եւ անփուտ ըլլալը տեսնելով՝ ձեւով մը անոնք պարտաւորութեան տակ մտածի պէս բարեգործութիւն պիտի ընէին եւ ոչ թէ իրենց ազատ ընտրութեամբ:

39.- **Որպէսզի ազատ կամքի ընտրութիւնը բացայացուի եւ հաստատ մնայ այն ազատութիւնը, որ Աստուած սկիզբէն չնորհեց մարդուն, այդ պատճառով ալ աստւածային նախախնամութիւնը կարգաւորեց այս բաները եւ մարդուն մարմինին քայլայումը իրականութիւն դարձուց, որպէսզի երեւոյթը, այսինքն՝ դէպի բարին կամ չարը ուղղուելու որոշումը ամբողջութեամբ մարդուն ազատ ընտրութենէն եւ զանազանութենէն կախեալ ըլլայ: Որովհետեւ նոյնիսկ չարութեան մէջ արմատացած եւ մեղքին մէջ խորասուզուած մարդը, որ ինքինք սատանային անօթը դարձուցած է, որպէսզի վերջինս իր վրայ իշխէ, այդպիսին բռնութեամբ կապուած չէ անոր, այլ ազատութիւնն ունի «ընտրեալ գործիք» (Գրծ 9.15), այսինքն՝ կեանքի անօթ ըլլալու: Նոյն ձեւով ալ, միւս կողմէ, բոլոր անոնք որոնք Աստածութեամբ ողողուած են, ինչպէս նաեւ Սուրբ Հոգիով լեցուած են ու անոր իշխանութեան տակ կը գտնուին, որեւէ չասկացողութեամբ բռնի կերպով կապուած չեն Անոր, այլ կատարելապէս ունին ընտրութեան ազատութիւն՝ փոխուելու եւ կամ ընելու ա'յն՝ ինչ որ կ'ուզեն այս աշխարհին մէջ:**

Աստիճանաբար շնորհեով անիլը

40.- **Արդեօք չարը աստիճանաբար կը նուազի եւ արմատախիլ կ'ըլլայ, եւ արդեօք մարդը աստիճանաբար կ'աճի չնորհքի մէջ, կամ չարը մէկ անգամէն արմատախիլ կ'ըլլայ, երբոր մարդը կը կորսնցնէ բարիքը գնահատելու իր գիտակցութիւնը:**

**Մօր որովայնին մէջ յղացուած սաղմը անմիջապէս կատարեալ մարդու չի վերած-փր, այլ աստիճանաբար անոր մէջ կը կազմուի պատկերը, մինչեւ որ ան ծնի: Նոյնիսկ իր ծնունդին ետք ալ, ան կատարեալ մարդ չ'ըլլար, այլ տարիներ պէտք ունի, որպէս-զի աճելով իսկական մարդ ըլլայ: Կամ ցորենի հատիկները, հազիւ հողին մէջ սերմա-նուխն, անմիջապէս չէ որ կ'արմատաւորուխն, այլ հովերը, փոթորիկներն ու անձրեւ-ները կ'անցնին անոնց վրայէն եւ ապա կը սկսին արմատ նետել, ծիլ եւ հասկ կազմել: Ինչպէս նաեւ մարդը, երբ պտղատու ծառեր կը տնկէ, անմիջապէս չէ որ անոնց պտղուդէն կ'օգտուի: այդպէս ալ, հոգեւոր պարագաներուն մէջ, իմաստութիւն եւ ճշմարտութիւն կը գտնենք. մարդն ալ աստիճանաբար կ'աճի ու կը գարգանայ, մին-չեւ հասնի «հաւատքի ամբողջական միութեան եւ չափահասութեան» (Եփ 4:13), եւ ո՛չ թէ ինչպէս ոմանք կ'ըսեն, թէ վերարկու մը կը հանես եւ անոր փոխարէն ուրիշ մը կը հագնիս:**

**41.- Ան որ կ'ուզէ ուսեալ ըլլալ, նախ եւ առաջ կը սկսի այբուբէնի տառերը սորվիլ եւ երբ կ'իւրացնէ գանոնք, նախակրթարան կը սկսի յաճախել՝ սկսելով առաջին դասա-րանէն: Երբ նախակրթարանի վերջին դասարանը կ'աւարտէ՝ որպէս սկզբնակ երկրոր-դական վարժարան կ'ուղղուի: Նոյնպէս երբ աւելի բարձր ուսման կը ձեռնարկէ, տուեալ մակարդակը եւ դիրքը նուածողներուն դիմաց նորսկզբնակ եւ ամէնչէն վերջինը կը նկատուի: Անկէ ետք, երբ անոնց մէջ ըլլալով բարձրագոյն գագաթը կը նուածէ՝ ո՛չ միայն բարձրագոյն պաշտօնին կը տիրանայ, այլև իրաւունք կ'ունենայ օգնականներ ունենալու:**

**Եթէ իմացական աշխարհին մէջ բարձրանալու նման աստիճաններ ու հան-գրուաններ կան, հապա անոնք որքա՞ն աւելի եւ շատ պիտի ըլլան երկնաւոր խոր-հուրդներուն պարագային: Շատ մարգումներէ եւ քննութիւններէ ետք, այն մարդը որ համբերութեամբ կը կրէ փորձութիւնները եւ յաջողութեամբ կ'անցընէ գանոնք, կատարելութեան կը հասնի: Այն քրիստոնեաները, որոնք իրապէս ճաշակեցին շնորհը եւ իրենց սիրտերուն ու միտքերուն մէջ կրեցին խաչին նշանը՝ թագաւորէն մինչեւ մուրացկանը, անոնք բոլորն ալ այս աշխարհին պատկանող երեւոյթները աղբ եւ գար-շահուառութիւն կը համարեն: Այսպիսիներ կրնան գիտնալ, որ այս երկիրը, թագաւոր-ներու գանձերը, հարստութիւնները, փառքերն ու պատիւները, ինչպէս նաեւ իմաս-տութիւնն ու գիտութիւնը ուրիշ բան չեն, եթէ ո՛չ արտաքին անօգուտ երեւոյթներ, ո-րոնք ո՛չ միայն հաստատուն հիմք չունին, այլեւ անցողիկ են: Ինչպէս ժամանակաւոր ու արհամարհելի են նաեւ երկինքի տակ գտնուող բոլոր երեւոյթները:**

#### Մարդուն մեծ արժանապատուութիւնը

**42.- Պատճառն ալ այն է, երկինքն վեր եղող երեւոյթները օտար ու գարմանալի են. անոնք ո՛չ թագաւորներու գանձերուն մէջ կը գտնուին, ո՛չ խօսքի իմաստութեան, ո՛չ երկրաւոր փառքի ու պատիւի եւ ոչ ալ հարստութիւններու մէջ: Իսկական հարը-տութիւն ունեցողները անոնք են, որոնք ամբողջ տիեզերքը ստեղծող Տէրը ունին իրենց սիրտերուն մէջ. ա՛յն բաժինը, որ ո՛չ կը նուազի, ո՛չ կ'առնուի իրենցմէ եւ ոչ ալ կը չքանայ, այլ հաստատուն կը մնայ մինչեւ յաւիտեան: Քրիստոնեաներ շատ լաւ կը զիտակցին, որ հոգին բոլոր ստեղծուածներէն աւելի թանկագին է եւ թէ՝ մարդը միակն է, որ Աստուծոյ պատկերին եւ նմանութեան համաձայն ստեղծուած է: Տէ՛ս**

երկինքն ու անոր լայնատարածութիւնը, երկիրը եւ անոր մէջ գտնուող արարածներուն գեղեցկութիւնը եւ մարմիններուն հրաշալիութիւնը, բայց այդ բոլորին մէջ մարդու գերազոյնն է՝ իր ունեցած կարողութեամբ եւ միակն է, որուն Աստուած հաճեցաւ: Թէեւ ծովուն կէտերը, հակայ լեռներն ու գագանները արտաքնապէս մարդէն շատ աւելի մեծ կ'երեւին, սակայն մարդը բոլոր արարուածներուն մէջ գերազոյնն է: Ուստի, մտածէ՛ ու խորհրդածէ՛ արժանապատուութեանդ եւ մեծ կարողութեանդ մասին եւ յիշէ՛, որ Աստուած նոյնիսկ հրեշտակներէն ալ աւելի վեր զասեց քեզ, որովհետեւ քեզի օդնելու եւ փրկելու համար, ան անձամբ երկինքէն երկիր խոնարհեցաւ եւ մարդ դարձաւ:

**43.- Աստուած եւ իր հրեշտակները<sup>1</sup>** եկան քու փրկութեանդ համար: Թագաւորին Որդին՝ Յիսուս Քրիստոս խորհրդակցեցաւ իր Հօր հետ եւ այդ պատճառով ալ թագաւորը Բանը զրկեց, որ մարմին ստացաւ եւ անոր մէջ ծածկեց իր աստուածութիւնը, որպէսզի նմանը իր նմանութեամբը փրկէ, այսինքն՝ իր մարդեղութեամբ փրկէ մարդը խաչին վրայ իր կենդանի պատարագումով ու զոհագործութեամբ: Ի՞նչ մեծ է Աստուածոյ սէրը մարդուն հանդէպ: Անմահը քու սիրոյդ խաչուիլ ու մեռնիլ ընտրեց. ուստի, տե՛ս, թէ Աստուած ինչքա՞ն սիրեց աշխարհը, որովհետեւ «մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ» անոր համար (ՅՀ 3.16), եւ «միրէ անոր հետ ամէն ինչ պիտի շշնորհէ մեզի» (ՀՇ 8.32): Ուրիշ տեղ մը ան կ'ըսէ՛ «իր բոլոր ստացուածքներուն վերակացու պիտի կարգէ» (Մտ 24.47), իսկ ուրիշ տեղ ալ ցոյց կու տայ, թէ ինչպէս հրեշտակները Սուրբերուն ծառայողներ են: Զորբորդ Թագաւորաց գիրքին մէջ կը կարդանք, երբ Եղիսէ լեռան վրայ կը գտնուէր եւ թշնամի զօրքերը պաշարած էին զինք, իր ծառան վախնալով՝ կ'ըսէ՛. «Ո՛հ, տէ՛ր իմ, ի՞նչ ընենք». Եղիսէ կ'ըսէ՛. «Մի՛ վախնար, բանզի մեզի հետ եղողինքը անոնց հետ եղողներէն աւելի են...: Սիա լեռը Եղիսէ չորս կողմը հրեղեն ձիերով ու կառերով լեցուն էր» (ՏԵ՛ս Դ.Թ.Պ. 6.15-18): Այսպէս, Տէրը անձամբ իր հրեշտակներուն հետ կը ներկայանայ, որպէսզի օգնէ իր ծառաներուն: Ո՛հ, ի՞նչ մեծ, պատուաւոր ու թանկազին է մարդու հոգին Աստուածոյ համար, որովհետեւ Ան անձամբ իր հրեշտակներուն հետ կը հրաւիրէ զայն, որպէսզի երկնայիններուն հետ հաղորդակից դառնայ երկինքի արքայութեան եւ յաւիտենական կեանքին: Իսկ սատանան եւ իր զօրքերը անընդհատ մարդուն ետեւէն կ'երթան, որպէսզի զայն դէպի իրենց կողմը քաշէն:

**44.- Այնպէս ինչպէս երկրաւոր թագաւորներուն ծառայողները անկիրթ եւ անվայիլ վերաբերմունք ունեցող մարդիկ չեն ըլլար, այլ՝ կիրթ եւ վայելուչ անձեր, նոյնպէս ալ երկնաւոր պալատին մէջ, երկինքի Թագաւորին սպասաւորները անոնք են, որոնք անմեղազրելի, անբիծ, սիրտով մաքուր եւ անարատ են: Ինչպէս որ աշխարհի թագաւորներուն կը սպասաւորեն գելեցիկ կոյսեր, որոնք ո՛չ միայն անբիծ կ'ըլլան, այլեւ՝ կիներուն մէջ գեղեցկագոյնները, նոյնպէս ալ՝ հոգեկան աշխարհի պարագային: Այն հոգիները, որոնք ամէն տեսակ առաքինի վարքով ու սրբութեամբ կը զարդարուին, անոնք են որ երկնաւոր Թագաւորին ընկերակցութեան կը կանգնին: Երեւելի աշխարհին մէջ, երբ թագաւորը որոշէ ուրիշ վայր երթալ ու հոն ընակիլ, եւ եթէ պատահի, որ**

<sup>1</sup> Հրեշտակները որպէս ողեղէն արարածներ, Աստուածոյ կողմէ կը զրկուին մարդոց օգնելու համար իրենց փրկութեան ճանապարհին մէջ եւ ծառայելու անոնց (Հմմտ Երր 1.14):

այդ վայրը մաքուր չէ, ապա անմիջապէս, լաւագոյն կերպով եւ բարձրագոյն օրինաւորութեամբ կը մաքրեն, կը յարդարեն եւ բազմաթիւ անուշաբոյր իւղեր սրսկելով՝ կը պատրաստեն, հապա ո՛րքան եւ աւելի մաքրութեան եւ անուշահոտութեան կարիքը ունին մեր հոգիներու բնակարանները, որոնք անձամբ Տէրը կ'ընտրէ, որպէսզի հոն բնակի ու իր հանգիստը գտնէ: Որովհետեւ Տէրը անբիծ, մաքուր, Սուրբ եւ անարատ է: Ուստի, այսպիսի մաքրուած սիրտի մէջ է որ կը հանգչին Աստուած եւ իր ամբողջ երկնային եկեղեցին:

**Աստուած մեզի կու տայ իր սեփական փառքերը**

**45.- Երկրի վրայ, մարդկային ընկերութեան եւ կեանքին մէջ, եթէ ոեւէ մէկ հայր բազմաթիւ արտեր ու շատ հարստութիւն ու թանկազին քարեր ունի, իր տան մէջ ապահով տեղ կը պահէ զանոնք՝ վերապահելով իր սիրելի որդիին: Այդ զաւակին կու տայ իր բոլոր հարստութիւնները: Այդպէս ալ Աստուած հոգիին՝ մարդուն վստահեցաւ իր ունեցուածքն ու սեփական թանկազին փառքերը:**

**Աշխարհի մէջ երբ պատերազմ տեղի կ'ունենայ, իրարու դէմ ճակատող թագաւորներէն մէկը եթէ տեսնէ, որ իր հակառակորդը իրմէ աւելի զօրաւոր է, ապա անմիջապէս բանակցողներ կը դրկէ, որպէսզի հաշտութեան համար պայմաններ որոշուին (ՏԵ՛ս Ղկ 14.32): Բայց երբ երկու թագաւորներն ալ հզօր են, հաւասար ոյժ եւ զօրք ունին, անմիջապէս կը պատրաստուին իրենց բոլոր ռազմավարական ոյժն ու կարողութիւնը ի սպաս զնելու այդ պատերազմին մէջ: Ուստի, տե՛ս եւ զիտցի՛ր քու արժանապատութեանդ մեծութիւնը, որովհետեւ Աստուած իր բոլոր զօրքերով՝ հրեշտակներու գունդերով, անձամբ յաւաջ եկալ՝ պատերազմելու համար թշնամիին դէմ, որպէսզի քեզ մահէն փրկէ: Հետեւաբար, Աստուած քեզի համար աշխարհ եկաւ:**

**Այն ինչ որ Աստուած մեր փրկութեան համար ըրաւ**

**46.- Ենթաղրենք որ ոեւէ մէկ թագաւոր աղքատ, խեղճ եւ բորբոտութեամբ ոեւէ մէկ ծածկուած մարդ կը գտնէ եւ առանց ամչնալու անկէ, կը խոնարհի եւ անոր վէրքերը կը դարմանէ, խոցերը կը բուժէ, իր պալատը կը տանի, թագաւորական խրախճանքին սեղանակից կը դարձնէ, ծիրանի կը հազցնէ եւ թագաւոր կը կարգէ զայն: Ասիկա բարեգութ ա՛յն վերաբերումն է, ինչ որ Աստուած ըրաւ մարդկային ցեղին: Ան մարդոց վէրքերը լուաց ու բժշկեց եւ զիրենք դէպի իր երկնաւոր բնակարանները բերաւ: Ի՞նչ մեծ է քրիստոնեաներուն արժանապատութիւնը, որ ուրիշ ոչ մէկ բանի հետ կրնայ բաղդատուիլ: Սակայն, եթէ քրիստոնեան գոռողանայ եւ թոյլ տայ, որ մեղքը գողնայ զինք, այն ատեն կը վերածուի պարիսպ չունեցող քաղաքի, ուր գողերը ամէն կողմէ ազատ-համարձակ մուտք գործելով՝ կը թալանեն, կը քանդեն, կը փնացնեն ու կ'այրեն զինք: Այս պատճառով ալ եթէ շատ թեթեւութեամբ կը մօտենաս հարցերուն եւ չես հսկեր հոգիիդ, չարին հոգիները կու գան, խաւարով կը պատեն միտք, կը քանդեն ներաշխարհ եւ աշխարհիկ մտահոգութիւններու եւ վաղանցիկ երեւոյթներու միջոցաւ կը ցրուեն մտածումներդ:**

**47.- Մարդոցմէ շատեր արտաքին երեւոյթներու զծով մեծապէս ուսեալ են, զիտութիւն եւ յայն ծանօթութիւն ունին, հոգ կը տանին իրենց ապրուստին ու կենցաղին եւ կը կարծեն, թէ այդ է կատարելութիւնը, առանց սակայն խոր նայուածք նետելու ի-**

րենց սիրտին ներսը եւ տեսնելու այն չարութիւնները, որոնք հոգին կը բանտեն եւ որոնք ծածուկ կերպով արմատ նետած են սիրտին եւ անդամներուն մէջ: Գողը տան մէջ ներկայ է, որ ասպարէզ կարդացող աներեւոյթ ոյժն է: Եթէ մարդը չարին դէմ պատերազմելու համար ինքոյնք չպատրաստէ, իր ներաշխարհին մէջ պահուրտած չարը աստիճանաբար կը տարածուի, կը շատանայ ու կ'աւելնայ այն աստիճան, մինչեւ որ մարդը բացայացարէն եւ երեւելի կերպով սկսի մեղք գործել:

**Զարութեան տարրը բխող ակի նման դէպի վեր կը յորդի: Ուստի, ուշաղի՛ր եղիր, այլապէս հազարաւոր սխալներու մէջ պիտի իյնաս եւ իր ուշքը կորսնցուցած մարդու պէս պիտի ըլլաս:**

**Մարդկային կեանքին մէջ խոռվութեան եւ իրարանցումի պատճառը**

48.- **Հասկցի՛ր հետեւաբար, որ ա՛յս է այն՝ ինչ որ կ'ընեն չար ոգիները ընդդէմ մարդոց: Քեզ շրջապատող ընկերութիւնը որ կը տեսնես, թագաւորէն մինչեւ մուրացկանը շփոթի ու խոռվի մէջ են, առանց գիտնալու, թէ ի՞նչ է պատճառը. թէեւ անոր պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ Աղամի անհնազանդութեան ճամբով չարին մարդոց մէջ մուտք գործելը, այսինքն՝ «մահուան խայթոցը» (Ա.Կր 15:56): Որովհետեւ մեղքը որ ներս սպրդեցաւ, կերպով մը սատանային աներեւոյթ զօրութիւնն է, որ մարդուն մէջ ամէն տեսակ չարութիւն սերմանեց: Անիկա ներքին մարդուն մէջ ծածկաբար կը գործէ եւ ո՛չ ոք կը նկատէ զայն: Ան նաեւ միտքին մէջ գործելով՝ մտածումներուն դէմ կը պայքարի: Այս իմաստով, մարդիկ չեն անդրադառնար որ չարիք կը գործեն իրենց մէջ գործող անձանօթ ոյժի ազդեցութեան տակ: Անոնք կը կարծեն, թէ ա՛յն ինչ որ կ'ընեն, բնական բաներ են եւ իրենց ընտրութեամբ է որ կ'ընեն այդ բոլորը: Խսկ բոլոր անոնք՝ որոնք իրենց սիրտերուն մէջ Քրիստոսի խաղաղութիւնը ստացած են եւ իրենց ներաշխարհը անոր լոյսով լուսաւորած, լաւապէս կը ճանչնան, թէ ո՛վ է աղբիւրը այդ բոլոր չարութիւններուն:**

49.- **Ամբողջ աշխարհը գերեվարուած է մեղքի ցանկութեամբ եւ անդիտակ կը մնայ իրողութեան: Նաեւ կայ պիղծ կրակը, որ սիրտը կը բոցավառէ, միւս անդամներուն մէջ կը տարածուի ու կը մոյէ մարդիկը, որպէսզի իրենց ցանկութիւնները կատարեն, ինչպէս նաեւ հազարաւոր ուրիշ մեղքեր գործեն: Անոնք որոնք իրենց անձերուն թոյլ կու տան որ մեղքը գործէ իրենց մէջ եւ հաճոյք կ'առնեն անկէ, այդպիսիներ իրենց սիրտերուն մէջ ներքին մեղքն է որ կը գործեն, եւ այդ ձեւով չարը իրենց մէջ տեղ կը գտնէ՝ մինչեւ որ անոնք բացայալու պղծութեան մէջ իյնան՝ արծաթսիրութիւն, սնափառութիւն, հապարտութիւն, նախանձ, բարկութիւն, եւալլն:**

**Եթէ ոեւէ մէկ մարդ ճաշկերոյթի հրաւիրուի եւ անոր առջեւ բազմատեսակ ճշեր դրուին, մեղքը կ'առաջարկէ որ անպայման բոլոր տեսակներէն ալ ուտէ եւ ինք կ'ուրախանայ այդ ներշնչումով, սակայն իր կարողութենէն շատ աւելի վեր ծանրութիւններով կը ծանրաբեռնուի: Ցանկութիւնները անտանելի կերպով ծանր կշռող լեռներու պէս են, որոնք լեցուն են թունաւոր ակերով, գագաններով եւ օձերով: Այնպէս ինչպէս ծովուն կէտը կը կլէ մարդը, այդպէս ալ մեղքը կը կլէ մարդոց հոգիները: Անիկա հրակէզ բոց է եւ մխացող նետ, ինչպէս Առաքեալը կ'ըսէ. «Որպէսզի կարենաք մարել չարին արձակած բոլոր միացող նետերը» (Եփ 6:16): Որովհետեւ մեղքը իրեն համար սիրտին ու հոգիին մէջ տեղ գտած է եւ իր հիմերը անոր շուրջը կանգնեցուցած է:**

Հոգիով իմաստուններուն վիճակը

50.- Իսկ անոնք որոնք հոգիով իմաստուն են, եթէ ցանկութիւնը շարժի անոնց սիրտերուն մէջ՝ բնաւ չեն յանձնուիր անոր, այլ բարկութեամբ կը լեցուին անոր դէմ, ինչպէս նաեւ իրենց անձերուն դէմ կը թշնամանան ու կը նախատեն իրենք զիրենք: Որովհետեւ սատանան մեծապէս կը ցանկայ հանգստանալ հոգիին մէջ եւ իր միջոցը ընդարձակել, եւ աւելին՝ կ'անհանգստանայ, երբ հոգին կը մերժէ ականջ տալ իրեն:

Մարդոցմէ ոմանք աստուածային զօրութեան ենթակայ են, եւ եթէ ուեւէ մէկ երիտասարդ ուեւէ մէկ կնոյն հետ տեսնեն, թէեւ որոշ մտածումներ կ'ունենան, սակայն բնաւ իրենց միաքը չ'ապականիր եւ ոչ ալ իրենց սիրտերուն մէջ կը մեղանչեն: Այդ բոլորով հանդերձ, կարելի չէ մարդ ապահով զգայ եւ նման պարագաներու իր մարմինին վստահի: Ուրիշներ ալ կան, որոնց մէջ ամբողջութեամբ չորցած է չարութեան արմատը: Ահաւասիկ, այս է ախոյեաններուն չնորհքի աստիճանները:

Այնպէս ինչպէս մարդարիտներու վաճառականութեան ծիրէն ներս, մարդիկ մերկ կը սուլզուին ծովուն խորերը, հո՞ն գտնելու համար զանոնք, որոնք յարմար են թագաւորներու թագերն ու ծիրանիները զարդարելու, նոյնպէս ալ անոնք որոնք միակեցութեան ճամբան կ'ընտրեն՝ մերկ դուրս կու զան այս աշխարհէն եւ չարութեան ծովն ու խաւարի անդունդներուն խորերը սուլզուելով՝ դուրս կը բերեն թանկագին քարերը, որոնք կը վայելեն Քրիստոսի թագին, երկնային եկեղեցին, նոր աշխարհին, լոյսի քաղաքին եւ հրեշտակներու պաշտամունքի վայրին:

51.- Այնպէս ինչպէս ուռկանը բազմատեսակ ձուկեր կ'որսայ եւ դուրս քաշուելէ ետք, անպէտները վերստին ծով կը թափուին, այդպէս ալ չնորհքի ուռկանը բոլորին վրայ կը տարածուի եւ զանոնք կ'ընդունի, կը կանչէ ու կը հրաւիրէ: Սակայն անոնցմէ շատեր համաձայն չեն գտնուիր, եւ այդ պատճառով ալ վերստին խաւարի անդունդին խորերը կը նետուին: Այնպէս ինչպէս մեծաքանակ հողը զտելէն ետք միայն ոսկին կը գտնեն, որ փոքր մասնիկներու ձեւով կ'ըլլայ, այդպէս ալ շատերուն մէջէն քիչեր միայն կը հաստատուին ու կը յատկանշուին: Ուստի, անոնք որոնք արքայութեան աշխատանքը ունին, յայտնի կ'ըլլան, նոյնպէս անոնք որոնք պարզապէս արքայութեան խօսքը կը հազնին, յայտնի են: Երկնաւոր աղով աղուողները յայտնի կը դառնան, նոյնպէս եւ անոնք որոնք Հոգիին զանձերով կը լեցուին: Նաեւ այն անօթները, որոնք զԱստուած կը հաճեցնեն՝ յայտնի են, եւ որոնց Աստուած իր սեփական չնորհքը կու տայ: Իսկ ուրիշներ ալ մեծ համբերութեամբ կը ստանան սրբութեան զօրութիւնը, բազմաթիւ կերպերով, այնպէս ինչպէս Տէրը կը կամի: Այդ պատճառով ալ, ով որ առանց երկնաւոր լոյսով եւ իմաստութեամբ լեցուած ու առաջնորդուած ըլլալու կը խօսի, չի կրնար հաճեցնել եւ յագեցնել բոլորին միաքերը, որովհետեւ բազմաթիւ տարբեր պարագաներ կան. ոմանք պատերազմի վիճակի մէջ կ'ըլլան եւ ուրիշներ ալ՝ խաղաղութեան եւ հանդիսատի:

Սիրտի մաքրութիւնն ու նոր կառոյցը

52.- Եթէ մարդոցմէ մէկը ուզէ քանդուած որեւէ մէկ քաղաք վերաշինել, առաջին գործը կ'ըլլայ նախ հիմնայստակ կործանել զայն եւ ապա սկիզբէն փորել եւ նոր հիմերը հաստատել: Այսպէս կը սկսի վերաշինութեան գործընթացը, եթէ նոյնիսկ տակաւին որեւէ մէկ տուն կառուցուած չէ: Ան որ կ'ուզէ աղքատ, լքուած եւ գարշահոսու-

թեամբ լեցուն շրջանի մէջ պարտէզ տնկել, նախ կը սկսի վայրը մաքրել, չուրջը ցան-կապատել, ջուրի առուները պատրաստել եւ ապա միայն տնկելու եւ ցանելու աշխա-տանքը կատարել: Ծառերը կամաց-կամաց կը սկսին աճիլ ու մեծնալ եւ պարտէզն ալ երկար ժամանակ ետք կը պտղաբերի: Նոյն ձեւով ալ մարդոց սիրտերը, առաջին իսկ պատուիրանազանցութեան եւ անկումին պահէն սկսեալ, չորցան ու փուշերով լեցուեցան: Աստուած մարդուն ըստ «Երկիրը փուշ ու տատասկ փուսցնէ քեզի» (Ծն 3.18): Այդ պատճառով ալ հսկայ աշխատանք կը պահանջուի, մինչեւ որ մարդը հիմերը պատրաստէ ու հաստատէ, որպէսզի կրակը գալով՝ մարդոց սիրտերէն արմատախիլ ընէ փուշն ու տատասկը եւ մաքրէ զանոնք:

**Այսպէս մաքրուելով, անոնք կը սկսին փառաւորել Ամենասուրբ Երրորդութիւնը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, յաւիտեանէ մինչեւ յաւիտեան: Ամէն:**

Հայացուց՝

ՄԱԿԱՐ ՎՈՐ. ԱՇԳԱՐԵՍՆ



## ԶՈՒՐԸ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԷՋ

**Երբ Հին եւ Նոր Կտակարանի գիրքերը սերտենք, ջուրի վերաբերեալ բազմաթիւ դրուազներ կը գրաւեն մեր ուշադրութիւնը։ Սկսեալ Ծննդոց գիրքէն (1.2) մինչեւ Յայտնութիւն Յովհաննէսի (22.17), կը նկատենք ջուրին ունեցած նիւթական եւ հողեկան ազդեցութիւնը կենդանական աշխարհին մէջ ու մարդկային կեանքին վրայ։**

**Արարածներու կենդանութեան ու գոյատեւման համար ջուրը անհրաժեշտութիւն է։ Աստուած ջուրէն գոյացուցած է կեանքը, ըսելով՝ «ջուրերը կենդանութեան շունչ ունեցող շատ սորունենք հանեն եւ թոշունենք երկրի վրայ» (Ծն 1.20). Յատկանշական է նկատել, որ յիշեալ համարը կը փաստարկէ ջուրի նիւթական ստեղծումը նախքան հողեկանը։**

**Աստուծոյ ձեռքին մէջ դատելու գործիք է ջուրը։ Օրինակ, ջրհեղեղի պատմութիւնը, Կարմիր Ծովին մէջ Եղիպտացիներու ընկղմելուն դրուագը։**

**Աշխարհագրական որոշ շրջաններու ջուրի սակաւութիւնը դժուարացուցած է տեղւոյն բնակիչներուն կեանքը (ՏԵ՛Ս Եր 14.3: ՅՎ 1.20). սակայն, Տէր Աստուած անձրեւ տեղացնելով հոգացած է իր բարեպաշտ եւ օրինապահ ժողովուրդին կարիքները։**

**Ջուրը խորհրդանշականօրէն նկատուած է Աստուծոյ օրհնութեան ու հոգեկան վերանորոգութեան երաշխաւորութիւնը (ՏԵ՛Ս ՍՂ 23.3: Ես 32.2, 35.6-7, 41.17-18)։ Այս մտահոգութեամբ Սաղմոսերգուն հոգեւոր կեանքի կարօտով ու Աստուածութեան միացումի ըղձանքով աղերսած է.- «Ով Աստուած, ի՞մ Աստուածս, ինք կը փնտոեմ անձկագին, հոգիս ծարաւ է ֆեզի, մարմինս ֆեզի՝ կը փափաքի՝ խոպան, նաթոտած, անջուր մնացած հողի պէս» (ՍՂ 63.1: ՏԵ՛Ս նաեւ 42.1: Ամս 8.11)։**

**Աստուծոյ տան նկարագրութեան մէջ, Եղեկիչ մարգարէն տեսիլքով մը սրբազն ջուրերուն հոսիլը կը տեսնէ տան սեմի յատակին. այս երազը կը խորհրդանշէ եահուէ Աստուծոյ անհուն օրհնութիւնը իր ժողովուրդին նկատմամբ (Եղ 47.1-11: Հմմտ Զք 14.8)։**

**Երեմիա մարգարէն Եահուէ Աստուածը նմանցուցած է «կեանքին ջուրի աղբիւրը» (Եր 2.13, 17.13). այս վկայութեան վրայ, Յովհաննէս առաքեալ Յիսուսի բերանով արտայայտուած է. «Ով որ ծարաւ է՝ թող ինծի գայ եւ խմէ։ Ով որ ինծի կը հաւատայ, ինչպէս որ Սուրբ Գիրքը կ'ըսէ. “Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բիին”» (ՅՀ 7.38)։**

**Նոր Կտակարանին մէջ ջուրը նկատուած է Աստուծոյ գերագոյն պարգեւը մարդկութեան՝ ընկալելու համար յաւիտենական կեանքը.- «Ով որ այս ջուրէն խմէ՝ դարձեալ պիտի ծարաւմայ, բայց ով որ իմ տալիք ջուրէն խմէ՝ յաւիտեան պիտի չծարաւմայ, պատգամած է Յիսուս. ընդհակառակը, ջուրը որ ես պիտի տամ՝ անոր մէջ պիտի վերածուի աղբիւրի մը, որ ջուր կը ցայտէ եւ յաւիտենական կեանք կու տայ» (ՅՀ 4.13-14: Հմմտ Յյու 7.17, 21.6, 22.1.17): Յիշեալ յայտարարութիւնը ցոյց կու տայ, որ միայն Յիսուս Քրիստոսի միջոցաւ կը հասնինք յաւիտենական կեանքի ձեռքբերման եւ կը գոհացնենք մեր հողեկան ծարաւը։**

**Յաւիտենական կեանքը ժառանգելու Յիսուսի պայմանն է ջուրով մկրտութիւնը մեր մեղքերուն թողութեան համար:** Այս առումով, Եբրայեցիներուն ուղղած նամակին մէջ, Պօղոս առաքեալ ըսած է. «Անկեղծ սիրտով եւ վստահութեամբ լեցուն հաւատիով մօտենանի Սստուծոյ, մեր սիրտերը մաքրած՝ խղճմտանի ծանրացնող յանցանքներէն եւ մեր մարմինները մաքուր ջուրով լուացած» (Երր 10.22: Հմմտ Եփ 5.26):

**Արդարեւ, Հին Կտակարանին մէջ կրօնական ծիսակատարութեան կեղրոնական մասը ջուրի լուացումն ու մաքրութիւնն է:**

**Ելից գիրքին մէջ յստակօրէն թելաղորուած է Ահարոնի ու անոր որդիներուն, խորանին դրան առջեւ ջուրով լուացուիլ՝ Եահուէին կարենալ քահանայագործելու համար (տե՛ս Ելք 29.4): Նոյնը թելաղորուած է անոնց երբ մուտք գործեն Սրբութիւն Մրցոց խորանէն ներ՝ Աստուծոյ ներկայանալու համար.- «Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ըստով, պղնձէ աւագան մը շինես լուացման համար, ու անոր խարիսխն ալ պղնձէ ըլլայ. Եւ ժողովի խորանին ու սեղանին մէջտեղ դնես զայն, ու անոր մէջ ջուր լեցնես: Եւ Ահարոն ու անոր որդիները իրենց ծեռիքը ու ոտքերը պիտի լուան անկլէ: Երբ անոնց ժողովի խորանը մտնելու ըլլան, կամ երբ սեղանին մօտենալու ըլլան՝ պաշտօն կատարելու Եւ կրակով Տիրոջը զոհ մատուցանելու համար, զրով լուացուին, որպէսզի չմեռնին... ասիկա իրենց յաւիտենական կանոն պիտի ըլլայ, թէ՛ իրենց Եւ թէ իր սերունդին իրենց ազգերուն մէջ» (Ելք 30.18-21):**

**Իսկ Ղեւտացիներու պարագային, անոնց վրայ ջուր սրսկելու էին մաքրութեան համար (Ղւ 16.4,24,26):**

**Հին Կտակարանի ուսուցումներու հետեւողութեամբ, այլ աղանդաւոր համայնքներ որդեգրած են ջուրով լուացումի արարողութիւնը իրենց ծիսակատարութեանց մէջ, որոնցմէ ամէնէն ուշազրաւն են Յիսուսի ժամանակակից Եսսենացիները:**

**Մեռեալ Ծովու շրջակայքէն յայտնարերուած Գումրանի մագաղաթներու գիւտը Եւ Ս. Գրոց գիտնականներու այդ ձեռագիրներուն վերծանումը, յաւելեալ լոյս կը սիուէ անոնց հաւատալիքներուն ու վարդապետութեան մասին: Եսսենացիներու համար ջուրով մաքրուիլը՝ մեղքերէ քաւուիլ, սրբանալ ու նոր Ուխտի մտնել կը նշանակէր:**

**Մկրտութիւնն ու հասարակաց ճաշը Եսսենացիներու արարողութեան յատկանշական բաժինը կը կազմէ: Նորմնծան առաջին տարուան փորձաքննութեան աւարտին կը մկրտուէր ու ապա կը սկսէր երկրորդ տարուան շրջանը: Սակայն, հին աղանդաւորներ ամէն տարի մկրտուելու էին իրենց ուխտը նորոգելու համար:**

**Աղանդին կարգապահութեան ճեռագիրը կը սահմանէ.- «ԲԵլիարի իշխանութեան օրերուն, պէտք է այսպէս կատարեն անոնց տարուէ-տարի, առաջին անգամ Քահանաները մտնեն Ուխտի մէջ, իրար ետեւէ... Եւ անոնցմէ ետք Նեւտացիները պիտի մտնեն, Եւ երրորդ՝ ամբողջ ժողովուրդը յաջորդաբար... իւրաքանչիւրը իր պաշտօնին աստիճանին համեմատ» (տե՛ս M. Black: The Scrolls and Christian Origins. Էջ 95): Այժմ, հասկնալի է թէ ինչո՞ւ Եսսենացի ճարտարապետը խոշոր ջրամբարներ կառուցած է Գումրանի վանքին մէջ:**

**Մեղքերու քաւութեան համար մկրտութիւնը ենթահողը եղած է Յովհաննէս Մկրտիչի քարոզութեան: Հուկաս աւետարանիչի վկայութեամբ, «Յովհաննէս Յորդանան գետին եզերքը գտնուող բոլոր շրջանները երթալով՝ կը բարողէր ապաշխարել Եւ մկրտուիլ, որպէսզի Սստուած մեղքերու թողութիւն տայ» (Ղկ 3.3: Մտ 3.1-2: Սր 1.4-5: ՅՀ 1.19-28):**

**Առաքելական եկեղեցւոյ դաւանութեան համաձայն, մկրտութեամբ նորածինը կը ձերբազատուի Աղամական մեղքէն եւ իր անձը ընծայելով Քրիստոսի, կը դառնայ եկեղեցւոյ անդամ ու կ'ընդունի Սուրբ Հոգին պարգելը:**

«Զեր ընթացքը փոխեցէք եւ իրաժանչիրդ մկրտուեցէք Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որպէսզի ձեր մեղքերը ներուին, կը խրատէ Պետրոս Առաքեալ, եւ երբ մկրտուիք, խոստացուած պարգևեր՝ Սուրբ Հոգին պիտի ընդունիք» (Գրծ 2.38):

**Նազովրեցի Վարդապետն ալ Նիկողեմոսին հետ խօսած ատեն, մկրտութիւնը պայման նկատեց փրկութեան համար.- «Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը ջուրէն ու Հոգին չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել» (ՅՀ 3.5):**

**Զուրբ եւ Աստուածաշունչը կ'երաշխաւորեն մեր Փիղիքական ու Հոգեկան կեանքը. տեւապէս մեզի կը յլշեցնեն որ Սուրբ Հոգին, սաեղծիչ Հօր Աստուծոյ եւ Յիսուս Փրկիչի գործակցութեամբ կը կերպարանափոխէ ու կը մաքրագտէ աշխարհն ու իր ժողովուրդը:**

**Սրբազն Հայրեր եկեղեցւոյ եօթը խորհուրդներու իրենց ղրասեւորումին մէջ առաջին տեղը յատկացուցին Սուրբ Մկրտութեան Խորհուրդին, շշտելու համար անոր հիմնական արժէքը քրիստոնեաներու հաւաքական կեանքին մէջ:**

**Եսայի մարդարէի օրինակին հետեւելով, մենք եւս չնորհակալ ըլլալու ենք ողորմած Աստուծոյ, մեզի չնորհուած պարզեւներուն համար աղօթելով.- «Ահա իմ փրկութիւնս Աստուած է, սա պիտի յուսամ ու պիտի չվախնամ, որովհետեւ իմ զօրութիւնս ու օրինութիւնս Տէր Եհովան է, ու անիկա իմ փրկութիւնս եղաւ: Եւ ուրախութեամբ ջուր պիտի բաշէք փրկութեան աղբիւրներէն» (Ես 12.2-3):**

ԲԱԲԳԵՆ Թ.ՕՓՃԵՍՆ



## ԾԻՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Եկեղեցին ներս գործածուող գիրքեր

**Անյիշատակ ժամանակներէն եւ հնադարեան շրջաններէն իսկ ծէսն ու ծիսակատարութիւնը անմիջական աղերս ունեցած են հաւատքի զրսելորման որպէս արտայայտութիւն։ Հաւատքի այս արտայայտութիւնները յաճախ էական մասը կազմած են կրօնքներու, եւ մանաւանդ հոգեւոր ներքին ծալքերէն արտարխող այն զգացումներուն, որոնք անտեսանելի Աստուծոյ փառքը երգած են եւ զԱստուած փառարանած տեսանելի եւ զգացական մասնաւոր արարողութիւններով։**

Ուստի ծիսակատարութիւնը զԱստուած պաշտելու հիմնական այն միջոցներէն մին է, որ հաւատացեալը ներհայեցողական խորասուզումով՝ աղօթքով, երգեցողութեամբ, մոմավառութեամբ եւ խնկարկութեամբ ինքզինք դէմ յանդիման կը գտնէ Աստուծոյ եւ իր ներքին զգացումները սրտարուխ խնդրանքներով եւ աղերսանքներով ճոխացուցած երկինք կը վերառաքէ՝ Աստուծոյ կ'ընծայէ։

**Արդարօրէն ծիսակատարութեամբ մարդկային հոգեւոր աշխարհը իսադաղութիւն կը գտնէ։**

Ինքնասրբագրութեան եւ կատարեալին ձգտելու զգացումը խունկի բուրմունքին եւ երկինք բարձրացողութիւն ընդմէջէն յաւերժական լոյսն է, որ կը ճառագայթէ եւ աղօթքով օծուն մեր հոգիները լոյս կը զգենուն։

Հայ եկեղեցին անցնող երկհազարամեայ տարիներու ընթացքին իր ճոխ ծէսով ջրտուքի ենթարկած է անապատացած սիրտերը։ Խորհրդակատարութիւններով վերականգնած է աստուածային որդեգրութեան արժանացած մարդը։ Մեղսաքաւիչ Պատարագով՝ փրկազործութեան Սուլքը խորհուրդը աստուածային գերազանց սիրոյ կամարումին ներքեւ առած է խաչի ճանապարհով բազում անգամ պատարագեալ խաչեալ ժողովուրդը եւ թափուր գերեզմանէն յառնող հրեշտակին աւետիար յարութեան լոյսով եւ յոյսով վերականգնած է Հայ հաւատացեալը։

Պէտք չէ մոռնալ որ ծիսակատարութեան ընդմէջէն, Յաղթական եկեղեցին իր Սուլրբերով, սրբազնեաց Հայրապետներով, մարտիրոսներով, նահատակներով, ճգնաւորներով, անապատական կեանքի մէջ աղօթք դարձած նուիրեալներով միշտ առկայ եղած է զինուորեալ եկեղեցւոյ կեանքին լոյս հորիզոնին վրայ։ Հաւատքով առլցուն ապրուած կեանքեր դարձած են փարոս՝ փոթորկայոյզ ովկիանին մէջ երկրաւոր կեանքի նաւահանգիստ որոնող տագնապող սիրտերուն եւ հոգիներուն համար։

Տակաւին ծիսակատարութիւնը զդիռումի եւ ապաշխարութեան իր թովիչ աղօթք-ներով ու շարականներով կրցած է մեղքի ալեկոծ ծովէն դուրս բերել «մոլորեալ ոչխարը...», «անոխակալ եւ անիշաչար...» աստուածային գութով եւ ներողամտութեամբ։

Եւ ապա յուսկ որպէս եղբափակում ծիսակատարութեան դերին եւ առաքելութեան, պէտք է արձանագրել, որ եկեղեցական կեանքի արարողութիւնները առանց-

քային կարեւորութեամբ հիմնականօրէն ծառայած են Աւետարանի Սուրբ էջերէն դուրս բերելու Աստուածորդիին տնօրինական կեանքի յատկանշական դէպքերը զանոնք դարձնելով Աստուածորդիին կեանքէն ճառագայթող հանապազօրեայ հոգեւոր սնունդ հաւատացեալներու կեանքին մէջ:

Այսպէս ուրեմն Սուրբ Ծննդեան, Տեառնընդառաջի, Մաղկազարդի, Աւագ Շարթուան, Սուրբ Յարութեան, Համբարձման, Հոգեգալստեան, Պայծառակերպութեան, Խաչելութեան եւ Խաչին նույրուած տօներն ու տօնակատարութիւնները յատուկ ծխակատարութիւններ են, որոնք Սուրբ Աւետարանին էջերը կը բանան մեր դիմաց, հաղորդուելու եւ ապրուած կեանքով ու հաւատքի ճանապարհով կենդանի վկաները գառնալու Աստուածորդիին Մարդեղութեան եւ Փրկագործութեան խորհուրդներուն:

Այսպիսի հարուստ եւ ճոխ ծէս ունեցող եկեղեցի մը, դարերու ընթացքին բնական էր որ եռամեծառ Հայրապետներու եւ բանիրուն Վարդապետներու տնօրինութեամբ եկեղեցւոյ յարածուն գարգացման հետ նաեւ գարգանար, սահմանուէր եւ մասնաւոր կանոնագրութեամբ հրատարակուէր այն բոլոր հատորները, որոնք այսօր իրենց մէջ կ'ամփոփեն մեր եկեղեցւոյ ծէսն ու ծխակատարութիւնը:

Մտորեւ առանձնակի կը ներկայացնենք բոլոր այն գիրքերը, որոնք աղերսուած են մեր եկեղեցւոյ ծէսին եւ եկեղեցական արարողութեանց:

Ասոնցմէ առաջինը բնականաբար Աստուածաշունչ մատեանն է իր Աւետարանով:

## Ա.ԻԵՏՍ.Ա.ՐԱ.Ն

Նոր Կտակարանի առաջին չորս գիրքերը կը կոչուին աւետարաններ: Գորս աւետարաններուն հեղինակներն են Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Ցովհաննէս:

Մատթէոս եւ Ցովհաննէս Ցիսուսի 12 առաքեալներուն մաս կը կազմէին, իսկ Մարկոս եւ Ղուկաս Պօղոս Առաքեալի գործակիցներն էին: Ղուկաս հեղինակն է նաեւ Գործք Առաքելոց գիրքին:

Վերոյիշեալ չորս անձնաւորութիւնները կը կոչուին Աւետարանիչ: Աւետարանիչները Աստուածորդիի տնօրինական կեանքը եւ անոր աստուածային առաքելութիւնը ներկայացնող առաքեալները եղան: Անոնք աւետարանեցին՝ բարի լուրը փոխանցեցին յետնորդ սերունդներուն եւ ականատեսի վկայութեամբ հաստատեցին Աստուածոյ սէրը հանդէպ մարդկութեան եւ սիրոյ արգասիք եղող մարդեղութեան եւ փրկագործութեան խորհուրդները:

Ուստի աւետարանիչները եղան աստուածային նախախնամութիւնը մեկնաբանող եւ մարգարէներու կողմէ գուշակուած Մեսիայի գալուստը հաստատող լոյս անձնաւորութիւնները, որոնք աւետեցին, աւետարանեցին Աստուածորդիին գալուստը որ կու գար Հօր Աստուածոյ Հայրական հովանիին ներքեւ համախմբելու աշխարհի հանուր մարդկութիւնը:

Դարերու ընթացքին եկեղեցին իր հաւատացեալները մեծ եւ սքանչելի խորհուրդին դիտակ դարձուցած է Աւետարանին շնորհիւ: Աւետարանական դրուագներ վերականգնած եւ գօտեպնդած են Քրիստոսի հաւատացեալ Հօտը: Աւետարանը դարձած է լոյսի շաեմարան եւ սերմնացան քրիստոնէական հաւատքի:

Աւետարանական ընթերցումները անցեալին եւ այսօր կը կազմեն զլիսաւոր բաժինները ծխական արարողութեանց: Անոնք կորիզն են, հիմնական կապը մեզ դէպի յաւերժական լոյսին առաջնորդող, ակնաղբիւրը՝ անմահական ջուրին:

**Սակայն այս ընթերցուումները եկեղեցւոյ հայրերուն կողմէ կարգաւորուած եւ մասնաւոր կանոնի վերածուած են:**

Արդ, Աւետարանական հատուածներու ընթերցումները պատահական հատուածի ընթերցումներ չեն, այլ պահու թելաղրողականութեամբ ճշղուած հատուածի ընթերցում, եւ համաձայն այդ հատուածներու խմբաւորումին Աւետարանը ստացած է իր անունը:

**Այդ խմբաւորումները ամփոփուած են Աւետարան Ս. Մատեանի մը մէջ, որ կը կոչուի ՍՏԵՆԻ Ս.ԻՒԵՏՈՒՄՆ:**

Ա) ԱՏԵԽԻ Ա.Ի.ԽՏՄԱՐԱՆԸ մխայուն կերպով դրուած կ'ըլլայ եկեղեցւոյ կեղրոնական բեմի ձախակողմը՝ Ատենի ժամագիրքի կողքին։ Կը բովանդակէ լրիւ չորս աւետարանները եւ ծխական արարողութեանց ընթացքին այդ Աւետարանէն կը կարդացուին ճշդուած հատուածները։

### 1) ՀԱՆԳՍՏԵԱՆ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐ.-

Աւետարանական այս հատուածները կը բնորոշենք Քրիստոսի կողմէ հաստատւած յաւիտենական թագաւորութիւնը, ուր յաւիտենական կեանքի հրամայականը կ'իմաստաւորէ մարդկային կեանքը այս աշխարհին եւ ապա հանդերձեալ կեանքին մէջ:

Աւետարանական այս հատուածները կը կարդացուին Գիշերային ժամերգութեան ընթացքին, հանգստեան շարականներու երգեցողութեան աւարտին։ Կը կարդացուին Հոգեհանգստեան արարողութեանց ընթացքին, ուր Հոգիներու լուսաւորութիւնը կու գայ նոր կեանքի մը արշալուսր բանալու հաւատացեաններու Հոգիներուն մէջ։

## 2) ՏԱԶԱՐԻ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐ

**Կը ներկայացնեն Սողոմոնի շքեղ տաճարին գեղեցկութիւնը որ կրնայ օրին մէկը քարր քարին վրա չհնայ:**

Բայց վերոյիշեալ ընդհանուր հասկացողութեան ընդմէջէն կը բացայատէ հոգիի տաճարին կարեւորութիւնն ու յաւիտենական հանգամանքը, որ ճշմարտուեցաւ Քրիստոսի թաղման խորհուրդի եւ յարուցեալ կեանքի հրաշապատում խորհուրդներով:

3) ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱԽԵՏԱԾՄԱՆՆԵՐ.-

Վերոյիշեալ հատուածները Քրիստոսի կողմէ կատարուած հրաշապատում էջերու ընթերցումը կը ներկայացնեն: Եկեղեցւոյ յարկին ներքեւ ամէն մէկ սիրտ ցաւ մը ունի, ամէն մէկ հոգի աղերսանք մը՝ ուղղուած առ Աստուած, եւ բնակիանաբար Քրիստոսի կողմէ կատարուած ամէն մէկ հրաշապատում զրուագ հոգեկան անդորրութիւն կը պարզեւէ իւրաքանչիւր հաւատացեալին, կ'ամոքէ անոր ներքին ցաւերն ու յուգերը եւ կրթուկէ անոր վիշտերն ու հիւանդութիւնները:

4) ԽԱԶԵԼ ՈՒԹԵԱՆ ԱԻՖԵՏԱՐԱԿԱՆԵՐ -

Այս հատուածները կը կարդացուին Մեծ Պահոց ընթացքին: Քառասնօրեայ պահեցողութեան այս շրջանը ընդհանրապէս զղջումի եւ ներհայեցողական կեանքի կ'առաջնորդէ հաւատացեալը, եւ Աստուածորդիին տնօրինական կեանքի աւարտին չարչարանքներուն ու խաչելութեան յիշատակումը հաւատացեալը հոգեպէս կ'առաջնորդէ խաչին ու խաչեալին, ապաշխարութեան խորհուրդով իմաստաւորելու պահեցողութեան օրերը:

### Բ) ԻԻԴԱԲԵՐԻՑ Ա.ԻԵՏՍ.ՐԱՆՆԵՐ

Խւղաբերից Աւետարանը առանձնակի հատոր է, որ համաձայն իր բովանդակութեան կը կոչուի խւղաբերից Աւետարան:

Խւղաբեր կիներու աւետիսն է, որ կը փոխանցուի ժողովուրդին. Հրեշտակին պատգամն է, որ կը լեցնէ ողջ եկեղեցին. Զի խնդրէք զիենդանին ընդ մեռեալս. չէ աստ այլ յարեաւ:

Այս Աւետարանը իր մէջ կ'ամփոփէ չորս աւետարանիչներու կողմէ ներկայացուած Քրիստոսի թաղումն ու հրաշափառ Յարութիւնը:

Ամէն Կիրակի Տէրունի տօն ըլլալուն եւ առ այդ խակ Քրիստոսի Ս. Յարութեան նուիրուած ըլլալուն, համաձայն օրուան ձայնին, Ս. Բեմէն կը կարդացուի չորս աւետարանիչներէն մին եւ հաւատացեալներ հաղորդակից կը դառնան Ս. Յարութեան խորհուրդին:

«Փառք Յարութեան...» շարականի երգեցողութեամբ Աստուածորդիին Ս. յարութեան ներբողն է որ կը կատարուի:

### Գ) ՃԱՇՈՒ Ա.ԻԵՏՍ.ՐԱՆՆ

Այս Աւետարանը ճաշու Աւետարան կոչուած է որովհետեւ իւրաքանչիւր Պատարագի ճաշու բաժինին մէջ անկէ կը կարդացուի օրուան տօնին կամ սուրբին նուիրուած հաստուածը:

365 օրերու ճաշու Աւետարանական ընթերցումները ամփոփուած են այս հատուրին մէջ, եւ իւրաքանչիւր Պատարագի սկզբնաւորութեան Աւետարանական հաստուածի մը ընթերցումով հաւատացեալներ հոգեպէս կը պատրաստուին մեծ խորհուրդին՝ Ս. Պատարագին:

Եկեղեցին ներս գործածուող աւետարաններ ընդհանրապէս արծաթապատ կազմ կ'ունենան, եւ երբեմն արուեստի գեղեցիկ գործեր կը ներկայացնեն:

### Դ) ՓՈՒԲՈՒ Ա.ԻԵՏՍ.ՐԱՆՆԵՐ

Արծաթապատ այս փոքր Աւետարանները առհասարակ որպէս Ս. Սեղանի զարդ կը գործածուին եւ Անդաստանի արարողութեան ընթացքին Քահանայ հայրեր իրենց ձեռքին կ'ունենան՝ Խաչով ու Աւետարանով տեառնազրելու՝ օրհնելու աշխարհի չորս կողմերը, բարեպաշտութեամբ առաջքն առնելու երաշտին եւ ամէն տեսակ փորձութիւններուն: Օրհնելու Արեւելքն ու Հայոց Հայրապետութիւնը, Արեւմուտքն ու Քրիստոնեայ բագաւորութիւնները, Հարաւն ու երկիրը իր բոլոր անդաստաններով եւ տարուան պտղաբերութեամբ, Հիւսիսն ու բոլոր վանդերն ու մենաստանները, քաղաքներն ու գիւղերը եւ անոնց մէջ բնակութիւն հաստատած ժողովուրդը:

Աւետարանը եկեղեցւոյ Ս. յարկին ներքեւ, աստուածային այն դօղանջն է, որ կ'արծագանգէ հաւատացեալներու հոգիներուն մէջ, թէ՝ եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բնոնաւորք եւ ես հանգուցից զձեզ:

ՍՈՒՐԵՆ Ա.ՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵՍՆ

(Շաբ. 1)

## ՊԱՏՄԱ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՊԱՅԱՉԱՏ ՌՈՍՏԱՄԽԱՆ ԷՆԱԿՈԼՕՓԵԱՆՑ

**«Ի հասակի 21 ամաց... արք զնահ լեալ նահատակ»  
եւ այդ առիթով խորհրդածութիւններ Նոր Զուղալի նասին**

**Ո՞չ ներածականի այս բաժինին մէջ եւ ոչ ալ անոր հետեւող երկար թաղման նկարագրականին մէջ որեւէ բացատրութիւն կամ պատասխան ունինք հետեւեալ հարցումներուն։ Որո՞նք էին այդ «այլազգի թշնամիք» եւ յատկապէս ինչո՞ւ եւ ի՞նչ նպատակով Ռոստամխանին իսամամցուցած ըլլալու սուտ լուրը՝ այն ալ գրաւոր փոխանցեր էին թեհրան՝ Մահմադշահին։**

Այս հարցումներուն պատասխանները գտնելու նպատակով՝ տակաւին մեր Զուղած օրերուն սկսեր էինք որոշ պրատումներ կատարել։ Սառյգ տեղեկութիւններ քաղելու նպատակով, առաջին աղբիւրը որուն պէտք է դիմէէինք բնականաբար «Պատմութիւն նոր Զուղայու» գոյք հատորներն էին, որուն ներհուն հեղինակը՝ Յարութիւն Թ. Տէր Յովհաննեան։ Զուղայի պատմութիւնը շարադրած է՝ սկսեալ Շահ Աբբասի բոնագաղթէն մինչեւ 1860 թուականը։ Ուստի, պէտք էր որ ան անդրադարձած ըլլար Ռոստամխանի նահատակութեան զգայացունց դէպքին։ Սակայն, դժբախտաբար, Ռոստամխանի անունն իսկ յիշատակուած չէր այնտեղ, մինչդեռ իր հօր՝ Սարթիփ Սուլէյմանխանի կամ Սոլոմոնխանի մասին մի քանի առիթներով հետաքրքրական տեղեկութիւններ արձանագրած էր։ Այստեղ մենք մեզի հարց կու տանք, — արդեօք զիտակցարա՞ր լուռ անցած էր այդ պատմութեան վրայէն, նկատի ունենալով մեզի անձանօթ պատճառներ։

Այսուհանդերձ, անկարեի կը գտնենք, որ ան տեղեակ չըլլար այդ ողբերգութեան, որովհետեւ 1851-էն մինչեւ 1871 թուականը, 20 տարիներ շարունակ, եղած էր Ս. Ա. Վանքի ատենադպիրը եւ անպայման ամէն օր պէտք է տեսած ըլլար անոր տապանաքարը, զանգակատան կամարներուն տակը, Վանքի բակին մէջ։

Մեր երկրորդ եւ ամէնէն վստահեի աղբիւրը Վանքիս արխիներն էին։ Բայց նախքան այդ, մի քանի խօսք, Ռոստամխանի ժամանակակից Պարսկաստանի թագաւորի, Սպահանի քաղաքապետի եւ իրանա-Հնդկաստանի Հայոց թեմի Առաջնորդի մասին, որոնց ժամանակաշրջանին տեղի ունեցած է Ռոստամխանի մահը։ Ստորեւ

\* Գրաբար բնագիրին համար տեսնել, «Պատմութիւն նոր Զուղայու, որ յԱսպահան», Ա. Ե. Բ. հատորներ, լոյս տեսած Ն. Զ. Ա. Ա. Վանքի Տպարանէն, 1880-ին եւ 1881-ին։ Յիշեալ հատորները արևելահայերէն աշխարհաբարի բարգմանած է Զուղայեցի Տէր Պօղոս Սւագ Քիմյ. Պետրոսեանը, տպուած Վանքի Տպարանը, 1980-ին եւ 1981-ին։ Այս ուսումնասիրութեան մէջ մենք օգտագործած ենք թէ գրաբար եւ թէ աշխարհաբար հրատարակութիւնները։

համառօտագրուած մեր տեղեկութիւնները կը պարտինք Զուղայի պատմիչին:

Թագաւորը, որուն գրաւոր յայտնած են Ռոստամիսանի իսլամանալու մասին, ուրիշ մէկը չէր, եթէ ոչ Մահմադշահը, որ 1835-ին բարձրացաւ Պարսից թագաւորութեան գահը: Ահա թէ ինչ կը գրէ անոր մասին Նոր Զուղայի պատմիչը:

«Վեհափառ Մահմադշահ թագաւորը իր տէրութեան իշխանութիւնը գովասանենով կառավարելուց յետոյ, 1848 թուի Օգոստոս 24-ին կնքեց իր մահկանացուն Թեհրանի Շմբան ամառանոցում:

Սպահան բաղադր ոչ մի վրդովմունք եւ խոռվութիւն չգտաց շնորհիւ բարեշան իմամթօմայ կրօնապետի կառավարութեան, որին եւ գործակից եղաւ Սողոմոնիան Սարքիը» (Էջ 475, աշխարհաբար թարգմանութիւն):

«Միմչեւ Մահմադշահի վերջին ժամանակները Սպահան բաղադրի կառավարութիւնը սպարապետ Սողոմոնիան Սամդովլայի\* որդիների ձեռքումն էր», կ'ըսէ Տէր Յովհաննեան. յիշեալ Սողոմոնիանի թոյլատութեամբ տիրահռչակ կալանաւոր Կարապետը գիշերով խոյս կու տայ բանտէն եւ կը հասնի թաւրիզ քաղաք եւ մուտք կը գործէ Ռուսաց հիւպատոսարանը (Էջ 497 անդ): Նոյն աղբիւրը, ակնարկելով 1848 տարուան դէպքերուն կը գրէ.- «Այդ ժամանակ Սողոմոն Սարքիփր կամ Սամդովլայի բնտանիքը բնակուում էր Զուղայում եւ զօրականի պաշտօն ութէին, որոնք անպակաս օգուտ էին բերում Զուղայի պաշտպանութեանը, որովհետեւ Սարքիփի անունը ակնածելի էր այլազգիների առջեւ» (Անդ, Էջ 474): Այս պարագան եւս յիշեցինք, ցոյց տալու համար Սողոմոնիանի ունեցած բացառիկ հեղինակութիւնը իսֆահանի մէջ:

Ինչ կը վերաբերի իսֆահանի քաղաքագետի պաշտօնին, Մահմադշահ թագաւորը 1840-ի Փետրուարին իսֆահան գալով, շուրջ երեք ամիս մնաց այստեղ. խիստ կերպով պատժեց ու մահուան դատապարտեց իսֆահանի քաղաքագետ՝ հայզգի Խոսրովի խանի դէմ ըմբոստացած արիւնարրու ոճրագործներու զիլիաւորները. թագաւորի հեղինակութիւնն ու աշը զրոշմեց իսֆահանի բնակիչներուն վրայ: Նոյն տարուան Մայիսին նախքան թեհրան վերադառնալը, Սպահան քաղաքի կառավարութիւնը յանձնեց Մանուչէրխանին, որուն մասին Զուղայի պատմից մեծ գովեստով կը խօսի, որպէս խոհեմ, հանճարամիտ եւ արդարադատ կառավարիչ: Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու յիշենք, որ ան մեծ բարիքներ պարզեւեց քաղաքին: Իր արդարադատութեան եւ խոհեմութեան բարի համբաւը մեծ յարգանք ու սարսափ ստեղծած էր քաղաքի բոլոր բնակիչներուն վրայ: Իր անունը անմահացաւ, երբ հրահանգեց՝ աւագակներով եւ ոճրագործներով լեցուն իսֆահան քաղաքի բոլոր մեծ ու փոքր վաճառատուները՝ առանց թագցնելու որեւէ ապրանք, երեք գիշեր բաց պահել, որու ընթացքին ոչ ոք համարձակեցաւ որեւէ գողութիւն ընել:

Զուղայի պատմիքը կը գրէ, Մանուչէրխանի արդարադատ կառավարութեան համբաւը «լսելի լինելով Վեհափառ Սրբային, նրան շնորհեց “Մօթամէդ Դովլա”-յի տիտղոսը, որ նշանակում է հաւատարիմ տէրութեան»: Թէեւ հայերուն որեւէ առանձնաշնորհումներ չկատարեց, այսուհանդերձ անոր իշխանութեան օրով՝ քաղաքի միւս

\* «Սամդովլէ» հաւանաբար կրթատումն է «Սամսամ-օլ-դովլէ» տիտղոսի, որ կը նշանակէ պետութեան հատու սուսեր կամ կառավարութեան սուր. ինչպէս օրինակ, «Մոհամէդ Դովլա» տիտղոսը՝ հաւատարիմ տէրութեան, այսինքն՝ թագաւորին:

\*\* «Կալանաւոր Կարապետ»-ի նոր Զուղայի համայնքի ամբողջ կեանքը խանգարած ու վտանգած ըլլալու պատմութեան մասին տեսնել, անդ, Էջ 484-497:

բնակիչներուն նման հայերը եւս կը վայելին նոյն խաղաղութիւնն ու բարօրութիւնը:

Անոր մահէն ետք քաղաքի կառավարութիւնը փոխանցուեցաւ Միրզայ Գորգին-խանին, որ ազգականն էր ծագումով Հայ Մանուչըրխանին: Նոյն աղքիւրէն կը տեղեկանանք, որ 26 Մայիս 1847-ին, ի շարս այլոց նաեւ սպարապետ Սողոմոնխան ինակօլօփեանցը կը պարգեւատրուի Մահմադշահի կողմէ իր թագաւորութեան մատուցած ծառայութեանց համար:

Այս ամփոփ տեղեկութիւնները տուինք թէ՛ Սողոմոնխանի եւ թէ Մահմադշահի եւ Մանուչըրխանի մասին, ցոյց տալու համար, որ 1840-ական թուականներուն Զուղայի հայերը իսլամացնելու պետական քաղաքականութիւն գոյութիւն չունէր, ինչպէս նման պարագայ՝ բռնի կամ անուղղակի միջոցներով, գոյութիւն ունեցած էր, օրինակի համար Շահ Սուլթան Հիւսէյնի ժամանակ (1694-1721):

Ուստի մեր տեսակէտով Ռոստամխանը իսլամցնելու կամ իսլամացած տեսնելու մէջ անպայման ուրիշ պատճառ գոյութիւն ուներ:

**Այժմ տեսնենք.** ո՞վ էր Ռոստամխանի նահատակութեան օրերուն թեմի Առաջնորդը, որուն սենեակին մէջ նստած էր Ռոստամխանի հայրը՝ Սողոմոնխան, երբ իր կնոջ մահուան լուրը եկաւ թաւրիզէն:

Դարձեալ Զուղայի պատմիչի վկայութեան համաձայն, Ռոստամխանի մահուան տարին՝ 1843-ին, թեմի Առաջնորդն էր Յովհաննէս Եպս. Սուրէնեան, Ղրիմեցի, որ 1841-ին Էջմիածինի Կաթողիկոսի կոնդակով նշանակուած էր Առաջնորդ: «Ինուսաց նշանակիր եւ ասպետ, գիտնական եւ բանագէտ» կը կոչէ զինք նոյն հեղինակը:

Իր պաշտօնավարութիւնը կը սկսի մեծ յոյսերով եւ խոստումներով, սակայն կամքէ անկախ, պայմաններու բերումով իր արձանագրած յաջողութիւնները կ'ըլլան մասնակի: Կը փորձէ երկու անգամ հոգեւոր դպրոց հիմնել. կը գնէ Վանքի համար կալուածներ: Անձնական կապեր ունենալով ժամանակի ուսուսաց դեսպանին հետ, անոր միջնորդութեամբ կ'արժանանայ կայսերական պարգեւի:

Կեանքի վերջին շրջանին, երկար ժամանակ հիւանդութեան պատճառով անկողնոյ կը ծառայէ: Կը վախճանի 1848-ին եւ մարմինը կ'ամփոփուի Վանքի հիւսիսային գաւիթին մէջ, իրմէ առաջ վախճանած այլ առաջնորդներու շարքին:

Յատկանշական է, որ ձեռամբ այս Առաջնորդին՝ Յովհաննէս Եպս. Սուրէնեանի, Նոր Զուղայի երեւան թաղէն Տիրացու Գրիգոր Մկրտիչեանը կը ձեռնադրուի կուսակրօն Քահանայ եւ կը վերակոչուի Գէորգ Արեղայ անունով:



Յովհաննէս Գ. Արք. Սուրէնեանց,  
Նքիմեցոյ (1787-1848):

2nd year student.

and I am going to help you.

Այսուհետ որ մէջ աշխարհ պատճենած է պատճեն և ազգ Տանը պահի կոր չէր թուած պատճենուած : Բայց պատճեն առ պատճեն գուշտ Տանը թուած է ի թի:

1843. April 15:

Известия Уральского отделения Академии Наук  
и материалы к ним. Год 1907-й.

Հայոց հայոց զարդարք օպերատոր Մարտին Մարտին Մարտին:

**Յատուռկ յիշեցինք այս վերջին պարագան, որովհետեւ չնորհիւ այս Գէորգ Աբեղային է, որ մեզի հասած է իր գեղեցիկ ձեռագիրով ընդօրինակուած, Ռոստամիսանի անձնական նամակը, ուղղուած ժամանակի Առաջնորդ Սրբազն Հօր, յիշեալ Յովկաննէս Եպօս. Սուրէննեանին, իր գլխուն եկած փորձանքին մասին:**

Նախքան այդ նամակի մէջըերումը, յիշենք որ տասնամենակներ Վանքի Գրադարանի եւ Արխիվներու Տեսուչ՝ Պրն. Լեւոն Մինասեանի օգնութեամբ, գտանք Ս. Ա. Վանքի արխիվներուն մէջ Էնակօփեանց ընտանիքին պատկանող այն թղթածրաբը, ուր կային պաշտօնական նամակներ՝ գրուած եւ ստացուած, ինչպէս նաև փոքր թուղթերու վրայ՝ անվարժ ձեռագիրով գրուած զանազան գրութիւններ:

**Ժամանակագրականօրէն** անոնցմէ առաջինը Ռոստամիսանի նամակն էր, գրուած 15 Ապրիլ 1843-ին, իր մահէն վեց ամիս առաջ, ուղղուած օրուան Առաջնորդ՝ Ցովհաննէս Եպս. Սուրէնեանին: Մուրեւ կը ներկայացնենք Ձուղայի բարբառով գրուած այդ նամակը, արեւմտահայերէն աշխարհաբարի վերածուած..-

Զերդ Բարձր Սրբազնութեան  
Ամենախոնարի խնդիր

Տիուր եմ, որ յանկարծ դէպք մը պատահեցաւ ինձի եւ որեւէ նանապարհով հնար չեմ գտներ անկէ ազատուելու. ուստի Զերդ Սրբազնութեան կը դիմեմ, գուցէ նար մը գտնէք ինձի համար:

Օր մը նստած էի սենեակիս մէջ, անձանօթ մարդ մը՝ Միրզա Մուհամադ Հիւսէյն անունով եկաւ մօտս, որութ երբեք չէի նանշնար: Սկսաւ ինձի երազ մը պատմել, որպէս թէ ինք երազի մէջ տեսեր է, որ ես պիտի իսլամանամ: Այս մասին ոչինչ խօսեցայ եւ [պատահածն այ] միանգամայն ոչինչ համարեցի. ան ելաւ գնաց մօտէս: Մի քանի օր ետք կրկին եկաւ մօտս. [Խսփահանի Քաղաքապիտ] Մօհդամէդ Դովլիէն նամակ մը տուաւ ինձի. բացի կարդացի: Ինձի գրած էր այնպիսի անձանօթ բաներ, որ երազիս մէջ ալ չեն եկած, որպէս թէ ես իսլամացեր եմ: Այս բանի վրայ ես զարմացած մնացի. եւ ան (վերոյիշեալ Մուհամադ Հիւսէյնը), առանց որ ես որեւէ բան ըսեմ, սկսաւ օրինակ մը գրել իմ լեզուով, որպէսզի այն ինչ ինչ նախօրօք արդէն գրած էր, որ զիս իսլամացուցած է, [իմ նամակովս] հաստատէ [այս պարագան]:

Զհանցեցայ այս օրինակը գրել, որովհետեւ նման բան ինձի ընդունելի չէր եւ այս խնդիրը անձանօթ էր ինձի: Յետոյ ըսաւ, որ այս բաները ինքն իր կողմէ արդէն նախօրօք գրեր է Թեհրան եւ այս մասին յաղաք պիտի գայ ինձի համար ողորմած Շահէն:

Սյժմ տարակոյսի մէջ եմ, որովհետեւ անմեղ տեղ մնացեր եմ այսպիսի զրպարտութեան մէջ, որովհետեւ ծանր է ինձի համար բարերար Շահի յաղաքը ընդունիլը, եւ առաւել ծանր է ինձի եւ անհնարին իմ հաւատէս փոխելը: Ուստի, կ'աղաչեմ Զերդ Սրբազնութեանը, եթէ հնար է ազատել զիս այս վտանգէն, առանց որեւէ վնասի:

Մնամ Սրբազնութեանդ միշտ խոնարի ծառայ՝  
Խուստամ Ս. Էնակօլօփով:

### Խսփահան քաղաք

1843, Ապրիլ 15:

**Համեմատ նախագաղափարին (բնագիրին) օրինակեցի (ընդօրինակեցի), Գէորգ Աբեղայ Մկրտչեան Երեւանցի:**

Այս նամակէն առաջին հերթին կ'իմանանք, որ Միրզա Մուհամադ Հիւսէյն էր անունը այն անձին, որ կարծէք յատուկ պատուէրով պարտականութիւն ունէր Ռոստամիսանը իսլամացնելու: Այդ նպատակով ալ անակնկալօրէն այցելած էր անոր: Նոյն անձը առանց Ռոստամիսանի գիտութեան սուտ զեկոյց ներկայացուցած էր առ որ անկ է, թէ իսլամացուցած է զինք: Այս սուտ տեղեկութիւնը իր կողմէ հնարելով, փոխանցած էր Թեհրան՝ Շահին: Սակայն իր ըսածները փաստելու համար կարիքն ունէր Ռոստամիսանի լեզուով գրուած անձնական վկայութեան: ահա այդ պատճառով ալ երկրորդ անգամ եկած էր Ռոստամիսանին մօտ ստանալու այդ գրութիւնը:

**Երբ կատարուած առաջարկը կտրականօրէն կը մերժուի, այն ատեն՝ սպառնալիքի ձեւով, զինք կատարուած իրողութեան առջեւ կը դնէ, ըսելով, որ ինք արդէն գրած է այս մասին թագաւորին, որ ի գնահատութիւն Ռոստամիանի իսլամացած ըլլալուն, շուտով անոր խալաթ պիտի ուղղարկէ:**

**Երկրորդ հետաքրքրական տեղեկութիւնը այն է, որ այս խնդիրին տեղեակ է իսֆահանի քաղաքապետ՝ Մանուչէրիսանը, որ իր հերթին գրելով Ռոստամիանին «այնպիսի անծանօթ բաներ» (որոնց մասին «մինչեւ իսկ երազիս մէջ չեմ տեսած», կ'ըսէ ան), զինք արդէն իսլամացած կը համարէ: Իսկ երիտասարդ Զայ զօրականը՝ որդի Սարբիփ Սուլյամանիսի, զարմացած եւ տագնապահար, իր մասին գրուածներն ու յայտարարուածները պարզապէս զրպարտութիւն համարելով, անձկագին եւ թախանձագին կը խնդրէ նոր Զուղայի ժամանակի Առաջնորդ Սրբազան Հօրմէ՝ ազատել զինք այս վտանգաւոր կացութենէն, որովհետեւ, մէկ կողմէն «ծանր է ինձի համար բարերար նահի Խալաթը չընդունիլը», իսկ միւս կողմէ, «առաւել ծանր է ինձի եւ անհետարին իմ հաւատես փոխելը կը գրէ:**

**Էնակօրիգեանց կամ էնակօրիգով ընտանիքի թղթածրարին մէջ կան թիւով տասը զրութիւններ, որոնցմէ երեքը միայն կը վերաբերին Ռոստամիանի խնդիրին: Անոնցմէ առաջինը արդէն ամբողջութեամբ ներկայացուցինք: Երկրորդ եւ երրորդ նամակները ցոյց կու տան թէ որո՞նց զիմած է Յովհաննէս Եպս. Սուրէնեանը եւ ի՞նչ պատասխաններ ստացած է անոնցմէ:**

**Վերոյիշեալ երկու նամակներէն կը տեղեկանանք, որ Զուղայի Առաջնորդը փորձած է ամէն գնով օգտակար հանդիսանալ Ռոստամիանին. դիմած է ժամանակի ազգեցիկ հայերու, որոնք թէ՝ Թեհրանի եւ թէ իսֆահանի մէջ մօտիկ կապեր ունէին պետական շրջանակներու հետ: Անոնք յարգուած անձնաւորութիւններ էին թէ՝ թագաւորին եւ թէ իսֆահանի քաղաքապետին կողմէ: Յովհաննէս Սրբազան մինչեւ իսկ պահանջած է իսֆահանի քաղաքապետէն պատժել Միրզա Մուհամադ Հիւսէյնը, որ իր սուտ վկայութիւններով եւ գեկոյցներով վտանգած է Ռոստամիանի կեանքը:**

**Վերոյիշեալ 15 Ապրիլ 1843 թուակիր Ռոստամիանի նամակէն երեք շաբաթ ետք՝ 6 Մայիս 1843-ին, հանրածանօթ բժիշկ՝ Դաւիթիթսան Մ. Դաւթեանց, ի պատասխան Սրբազանի դիմումին, հետեւեալ նամակը կը յոյէ Թեհրաննէն: Ստորեւ կը ներկայանենք զայն, դարձեալ վերածելով արեւմտահայերէն աշխարհաբարի:-**

6 Մայիս 1843

Թեհրան 1843

### Սրբազան Հայր,

Սյս նամակը կը գրեմ Սողոմոնիսանի որդի Աղա Ռոստամի մասին: Այստեղ մեծ աղմուկ բարձրացած է անոր վերաբերեալ: Այնտեղէն (իսֆահանէն) մոլլաներն ու տանիկներ (պարսիկները) բագաւորին նամակ գրած են: Կարելի է որ իսֆահանի մէջ մեծ խառնակութիւն ըլլայ: Լաւագոյնը այն է, որ աղա Ռոստամը գայ այստեղ՝ Թեհրան: Ամէն կերպով կը միիթարուի: Այստեղ ոչ ոք կրնայ բոնանալ անոր վրայ: Հետեւեցէք, գուցէ Սողոմոն Խանը իր որդույն ուղարկէ այստեղ:

Խաղաղութեան մէջ մնաք:

Մնամ Զերդ Բարձր Սրբազնութեանդ  
ամենախոնարի ծառայ  
Դաւիթիթսան Մ. Դաւթեանց

**Մեզի ծանօթ չէ, արդեօք Սրբազանը՝ ընդառաջելով Դաւիթիսանի խորհուրդին կրցա՞ւ համոզել Սարքի Սողոմոնիսանը, որպէսզի իր զաւակը ուղարկէ Թեհրան առ ի ապահովութիւն, բայց գիտենք որ գրեթէ նոյն օրերուն Առաջնորդ Յովհաննէս Եպիսկոպոսը ստացաւ ուրիշ նամակ մը Թեհրանէն, մէկ այլ շատ ազդեցիկ Հայ անձնաւորութենէ, որուն եւս շատ հաւանաբար դիմած էր Ռոստամիսանի խնդիրին առընչութեամբ: Ափսո՞ս, որ գեղեցիկ ձեռագիրով եւ ոճով շարադրուած այդ նամակի հեղինակի անունն ու ազգանունը յստակօրէն նշուած չեն նամակին տակը, այլ լոկ ստորագրութիւն կայ, որ դժբախտաբար անընթեռնելի է:**

**Այս նամակին մէջ եւս կան մի քանի կարեւոր տեղեկութիւններ, որոնք թէեւ նոր լոյս կը սփռեն Ռոստամիսանի պատմութեան վրայ, սակայն միաժամանակ մեզ կը դնեն նոր հարցականներու առջեւ: Սակայն, նախ ծանօթանանք անոր բովանդակութեան եւ ապա կատարենք մեր խորհրդածութիւնները: Անշուշտ նամակը վերածած ենք արեւմտահայերէն աշխարհաբարի, նախորդ գրութիւններուն նման:-**

**Զերդ Գերապայծառութիւն  
Ողորմած Տէր**

[Այս նամակը կը գրեմ] Միրզա Ռոստամին պատահած դէպքին մասին: Որովհետեւ իսփահանի Քաղաքապետը Մոհամեդն է եւ ինքն է Միրզա Ռոստամի խնդիրին միջնորդը, նախ Զերդ Սրբազնութեան բողոքը յայտնեցի անոր. խոստացաւ, ինք Քաղցրութեամբ նարը գտնել [այս խնդիրին] եւ ինձմէ խնդրեց Տէրութեան (քագաւորին) ոչինչ յայտնել այս մասին:

Ըստ Մոհամեդի տուած խոստումին, Միրզա Ռոստամին որեւէ վնաս հասնելու չէ բրիստոնեայ մնալով եւ կրնայ առանց որեւէ կասկածի ընդունիլ [քագաւորի] ինալարը, [որովհետեւ զայթ] բերողը Մոհամեդին սպասաւորն է եւ ոչ Շահի ծառաներէն մէկը:

Որպէսզի վստահ ըլլաֆ, ահա Զերդ Սրբազնութեան երկարօրէն կը գրէ նաեւ Միրզա Դաւիթը: Այժմ այս գրութիւնները եթէ բաւական ըլլան Զերդ ողորմածութեան կասկածները փարատելու, պատրաստ եմ դիմելու Տէրութեան (քագաւորին), հակառակ [իսփահանի Քաղաքապետ] Մոհամեդի կամքին:

[Գալով] Միրզա Հիւսէյնը պատմելու խնդիրին, եթէ պատիժ տնօրինուի Միրզա Հիւսէյնին, [իսրայը] բննութեան ժամանակ [Միրզա Հիւսէյնը] կրնայ Միրզա Ռոստամին վրայ յանցանք դնել եւ այդ կերպով [Ռոստամի] գործը կրնայ դժուարանալ: Այս պատահարի բոլոր մանրամասնութեանց կրնաք տեղեկանալ, Մոհամեդին՝ Միրզա Դաւիթին գրած նամակէն:

**Այս նամակի վերջին պարբերութեան մէջ մեզի անձանօթ հեղինակը կ'ակնարկէ այլ խնդիրի մը «Ղասն Գասկէն» ըսելով, որու վերաբերեալ նաեւ խօսած է Իսֆահանի քաղաքապետ՝ Մոհամէդդին. յիշեալը խոստացած է բաւարարութիւն տալ Սրբազանի խնդրանքին, երբ վերադառնայ իր կատարելիք ճամբորդութենէն:**

Ի՞նչ էր այդ խնդրանքը, բացատրուած չէ նամակին մէջ, որովհետեւ, ըստ երեսոյթին արդէն անցեալին խօսուած է այդ մասին: Յամենայն դէպս, անիկա կապ չունի Ռոստամիսանի մեզի ծանօթ հարցին հետ: Նամակը կ'աւարտի հետեւեալ բառերով:

**ԹԵհրան 1843**

**Մայիսի 1-ին**

Խոնարի ծառայ

ստորագրութիւն (անընթեռնելի)

**Յարդ մէջբերուած չորս գրութիւններէն՝ մէկ, Ռոստամխանի թաղման նկարագրութիւնը, առաւել՝ երեք նամակներ, հետեւեալ եզրակացութիւնները կարելի է հանել։—**

**ա.- Ոչ մէկ կասկած այն մասին, որ կազմակերպուած փորձ եղած է Ռոստամ-խանը իսլամացնելու։ Այդ փորձը հանդիպած է անոր բուռն մերժումին. եւ որովհետեւ առանց իր գիտութեան, իր իսլամացած ըլլալու սուտ լուրը գրաւոր փոխանցուած է թագաւորին, ուստի վերջինս զի՞նք պարգեւատրելու նպատակով խոստացած է խալարուղիկել։**

**բ.- Այս խնդիրին ոչ թէ միայն տեղեակ, այլ խալար ուղարկելու գործին միջնորդը եղած է իսֆահանի քաղաքապետ՝ Մոհամէդ տիտղոսով ծանօթ, Մանուչէրխանը, որուն ներկայացուած է Զուղայի Առաջնորդին բողոքը։**

**գ.- Մոհամէդը մէկ կողմէն վստահեցուցած է Առաջնորդ Սրբազնը, որ «Միրզա Ռոստամին որեւէ վնաս հասնելու չէ քրիստոնեայ մնալով», սակայն միաժամանակ յայտնած է որ ան «կրնայ առանց որեւէ կասկածի ընդունելի [թագաւորին] խալարը»։ Այս ըստածին մէջ մենք հակասութիւն կը տեսնենք։ Ինչպէ՞ս Ռոստամխանը կրնար խալար ընդունիլ եւ նոյն ատեն գրիստոնեայ մնալ, երբ այդ խալարը կը տրուէր իրեն ի գնահատութիւն իր իսլամացած ըլլալուն։ Արդեօք այստեղ կարելի չէ՞ քօղարկուած խաղ կամ նպատակ տեսնել։**

**դ.- 1 Մայիս 1843 թուակիր Թեհրանէն գրուած նամակին մեզի անծանօթ հեղինակը կ'ակնարկէ Միրզա Դաւիթին (Դաւիթխանին) երկար նամակին, որ պէտք է փարատէր Առաջնորդ Սրբազնին մտահոգութիւնները։ Էնակօլոփիեանց բնտանիքի թղթածրարին մէջ եղած Դաւիթխանի նամակը շատ համառօտ գրութիւն է, որը այնքան ալ Առաջնորդին վստահութիւն ներչնչող նամակ չէ. այլ զգոյշութիւն թելադրող եւ ապահովական նկատառումներով Ռոստամխանը Թեհրան ուղարկելու առաջարկ է։**

**ե.- Ցիշեալ 1 Մայիս 1843 թուակիր նամակին մէջ ակնարկ կայ իսֆահանի քաղաքապետին կողմէ Միրզա Դաւիթին գրուած նամակի մը, որուն միջոցով «այս պատահարի բոլոր մանրամասնութեանց կրնաք տեղեկանալ» կ'ըսէ։ Դժբախտաբար այդ նամակը, որ պէտք է պարսկերէն գրուած ըլլար, մեր արխիւմն մէջ գոյութիւն չունի, որպէսզի կարենայինք տեղեկանալ այս պատահարին բոլոր մանրամասնութեանց։**


**Վերջապէս նոյն նամակին հեղինակը կը փոխանցէ իսֆահանի քաղաքապետին հետեւեալ երկու տեսակէտները։ Նախ այս խնդիրին մասին թագաւորին ոչինչ յայտնել, այլ խօսքով՝ թող որ թագաւորը չիմանայ, որ Ռոստամխանը երբեք ալ խալամանալու մտադիր չէ, այլ կ'ուզէ իր գրիստոնէական հաւատքին վրայ ամուր մնալ. ապա կը թելադրուի Միրզա Հիւսէյնը պատժելու մասին չմտածել։**

**Այս երկու կէտերը մեզի ենթադրել կու տան, որ Մոհամէդը կ'ուզէ ըստ հնարաւորին գաղտնի պահել այս հարցը եւ աւելի չարծարծել, յատկապէս Թեհրան՝ թագաւորին մօտ։**

**Մենք կը վերադառնանք նոյն հարցումներուն։ Ո՞վ կամ որո՞նք էին Ռոստամ-խանը իսլամացնել ուզողները եւ անով ի՞նչ նպատակ կը հետապնդուէր։**

**Վստահարար Միրզա Հիւսէյնը լոկ պատուէրը կատարողն էր, սակայն այդ պատուէրին ետեւը կանգնողը կամ կանգնողները որո՞նք էին։ Մեր տրամադրութեան տակ եղող գրութիւնները յատակ պատասխան չունին։ Նոյնպէս մեզի համար՝ այս հանգրուանին մութ կը մնայ հետապնդուած նպատակը։ Սակայն մէկ բան շատ յատակ**

է եւ անվիճելի: Ուստամիշանը իսլամացնելու ձախող փորձին արդիւնքը կ'ըլլայ ցաւալի: Հակառակ տրուած բոլոր խոստումներուն եւ կատարուած հաւասարիացումներուն, թեհրանի մէջ թագաւորին ներկայանալիք ետք, երբ կը վերադառնայ իսֆահան, ան կը մահանայ խորհրդաւոր պայմաններու մէջ, խոր սուզի մատներով նոր Զուղան: Եթէ իր մասին գրուած նամակները կը լրեն մահուան պատճառին մասին, անոր տապանաքարին արձանագրութիւնը բարձրագաղակ կը յայտարարէ, որ ան



Նահատակուած է իր քրիս-  
տոնէական հաւատքին ամուր  
կառչած ըլլալուն համար:

Ստորեւ կը ներկայացնենք  
այդ տապանաքարին ազուց-  
ւած մարմարին վրայ գեղեց-  
կօրէն փորագրուած արձա-  
նագրութիւնը, որպէս պերճա-  
խօս վկայութիւն անոր հա-  
ւատքին ու վախճանին.-

ՀԱՆԳԻՍ

ՊԱՅՄԱՆԱԿԱՐԱՎՈՐԻ

ՍԱՄՀԴՅՎԼԵ

## ՍՈՂՈՄՈՆԻԱՆԵԱՆ

ԷՆԱԿՈԼՈՓԵԱՆՑ

↪ 17 ↪ 04S. 1843

ԶԵՐՄ Ի ՀԱՒՍԱ ՔՐԻՍՏՈՆԵ  
Ա.ՏԵԱ.Ց ԶՇՈՒԿ ԱՇԽԱ.ՐՁԻ  
Ա.ՐԲ ԶՄԱ.Հ ԼԵԱ.ՆԱՀԱՍԱԿ  
ՈՂՈՎ ԶՈՐԾՆԵԱ ՅԻՇԱ.ՏԱ.

ՈՂԱԿԱՐԻ ՏԱՊԱՆՎՔԱՐԻ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ.

ԽՈՍՐՈՎ ՓԱՐԻՒԶԻ ԵՒ ՇԻՐԻՆ ԹԱԳՈՒՅԻՒՆԻ

## ՍԻՐՈՅ ՎԵՊԸ ԵՒ ՌՈՍՏՎԱԽԱՆ

Այս տապանաքարին շուրջ կան բարձրագանդակներ, որոնք կարծէք իրենց մէջ ունին գաղտնիք, Ռոստամիսանի նահատակութեան հետ կապուած եւ կամ կ'ուզեն յատուկ պատգամ մը փոխանցել այցելուին: Այդ գաղտնիքը կամ պատգամը վստահաբար ծանօթ իրողութիւն էր Ռոստամիսանի հօր՝ Սողոմոնիսանին, Զուղայի ժամանակի Առաջնորդին, հանրածանօթ բժիշկ՝ Դաւիթիսանին եւ գուցէ նաեւ ուրիշներու, սակայն ժամանակի ընթացքին, երբ սերունդներ իրար յաջորդեցին այդ իրողութիւնը մոռացութեան ենթարկուեցաւ:



Երբ կը փորձենք աւելի մօտէն ծանօթանալ այդ քանդակներուն, առաջին ակնարկով տապանաքարին հիւսիսային եւ հարաւային կողմերուն վրայ յստակօրէն կը տեսնենք պարսկական տարագով, զէնքը ձեռքին, նոյնանման զինուորներու շարքեր։ Յատկանշելի է, որ հարաւային կողմի զինուորներու բարձրաքանդակները աւելի լաւ պահպանուած են, որովհետեւ զանգակատան կամարի աւելի ներսի կողմը ըլլալով արեւն ու անձրեւը աւելի քիչ մաշեցուցած են քարի երեսը։ Այս զինուորներու շարքը՝ մեր համեստ կարծիքով, կը ներկայացնէ Ռուստամիսանի զինուորականի ասպարէզը։

Սակայն աւելի հետաքրքրականը տապանաքարի արեւելեան եւ արեւմտեան ճակատներու՝ համեմատաբար աւելի փոքր տարածքին վրայ քանդակուած եւ բաւական լաւ պահպանուած նոյնանման դիմաքանդակներն են, ուր աջին կը տեսնենք ձիաւոր մը՝ իրեն ընկերացող հետեւորդներով, որ կարծէք որսի ելած է. զիստուն վերեւ՝ օդին մէջ թռչուններ. իսկ ձախին՝ կ'երեւայ վարագոյրով կամ շղարշով ծածկուած մերկ կին մը։ Զիաւորը՝ ի տես մերկ կնոջ, ունի հիացումի եւ զարմանքի արտայայտութիւն իր դէմքին. ցուցամատր հանգչած է շրթունքին։ Դիմաքանդակներու այս տեսարանը մեզի կը յիշեցնէ Արքայից Արքայ՝ Խոսրով Բ. Փարւիզի եւ ապագայի Շիրին թագուհի՝ մերկ լոգնալու ժամանակ տեղի ունեցած հանդիպումը։

Ցիշենք որ այս Խոսրովը հայկական աղբիւրներուն մէջ ծանօթ է մեզի որպէս Խոսրով «Ալպուէզ», «Փարւիզ»-ի փոխարէն, որ պարսկերէն կը նշանակէ յաղթական, տիտղոս, որ արուած է անոր Բիւզանդական կայսրութեան դէմ տարած աննախընթաց յաղթանակներուն համար։

Հանդիպումի այս պահը նկարագրուած է Նիզամի Գանձաւիի<sup>\*</sup> (1141-1209), վաթսուն հազար տողերէ բաղկացած, «Խամսէ» (Հնգեակ) անունը կրող բանաստեղծութեան գլուխ-գործոցի «Խոսրով եւ Շիրին» խորագիրով ծանօթ սիրոյ վէպին մէջ,

\* Tales from the Khamseh of Nizami. Khosrow and Shirin — Layla and Majnun. The Seven Princesses. An Album of Miniatures from the Royal Manuscripts of Herat, Shiraz and Tabriz School.

P.J. Chelkowski, New York University. Publ. by Farhang — Sara, 2000, Tehran.

ուր վէպի հերոսն ու հերոսուհին կ'ունենան ողբերգական վախճան եւ կը թաղուին նոյն գերեզմանին մէջ: Անշուշտ Նիզամի Գանձաւին (Գանձակեցի), ունի իրեն զլիսաւոր աղբիւր պարսկական ու նաեւ Համաշխարհային զրականութեան քաջածանօթ՝ աշխարհահռչակ Ֆերտոսիի<sup>\*</sup> Շահնամէն՝ պարսիկ Արքայից Արքաներու հերոսապատում դիւցազնավէպը:

Գանձաւիի նկարագրութեան համաձայն Խոսրովի եւ Շիրինի առաջին հանդիպումը տեղի ունեցած է Հայաստանի մէջ, երբ զմբուխտեայ դաշտի մը մէջէն վազող գետակի մը կապոյա ջուրերուն մէջ մերկացած Շիրինը կը լոգնար եւ իր երկար մազերը կը լուար: Բազմաթիւ են պարսկական այն ձեռագիրները, որոնք այս եւ այլ տեսարաններով պատկերագարդուած են:

Յատկանչելի է, որ Նոր Ջուղայի Ա. Ամենափրկիչ Վանքի թանգարանին մէջ (Բ. յարկ) կը գտնուի կապտագոյն գեղեցիկ յախճապակի մը՝ 39.5-53 սմ. մեծութեամբ, որ կը ներկայացնէ Խոսրովի եւ Շիրինի առաջին հանդիպումը, երբ Շիրին մերկացած կը լուար իր երկար մազերը:

Ինչ կը վերաբերի Ֆերտոսիին, ան Խոսրովի սէրը Շիրինի հանդէպ կը տանի ետ, անոր երիտասարդական օրերուն, երբ ան տակաւին թագաժառանգ էր. իսկ երբ թագաւոր եղաւ, շարունակ պատերազմներու մէջ ըլլալով, մոռցաւ Շիրինի սէրը: Անոնց կրկին հանդիպումը եւ անոր յաջորդող ամուսնութիւնը, Շահնամէի տարբերակին համաձայն, տեղի կ'ունենայ երբ Խոսրով արդէն բարձրացած էր հօրը գահին եւ օր մը իր շքախումբով որսի ելած էր:

Այս ուսումնասիրութեան նպատակէն դուրս է խօսիլը պարսկական զրականութեան վերոյիշեալ երկու մեծ դէմքերու եւ անոնց ստեղծագործութեանց մասին: Այն ինչ որ մեզի համար կարեւոր է գիտնալ հետեւեալն է: Ինչո՞ւ մեծ ժողովրդականութիւն վայելող Խոսրով Փարւիզի եւ Շիրինի սիրոյ վէպին զլիսաւոր տեսարաններէն մէկը քանդակուած է Ռոստամիսանի տապանաքարին վրայ: Այս ռոմանթիկ եւ միաժամանակ ողբերգական պատմութիւնը ի՞նչ առնչութիւն ունի Ռոստամիսանի կեանքին ու մահուան հետ:

Արդարեւ դժուար հարցում է այս, որուն ճշգրիտ պատասխանը դժբախտաբար չկրցանք գտնել մեր տրամադրութեան տակ եղող էնակօֆեանց ընտանիքի թղթածրարին մէջ. սակայն նախքան որեւէ ենթադրութիւն կատարելը անհրաժեշտ է ընդգծել, որ Խոսրով Փարւիզն ու Շիրին թագուհին պատմական իրական դէմքեր են: Շիրինի քրիստոնեայ ըյալու մասին որեւէ կամկած չունինք: Նիզամի Գանձաւիի համաձայն, ան Հայոց թագուհիի գարմուհին էր. իսկ ասորական աղբիւրներ անոր կը վերագրեն ասորական ծագում: Խոսրով Արքայի արքունիքին մէջ մեծ ազդեցութիւն ունեցող եւ բարձրագոյն պատիւներու արժանացած, Վրկանաց Մարզպան եւ մեծահամբաւ զօրավար՝ Մմբատ Բագրատունի Հայ իշխանի եւ պալատական համբաւաւոր ըժշկապետ՝ Ռւղղափառ Գարրիէլի հետ, Շիրին թագուհին կարեւոր դեր խաղացած է Պարսկաստանի Ռւղղափառ Ասորի եկեղեցւոյ՝ Ասորի Նեստորականներուն վրայ տա-

\* Shahnameh, The Epic of the Kings, the national epic of Persia by Ferdowsy. Translated by Reuben Levy. Revised by Amin Banani, 2001, Tehran.

\*\* Այս քանիքարթէֆ յախճապակին՝ 18-19-րդ դարու իսֆահանի գործ, Վանիքի քանիքարթէֆ նուիրուցաւ մեր առաջնորդութեան օրերուն, 21 Յունիուր 1981-ին, Զուղայեցի նսայեան անուանի լնտանիքի զաւակներ՝ Արայի եկեղեցւոյ՝ Ասորի Նեստորականներուն կողմէ:



բած յաղթանակին մէջ, Խոսրով Փարւիզի հրամանով 615-6-ին Տիգրոնի մէջ գումարուած ժողովի ընթացքին:

Ինչ կը վերաբերի Խոսրով Փարւիզի, ան շատ աւելի յայտնի դէմք է, իր ներքին եւ արտաքին ճակատներու վրայ մղած պատերազմներով։ Փաստօրէն ամէն տարի կը յիշենք զինք Խաչվերացի տօնին, անոր Բիւզանդական Կայսրութեան դէմ մղած քսանամեայ պատերազմներու առիթով, որովհետեւ իր անունը անմիջականօրէն կապուած է 10 Ապրիլ 614-ին Երուսաղէմի գրաւումին հետ։ Իր բանակներու ընդհանուր հրամանատար՝ Խոռեամի Սուլթր Քաղաքի բնակչութեան մեծամասնութիւնը կոտորելէ ետք, Քրիստոսի խսկական Խաչափայտին հետ, Երուսաղէմի Հայոց Զաքարիա Պատրիարքին ու բազմաթիւ հոգեւորականներ Տիգրոն գերի տարած ըլլալը, նոյնակս Երուսաղէմի Վանքերու եւ եկեղեցիներու ամբողջ հարստութիւնը, ոսկին ու արծաթը, կողոպտելով Պարսկաստան փոխադրած ըլլալու պարագան քաջածանօթ է պատմութեան։

Իր գօրավարները շարունակելով Միջին Արեւելքի մէջ տարած յաղթանակները, 618-619-ին Խոսրով Արքայից Արքայի փառքը հասցուցին իրենց գագաթնակէտին, երբ պարսկական բանակները հասան Ռսկորի ափերը եւ գրաւեցին Քաղկեդոն քաղաքը։ Հերակլ կայսեր հաշտութեան եւ խաղաղութեան դաշինք կնքելու բոլոր առաջարկները մերժուեցան Խոսրովի կողմէ։ Սակայն այս բոլորէն ետք, Խոսրով Փարւիզ, յաղթական ու աշխարհակալ Արքայից Արքան, անփառունակ վախճան ունեցաւ։ Իր սկսած քսանամեայ պատերազմները վերջ գտան Բիւզանդական եւ Հայկական բանակներու շքեղ յաղթանակով։

Ուստի, 628-ի Փետրուարին, պարսիկ գօրավարները տեսնելով պարսկական կայսրութեան անխուսափելի կործանումը, յեղաշրջում կատարեցին։ Սպաննելով Խոսրով Բ. Շահը, գահ բարձրացուցին անոր եօթնամեայ զաւակը, որ միայն վեց ամսուան կեանք ունեցաւ։

Այսուեղ աւելորդ կը համարենք մտնել Պարսկաստանի գահին տիրանալու նպատակով մղուած ներքին կոիւներու մանրամասնութեանց մէջ։ Էականը մեզի համար



այն է, որ պարսիկ զօրավար՝ Խոռեամը, երբ Բիւզանդիոնի հետ դաշինք կնքելով բարձրացաւ գահ, իր խոստումին համաձայն, հողային մեծ տարածքներ զիջելէ բացի, նաեւ վերադարձուց Քրիստոսի իսկական Խաչափայտը Բիւզանդիոնի Հերակլ Կայսեր, որով իրականացաւ քրիստոնեայ աշխարհին երազը՝ տեսնելու խաչին գերութենէ ազատագրումը եւ կրկին Երուսաղէմ տարուիլը:

Մեր զիխաւոր նիւթէն մասամբ շեղեցանք պարզապէս տեսնելու համար, որ ի՞նչ նմանութիւն կրնայ ըլլալ Խոսրով Փարւիզի եւ Շիրինի սիրոյ վէպին, Խոսրովի տիտուր վախճանին եւ Ռոստամինի մահուան միջեւ:

Եթէ փորձենք որեւէ ձեւի նմանութիւն գտնել Խոսրով Փարւիզի եւ Ռոստամի կեանքին եւ մահուան միջեւ, առաջին հերթին պիտի նշէինք երկուքին ալ զինուորական ըլլալը, անշուշտ մէկը Արքայից Արքայ է, իսկ միւսը Երիտասարդ զինուորական, զաւակը բարձրաստիճան զինուորական Սարթիս Սողոմոնիանի:

Երկրորդ եւ աւելի ակնյայտ նմանութիւնը, անոնց տիտուր վախճան ունենալն է, դարձեալ պահելով համեմատութիւնները: Մինչ Խոսրով՝ բազում յաղթանակներով աննախընթաց նուաճումներ կատարելէ ետք, կորսնցուց աշխարհակալի իր փառքն ու պատիւը, որուն որպէս հետեւանք դաւաղրաբար սպաննուեցաւ իր ամէնէն հաւատարիմ ու մտերիմ զօրավարներուն ձեռքով, պարթեւահասակ ու գեղեցկադէմ Ռոստամի խանը եւս սպաննուեցաւ իր Երիտասարդ տարիքին, իր զինուորականի ասպարէզին մէջ հաւանաբար իրեն մօտիկ անձնաւորութիւններու կողմէ: Հաւանաբար ըսինք, որովհետեւ զրաւոր փաստեր կը պակսին մեզի յայտարարելու համար անունը կամ անունները անոնց որոնք դաւաղրաբար սպաննեցին զինք:

**Գալով Ռոստամինի տապանաքարին վրայ քանդակուած Խոսրով Արքայի եւ**

**Շիրին թագուհիի հանդիպումի տեսարանին, անիկա մեզի մտածել կու տայ սիրոյ պատմութեան մը գոյութեան մասին: Արդեօք Ռոստամիսանի կեանքին մէջ Շիրինանման գեղեցկուհի կա՞ր, որ ճակատագրական դեր ունեցաւ անոր մահուան մէջ:**

**Առանց աւելի երկարելու այս պատմութիւնը, ստորեւ կը ներկայացնենք համառօտ կերպով այն տեղեկութիւնը, որ տարիներ առաջ մենք ստացած էինք՝ ամբողջ կեանք մը Ջուղայի պատմութիւնը ուսումնասիրած, բանասէր ու պատմաբան անձնաւորութենէ մը, երբ հարցուցինք իրեն Ռոստամիսանի նահատակութեան պարագաներու մասին:**

**Մեզի փոխանցուած բանաւոր տեղեկութեան համաձայն, պարսիկ իշխանուհի մը իսֆահանի մէջ սիրահարուած էր 21 ամեայ գեղադէմ, բարձրահասակ Ռոստամիսանին: Ան ուզած էր ամուսնանալ Հայ զինուորականին հետ, սակայն այդ ամուսնութիւնը անկարելիութիւն էր: Մէկը Հայ քրիստոնեայ, միւսը ազնուական ընտանիք, բնականաբար իսլամ: Անոնց ամուսնութիւնը հնարաւոր էր միայն մէկ ձեւով. Ռոստամիսանը պէտք էր իսլամանար, որպէսզի պարսիկ իշխանուհին կարենար ամուսնանալ հետը:**

**Թէ որքանո՞վ Ռոստամիսանը տեղեակ էր պարսիկ իշխանուհիի սիրոյ զգացումներուն եւ մանաւանդ այդ սէր փոխադա՞րձ էր կամ ոչ, պատասխանը անյայտ է մեզի համար: Այսուհանդերձ մէկ բան կրնանք անվարան ըսել, որ Ռոստամիսանի Ջուղայի Առաջնորդին գրած նամակը պարզ ու յստակ բառերով կ'ըսէ թէ Միրզա Հիւսէնի զինք իսլամացած տեսնելու առաջարկը եւ իսֆահանի քաղաքապետ՝ Մանուչէրիսանի իրեն գրած նամակի բովանդակութիւնը, թէ ինք իսլամացած է, ամբողջութեամբ անձանօթ եւ անընդունելի էին իրեն: Իր երազին մէջ իսկ չէր տեսած իր մասին այդ ըսուածները: Իսկ իր ցուցաբերած ըուռն ընդդիմութիւնը իր հաւատքը փոխելու կապակցութեամբ, կը փաստեն որ իրեն համար պատրաստուած այս տխուր խաղին մէջ ինք դերակատար չէր: Իսկ իր իսլամացած ըլլալու սուս լուրը մինչեւ Շահին հասած ըլլալու իրողութեան մէջ ան կը նախզգար իրեն սպառնացող վտանգը:**

**Խօսելով անոր մահուան պարագաներու մասին, ժամանակին մեզի յայտնուածը այն էր, որ խննիյքի ընթացքին զինք քունաւորած էին, որու պատճառով ան մեռած էր: Մէր կարծիքով, երբ Ռոստամիսանը թէհրանէն իսֆահան վերադարձաւ, հաստատ մնացած իր հայու քրիստոնէական հաւատքին վրայ, անոնք որ կ'ուզէին զինք դաւանափոխ ընել համոզուեցան, որ այլեւս յոյս չկար զինք իսլամացնելու. ուստի որոշեցին թունաւորելով սպաննել զինք, վերջ տալու համար անոր անձին շուրջ իսֆահանի եւ թէհրանի մէջ բարձրացած մեծ աղմուկին:**

**Իսկ Ռոստամիսանը, թունաւորուելի ետք, «Ազգասէր»-ի մէջ լոյս տեսած թղթակցութեան համաձայն, զգալով որ մահը մօտ է, խոստվանանք եղաւ եւ Սուրբ Հարդութիւն ստացաւ, կարծէք գիտակցաբար ընդունելու համար նահատակի լուսապակը:**

**Փակելէ առաջ այս ուսումնասիրութիւնը, կ'ուզենք կանգ առնել վերջին կէտի մը վրայ: Ցիշեալ «Ազգասէր»-ի յօդուածին մէջ նոր Ջուղայի թղթակիցը կը բացատրէ, որ Ռոստամիսանի յուղարկաւորութիւնը «Արեգակնախայլ եւ Ամենողորմ Շահի» կարգադրութեամբ այսքան փառաւոր կերպով տեղի ունեցաւ «ի պատիւ իր սիրելի Մօթամէր Դովիլ եղբօր քոռան»:**

**Մէծապէս հետաքրքրական է իմանալը, արդեօք ո՞վ էր Մօթամէր Դովիլի, այսինքն իսֆահանի քաղաքապետ՝ Մանուչէրիսանի եղբօր թոռը: Արդեօք Շիրինանման այն**

գեղեցկուհի իշխանուհին էր, որ սիրահարուած էր Ռոստամիսանին:

Տակաւին այլ հարցումներ կը ծագին մեր միտքին մէջ: Ինչո՞ւ նոյն այդ Մօթամեք Դովլէ կոչուած Մանուչէրիսանը այնքան մօտէն կը հետեւէր Ռոստամիսանի իսլամանալու եւ այդ առիթով Շահէն խալաթ ստանալու խնդիրին. նաեւ կը քաջալերէր Ռոստամիսանը, որ ընդունի Շահի խալաթը:

Միրզա Հիւսէյնի երկրորդ այցելութեան Ռոստամիսանին, ինչո՞ւ անձամբ անոր նամակ կը գրէր, որպէս արդէն իսլամացած հայու, եւ Աստուած զիտէ տակաւին ուրիշ ի՞նչ վերագրումներ կամ խոստումներ կային այդ նամակին մէջ, որոնք անհիմն էին եւ կամ անընդունելի: Հետեւեաբար, ան անձամբ շահագրգռութեած էր այս հարցով: Այլ խօսքով (եթէ մեր ենթադրութիւնը ճիշդ է), ան կ'ուզէր ամէն գնով «իսլամացած» Ռոստամիսանը ամուսնացած տեսնել պարսիկ իշխանուհին հետ:

Մեր անձնական համոզումն է, ինչ որ եղած ըլլայ յետին նպատակը զինք դաւանափոխ ընելու, հակառակ իր վրայ դրուած ձնչումներուն եւ այդ առիթով իրեն կատարուած ամէն տեսակ խոստումներուն, Ռոստամիսանը նախընտրեց մնալ Հայ քրիստոնեայ եւ անոր համար զիտակցաբար ընդունեց նահատակութիւնը:

Երբ իր շիրմաքարին վրայ քանդակուած քառեակը աշխարհաբարի վերածենք եւ ընդլայնենք անոր իմաստը, կ'ունենանք հետեւեալ եզրակացութիւնը.—

Պայազատ Ռոստամիսանը քրիստոնեութեան հանդէպ ունեցած իր ջերմ հաւատքով ատեց աշխարհի վայելքները, փառքն ու պատիւը. մահուան բաժակը ըմպեց եւ դարձաւ նահատակ. այս կերպով ան մեզի քողեց իր օրինեալ յիշատակը: Իսկ մենք կ'ըսենք, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ աղօթքին բառերով..-

«ՅԱ.ԻԻՏԵՆԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՅՆ ՕՐՀԱՌԻԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ»:

ԿՈՐԻԿԻՆ Ա.Ր.Ք. ՊԱՊԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)



## ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Զ. ՄԱՍ

ԱՐԴԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ

Գլուխ Ե.

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

**Դպրոցական լուտերականութիւնը, որ թէեւ Աստուածաշունչին վրայ հիմնուած էր, սակայն յստակ եւ հաստատ վարդապետական մեկնութիւններ կը պարունակէր եւ խմացական խոր հասկացողութիւն կը պարտադրէր, հետզհետէ կը սկսէր տարածուիլ:** Շեշտը կը դրուէր բիւրեղ վարդապետութեան եւ եկեղեցւոյ խորհուրդներուն վրայ՝ որպէս քրիստոնէական կեանքը բաղկացնող բաւարար տուեալներու: Լուտերի ուսուցած հաւատացեալին եւ Աստուծոյ միջեւ եղած յարաբերութիւնը կը փոխարինուէր վարդապետական ամբողջ համակարգի մը հնազանդելուն հետ: Աշխարհականներուն դերը կրատրական կը դառնար. անոնք պարտաւոր էին վարդապետութիւնները անվերապահօրէն ընդունի, բեմէն անոնց մասին տրուած բացատրութիւնները մտիկ ընել, եկեղեցւոյ խորհուրդները ընդունիլ եւ եկեղեցւոյ սահմանած կարգին հետեւիլ:

Ահա այս խակ էր քրիստոնէական կեանք ապրիլը: Աւելի խոր բարեպաշտութեան մասին կը վկայեն ժամանակակից հոգեւոր երգերը եւ անհատական տիպարները, սակայն ընդհանրապէս արտաքին եւ վարդապետական երեսը տիրական կը մնար: Այս երեւոյթը արդարօրէն «մեռեալ ուղղափառութիւն» կը նկատուէր: Նոր դպրոցական լուտերականութիւնը նաեւ կը յատկանշուէր իր օրերու տրամարանական մտածողութենէն կրած ազդեցութեամբ եւ անոր հանդէպ որդեգրած հակառարձութեամբ:

Բարեպաշտութիւնը դպրոցականութենէ դարձակէտ մըն էր՝ քրիստոնէական փորձառութեան զգացական երեսին եւ աշխարհականներուն քրիստոնէական գործօն կեանք ապրելուն վրայ հիմնուած, որ աշխարհին հանդէպ ժուժկալ վերաբերումով կը դրսեւորուէր: Բազմաթիւ տուեալներ կ'ազդէին բարեպաշտութեան վրայ, որ յաւապէս ըմբռնելու համար պէտք է տեսնենք անոր զիխաւոր դէմքը հանդիսացող Ֆիլիփ Ճագոպ Սփենըրի (1635-1705) կեանքն ու գործը: Ան 17-րդ դարու զիխաւոր կրօնական դէմքերէն մին էր եւ իր անձնական օրինակով ու ուսուցումով բարեպաշտութիւնը կը ցոլացնէր:

Ֆիլիփ Ճագոպ Սփենըր ծնած էր բարձր Ալգասի Ռափուլսթուէլլը քաղաքին մէջ եւ կը դաստիարակուէր Սթրազպուրկի մէջ, ուր կը հմտանար աստուածաշնչական մեկնութեան մէջ եւ հաղորդակից կը դառնար եկեղեցական կարգապահութեան ու քրիստոնէականի ուսուցման եզակի ուսման, որմէ բազմաթիւ լուտերական շրջանակներ գերծ էին: Ուսումը կը շարունակէր Պազէլի եւ Ժրնեկի մէջ, ուր բարեկարգու-

**թեան մէջ կը հմտանար՝ առանց լուտերականութենէն հեռանալու:** Միթքազպուրկի մէջ ան սերտօրէն Լուտերի աստուածաբանութիւնը կը սերտէր: Ան մեծապէս կ'ազդուէր միսթիքական հակում ունեցող Եռհան Արնտի (1555-1621) ձշմարիտ Քրիստոնէութիւնը երկէն: Առաւել, ան որոշ ազդեցութիւն կը կրէր նաեւ Փոլ Կերչարտի (1607-1676) կրօնական բանաստեղծութիւններէն եւ բարեկարգեալ եկեղեցիներու անգլիական մաքրակրօններէն ազդուած այսպէս ասաց «հոլանտական բարեպաշտութիւն»-էն, որուն ղեկավարներն էին Ուլիլիմ Թիլինք (1579-1629), Կիապրո Վոէթ (1589-1677) եւ Եռոպա վան Լուտընաթէյն (1620-1677): Կասկածէ վեր է, որ Ֆիլիփ Ճագոպ Սփենը մաքրակրօն գրականութիւնը մեծապէս կ'ազդուէր, մանաւանդ Լէուխս Պէյլիի (?-1631) մեծ ժողովրդականութիւն վայելած Բարեպաշտութեան գործունեութիւնը երկին գերմաններէն թարգմանութենէն եւ Ուչչրտ Պէքսթրոի (1615-1691) թարգմանուած երկերէն:

1666-ին Ֆիլիփ Ճագոպ Սփենը վաճառականական ֆրանքուրիթ քաղաքին հովիւր կը դառնար: Ան կը փորձէր եկեղեցական կարգապահութիւն պարտադրել, սակայն հեղինակութիւնը քաղաքային իշխանութեան ձեռքը կը մնար: Ան կ'աշխուժացնէր քրիստոնէականի ուսուցումը: Անոր ամէնէն ակնառու նորութիւնը կը պատահէր 1670-ին, երբ իր տան մէջ քրիստոնեաներու փոքր խումբ մը կը հաւաքէր եւ Աստուածաշունչի սերտողութիւն, աղօթք ու կիրակնօրեայ քարոզներու քննարկում կը կատարէր՝ նպատակադրելով անհատական հոգեւոր կեանքի խորացումը: Այսպիսի հաւաքներ բարեպաշտական հաւաքներ կը կոչուէին եւ որպէս բարեպաշտութիւն կը բնորոշուէին:

1675-ին Ֆիլիփ Ճագոպ Սփենը բարեպաշտութեան սկզբունքները կը սահմանէր իր Pia desideria երկին մէջ: Ան իր ժամանակի գլխաւոր չարիքները կը համարէր կառավարութեան եկեղեցւոյ գործերուն միջամտութիւնը, կարգ մը եկեղեցականներուն բարոյական չար օրինակը, աստուածաբանական հակասական մեկնութիւնները եւ աշխարհականներուն գինովութիւնը, անլարոյութիւնն ու անձնասիրութիւնը: Որպէս բարեկարգութիւն կ'առաջարիէր, որ զանազան ծուխերու մէջ Աստուածաշունչի սերտողութեան հաւաքներ կազմակերպուէին եւ որովհետեւ բոլոր հաւատացեանները քահանայ էին՝ իրարու հանդէպ աշալլջութիւնն եւ օգնութիւնն ցուցաբերէին: Քրիստոնէութիւնը կեանք էր եւ ոչ թէ իմացական գիտութիւն: Հակամարտութիւնները օգտակար չէին: Եկեղեցականներ աւելի լաւ դաստիարակութեան եւ օրինակելի կեանքի կարօտ էին: Քարոզախօսութիւնը հաւատացեաններու քրիստոնէական կեանքի շինութեան պէտք էր ծառայէր եւ ոչ թէ քարոզիչին կարողութիւնները փաստելու: Ճշմարիտ քրիստոնէութիւնը կեանքով կը ցոլար եւ կը սկսէր հոգեւոր բարեփոխութեամբ, գիտակից նոր կեանքով: Ֆիլիփ Ճագոպ Սփենը անգլիացի մաքրակրօններուն նման ճգնողական որոշ հակումներ կ'ունենար ճաշի, խմիչքի եւ հագուստի չափաւորութեան մարզին մէջ ու թատրոնէ, պարէ եւ բախտախաղէ հեռու կը մնար. երեւոյթներ, որոնք իր ժամանակի լուտերականութեան համար «անմեղ ժամանց» կը նկատուէին:

Ֆիլիփ Ճագոպ Սփենը այս զաղափարներուն համար ոյժեղ ընդդիմութեան կը հանդիպէր: Ան որպէս հերձուածող կ'ամբաստանուէր. այս ամբաստանութիւնը եթէ մէկ կողմէն անարդար էր, որովհետեւ ան լուտերական դասական ըմբռնողութենէն չէր շեղած, միւս կողմէն արդար էր, որովհետեւ անոր բերած նորութիւնները ժամանակակից լուտերական ուղղափառութեան չէին համապատասխաներ: Ան հաւատոյ

հանգանակներուն փոխարէն Աստուածաշունչին վրայ կը դնէր շեշտը: Անոր այն ուսուցումը, թէ եթէ սիրադ ուղիղ էր խմացական մեկնութիւնները երկրորդական կը դասուէին, բուռն ընդդիմութեան կը բախէին անոնց կողմէ, որոնք բիւրեղ վարդապետութիւնը կը շեշտէին: Ֆիլիփ Ճագոպ Սփենը Աստուածաշունչի մտերմութիւնը կը ժողովրդականացնէր եւ վարդապետական չափանիշերը որպէս Աստուածաշունչին ուսուցած կէտերուն վերջնական վճիռ կը մերժէր: Ան Աստուածաշունչի բնոյթին եւ պատմութեան ուսումնասիրութեան ճանապարհը կը հարժէր: Առաւել, ան երիտասարդութեան կրօնական դաստիարակութիւնը կը խթանէր եւ աստուածաշնչական եւ ջերմեռանդ քրիստոնէական կեանք մը կը քաջալերէր:

Ֆրանքֆուրթի մէջ Ֆիլիփ Ճագոպ Սփենը աշակերտներէն ոմանք, հակառակ իր ընդդիմութեան, իրենք զիրենք եկեղեցւոյ պաշտամունքէն եւ խորհուրդներէն կը մեկուսացնէին: Անոր կազմակերպած հանդիպումները ոստիկանութեան արգելքներուն կը բախէր եւ 1686-ին ան ուրախութեամբ Տրեզարնի դատարանի քարոզիչի պաշտօնին կ'ընդառաջէր: Մինչ այդ բարեպաշտական չարդումը Լայփցիկի համալսարան ներթափանցած էր: 1686-ին համալսարանի երիտասարդ դաստիարանի 0կրսթ Հերման Ֆրանք (1663-1727) եւ իր կարգ մը գործակիցները հոն Աստուածաշունչի սերտողութեան դասընթացք կը հաստատէին: Սկզբնական փուլերուն անոր անդամները համալսարանի դաստիարաններն էին, անոր մեթուր գիտական էր եւ ան համալսարանի տնօրէնութեան հովանին կը վայելէր: Սակայն, 1687-ին, 0կրսթ Հերման Ֆրանք, իր վկայութեամբ, աստուածային նոր ծնունդի փորձառութիւնը կ'ապրէր Լունըպրկի մէջ եւ Յովկաննու Աւետարանին 20.31-ին վրայ քարոզ կը գրէր: Ան մի քանի ամիս Տրեզարնի մէջ Ֆիլիփ Ճագոպ Սփենը մօտ մնալէ ետք, բարեպաշտութիւնը կ'ընդունէր: 1689-ին 0կրսթ Հերման Ֆրանք Լայփցիկ կը վերադառնար ու թէ՛ համալսարանին եւ թէ քաղաքին մէջ մեծաթիւ հետեւորդներ կ'ունենար: Լայփցիկ տակնուվրայ կը դառնար եւ պետական հրովարտակով հանդիպումները կ'արգիրուէին: Անոր հետսող բազմաթիւ ուսանողներ այլ դասանիւթերը կը ճգէին եւ միայն անոր դաստիարակութիւններուն կը հետեւէին: Լայփցիկի համալսարանի աստուածարանութեան դասախոս՝ Եոհան Պենետիկթ Գարփառվի (1639-1699) գլխաւորութեամբ, 0կրսթ Հերման Ֆրանքի համալսարանական գործունէութիւնը կը սահմանափակուէր: Եոհան Պենետիկթ Գարփառվ 0կրսթ Հերման Ֆրանքի ամենաըռուն ընդդիմադիրը կը դառնար եւ 1690-ին 0կրսթ Հերման Ֆրանք կը պարտաւորուէր որպէս Սարկաւագ էր Փուլրթ փոխարրուիլ:

Մինչ այդ Ֆիլիփ Ճագոպ Սփենը Տրեզարնի մէջ բազմաթիւ խոչընդուներ կը դիմագրաւէր: Սաքսոնիոյ Հոգեւորականութիւնը զինք օտարական կը նկատէր: Լայփցիկի եւ Ուիթընապրկի սաքսոն համալսարանները կ'ընդդիմանային անոր: Հոգեւոր կեանքի շինութեան համար անոր նախաձեռնած հանդիպումները կը քննաղատուէին: Խշանաւոր ձան ձորճ Բ. (1647-1691) անոր հովուական պատասխնատուութիւնը կը խափանէր զայն գինովութեամբ մեղադրելով: Այս բոլորէն ետք, երբ Պերլինի իշխանաւոր Ֆրետերիք Գ. (1688-1701), որ Փրուսիոյ Ֆրետերիք Ա. թագաւորը (1701-1713) պիտի դառնար, Ֆիլիփ Ճագոպ Սփենը Պերլին կը հրաւիրէր, ան անմիջապէս կ'երթար: Ան թէեւ չէր յաջողեր Ֆրետերիք Գ.-ը բարեպաշտ դարձնել, սակայն ցկեանս Պերլին կը մնար եւ իր կեանքին ամէնէն երջանիկ ու յաջող շրջանը կ'ապրէր:

Պերլինի մէջ Ֆիլիփ Ճագոպ Սփենը բարեպաշտութեան իր մեծագոյն ծառայութիւնը կը մատուցէր: Տրամարանական դպրոցի հետեւորդ, աստուածարանութեան

քննադատ, գերման օրէնսդրութեան հիմնադիր, համալսարանական ուսման համար գերմաներէնը լատիներէնով փոխարինող, կրօնական հանդուրժողութեան պաշտպան, կախարդութեան հակառակորդ եւ դատական դրութեան կողմէ չարչարանքի դործադրութեան ընդդիմադիր Քրիսթիան Թոմասիոս (1655-1728) աստուածաբաններուն հակառակութեան պատճառաւ 1690-ին Լայփցիկէն կը վատարուէր: Ան ուսանողներէն չատ սիրուած էր: Ան բարեպաշտ չէր, սակայն բարեպաշտներու հալածանքին կ'ընդդիմանար եւ Օկրսթ Հերման Ֆրաննքը կը պաշտպանէր Լայփցիկի իշխանութիւններուն դէմ: Ֆրեսերիք Գ., որ երկար ատենէ ի վեր իր տարածքին մէջ համալսարան կ'ուզէր հիմնել, Քրիսթիան Թոմասիոսի աքսորական ըլլալուն առիթը կ'օգտագործէր եւ Հալլէի համալսարանը կը հիմնէր 1694-ին, ուր զայն ցկեանս իրաւաբանութեան բաժնունքի պատասխանատու կը նշանակէր: Մինչ այդ Օկրսթ Հերման Ֆրաննք էր Փուլրիթ մէջ բարեպաշտութիւն կը քարոզէր եւ տեղւոյն հոգեւորականութեան ընդդիմութեան կը բախէր: Եռհան Պենետիկիթ Գարվոզի հալածանքը մինչեւ էր Փուլրիթ կը հասնէր եւ 1691-ին իշխանութիւններ Օկրսթ Հերման Ֆրաննքը կ'արտաքսէին: Ֆիլիփ Ճագով Սփենըրի բարեխօսութեամբ ան եւ բարեպաշտութեան համակրներ Հալլէի համալսարանին մէջ պաշտօնի եւ մերձակայ Գլաուչա գիւղին մէջ հովուութեան կը կոչուէին: Օկրսթ Հերման Ֆրաննք համալսարանին մէջ աստուածաբանութիւն կը դասախոսէր, թէեւ մինչեւ 1698 չէր կրնար պաշտօնապէս աստուածաբանութեան բաժնունքին անդամակցիլ, ան կը յաջողէր Հալլէն բարեպաշտութեան կեղրոններէն մին վերածել:

Օկրսթ Հերման Ֆրաննք կազմակերպչական մեծ կարողութիւններով օժտուած էր: Ան յաջող հովիւ եւ համալսարանի դասախոս էր ու դասարանին եւ ծուխին փորձառութիւններուն համադրումը չատ օգտակար կ'ըլլար ուսանողներուն: 1695-ին ան աղքատ երեխաներու դպրոց մը կը բանար, որուն կը յաջորդէին նախապատրաստական դպրոց մը եւ լատիներէնի դպրոց մը: Բարեպաշտութեան ոգիով կառավարուող այս կրթական հաստատութիւնները մեծ համբաւի կը տիրանային, ուր մինչեւ Օկրսթ Հերման Ֆրաննքի մահը 2200 երեխաներ կ'ուսանէին: Ան նաեւ որբանոց մը կը բանար, ուր մինչեւ իր մահը 134 երեխաներ կը պատապարուէին: Այս հաստատութիւնները, որոնցմէ ոմանք մինչեւ այսօր գոյութիւն ունին, զրեթէ առանց նիւթական միջոցներու կը հիմնադրուէին եւ Օկրսթ Հերման Ֆրաննք կը հաւատար, թէ Աստուած զանոնք կը հոգա՞՝ ի պատասխան կատարուած աղօթքներու: Գերմանիոյ ամէն կողմերէն նուէրներ կը հասնէին: Օկրսթ Հերման Ֆրաննք մեծապէս կը յաջողէր իր ծրագիրներուն չուտ համակիրներ խմբել եւ քարոզչութիւն կատարել: Նաեւ բազմաթիւ ազնուականներ այս հաստատութիւններուն հովանաւորները կը դառնային: 1710-ին Օկրսթ Հերման Ֆրաննքի ընկերոջ՝ Գարլ Հիլտըրանտ Գանսմիջէնի (1667-1719) հիմնած Աստուածաշալունչի Հիմնարկը եւս որոշ չափով իր ճիգերուն հետեւանքն էր: Աստուածաշալունչի Հիմնարկին նպատակն էր Աստուածաշալունչ հրատարակել եւ ջնջին դումարով վաճառել: Հիմնարկը երախտարժան գործ կը կատարէր:

Այս բոլոր նախաձեռնութիւններուն մէջ ամէնէն յատկանշականը կը հանդիսանայ առաքելութիւններու հանդէպ եռանդը: Երբ տակալին բողոքականութիւնը առաքելութիւն ծաւալելու պարտաւորութիւնը չէր զգար, Օկրսթ Հերման Ֆրաննք եւ գործակիցները այս մէկը կ'ընդդիմէին: 1706-ին, երբ Դանիոյ Ֆրետերիք Գ. (1699-1730) կը փափաքէր առաջին միահոնարները Հնդկաստան դրկել, ան Օկրսթ Հերման Ֆրաննքի Հալլէի ուսանողներէն Պարթուրմէոս Զիկրնապալկի (1683-1719) եւ Հենրիխ Փլութչոյի (1678-1747) կը դիմէր: 18-րդ դարուն Հալլէի համալսարանէն եւ անոր քոյր հաստատութիւններէն չուրջ 60 միսիոնարներ կը գործուղուէին: Ասոնցմէ ամէնէն նշա-

նաւորը կը հանդիսանար Քրիստոն Ֆրիտրիխ Շուլարց (1726-1798), որ 1750-էն մինչեւ մահը Հնդկաստանի մէջ կը ծառայէր եւ միսիոնարներու շարքին մէջ կարեւոր տեղ կը դրաւէր:

Բարեպաշտութեան ազգեցութիւնը ազդու կը դառնար գերման բարեկարգեալ եկեղեցիներուն մէջ եւս, ուր Թէոսոր Ունթէրէքրի (1635-1693) եւ Եռակիմ Նշանտէրի (1650?-1680) չնորհիւ բարեկարգեալ եւ լուտերական բարեպաշտական երեւոյթներ կը միահիւսուէին: Բարեպաշտութեան թթիւմորը նաեւ Նորվեկիա, Շուէտ եւ Դանիա կը հասնէր եւ կրօնական բարեպաշտական եռանդ կ'արթնցնէր. առաւել, Ամերիկա հաստատած բազմաթիւ գերման գաղթականներ կ'ազդուէին բարեպաշտական շարժումէն:

1727-ին, Օկրսթ Հերման Ֆրանքի մահուան ատեն, բարեպաշտութիւնը իր գաղթնակէտին կը հասնէր Գերմանիոյ մէջ: Ան թէեւ Ֆիլիփ Ճագոպ Սփենըրի եւ Օկրսթ Հերման Ֆրանքի կարողութեամբ օժտուած դէմքեր չէր ունենար, սակայն Եռան Ալպրեխթ Պենկէլի (1687-1752) ղեկավարութեամբ կը շարունակուէր տարածուիլ Գերմանիոյ եւ յատկապէս Ուորթըմպըրի մէջ: Բարեպաշտութիւնը իր անջնջելի կնիքը կը թողուր Գերմանիոյ վրայ եւ քահանայագործութեան, քարոզիսութեան ու նոր սերունդի քրիստոնէական դաստիարակութեան մարզերուն մէջ հոգեւոր արթնութիւն կը բերէր: Առաւել, աշխարհականներուն եկեղեցւոյ կեանքին բերած մասնակցութիւնը կ'աճեցնէր եւ Աստուածաշունչի ծանօթութիւնը կը խորացնէր: Սակայն, միաժամանակ բարեպաշտութեան ժիստական երեսները կը հանդիսանային Աստուածոյ արքայութեան մուտքի համար մղուող պարտադրեալ պայքարը, աշխարհին հանդէպ անբարեացակամ կեցուածքը, մանուկներու խաղին հանդէպ անհանդուրժողութիւնը, ոչ-բարեպաշտները անկրօն համարելը եւ կրօնքի մտաւորական երեսին հանդէպ անտարբերութիւնը: Թէեւ բարեպաշտութիւնը մտաւորական առաջնորդներ չէր ունենար, սակայն բողոքական Գերմանիոյ կրօնական կեանքի գարթօնքին մեծ նպաստ կը բերէր:

Բարեպաշտութեան բերած նպաստներէն մին էր Կոթֆրայտ Առնոլտի (1666-1714) կողմէ եկեղեցւոյ պատմութեան մեկնութիւնը: Ան Ֆիլիփ Ճագոպ Սփենըրի ընկերն էր եւ կարծ ժամանակ Կիէսէնի մէջ դասաւանդելիք ետք, Քուէտլինպըրկի մէջ ինքզինք կը մեկուսացնէր: Բարեկարգութենէն սկսեալ եկեղեցւոյ պատմութիւնը վիճայարոյց կը դառնար եւ այն հասարակաց կարծիքը կը ամիրէր, թէ իրենց ժամանակակից եկեղեցւոյ կողմէ մերժուած դէմքերը միշտ մերժուած մնալու դատապարտուած էին: 1699-ին հեղինակած իր Unparteiische Kirchen und Ketzer-Historie երկով Կոթֆրայտ Առնոլտ նոր գաղափար կը ներմուծէր: Ան քննականօրէն կարդալէ ետք եկեղեցւոյ պատմութիւնը, կ'եղրակացնէր, թէ ոչ ոք հերետիկոս էր այն հրման վրայ, որ իր ժամանակակիցները զինք հերետիկոս կը համարէին: Ան պէտք էր անկողմնակալօրէն դատապարտուէր: Նոյնիսկ հերետիկոս նկատուածներուն տեսակէտները քրիստոնէական մտածողութեան մէջ իրենց արժանի տեղը ունէին: Սակայն, Կոթֆրայտ Առնոլտ այս սկզբունքը ծայրայեղութեան կը տանէր եւ կ'ըսէր, թէ հերետիկոսները ուղղափառներէն աւելի մօտ էին ճշմարտութեան: Ցամենայնդէպս, իր նպաստը անուրանալի է եկեղեցւոյ պատմութեան քննական մօտեցման մարզին մէջ:

"A History of The Christian Church"

N. Y. (1985) - Williston Walker

Թրգմ.՝ ՆԱՐԵԿ Ա.ՐԲ. Ա.ԼԵԿՄԵԶԵՍՆ

(Շաբ. 100)

## ՀՈԳԵՒԹՈՐ ԳԵՂԱՄՐՈՒԵՍՏ

### ՕՐՀՆԵՐԳ՝ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սուրբ Ներսէս Շնորհալիի կամքը այսպէս էր, եթէ հնարաւոր ըլլար, ոչ ոք աշխարհաբար լեզուով պէտք չէր խօսեր, այլ միայն Գրաբար, ոչ գինարբութերու եւ ոչ ալ այլ ուրախութիւններու ժամանակ: Այդ պատճառով, ան երգեր գրեց ու սորվեցուց անոնց, որոնք բերդապահներ էին, որպէսզի դատարկահունչ ձայններու փոխարէն ըստ այն, որուն որպէս սկիզբ Գալիքի սաղմոսն է: «Գիշերը անունդ յիշեցի, Տէ՛ր» եւ «Զարքիր, փառք իմ»», որ ներկայիս Գիշերային ժամերգութեան ընթացքին կ'երգուին մեր եկեղեցիներէն ներս (*Կիրակոս Գանձակեցի, Հայոց Պատմութիւն*, էջ 93):

Տարփոտ գիշեր մըն էր գարնան,  
Երբ զարմանեն իմացար  
Վեհարանիդ դարպասէն,  
Ով Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապես,  
Թէ բարձրանիստ պարիսպներէն  
Հոռմլլայ միջնաբերդին,  
Բերդապահներդ հեշտասէր,  
Կ'արտարերեն խօսեր յայրատ,  
Ա'ներգեն երգեր աշխարհիկ'  
Կենսագուարն զեղխութեամբ,  
Գիշերային ուշ ժամներէն  
Մինչեւ կանուխ արեւծագ,  
Եւ ցոյց կու տան վերաբերում անպարկեցտ՝  
Հանդէպ Փրկչի յորդորներուն երկնառաֆ...:

Զաստեցիր բերդապահներդ թէեւ դուն,  
Սակայն կրցար ցոյց տալ անոնց,  
Բարոյագէտ հովուապեսի իմաստութեամբ,  
Ճանապարհը նշմարիտ  
Սրբակենցաղ վարմունքի:  
Ու շունչիդ տակ դարձան անոնք  
Հայորդիներ հաւատաւոր,  
Որոնք փոխան փուն ու դատարկ երգերու,  
Քու սրբաշունչ յօրինումներդ ցնծերգեցին՝  
Խնկարութեան ապրումներով տոգորուած...

Եւ յիշեցին Տիրոց անունն անմահական  
Լոռութեան մէջ գիշերական,  
Գովերգելով գործերն արդար ու բարի՝  
Ամենազօր Սրարողին տիեզերքի...:

Բարձրակառոյց պարիսպներէն քու բերդիդ՝  
Շնորհալի Հայրապետ,  
Բերդապահներդ յորդ ցնծութեամբ երգելով  
Սաղմոսաշունչ երգերը քու հոգեթով՝  
Մ'եղքերն իրենց Քաւեցին:  
Ու երկնալոյս շողերուն տակ աստղերու,  
Քու Սուրբ երգիդ երկնաբարբառ զօրութեամբ,  
Դրուատեցին գոյութիւնը Աստուծոյ՝  
Հոգեհաղորդ ջերմութեամբ,  
Որուն հանդէպ անդրդուի հաւատքով,  
Յայտնեցին սէր ու գորով  
Եւ ոգեշունչ ակնածանք...:

Տե՛ս, անոնք են բերդապահներդ քու հզօր,  
Որ երգելով «Յիշեցուժի գիշերի  
Զանուժ քո, Տէր», երգը սիրուն ու Քաղցրալուր,  
Ո՛չ թէ դարձան միայն տիպար բարեպաշտմեր,  
Եղան նաև հայորդիներ Քաջարի՝  
Հայոց լեզուի սուրբ խորհուրդով դրոշմուած...:

Եւ մենք եւս մինչեւ այսօր,  
Շնորհալի Հայրապետ,  
Կ'երգենք ամէն կիրակի  
Օրհնաբարբառ երգը քու:  
Կ'երգենք երգը քու սրբալար,  
Որ դարերու անդամայոյ խորերէն  
Կը կարկաչէ անբջալուր դաշնութեամբ,  
Համակելով սրտերը մեր՝  
Աստուծային հոգենորով խայտանքով:

Քու բերդապահ զինուորներուդ նման մենք ալ,  
Շնորհալի Հայրապետ,  
Կը վերանանք երգիդ զօրեղ նեգործութեամբ,  
Որուն դիւրեղ եւ խանդաբորբ բառերով,  
Մենք կը բանանք վիշտերը մեր կարեվէր՝  
Բազումողորմ խղճմտանքին երկնային...  
Թողյաւիտեան անմար մնայ երգը քու,  
Որ կարենանք ամէն գիշեր  
Անոր ներհուն բառերով՝  
Կենսագործել յիշատակը Քու պանծալի...:

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵՍՆ

## ՎԵՐԹԵՐՈՎՈՌ ԲԺՇԿՈՒԵՑԱՅ

Վէրֆերդ՝ հիւանդագին մանրէներս բոլոր  
 իր մէջ ներծծեց  
 Յաւս, բառերուս թումային շինուկը  
 Ատելութիւնս՝ վերածեց սիրոյ  
 Ազատ պարուրեց  
 Ընդարմացած՝ փարատեցան ցաւերս  
 Քու վէրֆերովդ ես բժշկուեցայ  
 Ու ծնկեցի ես Բժշկապետիդ առջեւ յանձնուած  
 Երբ փորձեցի մտնել դատարկ գերեզմանդ  
 Քարը գլորուած էր արդէն  
 Ուրախութեամբ դուրս եկայ քեզ կրկին գտած  
 Օծուած բալասանուած կնդրուկով  
 Զմոսուած բերկրութեան իւղով  
 Լուսազգեստ թերմկած հագուստներով  
 Ուրիշ էր ամէն բան. . .  
 Դուրս եկայ  
 Աղաւնեպատ կեանքի ծառի շուքին թառելու  
 Կեանքի ծառի պարտիզպանին հետ յօրինած  
 Կեանքի նոր երգին կրկներգը երգելու  
 Թեեւ ես զԱյն չէի տեսներ՝ Ան զիս կը տեսնէր  
 Եւ սերովբէներուն հետ պարտէզի դռները բոլոր  
 Բոնած էր ամուր  
 Որ ներս չանցնի շշուկ մը կամ բզզոց եկած նահիթէն:

## ԲԺՇԿՈՒԱԾ ԱԶԳԵՐ

Կը բերկրիմ ներկայութեան մէջ  
 Առաւօտեան պայծառ Աստղին  
 Հոգիս կը ծաղկի իր աղջամուղչէն  
 Իմ եւ Քու ամբողջութեան մէջ  
 Ուր նառագայթում եւ շող կայ  
 Սիրոյ առեղծուած  
 Կը դիտեմ կատարէն Կեանքի ծառին

Կը տեսնեմ թէ որքան ցաւ կայ հոն եւ փնտռութ' հողին մէջ  
 Կը բխի գահէն նառագայթող  
 Կենսատու ջուրի բիւրեղեայ գետը՝  
 Ազգերու բժշկութեան տերեւթերուն  
 Պտղատու ծառը ոռոգող  
 Ու այդ որոգուած սէրը կը յականեխէ աշխարհը  
 Ազգեր բժշկուած են՝ մահ գոյութիւն չունի  
 Ոչ ալ արտասութ' եւ պատերազմներ  
 Արեւի լոյսի կարիք չկայ՝ ալ գիշեր գոյութիւն չունի  
 Շողեր կու տայ Ան իր սրտէն երկինքներուն  
 Արարիչը արեգակը  
 Առաւօտ լուսն  
 Յօրինողը մեր բոլոր երազներուն...:

ՄԱՐԻԱՆԱ. ՊԵՐԹԻԶԼԵՍՆ-ՂԱԶԱՐԵՍՆ



## ԱՐԽԻԿԱՆԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ

Բ.

### ԳՈՅԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

**Բ)** Հաղորդութիւնը Ցիսուս Քրիստոսի մեր մէջ տարրանալու եւ մարմնանալու իրականութիւնը խորհրդանշող առարկայական հաւաստիքն է, ընդ տեսակաւ հացի եւ գինւոյ: Միաժամանակ բոլոր հաւատացեալները մէկ ընտանիքի վերածելու սահմանուած միութեան զօդակապն է, ինչպէս է վայելքի սեղանը տան բոլոր անդամներուն համար:

Հաղորդութիւնն ալ իր արմատն ու բունն ունի խորունկցած Հին տնտեսութեան հիմին մէջ, սկսեալ իսրայէլի ազատութեան առաջին վայրկեանէն յորում ընտրեալ ցեղը ազատուելով հանդերձ Փարաւոնի գերութենէն պիտի ազատուէր նաեւ դասակարգային խարոցին ճնշումներէն՝ ներքին բռնակալութիւններէն:

Այս նոր կեանքն սկսելու համար անոնց նոր թագաւորը՝ ազատարարը՝ Եհովան, յանձնարարեց ամբողջ ազգին մէկ սեղան միեւնոյն կերակուրով, այն էր խորոված գառնուկ, անխմոր բաղարջ եւ լեղի խոտ: Այս միօրինակ ընթրիքը բովանդակ ազգին անհատական ու ընտանեկան եւ տոհմային խտրականութիւնը ջնջելով, զանոնք կը վերածէր մէկ ընտանիքի, իբր թէ ամէնքը բոլորուած ըլլային մեծ, միակտուր սեղանի շուրջ, նախազահութեամբ մէկ Հօր, որ այլեւս զանոնք պիտի ճանչնար իբրեւ մէկ տուն՝ «Խարայէլի Տունը» որուն անդամները այլեւս Փարաւոննեան ծանր հարուածներով ջախճախուելու եւ իրերատեաց նախանձով մէկզմէկէ բաժնուելու փոխարէն, Եհովայի փափկախնամ, հայրական հոգածութեան տակ պիտի կազմէին սիրալիր, միաբան, միաձոյլ ընտանիք, մէկ ճակատագիրով, մէկ իտէլով եւ մէկ վիճակով:

Բովանդակ ազգի իրերամերժ անհատները ի վայրկեան ժամանակի ձուլող միացնող այդ սեղանը՝ իր խորհրդաւոր կերակուրներով, կը ներկայացնէր այն Ամենակարող ձեռքը որ եկած էր զանոնք ազատելու, միացնելու եւ վերադարձնելու իրենց հայրենիքը:

Խսրայէլի այս յանկարծական գոյափոխութիւնը տեղի ունեցաւ նոյնչափ գոյափոխեալ ու խորհրդաւորուած սեղանով՝ որով միակ մատուցուածներն էին.-

1) Գառնուկ՝ սրբուած ու նուիրականացած՝ Եհովային հրամանաւ: Անոր արիւնը խաչանիշ դրոշմամբ ներկելով դրան սեմն ու դրան դիքը՝ կ'ըլլար ազդանիշը թէ՝ այդ տունը Եհովային կը պատկանի եւ հոն Անոր զաւակները կը բնակին: Անտարակոյս հետեւեալ օրը Եգիպտացիք տեսան այդ նշանը եւ անոր վերագրեցին դադանիքն իսրայէլի ապահովութեան, բայց չէին հասկնար նշանակութիւնը: Գառնուկին ոսկոր ները կոտրտելու չէին, այլ փորոտիքին եւ մնացորդին հետ պէտք էր այրուէին կրակով:

Այս էր նախագուշակ ստուերն մշտնջենական մէկ Զոհին՝ Քրիստոսի եւ անոր միջնորդական-քաւչարար անսպառ ողջակիզումին:

2) Անխմոր հացը, որ կը նշանակէր Յիսուս Քրիստոսի մարմինն կուսածին անսերմնաւոր յղացմամբ: Անխմոր հացը կը լուսաբանէ Աստուծոյ ժողովուրդին անապական, մաքուր, կոյս սննդաւութիւնը, գերծ ամէն օտարամուտ, նորեկ, խմորիչ... այլասերիչ ազդեցութիւններէ, որոնք միտքը կը խաթարեն եւ հոգին կը տկարացնեն, եւ հաւատքը կը պղտորեն:

(Աւագ այսօր Աստուծոյ տան սեղաններէն, Անոր սպասաւորներու ձեռքովը ի՞նչ խմորեալ, թունաւոր... անհաւատական սնունդներ կը մատակարարուին Աստուծոյ սոված զաւակներուն):

3) Լեղի խոտը, որ ճաշակելեաց ինքնին անախորժ՝ բայց մարսեցուցիչ յատկութեամբ օգտակար, կը նշանակէր Աստուծոյ օրէնքներուն մեր բնագդական քիմքին ու մարմնաւոր ախորժակներուն դառն ազդեցութիւնը՝ բայց մեր կեանքին շահեկան ներգործութիւնը:

(Ո՞՛, այսօր քանի՛ քանի՛ սեղանապետներ, փառայեղ մակդիրներով պսակաւոր Աստուծոյ պաշտօնեաներ, մեր կիրքերուն ու մոլորեալ մտաց ախորժելի մահառիթ ու քաղցրահամ օշարակներ կը մատուցանեն, փոխանակ աստուծային յանդիմանութիւններուն):

Ինքնայայտ է որ՝ Եհովան նիւթական այս հասարակ կերակուրներուն տալով հանգամանքային նուիրականութիւն, սրբադրոշմ խորհրդաւորութիւն, սկիզբ դրաւ մարդկային ազգին հետ առարկայական միջոցներով հաղորդակցելու դրութեանը եւ հետզհետէ աստիճանաբար զարգացուց եւ կատարելագործեց յանձին Յիսուս Քրիստոսի եւ Անոր սահմանաղբութիւններով:

Եհովան իր ժողովուրդին մէջ անոնց հրաշիւք փրկութեան եւ մէկ ընտանիքի ձուլելու իրականութիւնը յաւէտ նորոգելու եւ ամրապնդելու համար յընթացս անոնց ուղեւորութեան պարզեւեց երկնատեղաց հաց-մանանան, որ քառասուն տարի ժողովուրդը պահեց բացարձակ հաւասարութեան մակարդակին վրայ կեանքի ամէն մէկ մասովը դնելով զանոնք ընտանեկան միօրինակ կացութեան մէջ:

Ճիշդ է թէ՛ վարչական դիւրութեան համար անխառն պահեց տասներկու ցեղերուն ազգագրական ճիւղաւորումը եւ բանաւոր համարեց տարանջատ պահել քահանայական ու թագաւորական ցեղերու շարունակութիւնը, մինչեւ որ անոնց միաւորեալ մէկ գերդաստանէն Յովակիմի եւ Աննայի ամուսնութենէն յանձին Սուրբ Կոյս Մարիամի յառաջ բերէր յաւիտենական թագաւորն ու Քահանան Յիսուս Քրիստոս: Բայց այդ անջատ երկոտասան ցեղերու միաւորութիւնը Ծորդեց տասներկու նկանակներով՝ Առաջաւորութեան Սուրբ հացերով, որոնցմով Աստուծոյ առջեւ, Անոր սեղանին վրայ ցեղերը կը պահէին իրենց անբաժան միութիւնը:

Այս հանգամանքային գոյափոխութեամբ նուիրականացած է հացերը այլեւս անմատչելի գոլով հասարակ ժողովրդեան՝ կերակուրն էին Սուրբ ցեղին, Ղեւտացւոց, որ իր մասնայատուկ պաշտօնով միացման օղակը կը կազմէր ընդ մէջ Աստուծոյ եւ իր ժողովուրդին հոգեւոր հաղորդակցութեան:

Հին տնտեսութեան մէջ Աստուծոյ դիրքը իր ժողովուրդին հետ որքան որ կը կրէր հայրական հոգածութեան բնոյթը՝ միաժամանակ նա կը կենար անհպելի, կը ներկայանար կրակով, անմիջական դատարանի պատուհասներով:

Եհովայի դաստիարակչութեան մեթուն է, այս այն ժողովուրդին՝ որ եղիպ-

**տական գերութեան ներքեւ կարծրացած ու անոնց վարքերուն ու բնաւորութեան ընտելացած էին եւ բնականաբար չէին կրնար յարմարիլ Աստուծոյ գծած ուղիին ու նպատակին:**

**Եհովան՝ իր ժողովուրդէն եզիպտական բարքերը օրէնքի խստութեամբ թօթափելով հանդերձ՝ աստուածպաշտութեան ամէնէն թանձրացեալ մանկավարժական եղանակներով կը կրթէր զանոնք կրօնական մարզին մէջ: Ու ինչպէս կը տեսնենք, աստիճանաբար յաջորդող մարզարէներով իրարու ետեւէն բացաւ վարագոյրներու շարքը եւ ընդ աղօսու ցուցուց թանձրացեալ պաշտամունքներուն հոգեւոր նշանակութիւնը եւ նօսրացած ծածկոցին ետեւը պատրաստ սպասող նոր Ուխտը, յորում օրէնքը պիտի գոյափոխուէր չնորհքի՝ խստութիւնը՝ մտերմական առնչութեան՝ եւ հեռաւոր անմատչելի մեկուսութիւնը՝ ի սիրտ մարդոց բնակութեան:**

**Այս աշխարհացունց փոփոխութեան գործադիրը Յիսուս Քրիստոս էր նախասահմանուած, որ ո՛չ թէ միայն մէկ ազգ մը՝ այլ բովանդակ մարդկութիւնը եղբայրացնելու իտէալով ինքինքը հոչակեց յօդաւորումի միակ եզական կապը, մարդիկ իրարու եւ Աստուած մարդոց հետ յօդորդելու ամենակարող գորութիւնը, Ան՝ որ ի մարդ գոյափոխեալ աստուածութեամբ պիտի հրաշագործէր եւ մարդոց ալ գոյափոխութիւնը յաստուածս (ՅՀ 10.34):**

**Այս յոյժ վերացական գաղափարը ուղղակի հակադրութիւն պիտի սեպուէր Հին տնտեսութեան նիւթականացած աստուածպաշտութեան, եթէ զարերու ընթացքին՝ կանխաձայնութիւններով եւ լուրջ խոստումներով եւ Աստուծոյ մարդոց ալ ապրած կեանքով մարդոց միտքերը պատրաստուած չըլլային: Այսու ամենայիւ, այսքան դասընթացքներէ անցած ժողովուրդին դեռ անհասկնալի կը մնային այն կրկնուած ու շեշտուածը որով Քրիստոս կը բացագանչէր ի լուր ամենեցուն թէ՝ «իմ մարմինս նշմարիտ կերակուր է եւ իմ արիւնս նշմարիտ ըմպելի է. ու եթէ Որդույ մարդոյ մարմինը չուտեկ եւ արիւնը չի խմէք, չեք ունենար կեանքը ձեր անձերուն մէջ եւ թէ՝ «Ես եմ յերկնից իշեալ նշմարիտ հացը (անմահական մանանան) թէ, որ մէկը աս հացէն ուտէ, յաւիտեան պիտի ապրի...» (ՅՀ 6.32-59):**

**Քրիստոս իր միտքը պարզած էր փոխարերական բացատրութիւններով եւ հրէից ծանօթ կրօնական ու մարդարէական մէջրերումներով ու բաղդատութիւններով:**

**Յովհաննէս Մկրտիչ իր վկայութեամբ շեշտեց թէ՝ Ան էր Աստուծոյ Գառը որ պիտի վերցնէր աշխարհի մեղքը: Հրեայք քաջ գիտէին Զատկական Գառին փրկարար նշանակութիւնը, զոր իրենք հանդիսապէս կը տօնէին ամէն տարի: Անոնք լաւ գիտէին նաեւ մեղքի քաւութեան ու բարձման համար հանապազօր մատուցուած զոհերուն կանոնադրութիւնը զոր միշտ կը գործադրէին առանց անգամ մը իսկ զգալու խոճի հանգստութիւն եւ անմեղութեան զիտակցութիւն: Հետեւարար պէտք էին հետաքրրքրութիւն եւ ցանկալ ներկայացուած երկնառապ Հացին, ու տիեզերական ու մշտնջենական զոհ Գառնուկին ճաշակման եւ անոր իրական չնորհքներուն:**

**Քրիստոս աշխարհի ցուցադրած էր իր կեանքը, նկարագիրն ու կարողութիւնները: Յայտարարած էր թէ՝ ինքը յօժար է մարդոց մէջ բնակելու, անոնց մէջ ապրելու եւ գործելու: Նաեւ թէ ինքը պատրաստ է բովանդակ մարդկութեան բնակարանն ըլլալու, իբրեւ անոնց սրբարանը, հրաշակերտ տաճարը՝ յորում բնակողները պիտի լինէին միշտ սուրբ, աստուածատես եւ ապահով (ՅՀ 2. 21; Ելք 33. 11):**

**Այս յայտարարութեան պարզագոյն նշանակութիւնը սա է թէ՝ Քրիստոս այնպիսի էակ մըն է որ կրնայ բոլորին մէջ բնակիլ, տարրանալ եւ իւրաքանչիւրով մարմնաւորել եւ զանոնք գոյափոխել մէջմէկ քրիստոսներու:**

**Կեանքը կրնայ տարրանալ գործարանաւոր մարմիններու մէջ եւ զանոնք վերածել**

**մէմէկ կենսաւորներու, ու իրարմէ անհունապէս անջատ ու զանագան կենսաւորները դնել կենսունակութեան նոյն պայմաններու մէջ եւ ամբողջին համար բնութեան մէջ տալ մէկ դասակարգ եւ տեղ: Ո՞չ ապաքէն Քրիստոս կեանք է ու իրմով կենսաւորուածները անթիւ զանազանութիւններով հանդերձ կը պատկանին մէկ դասակարգի եւ են կենսաւորներ Քրիստոսով:**

**Լոյսը կը ցոլանայ առարկայէ եւ զայն տեսանելի, զգալի կ'ընէ ամէն կենդանիի որ առ այդ ունի առողջ գործարան՝ աչք եւ լմբրոնելու միտք:**

**Մսունդի տարրերը սեղի, տեսակի, դասակարգի խնդիրը չգիտնալով կը մտնեն ստացողին մարմնոյն մէջ եւ յառաջ կը բերեն աճում եւ բեղմնաւորութիւն: Ո՞չ ապաքէն Քրիստոս ճշմարիտ կերակուր է անոնց՝ որ հոգեւոր կեանք ունին եւ կը զգան քաղցն ու ծարաւն այն հոգեւոր սնունդին:**

**Քրիստոս Յիսուս իր մեր մէջ բնակիլը տարրանալը կը դնէ բացարձակ պայման մեր հոգեւոր կենսունակութեան, որպէսզի ինքն մեր մէջ յառաջ բերէ իրեն համանման գոյացութիւն, զմեզ էափոխէ յար եւ նման իր բնաւորութեան, իր խոհալին եւ իր գործունէկութեան: Որովհետեւ միայն ասով է որ պիտի կարենայ կատարել մարդոց փրկութիւնը: Ու արդէն ի՞նչ է փրկութիւնը, եթէ ոչ՝ ազատումն բնագդական մարդութենէ եւ գոյափոխումն հոգեկան մարդութեան, ի դէպ Աստուծոյ:**

**Այս աշխարհիս գիտունները, փիլիսոփանները... կրնան իրենց գաղափարները տարածել մարդոց միտքին ու սիրտին մէջ: Կրնան իրենց ծանօթութիւնները, համոզումները, մինչեւ իսկ իրենց խէտալը փոխանցել մարդոց մէջ: Բայց, չեն կրնար իրենց կարողութիւններն ու նկարագիրը՝ մանաւանդ չնորդներ ներարկել մարդոց այլազան խառնուածքին ու տկարութիւններուն մէջ: Զեն ալ համարձակած ընել յայտարարութիւն մը նման Քրիստոսին եւ խոստանալ մարդիկ գոյափոխել իրենց էականութեան: Ո՞չ մէկ կրօնքի հետեւող ծայրագոյն բարեվպաշտ մը համարձակած է ըսել, «Ես չեմ որ կ'ապրիմ՝ այլ այսինչ փիլիսոփան, մարգարէն է որ կը բնակի, կ'ապրի իմ մէջս»: Մինչդեռ Պօղոս լուրջ եւ պարզ խօսքով նկատի առնելով իր մէջ տեղի ունեցած կեանքի մեծ յեղաշրջումը, գիտակցութիւն կ'ունենայ թէ՝ ալ ինք չէ՝ որ կ'ապրի՝ այլ Քրիստոս իր մէջ:**

**Ուրիշ կրօնքներու հիմնադիրները կրնան յաջողի շատ խորունկ եւ տարածական ազդեցութիւն սփուել մարդոց խոչոր մէկ զանգուածին վրայ: Սակայն, այս յաջողութիւնը ինքնին կատարեալ չէ եւ ոչ բաւարար՝ քանի որ...**

**1) Բացարձակ չէ: Մարդ մը կրնայ Պուտտային հետեւիլ, սակայն ընդունիլ նաեւ ուրիշ կրօնքներու ալ կարգ մը դրութիւնները: Փիլիսոփայութիւն մը կրնայ տարածուիլ մարդոց, երկրի մէկ մասին վրայ եւ յարմարիլ անոնց ցեղային եւ կիմայական պայմաններուն, կրնայ մասնակի գոհացում տալ մարդոց հոգեկան իղձերուն, բայց չունին երաշխաւորեալ խոստումներ բովանդակ մարդկութեան:**

**(Մինչ Քրիստոսի ազդեցութիւնը տիեզերական է տեսանելի եւ անտեսանելի էակներու վրայ):**

**2) Յաւիտենական չէ: Դարերէ ի վեր քանի՛ փիլիսոփայութիւններ՝ բարոյական եւ մտաւորական՝ եկան ու անցան, կամ սրբագրուեցան: Զի կրցան տոկալ մարդկային քննադատութիւններուն եւ չի կրցան զարգանալ մարդոց մտաւոր աճման ու յառաջ դիմութիւններուն: Ուստի ետ մնացին կամ մեռան: (Մինչ Քրիստոս կը խոստանայ յաւիտեանս իրեններուն հետ ըլլալ ու Անոր սկզբունքները մեր հոգիներուն հետ կրնան փոխանցուիլ անդրշիրիմեան կեանքին մէջ):**

**3) Գոյափոխիչ չէ: Փիլիսոփայութիւններ, բարոյախօսութիւններ կրնան փոխել եւ ազնուացնել աստիճան մը՝ մարդոց կենցաղափարութիւնը եւ ընկերային կարգերը,**

կրթել ու զարգացնել միտքն ու սիրտը: Սակայն, անոնց ամէնքն ալ կը մշակեն ինչ որ կայ մարդուն մէջ: Զեն կրնար գերբնական նորութիւն մը մուծանել իմաստն: Անոնք երեւան կը բերեն՝ մտաւորական կարողութեանց նորանոր ձիրքեր եւ մարդու ծանօթացնել իր ինքնութեան: Բայց, չեն կարող գերմարդկային յայտնութիւններ ընել եւ մարդոց հոգեկան-գեր-ֆիզիքական պահանջներուն պատասխան մը՝ եւ կարօտութեանց՝ գոգացում տալ: Զե՞ն կարող թափանցել մարդուն հոգիին մէջ կամ հոգին վերացնել թացարձակին սահմանները չեն զօրեր մարդուն իմացականութիւնը կապել միացնել գերբնական խտէալի մը եւ ոյժի մը հետ: Զեն բաւեր մարդուն հոգեկան կեանքին աճում եւ սնունդ հայթայթելու, մէկ խօսքով չեն կրնար մարդու կենդանական դասակարգէն, մահկանացու էականութենէն հանել, գոյափոխել հոգեւոր գիտակցութեան մը եւ ապրումի մը:

(Մինչ Քրիստոս կը ներկայանայ իբրեւ թացարձակ ներգործութիւն մը բովանդակ մարդկութեան):

Քրիստոս յաւիտենական, անխախտ սկզբունքներով հանդերձ՝ իր անձը կը տրամադրէ համօրէն մարդկութեան իբրեւ մնայուն վարդապետ, առաջնորդ եւ փրկիչ, յարմար ու կարող ամէն ժամանակի համար եւ իրենները կ'ընէ գուգընթացարար յարաճուն բոլոր յառաջդիմութեանց հետ: Իրենները յաւէտ գոյափոխելով կը կատարելացնէ ու կը պատշաճեցնէ գիտութեան եւ աստուածային անվախճան յայտնութիւններուն:

Քրիստոս իբրեւ առաքեալ յերկնից՝ իբրեւ հունաւոր Ներկայացուցիչ թացարձակին՝ իւր իմանալի անրաժան ներկայութեամբը կ'ապրի մեր մէջ անձնապէս եւ աստիճանական վերածումով զմեզ կը գոյափոխէ հոգեւոր Սուրբ Էակներու, երկրիս վրայ առժամապէս ապրող երկնային արարածներու, որք աշխարհս չէնցնելու համար պէտք ունէինք մարմինի եւ հոգիի: Պէտք էր որ ստեղծուած ըլլայինք կենդանական եւ հոգեւոր գոյացութեամբ:

Որպէս այս տեսակ էակներ գիտակցութիւն ունինք երեք որոշ տկարութիւններու ի մեզ, որք անյեղի են եւ բացայատ:

1) Կը զգանք ու գիտենք որ մեր ֆիզիքական կեանքի պայմանները եւ բնագդական ուժերը հարկաւորաբար կը ճնշեն մեր էութեան վրայ եւ մեր մտաւոր եւ իմացական կարողութիւնները կը գերելարեն ի սպաս եւ ի գոհացումն մեր կենդանական պահանջներուն:

2) Կը զգանք եւ գիտենք որ մեր մէջ գոյութիւն ունին գերբնական բաղձանքներ՝ ծանօթութիւն եւ յարաբերութիւն թացարձակին հետ եւ կեանքի համապատասխան մեր իմացական էականութեան նաեւ ապրո՛ւմ յաւիտեանս:

3) Կը զգանք ու գիտենք թէ մենք ինքնին անկարող ենք մեր իմացականութիւնը ձերբագատել բնագդական կաշկանդումներէն, ու մեր բոլոր հետախուզութիւններով եւ որոնումներով չենք կարող ծանօթանալ սկզբնապատճառ էակին հետ, յարաբերութիւն ստեղծել Անոր հետ ու ապահովութիւն ստանալ մեր անմահութեան ձգտումներուն յաջողութեանը:

Այս երեք տկարութեանց դարման մատուցած է մեզի աստուածային յայտնութիւնը յընթաց ժամանակի եւ կատարելացած Յիսուս Քրիստոսով: Նա եկած է որոշ ապացույցներով:-

1) Ծանօթացնելու մեզ մեր փնտուած Աստուծոյն հետ եւ իրմով մեզ յարաբերութեան դնել Անոր հետ:

2) Գոյափոխելու գմեղ յոռեշրջեալ վիճակէն, ձերբազատելով բնագդական տիրապետութիւններէ եւ վերածելու հոգեւոր էակներու, մարմինը տրամադրելով իմացականի թռիչներուն եւ գործունէութեան:

Քրիստոս մեր գիտութիւնը զարգացնելու, մեր յարաբերութիւնը մշակելու եւ մեր գոյափոխութիւնը կատարելագործելու համար պէտք տեսած է իր անբաժան ներկայութիւնը ի մեզ:

Մենք ալ մեր կարգին այսքան երկարատեւ ուղեւորութեան մէջ չէինք կրնար շարունակել կեանքի ճամբան եթէ ուղեցոյց մը մեզի մատնանշէր ճամբան եւ հեռանար: Մենք պէտք ունինք անբաժան Առաջնորդի մը: Մեզի բաւական չէ միայն ունենալ դասագիրքեր, այլև ուսուցիչ մը որ աստիճանաբար աւանդէ եւ վարժեցնէ:

Եթէ կիսավայրենի ժողովուրդի մը դրկուին տպարանի, հեռածայնի եւ քաղաքակիրթ աշխարհի բոլոր մեքենաները, ի՞նչ օգուտ եթէ անոնց հետ չերթան մարդիկ ու չվարժեցնեն ու չգոյափոխեն անոնց կեանքը, որով մեծն ու փոքրն ամէնքը վայելեն մեքենաներուն բարիքը եւ ամէնքը դառնան բարեկիրթ համայնք մը:

Յիսուս Քրիստոս այս գերը կատարած է, մեզի դրկած չէ յայտնութիւն ու փրկութիւն, այլ բերած է: Բերած ու մեկնած չէ, այլ մեր մէջը կենալ որոշած է, իր ներկայութեամբը շարունակելու յայտնութեան դասընթացքը եւ կատարելագործելու փրկութիւնը, որպէսզի իրօք գոյափոխունք եւ ըլլանք երկնայարմար էակներ եւ երկարդունդի երեսին վրայ գտնուին ո՛չ թէ իրերատեաց ազգերով մարդկութիւն մը, այլ Քրիստոսով դաստիարակուածներու, փրկեալներու գոյափոխեալ եղբայրութիւն մը:

Ինքնայայտ է թէ՝ այսպէս գոյափոխուած անհատներն են որ ցեղի, սեռի եւ դասակարգի խտրականութիւններէ վեր, գերազոյն խտէալով մը եւ կեանքով համայնք մը կազմուած հոգեկան հաղորդակցութեամբ այնքան մօտ եւ նման են իրարութիւնու Քրիստոսով՝ ինչպէս կշիռքով ու մեծութեամբ, գոյնով ու ձեւով իրարմէ տարրեր բիւրաւոր մոմեր միեւնոյնն են իրենց լուցեալ պատրոյգներու դողդոջուն լոյսերով:

Քրիստոս՝ մեր մէջ իր գոյափոխիչ տարրացումն եւ բովանդակ մարդկութիւնը այս նոյնութեանը վերածելու իրականութիւնը հաստատող խոստումը ուղեց միշտ կրկնել ի յաւերժացումն: Այս վերացական ճշմարտութեան գործնականութիւնը թանձրացեալ եղանակաւ եւ րմբունելի միջոցաւ գործադրելու նպատակաւ կերպ մը հաստատեց: Այնպիսի կերպ մը որ մեր կեանքին մէջ այդ վերածիչ ազգեցութիւնը կապուած ըլլայ մեզի չօշափելի նիւթի հետ եւ դարերով մնայ թարմ ու մշտնջենաւոր, եւ անով ի հաղորդակցութեան ըլլան աշխարհէս մեկնող եւ ապրող սերունդները, իրրեւ անդամներ միեւնոյն ընտանիքին: Այս ամենաբարի դիտաւորութեամբ էր որ իրրեւ վերջին եւ անխափանելի կտակ սահմանեց համամարդկային սեղան մը՝ որուն վրայ մէկ կերակուր եւ մէկ ըլպելի կայ՝ իր գոհուած-պատարագուած մարմինն ու արիւնը՝ ընդ տեսակաւ հացի եւ զինուոյ: Ու այս մատակարարութեան մէջ խտացուց իր ի մեզ տարրանալուն եւ բովանդակ հաւատացեալ մասնուողները ի մի ձուկելու աստուածային խորհուրդը:

Քրիստոս՝ (ՅՀ 6.32-50) համարներու մէջ իր անձը եւ հաց փոխադարձ փոխարերութիւններով շաղկապեց իրարու հետ: Իր մարմինը իրը հաց եւ հացը իրը իր մարմինը ներկայացնելով: Խոկ ընթրեաց սեղանին վրայ երբ նոր Ուխտին հիմը կը զետեղէր, երբ նորն կը պատուաստէր վախճանեալ Հինին վերջին ծայրին եւ այդ թելով էր՝ որ պիտի միացնէր Սինան ու Գողգոթան, հաստատեց այնպիսի դրութիւն մը՝ որով ամէն ոք կարենար ըմբռնել Օրէնքին եւ Շնորհքին, պատիժին եւ քաւութեան տարրերութիւնները:

**Հո՛ն, Սինայի գլուխը կրակ կայ, անմատչելի:** Հո՞ն եղողը կը մնայ սարսափահար ծարաւ ու տոված: Իսկ գողզոթայի խոնարհ բլուրին վրայ՝ «սեղան խորհրդոյ» յորում անմահական կերակուրն ու ըմպելին կը չնորհուին ընտանեկան քաղցրութեամբ: Ու Յիսուս այս սեղանն է որ կը փոխադրէ ի ծագս աշխարհի, ուր որ իր տան անդամները զայն պատրաստեն լատ աւանդութեան ֆրկչին:

Քրիստոս ինքինքը նմանցուցած էր դուռի, հովիւի, եւային, բայց չպատուիրեց մերթ ընդ մերթ որեւէ զուռ մը զնել մէջտեղ եւ յիշել զինքը: Զհրամայեց ատեն-ատեն հովիւ մը ոչխարաց հօտէն բերել ու բեմադրել ի յիշատակ իր հովուապետական պաշտօնին: Բայց, հացին ու գինիին մէջ տարրացուց իր անձին անտեսանելի ներկայութեան եւ ի մեզ բնակութեան խոստամունքը՝ ու պատուիրեց ուտել եւ ըմպել զանոնք իր մարմնին եւ արեան ըմբռնումով:

**Բացայայտ է թէ՝ Տիրաւանդ այս ընթրիքը հասարակ յուշարար մը չէ՝ ինչպէս ոմանք կը խորհին:**

Պատկերներ, պատմութիւններ, կենդանի ներկայացումներ բազմիցս կը յուգեն մեր սիրտերը, մեզ լիովին կը փոխադրեն Գողզոթա եւ մանրամասնօրէն կը յիշեցնեն Քրիստոսի խաչելութիւնը հանդերձ պարագայիւք: Այս յուշարարները կը ճմլեն մեր սիրտերը եւ կը խորտակեն մեր ամբարտաւանութիւնը ու կը ստեղծեն մեր մէջ զիտակցութիւն մեր մահապարտութեանը: Անոնք կը բանան մեր առջեւը ահաւորութիւնը մեղքին, մեր մեղքերուն: Կը սորպեցնեն մեզի Յիսուս Քրիստոսի քաւչական մահուան, Անոր անձնազոհ սիրոյն անձառելի մեծութիւնը: Ասոնց ամէնքով կը խոնարհինք յաճախ եւ զառնահոս արտասուօք կը զղանք ու կ'ապաշխարենք: Այս զիտակցութիւնն ու զգացումը խայթիչ կարօտութիւն մը կը զոյացնէ ի մեզ դեղի ու դարմանի՝ փրկուելու:

Ահա՝ ճիշդ այն պարագային է որ Յիսուս զմեզ կը հրաւիրէ շուրջը իր սեղանին, եւ իրեւ զղացեալ ապստամբներ սովամահ քաղցածներս, մեղքով թունաւորուածներս ընդունելով իր քովիկը՝ կը մատուցանէ մեզի համայնաբոյժ տեղթափը, կազդուրիչ օշարակը, սնուցիչ կերակուրը: Ու հոն սեղանակցութեան երաշխիքով կ'ապահովցնէ, կը վաւերացնէ մեր անդամակցութիւնը Աստուծոյ Տան եւ եղբայրակցութիւնը Աստուծոյ որդիներուն որ ի յերկինս եւ որ ի յերկրի, ընդ ծագս աշխարհի: Այս ճաշակմամբ կը բացուին մեր աչքերը ու մենք կը տեսնենք մեր զոյափոխութիւնը դէպի սրբութիւնը մեր չնորհօք զգեստաւորումն, ինչպէս նախածնողաց աչքերը՝ ճաշակմամբ արգիլեալ պտղոյն՝ բացուեցան ու անոնք տեսան իրենց զոյափոխութիւնը՝ մերկ անհարազատութիւնը, օտարացումն, մերժումն Արարչին Տունէն ու Որդիութենէն:

Այս փոփիսութիւնները ինքնին որքան անհասկնալի են, նոյնքան եւ պարզ: Աստուած կը հրամայէ չուտել հասարակ պտուղ մը, անոր մէջ զնելով մահուան խորհրդաւորութիւն իրեւ հետեւանք անհաւատութեան եւ անհազանդութեան, ու այնպէս կ'ըլլայ:

Նոյն Աստուածն է որ կը հրամայէ, կը հրաւիրէ ուտել հասարակ հացն ու գինին իր սեղանին վրայ, ու անոնց մէջ զետեղած է կեանքի խորհրդաւորութիւն իրեւ արդիւնք հաւատքի եւ հնագանդութեան, եւ ահա՝ այնպէս կ'ըլլայ:

Մահացու պտղոյն պատմութիւնը որքան ալ ենթարկենք ամենախիստ քննադատութեան եւ տարրալուծենք բանաւորութեան լոյսով՝ տակաւին կը գտնենք թէ՝ Արարչին հանդէպ մեր արարածական հնագանդութիւնը՝ բնական եւ յայտնութեան օրինաց մեր հպատակութիւնը կապակցեալ է մեր վայելքներուն կենսաւէտութեան հետ, մինչ ապօրինի ճաշակումները-վայելումները մեզ անյարմար կ'ընեն ընկերային

կեանքին, անարժան կ'ընեն մարդկային զանգուածին անդամակցութեան եւ հետեւար արդիլուած ճաշակումներ մեզ կը վտարեն Աստուծոյ Տունէն եւ այն ամէն երջանկութենէն որք լծորդուած են օրինաւոր կենցաղավարութեան եւ չարգիլուած վայելքներու հետ:

Կենսատու ընթրիքին յանձնարութիւնն ալ որքան որ խարբալենք թերահաւատութեան պատառոտուն, խարխած մաղին մէջ եւ ջանանք վերլուծել Փիզիքական օրէնքներով, դեռ անկորուստ կը մնայ սա իրականութիւնը թէ՝ մեր հոգեւոր կեանքը կախեալ է Յիսուս Քրիստոսի ապրած կեանքն, Անոր քաչական Զոհէն եւ Անոր այսօրուան կենդանի ներկայութենէն ի մեզ: Ասոր դէմ արդիական առարկութիւն չէ՝ կարելի:

Նոյնպէս արդիական յաւակնոտութիւններով զիտողութիւն չէ՝ կարելի ընել Յիսուս Քրիստոսի սահմանադրութեանց դէմ եւ կամ անոնց տալ քմահաճ մեկնութիւններ, հակա-Քրիստոսի Աւետարանին: Ուստի, մէկ իրողութիւն մը կայ եւ ան աս է:-

Ըստ որում մենք մարմնաւոր նիւթեղէն էակներ ենք ընդունարան եւ անօթ մեր հոգիներուն, Քրիստոսի հոգեւոր ճշմարտութիւններ-իրականութիւններ զետեղած է նիւթի մէջ եւ թանձրացեալ ու առարկայական միջոցով մօտեցած է մեզի, ու իր մեր մէջ ներմուտին ու տարրանալուն պայման ու եղանակ դրած է շօչափելի, զգալի ճաշակումն սրբագործուած եւ իր ձեռքին մէջ՝ իր բանիւ օրհնուած հացին ու զինւոյն, որք Անոր Հրամանաւ կը փոխարկուին իր մարմնոյն եւ արեան ներգործութեամբ Սուրբ Հոգւոյն: Հո՛ս կայ նիւթ եւ խորհուրդ: Նիւթը կը մատուցուի մեր զգայարանքին ու խորհուրդը մեր հաւատաքին: Ու այսպէս ներքին հաղորդակցութիւն մը կը ստեղծուի Տուողին եւ Ընդունողին միջեւ միայն երկուքին հասկնալի, բայց երկուքի կողմէն ալ անբացատրելի: Երաժիշտ մը, նուազածու մը չեն կրնար այլապէս բացատրել իրենց ձայնին խաղերը, ո՛չ ալ յափշտակուած ունկնդիր մը կրնայ իր յուզումը պարզաբանել: Ասիկա հոգեկան, ներքին շարժում մըն էր որ տեղի ունեցաւ երգողին ու լսողին միջեւ: Այսպէս անբացատրելի են երկու անձերու միջեւ փոխանակուած նուէքներու, ժպիտներու, խոժուներու... գործած փոխադարձ ազդեցութիւնները: Անոնց ներքին աշխարհի մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները կը մնան անծանօթ արտաքիններուն, զի չէ՝ կարելի լման նկարագրել:

Քրիստոսի նպատակը եւ ճշմարիտ հաւատքով ճաշակողաց փորձառութիւնը կը կայանայ յայսմ որ՝ տուեալ պայմաններով ճաշակողին զգացումներուն մէջ տեղի կ'ունենայ աշքառու փոփոխութիւն մը: Նա ինքզինք կը գտնէ ընդունարան Քրիստոսի: Կը տեսնէ իր մէջ լեցունութիւնը Քրիստոսի իտէալին ու փափաքներուն, եռանդն ու նախանձաւորութիւնը: Կը նուիրէ ինքզինքը Անոր գործակցութեան, կ'ըլլայ գաւակը Աստուծոյ տիեզերածաւալ տունին, արժանաւոր, օգտաշատ եւ սիրելի անդամը մարդկային ընկերութեան, յորում քրիստոսաբնակ քրիստոնեան օրինաւոր վայելքներով կ'երջանկանայ ու իր ընչից, տաղանդին եւ աշխատութեան ընծայարերութեամբ կը ջանայ երջանկացնել իր միջավայրը:

Յաւակնութիւն չունիմ պնդելու թէ՝ Տէրունական Ընթրիքին չմասնակցող քրիստոնեայք գուրկ են սա օրհնութիւններէն: Եթէ կան ոմանք որ բոլորովին հոգիացած են ու պէտք չեն տեսներ Յիսուս Քրիստոսի պատուէրին առարկայական գործադրութեան եւ հնագանդութեան. ու կը կարծեն թէ՝ աւելի չնորհալի են քան Սուրբ առաքեալները որոնք ապրած էին Յիսուս Քրիստոսի հետ, ուղղակի Անկէ նեղչնչուած էին, որոնք Սուրբ Հոգւոյն տեսանելի, առարկայական մատուցմամբ՝ ներգործու-

թեամբ արդէն գոյափոխուած էին ու եղած էին հրաշագործ, գերբնականացած մարդիկ եւ սակայն, զեռ պէտք կը զգան Տէրունական Ընթրեաց եւ կը կատարէին: Եթէ կան քրիստոնեայք, որոնք Քրիստոսի պատուէրին օգտակարութեան պէտքը չեն տեսներ ու անդրանիկ եկեղեցիէն աւելի բարձր են, այդպիսեաց համար միայն ինքնաճանաչութիւն կը մաղթենք:

Բայց մենք չենք յանդգնիր ջնջել Քրիստոսի կողմէն յանձնարարուած եւ ուղղակի Անկէ դաստիարակուած աշակերտներուն ալ գործադրած ու յաւէտ յարգած սահմանադրութիւնը՝ զոր եկեղեցիք որդեղրեցին ու պաշտեցին: Մենք կը տեսնենք Աստուծոյ Հոգիով լի Սուրբ Հայրերու եւ միջիոնաւոր քրիստոնէից մէջ գերազանցութիւնն այն ոյժին եւ առաստութիւն չնորհներու որբ խակ եւ խակ արդիւնք են Քրիստոսի պատուէրին՝ մասնակցութիւն Հաղորդութեան Սուրբ Սեղանին:

Մենք կը զգուշանանք քմահած կրծատութիւններէ ու թերահաւատ մեկնարանութիւններէ որք կը խեղաթիւրեն Քրիստոսի միտքն ու նպատակը: Որովհետեւ կը խորհինք թէ՝ Տէրունական Ընթրեաց նիսթերուն շուրջ յարուցուած գոյափոխութեան վէճերը անհարկի են: Քանզի Փիզիքական իմաստով տարերային գոյափոխութիւն պնդելը ծիծաղելի է, երբ Հացն ու Գինին էութեամբ նոյնը կը մնան յետ սրբագործութեան: Ուրեմն, գոյափոխութեան վարդապետութիւնը զուտ հանգամանքային նշանակութեամբ վեր առնելու է իրբեւ խորհուրդ մը որ ծածկուած է Քրիստոսի խօսքին ու մեր հաւատքին մէջ: Ասիկա պարզ ու յստակ է եւ անվիճելի: Քանզի՝ որքան ալ որ թեթեւցնենք Քրիստոսի խօսքին՝ բանաձեւին, ոճին նշանակութիւնը՝ այն խօսքը պարզ է, անկարօտ բացատրութեան: Նա ըսաւ. «Ա.ուե, կերլե, այս է մարմին իմ...»: Հետեւար այդ նիսթերը չենք կրնար համարել այլեւս հասարակ հաց ու գինի: Զենք ժպրհիր անոր մնացորդները վերադաճնել մեր ճաշարանը եւ անկէ բաժին տալ մեր շան ու կատուին: Բարի միախոնար մը օր մը ըսաւ. «Մենք այն միայն կը համարենք օրինուած, նուիրագործուած՝ զոր արդէն եաշակեցինք»: Միամիտի խօսք մըն է այս, մինչ առաքեալք որք մեզմէ աւելի ծիշդ կրնային հասկնալ Ցիառուսի միտքն ու խորհուրդին նշանակութիւնը՝ այսպէս կ'ըմբռնեն, կը յայտարարեն ու կը յանձնեն մեր իմաստուն դատումին: «Օրինութեան գաւառը որ մենք կ'օրինենք չէ՞ որ Քրիստոսի արեանը հաղորդութիւնն է: Հացը որ մենք կը կտրենք, չէ՞ որ Քրիստոսի մարմնոյն հաղորդութիւնն է» (Ա.Կը 10.15-16):

Նոյն առաքեալը որ ամէնքէն աւելի վարդացած էր մտօր եւ ունէր լուրջ տրամաբանութիւն, շատ պատկառանքով կը վերաբերուի Ս. Հաղորդութեան խորհուրդին եւ կը յայտարարէ թէ՝ անոնք որ անարժանարար կը մերձենան այդ հացին ու «չեն խտրեր Տիրոջը մարմինը, անոնք դատապարտութիւն կ'ընդունին եւ “պարտական կը մնան Տիրոջը մարմնոյն եւ արեանը” եւ կ'ենթարկուին ախտերու, հիւանդութեանց եւ նոյնիսկ մահուան» (Ա.Կը 11.23-30):

Հետեւարար, առանց քաշքշելու գոյափոխութեան վարդապետութիւնը խեղաթիւր եւ աղճատ մեկնարանութիւններով՝ ըստ Քրիստոսի եւ Առաքելոց պարզումեկին յայտարարութեանց, պարտաւոր ենք Ս. Հաղորդութեան Հացին ու Գինիին տալ այնպիսի հանգամանք մը, ինչպէս որոշակի տրուած է հիմնադիրէն եւ անմիջապէս ընդունողներէն: Առաւել քան գայս ի չարէն է:

ԽԱ.ԶԻԿ ՔՀՆՅ. ԳՐՈՒԶԵՍՆ

(Ճար. 41)

## ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ Ի՞՞ՆՉ ՅՈՅՍ ԵՒ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ\*

1  
ՄԱՀԱ

**Մարդը երկրի վրայ կ'ապրի, սակայն չի գիտեր որքան երկար. անոր մարմինը մահանացու է. որքան ալ երջանիկ ըլլայ, որքան երկար աշխարհային կեանքը վայելած ըլլայ, վերջին պատահարէն՝ մահէն ազատ չէ որ անոր կը սպասէ, որով անոր հոգին մարմինէն պիտի բաժնուի: Այդ ժամը դառն է եւ ծանր, որովհետեւ մարդը երկրաւոր կեանքի վայելչութենէն դուրս կը հանէ, շատ անգամ յանկարծակի եւ առանց լուր տալու, ու անմիջապէս անոր յաւիտենական վիճակը կը վճռէ: Այս պատճառով ալ, մահուան մտածողութիւնը մարդոց սիրտին մէջ միշտ ահ եւ երկրող կ'արթնցնէ: Սակայն, այդ ահն ու դողը ճշմարիտ քրիստոնեային համար անծանօթ բան է. քրիստոնեային համար մահ ըսուած բան չկայ: Ս. Գիրքը կ'ըսէ «մեղլերու հատուցում», որովհետեւ ան իր կեանքին մէջ բարիով յաղթած է չարին, պատրաստուած է մեռնելու՝ այնքան ժամանակ որ ողջ է, եւ մահը որպէս փոխանցական ճանապարհ կը ճանչնայ, դէպի ճշմարիտ եւ յաւիտենական կեանքը. «Այն ամէնը, որ հողէն է, հողին կ'երթայ. այդպէս ալ ամբարիշտները անէծքէն դէպի կորուստ կ'երթան» (Սիր 41.13). «Անոր օրերը որոշուած են, անոր ամիսներուն թիւը քու քովդ է. դուն անոր սահման դրիբ ու անիկա չի կրնար անդին անցնիլ» (Յոր 14.5). «Այն ատեն հողը երկիր պիտի դառնայ՝ առաջուան եղածին պէս ու հոգին Աստուծոյ պիտի դառնայ, որ զանիկա տուաւ» (Ճր 12.7). «Այս խօսքին համար ուզեցին զինք բոնել, բայց ոչ ո՛ք ձեռք զարկաւ, որովհետեւ տակաւին անոր ժամանակը հասած չէր» (ՅՇ 7.30):**

2  
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՄԱՀԱ

**Աստուծոյ ստեղծած աշխարհին մէջ ոչ մէկ բան կորսուած է. մահէն կենդանութիւն կը ծնի. արարչագործութեան աստիճանակարգին, աշխարհի տեսարաններուն մէջ ոչ մէկ բան անկանոն է: Ամէն տեղ իմաստուն տնտեսութեամբ բաշխուած են**

\* «ԿՐՈՆՔԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ», Մոսկուա (1853) — ԱՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ: Արդի աշխարհաբարի վերածեց՝ ԱՏԵՓԱՆՈՍ ՎՐԴԻ. ՓՈ.ԾԱ.ՅԵԱՆ:

զօրութիւնները, եւ մարդն է միայն որ պէտք է աւելի կարողութիւն ունենար՝ այս կեանքին պէտք եղածէն աւելի, եւ կարելի ըլլար անոր գործունէութիւնը յանկարծ խափանուէր: Մարդը, իր սիրտին մէջ կրելով աւելի լաւ աշխարհի կարիքը, միթէ պէտք չէ՞ր որ ժառանգէր իր հաւատքի եւ յօյսի երկիրը. միթէ ան պէ՞տք է ըլլար բարեպաշտ եւ երկիւղած, սակայն եւ հետեւաբար՝ թշուառ, թէեւ ան զԱստուած որպէս արդարադատ էակ կը պաշտէր: Երբեք ամէն գարուն, ամէն արշալոյս ինծի կը քարոզէ՝ թէ մէկ այլ աշխարհ կայ, որ վերին եւ անպատմելի երանութեան մասնակից ըլլալ հրաւիրուած եմ: Հոգիս պէտք է յարատենէ, ան անման է. այս բանին ստուգութեանը կը հաւատամ, որովհետեւ բանականութիւնն ու սիրտը ինչ բան որ եզրակացնել եւ գուշակել կու տան ինծի, Քրիստոսն ալ այդ մէկը կը հաստատէ, եւ ատոր հաւասարիութիւնը կը զօրացնէ իր իսկ յարութեամբ: Մեր հողեղէն մարմինը եւս պէտք է փառաւորուի եւ մեր հոգիին պայծառ կամ ազօտ վիճակին համեմատ՝ նոր կերպարանք ստանայ այն օրը, որ միանգամբնդմիշտ Յիսուս Քրիստոսի ձայնով յարութիւն պիտի առնեն բոլոր մեռեալ մարմինները թէ՛ երկիւղածներուն եւ թէ չարագործներուն, եւ իրենց հոգիներուն հետ միանալով՝ յաւիտենականութիւն պիտի երթան:

Ո՞վ մարդ, ինչ հոգիով եւ սիրտով ըլլաս դուն այդ վայրկեանին մէջ, հոգիիդ մարմինէդ անջատուելու ժամանակ, այդպէ՞ս ալ քու կեանքդ կը շարունակուի. առաքինութեան կամ չարագործութեան ինչ աստիճան, Աստուած գիտութեան կամ անգիտութեան հասած ես դուն այդ ժամանակ, միեւնոյն աստիճանով միւս կեանքին մէջ կ'ըլլաս: Քու սեփական՝ յաւիտենական երանութեան կամ թշուառութեան ճարտարապետը դուն ինքդ կրնա՛ս ըլլալ: Դուն քու անձի կը սիրես, եթէ դուն ահ ու սարսափով հոգաբարձու ես առաջինի մասին: Մեռելներու յարութեան ժամանակ, ինչպէս Ս. Գիրքը կը վկայէ, մեր յատուկ մարմինը յարութիւն պիտի առնէ, սակայն աւելի գեղեցիկ եւ փառաւոր կ'ըլլայ, զօրեղ, զուարթ, անվաստակելի եւ կարողութիւն ստացած՝ որ աւելի վերին եւ ազնիւ ուրախութիւններ վայելէր, քան երկրի վրայ մարմնաւորները: Սակայն չարագործներու մարմինները ինչպէս կ'ըլլան, ատոր մասին Ս. Գիրքը տեղեկութիւն չի տար. «Ուրեմն մի՞ զարմանա՞ որ ըսի, թէ ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնիք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիկ գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիկ գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին» (ՅՀ 5.28-29). «Յիսուս ըսաւ. “Ե՞ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի: Խոկ ան որ ողէ եւ ինձի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի: Կը հաւատա՞ս ըսածին”» (ՅՀ 11.25-26). «... որ մեր մահկանացու մարմինները պիտի կերպարանափոխէ եւ իր մարմինին պէս փառաւոր դարձնէ իր զօրութեամբը, որով կրնայ ամէն ինչ իր իշխանութեան ենթարկել» (Փլա 3.21). «Ճիշդ այդպէս պիտի ըլլայ նաև մեռելներու յարութիւնը: Մարմինը հող կը դրուի եղծանելի վիճակով, եւ յարութիւն կ'առնէ՝ անեղծ. հող կը դրուի անարգ, եւ յարութիւն կ'առնէ՝ փառաւոր. հող կը դրուի իրեւ շնչաւոր մարմին, եւ յարութիւն կ'առնէ իրեւ հոգեւոր մարմին: Ինչպէս որ շնչաւոր մարմին կայ, այնպէս ալ հոգեւոր մարմին կայ» (Ա.ԿՌ 15.42-44). «Սակայն անոնք որոնիք գալիք աշխարհին եւ մեռելներու յարութեան կ'արժանանա՞ պիտի չամուսնանան: Անոնք այլեւս չեն կրնար մեռնիլ, քանի հրեշտակներու նման պիտի ըլլան: Անոնք Աստուծոյ որդիներ են, որովհետեւ մեռելներէն յարութիւն առած են» (ՂԿ 20.35-36):

3  
ԱՀԵՊ ԿԱՄ ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

**Երկրի վրայ մեծ եւ զարհուրելի փոփոխութիւնները առաջընթաց ըլլալով կը ծանուցեն ահեղ Դատաստանը, որ մեռածներու յարութենէն ետք պիտի կատարէ Քրիստոս, որովհետեւ մարդկութեան Փրկիչն է եւ այդ իշխանութիւնն ու հրամանը Աստւած տուած է: Այդ դատաստանին մէջ, Աստուծոյ անձառնելի արդարութեան, գթութեան եւ իմաստութեան համեմատ, ի մտի ունենալով բոլոր հանգամանքները որոնց մէջ մարդիկ թէ՛ բարեգործ եւ թէ չարագործ եղած են, եւ այն կարողութիւններուն որ անոնք Աստուծմէ ստացած էին, ամէն մարդ իր վճիռը պիտի ստանայ, ինչպէս որ մտածած եւ գործած է: Թէ՛ բ'ըր պիտի կատարուի այս վերջին դատաստանը, ատիկա մեզի անյայտ կը թուի: Ո՞վ մարդ, ո՞վ քրիստոնեայ, դուն քեզի չա'փ դիր, երբ ընկերներդ կը դատես. Աստուծած միայն գանոնք կը ճանչնայ. թող որ Ա՛ն դատէ զանոնք: Դուն այնպէս կեցիր, որ քեզի երբեք պէտք չըլլայ Աստուծոյ կամ դատաստանին առջեւ դողալ. միշտ հոգիիդ աչքին առջեւը դիր այդ վերջին պատասխանատութիւնը. սակայն, այս կեանքի անմեղ ուրախութիւնները մի՛ ձգեր որ պղտորին քեզի համար այդ մարդոց դատարկ խօսքերով, որ աշխարհի վերջը կ'ուզեն եւ Դատաստանի Վերջին Օրը սահմանել: Ո՞վ չճանչցուած անմեղութիւն, ուրախացի՛ր այս օրուան համար, սակայն դուն, ո՞վ ծածուկ յանցաւոր, վախցի՛ր Անոր լոյսէն՝ որ ամէն գործ կը յայտնէ ու կը հրապարակէ. «Որովհետեւ բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որպէսզի իւրաքանչիւրը իր մարմինով ընդունի հատուցումը երկրի վրայ իր կատարած քարի կամ չար գործերուն» (**Բ.Կր 5.10.**). «Որովհետեւ Աստուծած խտրութիւն չի դներ մարդոց միջեւ» (**Հռ 2.11.**). «Խսկ ան որ չի գիտեր Տիրոց պահանջածը եւ պատիժի արժանի քաներ կ'ընէ, այդ ծառան նուազ պատիժ կը ստանայ: Որուն որ շատ տրուած է՛ շատ պիտի պահանջուի, խսկ որուն որ աւելի շատ տրուած է՛ շատ աւելի պիտի պահանջուի» (**ՂԿ 12.48.**). «Աւակյն ո՛չ ո՛չ գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի երեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը» (**Մր 13.32.**). «Բայց Տիրոց օրը անակնկալօրէն պիտի գայ, գողի պէս, երբ երկինքը մեծ շառաչիւնով պիտի չ'անայ, երկնային մարմինները պիտի վառին ու հալին, եւ երկիրը իր ամբողջ բովանդակութեամբ պիտի անհետանայ: Բայց մենք՝ Աստուծոյ խոստումին համաճայն՝ կը սպասենք նոր երկինքի մը եւ նոր երկրի մը, ուր արդարութիւնը պիտի իշխե» (**Բ.Պա 3.10,13.**). «Ուստի դուք ալ ուեւ մէկը մի՛ դատէք ժամանակէն առաջ, մինչեւ գայ Տէրը, որ մարդոց մուրգադտնիքները լոյսին պիտի թիրէ եւ երեւան պիտի հանէ միտքերուն մէջ ծածկուած խորհուրդները: Ահա այն ատեն իւրաքանչիւրը Աստուծմէ պիտի ստանայ արժանի գովասանքը» (**Ա.Կր 4.5.**):**

4  
ՅԱԼԻՆՈՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՅԱԼԻՆՈՎԱՆԱԿԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆ  
ԵՒ ՅԱԼԻՆՈՎԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ

**Այս ընդհանուր Վերջին Դատաստանին հետեւանքը այն երանելի կամ թշուառ պիճակը կ'ըլլայ, որուն մարդիկ միւս կեանքին մէջ կը հասնին՝ յաւիտենական երանու**

թիւն կամ յաւիտենական դատապարտութիւն։ Եթէ հարցնենք թէ այդ վիճակը պէտք է երկիւղածները ժառանգեն, եւ թէ ի՞նչ բան է այդ յաւիտենական երանութիւնը։ Ս.Գիրքը կը պատասխանէ, ամենակատար ազատութեան վիճակ կայ մարմնաւոր եւ հոգեւոր ցաւերէն եւ տկարութիւններէն, Աստուծոյ եւ Քրիստոսի հետ յարաբերութիւն, միմիայն բարի մարդոց եւ մանաւանդ երանելի վարքով ննջեցեալ բարեկամներու հետ եւ Աստուծոյ Սուրբ Հրեշտակներուն հետ՝ դասակցութիւն։ այնպիսի գերազոյն եւ հաստատուն առաքինութիւն՝ որ անփորձ եւ ապահով ըլլալով առաջին երկրաւորը կրնայ աւելի շուտ կատարելութեան հասնի. աւելի գորաւոր եւ անարգել ներգործականութիւն Աստուծոյ արքայութեան համար, եւ այն երանելի մտածողութիւնը՝ որ մարդ իր հաւատքով աշխարհային ցաւերուն յաղթած է, եւ երկրի վրայ բարի վարք ունեցած է, կամ Աստուծմով իր պատերազմը մեղքին եւ ախտին դէմ յաղթութեամբ պատերազմած է։

Հետեւաբար, ահով եւ դողալով գործեցէ՛ք, որպէսզի կարենաք երանութիւն գտնել: Պատերազմով՝ յաղթութիւն ստանալ, ցաւերով՝ ուրախութիւն, մահով՝ կեանք. ա՛յս է քրիստոնեային հաստատուն կանոնը: Մարդ արարածէն կախում ունի այն կոչումը, որ ան Յիսուս Քրիստոսի բերանովը կոչուած է, պէտք է անպտուղ մնայ, կամ այն Հայրական տնօրինութիւնները, որ Աստուծած անոր համար գործածած է, պէտք է արդիւնաւոր ըլլային։ Մարդ արարածը իր առջեւը կեանք եւ մահ ունի. ինչ որ կը կամենայ, այն ալ կը ստանայ: Երկինքի երանութիւնը հետեւաբար կ'արժէ, որ մեր քա՛ջ սիրտով ասպարէզ դուրս գանք մեղքի եւ ախտի դէմ յանդիման. յաւիտենական կեանքի անթառամ պսակը կ'ըլլայ մեր բաժինը, այն խօսքին համաձայն, թէ երկինքն ու երկիրը պիտի անցնին, բայց Յաւիտենականին խօսքը յաւիտեան կը մնայ. «Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի եւ հաւատարի՛մ ծառայ, քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար, ֆեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ, եկուր եւ մասնակից եղիր տիրոջ ուրախութեան»։ Եւ այսպէս, անոնք պիտի երթան յաւիտենական պատիմի, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքի» (Մտ 25.21,46). «Եւ ամէն չարիքէ պիտի ազատ եւ պիտի փրկէ զիս, իր երկնաւոր արքայութիւնը հասցնելով։ Փա՛ռք իրեն, յաւիտեանս յաւիտենից։ Ա.մէն» (Բ.Տմ 4.18). «Անոնց աչքերէն ամէն արցոնէն պիտի սրբէ. այլեւս ո՛չ մահ գոյութիւն պիտի ունենայ, ո՛չ սուզ, ո՛չ ողբ, ո՛չ ցաւ եւ ոչ ալ յոգնութիւն, որովհետեւ նախկինները անցան գացին» (Յշ 21.4). «Հա՛յր, անոնք որոնք ինծի տուիր՝ կ'ուզեմ որ ինծի հետ ըլլան՝ ո՛ւր որ ըլլամ, որպէսզի տեսնեն իմ փառքս, այն փառքը՝ որ ինծի տուիր, որովհետեւ զիս սիրեցիր աշխարհի ստեղծագործութենէն առաջ» (Յշ 17.24). «Դոււք ձեզ մի՛ խարէք. կարելի չէ Աստուծոյ քրին խնդալ։ Մարդ ինչ որ ցանէ՛ այն կը հենձ» (Գ.դ 6.7-8). «Իսկ եթէ որդի ենք, կը նշանակէ թէ նաև ժառանգորդները ենք։ Ս.յո՛, ժառանգորդներն ենք Աստուծոյ եւ ժառանգակից՝ Քրիստոսի. եւ իր չարչարանքներուն մասնակից կ'ըլլանք՝ որպէսզի իր փառքին եւս մասնակից ըլլանք» (Հռ 8.17). «Սակայն, ինչպէս գրուած է.՝ «Աստուծ զինք սիրողներուն համար պատրաստեց այնպիսի փառք մը, որ ոնւէ աչք չէ տեսած, ոնւէ ականջ չէ լսած, եւ ոնւէ մէկուն միտքէն իսկ չէ անցած» (Ա.Կր 2.9). «Յիսուս պատասխանեց անոր (Նիկոդեմոսին). «Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՛ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»» (Յհ 3.3):

**Սակայն, որքան մեծ է երկիւղածներուն երանութիւնը այն կեանքին մէջ, այնքան եւս մեծ է անաստուածներուն թշուառութիւնը։ Միշտ չարագործներուն հետ յարաբերութիւնը, անոնց անհանգիստ խղճմտանքի տանջանքը, անոնց տիսուր օթեւանը,**

անոնց կատաղի ախտերը, որոնց չեն կրնար ուրիշ անգամ հաճելի ըլլալ, եւ այն մտա-ստանջութիւնը որ երանութենէն զրկուած էին. ահաւասիկ քեզի անոնց վիճակին ողոր-մելի պատկերը, ինչպէս Ս. Գիրքը կը նկարագրէ: Եթէ մարդ յոյս ունի, որ Աստուծոյ անհուն ողորմութիւնը չարագործին հնարաւորութիւն տար իր (պատճառած) չարչա-րանքը թեթեւցնելու, այս մէկը սակայն երկար կը տեսէր եւ տարաժամ կ'ըլլար. թէեւ այս բոլորով հանդերձ այդպիսիներուն վիճակը այլ կերպ պիտի ըլլար քան թէ երկիւղածներուն վիճակը: Ո՞վ մարդ, Աստուծմէ վախցի՛ր եւ անոր պատուիրանները պահէ. այն պատճառով որ այդպէ՛ս միայն կարելի է վերջապէս երանութիւն գտնել: Զա՞նք թափէ, չուտ ըրէ՛ դասակից ըլլալու բարեգործներուն եւ երկիւղածներուն՝ որքան որ ժամանակը քու ձեռքդ է. որովհետեւ սերմ ցանելու ժամանակը միայն այստե՛ղ է, եթէ կ'ուզես այս կեանքին մէջ հնձել եւ ժողվել. «Ապա իր ձախ կողմը կեցողներուն պիտի ըստ. «Անիծեալնե՛ր, հեռացէ՛ ինձմէ, գացէ՛ յաւիտենական կրակին մէջ, որ Սատանային եւ անոր հրեշտակներուն համար պատրաստուած է» (Մտ 25.41). «Անիկա բոցավառ կրակով պիտի պատժէ անոնք՝ որոնք կը մերժեն զԱստուած նանշնալ եւ հնազանդիլ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Աւետարանին: Այն օրը, այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պատժուին, զրկուելով Տիրոջ ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն» (Բ.Թս 1.8-9). «Գիտցի՛ր նաև, որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ: Եթէ ուզեն այստեղին ձեր մօտ անցնի՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ» (Ղկ 16.26). «Ուր “զանոնք կրծող որդը չի մեռնիր եւ կրակը չի մարիր”» (Մր 9.48). «Որովհետեւ բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որպէս-զի իւրաքանչիւրը իր մարմինով ընդունի հատուցումը երկրի վրայ իր կատարած բարի կամ չար գործերուն» (Բ.Կր 5.10). «Դուք ձեզ մի՛ խարէք. կարելի չէ Աստուծոյ քրին խնդալ: Մարդ ինչ որ ցանէ՛ այն կը հնձէ: Ով որ իր մարմնի անդաստանին մէջ ցանէ՛ մահ պիտի հնձէ: իր մարմնէն, իսկ ով որ Սուրբ Հոգի անդաստանին մէջ ցանէ՛ յաւիտենական կեանք պիտի քաղէ Սուրբ Հոգին: Գալով մեզի, չճանձրանանք բարիք գործելէ, որովհետեւ եթէ յարատեւենք՝ անպայման որ արդիւնքը պիտի քաղենք իր ատենին» (Գղ 6.7-9):

## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

### ՊԱՐՁ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

#### 1 ԳՈՐԾԵԼՈՒ ՀԻՄԸ

Մարդ անհատին աւելի մեծ գերազանցութիւնը այն բանին վրայ հաստատուած է, որ ան դատելու հնարաւորութիւնը ունենալով, կրնայ իր խորհուրդներուն եւ գործերուն հիմերուն վերահասու ըլլալ, որ ան գիտէ՛ թէ իր ըրածը ի՞նչ պատճառով է:

**Որքան աւելի ան կը սորվի իր կամքը Աստուծոյ իմաստուն եւ ողորմած Հօր կամքին, այնքան աւելի կը դիւրանայ իր հոգիի զօրութեամբ մարմինի կամ զգայականութեան հարկադրանքներուն յաղթել եւ աւելի բարոյական կատարելութեան կը մօտենայ:**

## 2

**Եթէ յարմար ըլլար, որ մարդ անհամին բոլոր խորհրդածութիւնները եւ գործերը մէկ որոշեալ յատկանիշ ունենային, ապա պէտք էր որ անոնք ծնէին մի քանի գիշաւոր կանոններէ: Այն օրէնքը որ այս զիշաւոր կանոնները մեզի կ'աւանդէ, բարոյական օրէնք կը կոչուի, որ որոշ չափով ներքին է, բնական (բանականութիւն, ազատ կամք, խիղճ), եւ որոշ չափով՝ արտաքին (աստուծային յայտնութիւն, Ա. Գիրք):**

## 3

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

**Մարդ արարածը այս կանոններուն նայելով ինչ բան որ կը համարձակի գործել, արտօնուած է, իրա՛ւ է. իսկ ինչ բան որ չի համարձակիր գործել, անիրա՛ւ է: Առաջինը պարտաւոր ենք ու պէտք է ընենք, վերջինէն՝ հրաժարինք: Որովհետեւ մենք ինչպէս բոլոր բանաւոր արարածները այս հնազանդութեան անհրաժեշտութիւնը եւ փրկա-ւէտ ըլլալը կը հասկնանք:**

## 4

**ԳՈՐԾԵՐՈՒ ՕՐԻՆԱՊԱՏՇԱՋՈՒԹԻՒՆ**  
ԵՒ ԲԱՐՈՅՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

**Որեւէ մէկ գործ կրնա՛յ օրինապատշաճ ըլլալ, սակայն, պայման չէ որ բարո-յական յատկանիշ ունենայ: Մեր պարտաւորութիւնը, որ թերեւս ստիպումով յառա-ջացած ըլլայ, սակայն մենք պէտք է միշտ ազատակամ եւ ուրախութեամբ կատարենք, ոչ մէկ երկրորդական անձնասիրական դիտաւորութեամբ, այլ՝ ճշմարիտ սիրով դէպի բարին: Ճշմարիտ վստահութեամբ, որովհետեւ այսպէս միայն կրնանք Աստուծոյ ընդունելի եւ անոր բարերարութիւններուն արժանի ըլլալ:**

## 5

**Ա.ՌԱ.ՔԻՒՆՈՒԹԻՒՆ**

**Միմիայն այս բարոյական ազատութիւնը կրնայ տալ մեր գործերուն բարոյական արժանաւորութիւն: Երբոր ան մեր գործերուն հիմքն է, մեր արդիւնաւորութեան համար կրնանք միայն հաշիւ ձգել, կամ պակասութիւնը, մարդուն բարի կամ չար ըսել: Եւ յաճախ որքան այսպէս բարին կը հետեւինք, այնքան աւելի ատոր մէջ (առա-**

**քինութիւն)** ամրութիւն կը ստանանք. եւ եթէ առաքինութիւնը կը կատարուի՝ միտքը դէպի Աստուած ուղղելով, այդ ժամանակ կրօնապաշտութիւնը կը ծնի. «Մինչդեռ ան որ իր աչքերը կը յառէ Աստուծոյ ազատարար ու կատարեալ Օրէնքին եւ անոր մէջ կը յարատեւէ, այնպիսին լսելէ ետք չի մոռնար, այլ՝ կը գործադրէ զայն. անիկա երանելի պիտի ըլլայ կատարելուն համար» (**Յկ 1.25**):

6

**ՄԵՂՔ ԵՒ ԱՐԱՏ**

**Առաքինութեան հակառակը** արատն է կամ ամբողջ կամքին եւ սիրտին վրայ թագաւորող ապականութիւնը, որ տարբեր-տարբեր անիրաւ գործերու (մեղք) ամբողջութիւնն է, դէպի հոն՝ ուր կը քաշեն մեզ մեր փափաքները, ախտերը, բարոյական տկարութիւնը եւ աշխարհի մոլորեցուցիչ բաները: Ինչպէս մեղքը, նոյնպէս եւ առաքինութիւնը իր աստիճանները ունի, որովհետեւ ան կը գոյանայ եւ կը յայտնուի զանազան նպատակներու համար իր հիմքը ունենալով: Մեղքեր կան՝ զիտութեամբ եւ անգիտութեամբ, կատարելով եւ հրաժարելով, տկարութենէն եւ չարութենէն (մղուած կը կատարուին), դարձեալ մեղքեր կան՝ միտքով եւ գործով:

7

**ՄԵՂՔԻՆ ՀԵՏԵԽԱՆՔԸ**

**Ամէն մեղքի հետեւանքը** ուշ կամ կանուխ պատիժ է, որպէս հոգեւոր կամ մարմնաւոր ցաւ. եթէ վերջինս խկապէս չերեւար, հետեւարար, չար խղճմտանքը՝ թէեւ երկար միջոցներէ ետք, աստուածային օրէնքէն անզգալարար անցնողին սրտցաւութիւն, ապաշաւանք եւ անձնարհամարհութիւն կը պատճառէ:

8

**ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ  
ԵՐԵՔ ԿԵՏԵՐԸ**

**Եթէ ուզէինք քննել** այն առանձին պարտականութիւնները, որոնք մարդ անհատը բանականութեան եւ կրօնքի օրէնքներուն հետեւելով կրնար կատարել, այդ ժամանակ, այդ պարտականութիւններուն մէջ երեք կէտեր կը հանդիպին մեզի՝ մեր առնչութիւններէն առաջանալով դէպի մեր անձը եւ դէպի մեզմէ դուրս եղող առարկաներ. այն պատճառով, որ պարտականութիւններ կան դէպի ամենաբարձրեալ էակը, եւ պարտականութիւններ՝ դէպի մեր ընկերը, եւ պարտականութիւններ՝ դէպի մեր անձը: Բոլոր այս բաները քրիստոնէութեան գլխաւոր օրէնքին՝ Սիրոյ վրայ հիմնուած են. «Յիսուս ըսաւ անոր. “Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սիրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ միտքովդ”: “Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս”. այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ Օրէնքը եւ մարգարէներու ուսուցումները» (**Մտ 22.37,39-40**):


**(Ճար. 5)**

## ՊԱՄՓԳ-ԵՒԱՏՐՈՒՄ

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՀՐԱՅՐ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԸ

**Ուրբաթ 14 Յունիս 2013-ի երեկոյեան, Ազգային Հնդհանուր Ժողովի աւարտին, Տըպպայէի “Le Royal” պանդոկին մէջ տրուած պաշտօնական ճաշկերոյթի ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը «Կիլիկեան Խշիան»-ի շքանշանով պարգևեատրեց Ազգային Բարերար՝ Տէր եւ Տիկին Հրայր Սողոմոնեանը:**

Տէր եւ Տիկին Հրայր եւ Մակի Սողոմոնեան շուրջ մէկ տարի առաջ ստանձնած էին Պիքֆայայի Վանքի շրջաբակին մէջ կառուցուող Միաբանական չէնքին բարերարութիւնը, տրամադրելով մէկուկէս միլիոն ամերիկեան տոլար:





**Նորին Սրբութիւնը բարձր գնահատելով Տիար Սողոմոնեանը, ըսաւ. «Հրայրը չենք գնահատեր միայն իր նիւթական նուիրատութեան համար, այլ առաջին հերթին իր երկար տարիներու նուիրեալ ծառայութեան համար: Արդարեւ, Հրայր Սողոմոնեան անձնուեր ծառայութեան տիպար է. եւ անոր փաստը տուած է անցնող աւելի քան երեսուն տարիներուն, յատկապէս Արարական Մշացեալ Էմիրութեանց մէջ»: **Վեհափառ Հայրապետը դրուատիքով խօսեցաւ նաեւ Տիկին Սողոմոնեանի մասին, որ «միշտ քաջալերող եղած է Հրայրին ազգային եկեղեցական ծառայութեան ու կատարած նուիրատութիւններուն»:** **Եղրափակելով իր խօսքը, Վեհափառը ըսաւ.** «Ուեւ մէկ անձի արժէքը իր ունեցածին մէջ չէ, այլ՝ տուածին: Ոչ թէ իր ունեցածով, այլ՝ իր տուածով անձը կը դառնայ յարգի ու սիրելի բոլորին. իր տուածով անձը կը բարձրանայ, կը մեծնայ ու կը մնայ ժողովուրդի սիրտին մէջ»:**


**Ապա Քուէյթի եւ Արարական Էմիրութեանց Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Շահէ Եպս. Փանոսեան կարդաց Վեհափառ Հայրապետին կոնդակը: Խօսք առնելով Պրն. Հրայր Սողոմոնեան իր չնորհակալութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին, խոստանալով որ ինք պիտի շարունակէ գորավիզ կանգնիլ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համազգային առաքելութեան, որ առաւել ծաղկումի ու ծաւալումի ընթացքին մէջ է:**

**Ճաշկերոյթին ներկայ էին Ազգ. Ընդհանուր Ժողովի պատգամաւորները, Թեմակալ Առաջնորդներ, միարաններ եւ Լիրանանի Հայ համայնքի ներկայացուցիչներ:**

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅԻՆ

Շաբաթ 15 Յունիս 2013-ի առաւտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս պաշտօնական այցելութիւն տուաւ Լիբանանի Հանրապետութեան Նախագահ՝ Զօրավար Միշել Սլէյմանին եւ հանդիպում ունեցաւ իր հետ նախագահական ապարանքին մէջ։ Հանդիպումին ներկայ էին նաև Յունիս 12-14-ին Անթիլիասի Մայրավանքին մէջ գումարուած Ազգային Ընդհանուր ժողովի մասնակցող թեմակալ Առաջնորդներէն ու ժողովականներէն 30 հոգիներէ բաղկացած պատուիրակութիւն։



Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց Նախագահին, որ իր կատարած այցելութիւններուն ճամբով Լիբանանի ներկայութիւնը ու դերակատարութիւնը կը շեշտէ միջազգային համայնքէն ներս, ինչպէս նաև՝ Լիբանանի ու լիբանանեան Սփիտոքի յարաբերութիւնը ու գործակցութիւնը աւելի կ'ամրապնդէ։ Խօսելով Միշին Արեւելքի կացութեան մասին, Վեհափառ Հայրապետը իր մտահոգութիւնը յայտնեց յատկապէս անոր ունեցած ժխտական անդրադարձին շրջանէն ներս, ինչպէս նաև

Լիբանանի վրայ: Նորին Մրբութիւնը ընդհանուր գիծերու մեջ բացատրութիւններ տուաւ Նախագահին Ազգային Ընդհանուր ժողովի մասին, եւ անոր ունեցած կարեւոր դերի մասին Մեծի Տաճն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ մեր Սուլը Աթոռին առաքելութեան մեջ:

Հանրապետութեան Նախագահը իր ուրախութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին կատարած արժեւորումին ու գնահատանքին գծով, իր կարգին շեշտելով արտաքին աշխարհին հետ Լիբանանի յարաքերութեանց կարեւորութիւնը, ինչպէս նաև ներքին միասնականութեան ամրապնդման հրամայականը: Այս առիթով Նախագահը նաև դրուատիքով անդրադարձաւ լիբանանահայութեան ու անոր բերած կարեւոր նպաստին Լիբանանի ծաղկման եւ բարգաւաճման աշխատանքներուն:

Ազգային Ընդհանուր ժողովի ներկայացուցիչներուն հետ հանդիպումն անմիջապէս ետք, Վեհափառ Հայրապետը Երեսփոխան Յակոբ Բագրատունիի ներկայութեան առանձին խորհրդակցութիւն ունեցաւ Պարոն Նախագահին հետ, Լիբանանի այժմու կացութեան առնչուած հարցերու գծով:

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՇՆՈՐՉԱՌՈՒ ԻՐԱԾԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՅՑԸ

**Մեծայարգ**

Տոք. Հասան Ռուհանի

Ընտրեալ Նախագահ

Իրանի Իսլամական Հանրապետութեան

Թեհրան

Ուրախութեամբ կ'ողջունենք Զեր ընտրութիւնը որպէս Նախագահ Իրանի Իսլամական Հանրապետութեան:

Արդարեւ, քաջածանօթ ենք Իրանի դիմագրաւած մարտահրաւերներուն: Վստահաբար, պետական կառոյցներէն ներս Զեր կուտակած երկար տարիներու հարուստ փորձառութեամբ, ինչպէս նաև Զեր բարեկարգ-չական ծրագիրներով Իրանի Իսլամական Հանրապետութեան առջեւ պիտի բանաք դէպի առաւել բարգաւաճում ու յառաջդիմութիւն առաջնորդող նոր ճամբաններ ու հորիզոններ:

Ինչպէս գիտէք, Հայ համայնքը Իրանի մեջ երկար դարերու պատմութիւն ունի: Ան անբաժան մասն է Իրանեան հայրենիքին՝ պահելով հանդերձ իր առանձին ինքնութիւնը եւ կրօնական ու համայնքային կառոյցները: Մենք լաւատեղեակ ենք Հայ համայնքին հանդէաւ Զեր ունեցած դրական ու բարեացակամ վերաբերմունքին: Վստահ ենք, որ մեր համայն-

քը վերանորոգ նուիրումով Զեր առաջնորդութեամբ պիտի շարունակէ իր ամբողջական ու գործօն մասնակցութիւնը բերել Իրանի ծաղկման աշխատանքներուն:

Կ'աղօթենք առ Աստուած, որ Զեզի շնորհէ առաւել իմաստութիւն, առողջութիւն ու կորով, Իրանի ազնիւ ժողովուրդին կողմէ Զեզի վստահած առաքելութեան մէջ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ**

17 Յունիս 2013

### **Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՇՆՈՐՉԱՒՈՐԵ ՔԱԹԱՐԻ ԻՇԽԱՆԸ**

Վսեմաշուք  
Շէյխ Թամիմ Պըճ Համատ Ալ Թանի  
Իշխան Քաթարի

Կը շնորհաւորենք Զերդ Վսեմութեան ընտրութիւնը, որպէս Քաթարի Իշխան: Զեզի կը մաղթենք ամբողջական յաջողութիւն՝ երկրի բարգաւաճման ու յառաջդիմութեան ի խնդիր Զեր յառաջիկայ գործունեութեան մէջ. աշխատանք, որ ընթացք առաւ Զեր Վսեմաշուք հօր՝ Շէյխ Համատ Պըճ Խալիֆա Ալ Թանիի օրով, եւ վստահաբար պիտի շարունակուի շնորհիւ Զեր ճիգերուն ու ձեռք ձգած լայն փորձառութեան:

Այս բարեբաստիկ առիթով կը ձայնակցինք Քաթարի մեր եկեղեցւոյ զաւակներուն, եւ Զեզի կը մաղթենք քաջառողջութիւն ու ամբողջական յաջողութիւն՝ Աստուծոյ օրհնութեան ներքեւ:

Ինչպէս ծանօթ է Զերդ Վսեմութեան, բաւական մեծ թիւով հայեր հաստատուած են Քաթարի մէջ, որոնք ամենայն սիրով, հպարտութեամբ ու հաւատարմութեամբ իրենց նպաստը կը բերեն Քաթարի առաւել ծաղկման ու բարգաւաճման ծրագիրներուն ու աշխատանքներուն:

Կրկին անգամ հաճեցէք ընդունիլ Մեր շնորհաւորութիւններն ու լաւագոյն մաղթանքները: Թող Աստուծոյ հովանին անպակաս ըլլայ Զեր Վրայէ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ**

27 Յունիս 2013  
Անթիլիաս, Լիբանան

## ՏՕՆԱԿԱՆ

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 18-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի 16 Յունիս 2013-ին, Անթիլիասի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ մատուցուած Ա. եւ Անմահ Պատարագի ընթացքին տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանք, Ա. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Ընտրութեան եւ Օծման 18-րդ տարեղարձին բարերաստիկ առիթով։ Մայր Տաճարին մէջ յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ, որու ընթացքին Միարան Հայրեր Աւետարանական հատուածներ ընթերցեցին եւ աղօթքներ կարդացին, բարւոք ծառայութիւն եւ արեւշատ օրեր մաղթելով Վեհափառ Հայրապետին եւ անսասանութիւն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Սուրբ Աթոռին։

Պատարագին էր Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանը։ Սրբազն Հայոց, իր քարոզին մէջ վեր առաւ Վեհափառ Հայրապետին



**Նուիրեալ ծառայութեան բազում երեսները, քաջ հովուապետի պատկերին մէջ:** *Սեպուհ Սրբազն յատուկ կերպով խօսեցաւ Նորին Սրբութեան հոգեւոր տիպարին մասին, եւ Վեհափառով Մեծի Տանն Կիրիկիոյ Կաթողիկոսութեան ստացած փայքին ու շողքին, տեղական ու մանաւանդ միջազգային շրջաններէ ներս: Ի Վերջոյ, Սրբազն Հայրը յանուն Միաբանութեան եւ համայն հաւատացեալ Հայ ժողովուրդին, արեւշատութիւն եւ քաջառողջութիւն մաղթեց Նորին Սրբութեան, որպէսզի շարունակէ իր նուիրեալ ծառայութիւնը մեր եկեղեցւոյ ու ազգին:*

**Ս. Պատարագէն անմիջապէս ետք, Միաբաններ, Ազգային Ընդհանուր Ժողովի Պատգամաւորներ եւ հաւատացեալիներ Վեհարանի դահլիճ բարձրացան, ուր նաեւ տեղի ունեցաւ «Խաչիկ Պապիկեան Հիմնադրամ»-ի մրցանակաբաշխութիւնը: Նորին Սրբութիւնը իր խօսքին մէջ, լսաւ. «Հոգեւորականը ինչ պաշտօնի վրայ ալ ըլլայ, իր առաքելութիւնը ծառայութիւնն է: Ծառայութիւնը նամբայ մըն է, ուրկէ բոլորս ալ պէտք է բայենք, տարբեր հանգամանքներով, շեշտաւորումներով ու առաջնահերթութիւններով: Սակայն, Հայ հոգեւորականին նամբան նոյնն է: Այս է որ կը սպասէ մեր ժողովուրդը եկեղեցին: Այսպէս եղաւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս: Ինքինն որպէս ծառայ ներկայացուց, ապրեցաւ ու գործեց որպէս ծառայ: Այս է Քրիստոսի հետեւելու ուխտը կատարած քրիստոնեայ մարդուն նամբան: Այս է Հայ հոգեւորականին նամբան»:**

**Աւարտին, ներկաները աջահամբոյրով շնորհաւորեցին Վեհափառ Հայրապետին Հնտրութեան եւ Օծման 18-րդ տարեղարձը եւ ստացան Նորին Սրբութեան օրհնութիւնը:**



## ՄԻՋ-ԵԿԵՊԼԵՅՑԱԿԱՆ

### ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԱՏՈՅ ԿԵՐՊՈՎ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԻՐ ՄԻՋ-ԵԿԵՊԼԵՅՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

**Երկուշաբթի 10 Յունիս 2013-ի առաւօտուն, Վեհափառ Հայրապետը իր գրասենեակին մէջ ընդունեց այցելութիւնը Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Հնդկաբարութարար՝ Դոկտ. Մ. Ճալիկին: Հնդկաբարութարարը առաջին հերթին զեկոյց տուաւ Վեհափառ Հայրապետին չուրջ մէկ շարաժ առաջ Լիբանանի մէջ տեղի ունեցած «Քրիստոնէուրեան Ենթակայութիւնը ու վկայութիւնը Միջին Արեւելքի մէջ» միջազգային համագումարին մասին: Սոյն համագումարին յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրենց գործօն մասնակցութիւնը բերած էին՝ Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպույեան, Դոկտ. Նորա Պայրագտարեան-Գապաքեան եւ Դոկտ. Ժան Սալմանեան: Ավագ Հնդկ. Քարտուղարը Խորհուրդի շրջանային գրասենեակներուն (Նիկոսիա, Դամասկոս, Գաճիրէ եւ Ամման) առնչուած որոշ հարցերուն չուրջ ուզեց ունենալ Վեհափառ Հայրապետին տեսակէտը: Հնդկ. Քարտուղարը նաեւ փոխանցեց Վեհափառ Հայրապետին Խորհուրդին նիւթապէս օժանդակող արեւմտեան Եկեղեցիներուն ենթակայացուցիչներուն գնահատանքը՝ Անթիլիասի Մայրավանքն ներս Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ շուրջ տասը օրեր առաջ տեղի ունեցած հանդիպման նկատմամբ: Վեհափառ Հայրապետը իր կարգին ողջունելով Խորհուրդին նոր նշանակուած Հնդկ. Քարտուղարին աշխոյժ գործունէութիւնը, թելաղրեց զգուշաւորութեամբ ու զգայնութեամբ մօտենալ միջեկեղեցական բնոյթ ունեցող կարգ մը հարցերուն նկատմամբ, նկատի ունենալով շրջանի կացութիւնը ու չեշտեց կարելի բոլոր միջոցներով եկեղեցիներու միջեւ գործակցութիւնը ամրապնդելու հրամայականը:**

**Երկուշաբթի 10 Յունիս 2013-ին, Ժընեւի մէջ, Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեանի (Գարիչ Միջ-Եկեղեցական Յարաբերութիւններու) ատենապետութեամբ, գումարուեցաւ Եկեղեցական Հնտանիքներու Քարտուղարներու ժողովը:**

**Ժողովականներ քննարկեցին քրիստոնէական ներկայութիւնը աշխարհի մէջ եւ քրիստոնէական վկայութիւնը Միջին Արեւելքէն ներս, Եկեղեցական Հնտանիքներու Քարտուղարներու ժողովներու արխիպէտ դասաւորումը, Եկեղեցական Հնտանիքներու Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի համաժողովին մասնակցութիւնը եւ Եկեղեցական Հնտանիքներու Քարտուղարներու յառաջիկայ ժողովին օրակարգի կէտերը:**

**Նարեկ Արքազան նաեւ առանձին հանդիպումներ ունեցաւ Հոռմէական Կաթողիկ Եկեղեցւոյ, Անկիլիքան եկեղեցւոյ եւ Լուտերական եկեղեցւոյ քարտուղարներուն հետո Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ անոնց ունեցած սերտ յարաբերութիւններուն մասին խօսեցաւ:**

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՅԱՆՉԱԽՈՒՄԲԻՆ  
ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵԶ**

**Չորեքշարժի-Ռւրբաթ՝ 26-28 Յունիս 2013-ին, Հայ եկեղեցւոյ Ծիսական Բարեկարգման Յանձնախումբը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի օրհնութեամբ, իր հերթական հանդիպումը ունեցաւ Անթիլիասի Մայրավանքին մէջ:**

**Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ սոյն յանձնախումբի անդամներն են՝ Գերշ. Տ. Միքայէլ Եպս. Աջապահեան, Գերշ. Տ. Արշակ Եպս. Խաչատրեան, Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան եւ Հոգշ. Տ. Զաքարիա Վրդ. Պաղումեան: Իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան, Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան եւ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Զիփթճեան: Հիւրաբար հանդիպումներուն իրենց մասնակցութիւնը բերին Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկեանն ու Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեանը: Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան կողմէ՝ Գերպ. Տ. Թամուլ Ծ. Վրդ. Անուշեան:**



**Յանձնախումբը իր եռօրեայ աշխատանքները կեղրոնացուց վերջնական բնագիր եւ բացատրական ուղեցոյց ներկայացնելու համար Եպիսկոպոսաց ժողովին:**

**Ժողովի առաջին օրը, կէսօրին, ժողովականները ճաշի հիւրը եղան Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբութիւնը կարեւորութեամբ շեշտեց յառաջիկայ Եպիսկոպոսաց ժողովի գումարման անհրաժեշտութիւնը եւ այդ ծիրէն ներս Հայ եկեղեցւոյ ծիսական բարեկարգութեան հրամայականը:**

## ԼՈՒՐԵՐ Պ-ՊՐԵՎԱՆԴԵՆ

### ԴՊՐԵՎԱՆՔԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍՆ ՈՒ «ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ ԵԼՈՅԹԸ

Ազգային Հնդհանուր ժողովի գումարման ծիրէն ներս, Հինգշարթի 13 Ցունիս 2013-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հանդիսապետութեամբ, Կաթողիկոսարանի «Ծնորհալի» երգչախումբը, Պիքֆայայի Դպրեվանքի շրջաբակին մէջ ելոյթ ունեցաւ, ղեկավարութեամբ՝ Հոգլ. Տ. Թորգոմ Վրդ. Տօնոյեանի եւ զաշնակահար՝ Օրդ. Տաթեւիկ Արթինեանի ընկերակցութեամբ։ Համերգը նուիրուած էր Հայ Մօր, մեկնելով Նորին Սրբութեան 2013 տարին Հայ մօր նուիրած ըլլալու իրողութենէն։ Միաժամանակ նաեւ Դպրեվանքի 2012-2013 ուսումնական տարեշրջանի Ամավերջի Հանդէսն ու վկայականաց բաշխումն ալ կատարուեցաւ։ Համերգին ու Ամավերջի Հանդէսին ներկայ գտնուեցան Միարան Հայրեր, Ազգային Հնդհ. ժողովի պատգամաւորներ եւ մշակութասէր բազմութիւն մը։



Համերգը սկսաւ Մակար Եկմալեանի «Հայր Մեր»-ով, որուն անմիջապէս յաջորդեց Դպրեվանքի Քայլերգի երգեցողութիւնը։ Ապա Հերթաբար ներկաներուն հրամցուեցան մէկ փունջ մայրերու նուիրուած երգեր, որոնք կատարուեցան «Ծնորհալի» երգչախումբի անդամներուն կողմէ հաւաքաբար եւ մեներգաբար։ Համերգի ընթացքին հանդէս եկան նաեւ, ջութակով՝ ձէնտէրէճեան եղբայրները, ասմունքով՝ Տիկին իրմա Գապաքեան-Ֆէտէյեանը եւ կիթառով՝ Մկրտիչ Միքայէլեանը։

Համերգի ընթացքին, Դպրեվանքի Տեսուչ՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան, իր



**սիրտի խօսքը ուղղեց ներկաներուն, որդիական երախտագիտութիւնը յայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ իր չնորհաւորանքը յայտնեց Դպրեվանքի աւարտական դասարանի չորս սարկաւագներուն:**

**Աւարտական դասարանի սարկաւագներու անունով ուղերձ ընթերցեց՝ Բրշ. Սեբաստիա Մրկ. Ղարախանեանը, որ անդրադառնալէ ետք անցնող ուժ տարիներուն ընթացքին Դպրեվանքէն ներս իրենց ստացած հոգեմատաւոր կրթութեան ու ուսումին, իր որդիական երախտագիտութեամբ չնորհակալութիւն յայտնեց Նորին Սրբութեան իր տածած յատուկ հոգածութեան համար, ինչպէս նաեւ չնորհակալութիւն յայտնեց Դպրեվանքի Տեսչութեան եւ Ուսուցչական կազմին:**

**Համերգի աւարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս խօսք առնելով, խօսեցաւ համերգի ընոյթի մասին, ու անդրադառնալով Հայ մօր ըսաւ. «Մարդկային կեանքին մեջ տարբեր է մանաւանդ Հայ մայրը, իր ինքնութեամբ, իր վարքագիծով եւ կոչումով: Մենք կը սպասենք ու կը պահանջենք, որ միշտ այսպէս ըլլայ ու մնայ Հայ մայրը, իր ինքնութեամբ, վարքագիծով ու իր կեանքի տիպարով: Հայ մայրը իր կոչումին բարձր գիտակցութեամբ, մեր պատմութեան ամէնէն կարեւոր ու դժուար հանգրուաններուն ինքնինք եղաւ ու դարձաւ Հայ ժողովուրդին փրկութեան նաւը մեր պատմութեան ամէնէն վնասակամ պահերուն»: Անդրադառնալով 2013 տարին Հայ մօր տարի հռչակելու իրողութեան, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «2013-ը Հայ մօր Տարի հոչակեցինք, յիշեցնելու համար Հայ մօր, որ սրբազն է, նուիրական է, վեհ է Հայ մօր դերակատարութիւնը մեր կեանքին ներս: Եւ առ այդ, Հայ մայրը պէտք է վերահաստատէ, վերարժենորէ իր առաքելութիւնը Հայ ժողովուրդի կեանքին ներս»:**

**Ապա Նորին Սրբութիւնը բարձրօրէն գնահատեց երգչախումբի ղեկավարը՝ Հայր Թորգոմը եւ երգչախումբին անդամները, դաշնակարուհին, Համերգին իրենց մասնակցութիւնը բերողները, շեշտելով Հայ երգի հարազատ դիմագիծը անաղարտ պահպանելու անհրաժեշտութիւնը:**

**Իր խօսքին երկրորդ բաժինով Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Դպրեցանքի կարեւորութեան մասին, մեր սփիւռքեան կեանքէն ներս:** Նորին Սրբութիւնը լսաւ. «Դպրեցանքը մեր Կաթողիկոսութեան սիրտն է, բայց են մեր Հայրապետները: Սուկ խօսք կամ արտայայտութիւն չէ այս բնորոշումը, այլ՝ իրողութիւն: Դպրեցանքը առաքելութիւն է՝ մարդակերտումի առաքելութիւն: Մարդը արժէք չէ երբ նպատակ է, մարդը արժէք կը դառնայ երբ ինքնինք կը նուիրագործէ իրմէ բարձր ու վեհ արժէքներու ի խնդիր»: **Իր խօսքը աւարատական դասարանի սարկաւագներուն ուղղելով, Վեհափառը լսաւ.** «Միրելի՛ տղաք, դուք միայն ուսում չստացաք Դպրեցանքին, այլեւ ոգի ու տեսիլք: Այդ ոգին ու տեսիլքը պիտի տանիք ժողովուրդին»:

**Եղրափակելով իր պատգամը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, խօսեցաւ մեր եկեղեցւոյ ու ի մասնաւորի Անթիլիասի առաքելութեան մասին, ու լսաւ. «Մեր եկեղեցւոյ առաքելութիւնը՝ ծառայութիւն է: Մեր հոգեւորականներուն արժէքը ո՞չ իրենց ունեցած վկայականներուն մէջ է եւ ոչ ալ իրենց ունեցած արժանիքներուն, այլ՝ մեր հոգեւորականներուն արժէքը կը կայանայ իրենց ամբողջական նուիրուածութեամբ կատարած ծառայութեան մէջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար էականը ծառայութիւնն է: Անթիլիասի մեծութիւնը իր ծառայութեան մէջ է: Անթիլիասի հզօրութիւնը իր ծառայութեան մէջ է»:**

**Հանդիսութիւնը վերջ գտաւ Վեհափառ Հայրապետին «Պահպանիչ»-ով:**

## ԴՊՐԵՎԱՆՔ

### ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՏԵՍՈՒՉԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

(2012-2013 ՏԱՐԵՇՐՋԱՆ)

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻ 83-ՐԴ Ուսումնական-կրթական տարեշրջանը սկսանք Կիրակի 14 Հոկտեմբեր 2012-ին, Անթիլիասի «Ա. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ մատուցուած Սուրբ եւ Անմահ Պատարագով եւ Վեհարանի դահլիճին մէջ կատարուած հանդիսութեամբ:**

**Այսօր, փա՛ռք կու տանք Ամենակալ Աստուծոյ, որ հեղասահ ու արդիւնալից տարեշրջան մը բոլորելէ ետք, Հայկական Ցեղասպանութեան խորհուրդը պարուրող շինարարական նորութիւններով առաւել գեղեցկացած Պիքֆայայի բարձունքին, աստուածային օրհնութեամբ եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովանաւորութեամբ, Դպրեկանքը իր հաշուետուութիւնը կ'ընէ «Հայ մօր տարի»-ի շրջադիմին մէջ եւ մեր Ս. Աթոռի Ազգ. Հնդհանուր Ժողովի օրերուն ու մեր բարերարներուն, բարեկամներուն եւ ծնողներուն կը միանան մեր թեմերու առաջնորդներն ու Ազգային երեսփոխանները, որոնք Դպրեկանքին անմիջական ներգործութիւնը ամէն օր կ'ապրին իրենց հաւաքական առաքելութիւնը ակօսող եւ իրարու ագուցող ծառայութեան մէջ:**

**Դպրեկանքի մէծ ընտանիքը Տիրամօր տիպարին մէջէն կը տեսնէ «Հայ Մօր Տարի»-ն, եղբ ամէն օր, «Ա. Աստուածածին» Մատուռին հարեւանութեամբ, Ս.**

**Մարիամ Աստուածամօր հովանին կը վայելէ եւ իր գուրզուրալից մօր՝ Դպրեվանքին ողջագուրումով կը ջերմանայ, Յակոբ Օշականին զրիչով անմահացած այս հայեցի զգացումները վերապրելով.**

«Աղաչեա վասն մեր զառ ի քեն  
Զմարմնացեալն Աստուած,  
Անեցուցանել յերկրի մերում»  
Ըգֆաղցը բղխումն աղբերաց,  
Զառատ պտղաբերութիւն բուսոց եւ տնկոց,  
Առ ի զուարնալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց...”

Ու բառերուն ընդմէջն մտիս գծուածը շուրք մը չէ, այլ ֆիշ մը գոց, արծուեռունգն, սեաչուի շինական արեղան, որ իր մատներով հողին է յանձնած իր սերմընցուն, դեռ աշնանային առաջին անձրեւներէն, սպասած՝ լման ձմեռը երք իր անտառը, անդաստանը, դէմի գագարները, իր մենաստանն ալ թերեւս մինչեւ կէսերը կը ծածկուէին Աստուծոյ բամպակով, ու հասած է ողջունելու Հայոց գարունը, անպատմելի այն նորաստեղծումը, ուր, գրեթէ մէկն ի մէկ, այդ հսկայ լեռնասրահը կը վերածուի աղբիւներու անհուն փերկընցի, ամեն կողմէն ու ամեն բարէ իրենց արծաթն ու ժանեալը պարզած, արեւերուն ամենէն անոյշին, ուր ծաղիկներու ալիքները իրարմէ աղուոր գոյներու հանդէս մը կը վառին այդ դաշտիկներուն վրայ: Ու ծառ ու տունկ, ցանքն ու դալարը, հարսնեւոր, հարուստ, խոնարի ու փարբամ, վանքին դարն ի վար կը բանան իրենց բարիքները» («Մա՛յր Սուրբ ...», **Սի՛ն, Յուլիս 1939, էջ 262).**

2012-2013 տարերջանի Դպրեվանքի ուղեցոյցն էր. “Քրիստոսակեդրոն կեանքը. «Եթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր ինայը եւ ետեւէս գայ» (Մը 8.34):” **Մենք այս ուղեցոյցով ապրեցանք եւ գործեցինք, Պօղոս առաքեալին հետ կրկնելով.** «Այո՛, Քրիստոսի հետ խաչին վրայ մեռայ եւ այլեւս կենդանի եմ. ես չէ որ կ'ապրիմ, այլ՝ Քրիստոս է որ կ'ապրի իմ մէջս: Այս կեանքը, որ կ'ապրիմ մարմնով, կ'ապրիմ հաւատալով Աստուծոյ Որդիին, որ զիս սիրեց եւ իր կեանքը զոհեց ինձի համար» (Գոլ 2.20), **աղօթեցինք.** «Նա ինքնիշխանութեամբ բազմեցաւ ի վերայ խաչին. կապտեաց զիշխանըն մեղսասէր. զմահու գերեալսըն յադամայ կենագործեաց ի կեանս անմահ. օրինութիւն առաքողին ի բարձունս» (**Համբարձի Յարութեան, ԳԶ, «Հրաշալի յարութիւնն», Զայնքաղ Շարական, Անմիլիաս, 1980, էջ 248)** եւ **Դպրեվանքի քայլերդին կշռոյթով ընթանալով՝ «բարձած խաչն ուխտիս մեր բեռն» բոլորեցինք մեր տարերջանը:**

Խաչեալն Քրիստոս ամէն օր մեզի զօրավիր հանդիսացաւ եւ **Ս. Հոգին հրեղինեց մեզ մեր աղօթական, կրթական եւ արտա-դասարանային կեանքին մէջ եւ մենք ժամանակէն մեր կորզածը անկորուստ մեր ժողովուրդին վերադարձնելու խոստումով, յաջող տարի մը եւս փորձեցինք պատուաստել Դպրեվանքի Հայ-քրիստոնեայ մարդու թրծումի աւելի քան ութսունամեայ երախտարժան ճիգին վրայ եւ կը շարունակենք մեր սրբազնն երթը՝ մեր ժողովուրդի հոգեւոր-ազգային խաչակրութեան մեր ամբողջանուէր մասնակցութիւնը բերելով ու մեր համեստ նպաստը **Ս. Ղեւոնդեանց Քահանաներուն մտատիպարով կնքած, կ'այցելուինք Ս. Ներսէս Շնորհալիի [1102-1173] յօրինած շարականին սրտապնդիչ պատգամով.** «Ամբարբշտաց եւ անսըրբոց մատուցան ձեռօք նըւիրական Պատարագ ընծայից բագաւորին երկնաւորի որ հրաւիրեաց արեամբն իւրով լինել կցորդ խաչին սեղանոյ. կամակար մըտօք զիմեան սիրողաց» (**Ս. Ղեւոնդեանց Ճաշու, ԳԶ, Զայնքաղ Շարական, Անմիլիաս, 1980, էջ 413):****

**Ահա, յանուն Աստուծոյ եւ հայութեան, յանուն հայադրո՛շմ քրիստոնէութեան, այս անարիւն պատարագումի ենթահողին վրայ կը հրաւիրենք ձեզ կարդալու մեր ինքնութեան, կազմաւորման եւ առաքելութեան 2012-2013 տարեշրջանի պատկերը ցոլացնող այս տեղեկագիրը, որ տասը մասեր կ'ընդգրկէ:-**

### Ա) ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

**Տեսչութեան մաս կազմեցին Փոխ-տեսուչ՝ Հոգչ. Տ. Յուսիկ Վրդ. Մարտիրոսեանը եւ Հսկիչներ՝ Հոգչ. Տ. Պօղոս Արդ. Թիմքնեանը, Հոգչ. Տ. Գարեգին Արդ. Շիրազմեանը եւ Հոգչ. Տ. Զարեհ Արդ. Սարգիսեանը:**

**Նկատի ունենալով ժանանակակից սերունդին կարգապահական յաւելեալ ուշադրութեան պահանջը, հնգանողամ Տեսչութիւնը կարողացաւ իր աշխատանքը ներդաշնակորէն վարել, Դպրեկանքի առօրեան համերաշխ գործակցութեան մթնոլորտի մէջ պահել, զայն սերտօրէն համազրել ուսուցչական կազմին եւ ուսանողութեան աշխատանքներուն հետ ու միաժամանակ ապրիլ միարանական եղայրութեան համայնական կեանք մը:**

**Տեսչութիւնը մօտէն հետեւեցաւ սաներուն կազմաւորման եւ հոգ տարաւ անոնց քրիստոնէական եւ հայեցի թիժման, զանոնք պատրաստելով ապագայի ամբողջանուէր ծառայութեան:**

**Շնորհակալութիւն՝ գործակից հոգեւոր եղայրներուս, իրենց ժամանակին եւ ուշադրութեան մեծագոյն մասը Դպրեկանքին տրամադրելուն համար:**

### Բ) ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

**Դպրեկանքի ուսուցչական կազմը բաղկացաւ 28 ուսուցիչներէ (12 հոգեւորական՝ 10 Միարան Հայրեր եւ 2 Լիրանանի Հայոց Թեմի Քահանայ Հայրեր ու 16 աշխարհական), գլխաւորութեամբ Արամ Ա. Վեհափառ Ա. Հայրապետին: Նորին Սրբութիւնը Զորեքշարժի օրեր Պիքֆայա բարձրացաւ եւ Աստուածարանութիւն դասաւանդեց Դ. Ընծայարանի սաներուն ու նաեւ Հայրաբար մօտէն հետեւեցաւ Դպրեկանքի գործունէութեան հունաւորման:**

**Մեր ուսուցչական կազմին գծով, երկու հիմնական քայլերու դիմեցինք.-**

**ա. Տեսչութեան անդամներ յաւելեալ թիւով դասեր ստանձնեցին, որպէսզի աւելի նուազ թիւով Միարան Հայրեր պարտաւորուած ըլլան իրենց պաշտօններէն անջատւելու եւ Անմիլիասէն Պիքֆայա բարձրանալու:**

**բ. Երկու նախկին շրջանաւարտ դպրեկանեցիներ՝ Քրիստափոր Աւ. Սրկ. Միքայէլեանը եւ Խաժակ Կիս. Սրկ. Նալպանտեանը սկսան դասաւանդել Դպրեկանքի մէջ:**

**Մեր ուսուցչական կազմին միացան՝ Հոգչ. Տ. Պարոյր Արդ. Շէրնէզեան, Յասմիկ Գասպարեան, Յովսէկ Գասպարեան, Գէորգ Պէպէճեան եւ Վրէժ Օհանեան:**

**Դասաւանդութիւնները տեղի ունեցան Երկուշարժիէն Ուրբաթ, առաւօտեան ժամը 9.00-էն մինչեւ յետ-միջօրէի ժամը 2.00-ը:**

**Տարեշրջանի սկիզբը ուսուցիչներ իրենց կրթական ծրագիրը ներկայացուցին Տեսչութեան եւ ըստ այնմ մեր կրթական ընդհանուր ծրագիրը նախապատրաստըցաւ եւ գործադրուեցաւ:**

**Ուսուցչական կազմը իր մասնագիտութեամբ եւ նուիրումով մեծ նպաստ բերաւ դպրեկանեցիներու ուսումնական կեանքին եւ անոնց Հայ քրիստոնեայի նկարագիրին**

**առողջ կազմաւորման:**

Շնորհակալութիւն՝ մեր ուսուցիչներուն, մեր սաներու մտակերտումին հանդէպ  
իրենց ցուցաբերած պարտաճանաչութեան եւ նուիրեալ աշխատանքին համար:

#### Գ) ՈՒՍՏԱՆՈՂՈՒԹԻՒՆ

Տարեշրջանի սկիզբը մեր սաները պարզեցին հետեւեալ պատկերը.-

Ա. Ժառանգաւորաց՝ 11 սան

Բ. Ժառանգաւորաց՝ 7 սան

Գ. Ժառանգաւորաց՝ 9 սան

Դ. Ժառանգաւորաց՝ 5 սան

Ժառանգաւորաց՝ 32 սան

Ա. Հնծայարան՝ 8 սան

Բ. Հնծայարան՝ 8 սան

Գ. Հնծայարան՝ 5 սան

Դ. Հնծայարան՝ 4 սան

Հնծայարան՝ 24 սան

Սաներու ընդհանուր գումար՝ 56 սան:

Համեմատաբար անցեալ տարեշրջանին, մեր սաներուն թիւը աճ արձանագրած էր: Անոնք կու գային Սուրիայէն (38 սան), Լիրանանէն (15 սան), իրանէն (2 սան) եւ Մալիկիայէն (1 սան):

Շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր անոնց, որոնք նոր դպրեվանեցիներ ունենալու գծով օժանդակեցին Տեսչութեան եւ յատուկ չնորհակալութիւն բոլոր ծնողներուն՝ իրենց զաւակները Դպրեվանքի Հայ մարդու կազմաւորման առաքելութեան յանձնելու որոշումին համար:

Տարեշրջանը կը փակենք 50 սաներով: Գ. Հնծայարանէն հալէպահայ Բրշ. Յակոբ Սրկ. Գարտանաքեան, ծնողքին անտեսապէս օժանդակելու պարտաւորութեամբ, Դպրեվանքը ձգեց: Տեսչութիւնս պարտաւորուեցաւ Բ. Հնծայարանէն եազուպիահայ Յովհաննէս Կիս. Սրկ. Ստեփանեանը ազատ կացուցանել Դպրեվանքի սան ըլլալէ: Բ. Հնծայարանէն հալէպահայ Գէրորդ Կիս. Սրկ. Տմարմեան, զիմուորական թուղթերու վերանորոգութեան բարդութեան բախելով, չկարողացաւ Սուրիայէն Դպրեվանք գալ: Ա. Հնծայարանէն պէյրութահայ Անդրանիկ Թաշճեան որոշեց գալ տարեշրջանին ամուսնացեալ քահանայութեան դասընթացքին հետեւիլ Անթիլիասի մէջ: Ա. Հնծայարանէն հալէպահայ Աշոտ Լեւոնեան ծնողներուն միացաւ Երեւանի մէջ եւ այժմ կ'ուսանի Ս. Էջմիածինի Հոգեւոր Ճեմարանը: Գ. Ժառանգաւորացէն հալէպահայ Դանիէլ Գէրորգեան ծնողներուն հետ Երեւան փոխադրուեցաւ:

Սաներու թիւին աճման պատճառաւ, Պիբֆայայի Միարանական շէնքի առաջին յարկը տրամադրուեցաւ Տեսչութեան երկու անդամներու եւ հիւր դասախոսներու կեցութեան:

Գնահատանք կ'արձանագրեմ մեր սաներուն, որ յաջող արդիւնքով աւարտեցին այս տարեշրջանը: Առաւել, յատկապէս կը գնահատեմ մեր սուրիահայ ծնողները, որոնք ամբողջ տարեշրջան մը իրենց զաւակները չտեսնելու գոհողութիւնը յանձն առին, իրենց զաւակներուն Փիզիքական ապահովութեան սիրոյն:

Սուրիոյ յամեցող տագնապը նկատի ունենալով, սուրիահայ սաները, մեր ընծա-

յարանական սաներուն հետ, ամառը եւս Դպրեվանք պիտի պահենք եւ բոլորին համար ամառնային յատուկ դասընթացք պիտի հաստատենք:

Նաեւ, Մայիսի սկիզբէն արդէն նախաճեռնեցինք Լիբանանէն, Սուրիայէն եւ Հայաստան հաստատուած սուրբիահայերէն Դպրեվանքի նոր սաներ արձանագրելու աշխատանքին, որպէսզի անոնք եւս ամառը իրենց դպրեվանեցի եղբայրներուն միանան եւ օգտուին ամառնային դասընթացքի բարիքէն:

Հայ եկեղեցւոյ Հայրապետներուն մշտահունչ բառերով կ'աղօթենք Ս. Աստուածածինին, յատկապէս Սուրիան եւ մեր սուրբիահայ գաղութը հասցէ ունենալով. «Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմնացեալ Աստրւած, զի լրուսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունըք թշնամեաց, տնկեսցի սէր եւ արդարութիւն ի յերկրի. աղաչեմք: Մայր սուրբ բարեխօսեա» (Ժամագիրք, «Սուաւունեան ժամերգութեան Քառոց», Անժիլիաս, 1986, էջ 300):

#### Դ) ՀՈԳԵՒՈՐ-ԱՂՋՄԱԿԱՆ ԿԵՍՆՔ

Դպրեվանքէն ներս կրօնական շունչով յագեցան մեր բոլոր աշխատանքները եւ մեր սաները հասակ առին իրենց առօրեայ հոգեւոր սնունդը Հայ եկեղեցւոյ ու Հայոց Պատմութեան հոգեկրթիչ ակունքէն ընպելով:

«Ս. Աստուածածին» Մասուռին մէջ դպրեվանեցիներ ամէնօրեայ առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութիւններ կատարեցին ու Կիրակի եւ տօնական օրերուն մասնակցեցան Անժիլիասի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին եկեղեցական արարողութիւններուն ու Սուրբ Պատարագին:

Աղօթական կեանքին առնչուեցաւ նաեւ սաներու հոգեյատակի խնամքը, որ տեղի ունեցաւ Աստուածաշունչի եւ Հայ եկեղեցւոյ հոգեւոր զրականութեան ընթերցանութեամբ, խորհրդածութեամբ եւ բարոյախօսութեամբ:

Ընծայարանական սաներ առիթ ունեցան իրենց հոգեմտաւոր աշխարհը պեղելու, երբ Մեծ Պահքի շրջանին եւ այլ մասնաւոր առիթներով Լիբանանի թեմի եկեղեցիներուն մէջ քարոզեցին, «Վանայ Զայն» ձայնասփիւուի կայանի կրօնական յայտագիրներուն ու Հարցազրոյցներուն մասնակցեցան եւ Դպրեվանքի «Գլածոր» տարեգիրքին մէջ ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ ստորագրեցին:

Տեսչութիւնը նախանձախնդրութեամբ հետեւեցաւ Դպրեվանքի կեանքի հոգեւոր երեսին եւ ջանաց սաներուն հոգեւոր աճումին համար ստեղծել անհրաժեշտ առիթներն ու պայմանները:

#### Ե) ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՐԱՅԻՆ ԿԵՍՆՔ

Դպրեվանքի աղօթական-հոգեւոր եւ ուսումնական-իմացական կեանքը ամրող-ջացաւ արտադասարանային-ընկերային կեանքով, երբ դպրեվանեցիներ իրենց ազատ ժամերը իմաստաւորելու նախանձախնդրութեամբ սոզորուեցան:

Արտադասարանային կեանքը կազմակերպուեցաւ Տեսչութեան հետ համախորհութիւնը հուրդ, հինգ խմբակներու բաժնուած սաներուն վստահուած պատասխանատուութիւններու ճամբով.-

ա. Ռւանողական Խորհուրդ

բ. «Գլածոր» Տարեգիրքի Խմբագրական Կազմ

**գ. Տեղեկատուական Խմբակ**

դ. «Պատիք թերթ»ի Խմբակ

**ե. Ասմունքողներու Խմբակ**

Այս հինգ խմբակներով, սաներ իրենց կեանքը մշակութային, գրական եւ դաստիարակչական բազմազան ձեռնարկներով լեցուցին ու պատանի տարիքէն հաւաքական կազմակերպչական աշխատանք կատարելու վարժութիւն ձեռք ձգեցին:

Զանագան առիթներով Հայ եւ օտար հոգեւորականներ, մտաւորականներ, արևեստագէտներ, նախկին դպրեվանեցիններ ու Հիւրեր Դպրեվանք այցելեցին, դասախոսութիւններ տուին, կլոր սեղանի զրոյցներու մասնակցեցան եւ մեր սաներուն հետեղան. առաւել, դպրեվանեցիններ իրենք եւս Լիբանանի մէջ եկեղեցական արարողութիւններու մասնակցեցան եւ նկարչական ցուցահանողէններու ու գեղարուեստական ձեռնարկներու ներկայ գտնուեցան:

Այս բոլորին կողքին, սաներ գուարթ երեկոններ, պտոյտներ, դաստիարակիչ Փիլ-մեր եւ հեռատեսիլ դիտելու պահեր ու մարգախաղի կանոնաւոր ժամեր ունեցան եւ երիտասարդական հանդիպումներու մասնակցեցան:

Դպրեվանքի փակ մարգարահի բոլոր կազմածները նորերով փոխարինուեցան, չնորհիւ Երեւանի Viva Cell-MTS Ընկերութեան Տնօրէն՝ Տիար Ռայֆ Եիրիքեանի նորիատութեան:

Սաներ նաեւ Ս. Աթոռիս հովանիին տակ գործող «Խաչիկ Պապիկեան Հիմնադրամ»-ի կազմակերպած Հայ լեզուի, Հայ գրականութեան, Հայոց Պատմութեան, Հայ մշակոյթի եւ կրօնական նիւթերու մրցոյթին մասնակցեցան ու մրցանակներու տիրացան:

Շնորհակալութիւն՝ այն հայորդիներուն, որոնք օժանդակեցին Տեսչութեան Դրաբեկանքի արատաղասարանային-ընկերային կեանքի առաւել քաղցրացման:

**Զ) ՆԱԽԱԳԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

Դպրեվանքէն ներս այս տարի եւս շարունակուեցան անցեալ տարեշրջանի նախաձեռնութիւնները, որոնք նորերով լրացան եւ դպրեվանեցիններու կեանքին վրայ դրական ազդեցութիւն ներգործեցին.-

ա. Հնծայարանի սաներուն laptop համակարգիններ տրամադրուեցան, որոնք դասերու պատրաստութեան եւ դասարանէն ներս որոշ դասանիւթերու ընթացքին օգտագործուեցան:

բ. Շարունակուեցաւ Դպրեվանքէն ներս մնայուն ցուցահանողէս ունենալու ծրագիրը եւ ցարդ շուրջ 29 արուեստագէտ-արուեստագիտուհիններ Տեսչութեան կոչին դրականօրէն պատասխանեցին:

գ. Մատենադարանը հրատարակչատուններէ եւ անհատ մտաւորականներէ նուէր ստացուած նոր հրատարակութիւններով ճոխացաւ: Տեսուչ Սրբազանը իր բոլոր գիրքերը Դպրեվանքի մատենադարանին նուիրեց:

դ. «Վանայ Ձայն» ձայնասփիւռի կայանէն դպրեվանեցիններուն կողմէ պատրաստուած զանազան հոգեւոր խորհրդածութիւններ եւ հարցազրոյցներ սփոռուեցան:

ե. Համացանցով, ձայնասփիւռով եւ մամուլով, Դպրեվանքի առօրեան ու դործունէութիւնը կանոնաւորաբար ցոլացին:

զ. Դպրեվանքի Facebook-ին վրայ, ընթացիկ լուրերու կողքին, Հայ եկեղեցւոյ աստուածաշնչական ընթերցումներու կանոնին հետեւելով, Աստուածաշունչէն եւ

**Նարեկ Աղօթամատեանէն քաղուած ընթերցումներ դրուեցան:**

**Է. Դպրեվանքը իր արձանագրութեան studio-ն ունեցաւ:**

**Ը. Դպրեվանքը ծանօթացնող տեսասկաւառակներու ու խտասկաւառակներու երիզաշարը երկու նոր խտասկաւառակներով ճոխացաւ:**

**Ժ. Դպրեվանքի մատենաշարին երկրորդ գիրքը լրյա տեսաւ:**

**Ժ. Ամէն ամիս սաներու եւ ուսուցիչներու ծննդեան տարեղարձները նշուեցան:**

**Ժ.ա. Լիբանանէն աւելի մեծ թիւով սաներ ունենալու հետանկարով, քարոզչական յատուկ աշխատանք տարուեցաւ՝ ուղղակի կապ հաստատելով դպրոցի տնօրէններուն, եկեղեցիներու տիկնանց միութիւններուն, եւ այլ միութիւններու ու ծնողներու հետ:**

**Ժ.Բ. Դպրեվանքը ժողովուրդին ծանօթացնելու համար, իր արտասահմանեան միջեկեղեցական ճամբորդութիւններու ընթացքին, Տեսուչ Սրբազնը հանդիպումներ ունեցաւ մեր Թեմակալ Առաջնորդներուն հետ եւ 5 Օգոստոս 2012-ին դասախոսութիւն մը տուաւ Լու Անճելլուի մէջ, 22 Ապրիլ 2013-ին ան այցելեց Նիկոսիոյ «Նարեկ» վարժարանը եւ տնօրէնուհիին հետ քննարկեց կիպրահայ սաներ Դպրեվանք դրկելու կարելիութիւնները, 10 Մայիս 2013-ին, Պուրծ Համուտի մէջ, Համազգայինի Գէորգ Գանտահարեանին նոուիրած յիշատակի երեկոյին, ան խօսք առնելու հրաւիրուած ըլլալով, ներկաներուն կոչ ուղղեց Դպրեվանք սան ուղարկելու:**

**Ժ.Գ. Դպրեվանքի ուսումնական ծրագիրը վերատեսութեան ենթարկուեցաւ եւ մեզ դիմագրաւող մարտահրաւէրներուն առաւել համահունչ դարձաւ:**

### Ե) ՀՈՒՆՁՔ

**Դպրեվանեցի մշակներս մեր սաներուն բանաւոր անդաստանի միամեայ ցանն ու հերկը այս տարի եւս հունձքով կը վայելենք:**

**Երբ Դ. Ընծայարանէն շրջանաւարտ դարձած եւ այսօր Վեհափառ Հայրապետին օծեալ Սուլր աջով իրենց վկայականները ստացող Բրշ. Սերաստիա Աւ. Սրկ. Ղարախանեանը, Բրշ. Համբարձում Աւ. Սրկ. Պալքճեանը, Բրշ. Անդրանիկ Աւ. Սրկ. Տալգլճեանը եւ Բրշ. Վիգէն Աւ. Սրկ. Քիւրքեանը կը տեսնենք բեմին վրայ, նահատակ բանաստեղծին անմեռ բաւերը կը յաճախեն մեզ.-**

«Քեզ կը բերեմ Մա'յր հունձքերուս նախընծան:

...

Դուն, խաչքուն այս, զոր իմ ձեռքով եմ հիւսեր,  
Ընդունէ՛ Մա'յր:

...

Ես հիւսեցի զանոնք, գիսակ առ գիսակ,  
Տալով խաչին ձեւը Որդույդ կարեվէր՝  
Որուն արիւնն, ամէն Զատկի սուրբ կը բակ,  
Մեր ակօսներն են խըմեր:

...

Մա'յր, խաչքուն այս օրհնէ՛»

(Ոգեղէն Հաց, Դանիէլ Վարուժան, «Խաչքուն», Անթիլիաս, 1982, էջ 123):

**Սիրելի՝ շրջանաւարտ սարկաւագ եղբայրներ,**

**Մօտ ատենէն ձեզմէ երեքը կուսակրօն քահանայութեան ուխտով պիտի միանան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անձնղիր Միաբանութեան եւ մէկը պիտի ընտրէ ամուսնացեալ քահանայութեան ծառայական ուղին:**

**Ձեր ուսանողական առաջին օրերէն մինչեւ այսօր, դուք այս օրուան համար հոգեմտաւոր զօրաշարժի հրաւիրուեցաք, քահատեղեակ ըլլալով, թէ Դպրեվանքի կազմաւորման սլաքը մեր ծառայական ողին հրագինող Հայ ժողովուրդն է:**

**Հասած է պահը ձեր Հոգեհանքը մեր եկեղեցոյ եւ մշակոյթի ճանապարհին վրայ պեղելու եւ Դպրեվանքին ձեր ամբարածը արտահանելով՝ մեր հաւաքական կեանքը ծաղկուն պահելու:**

**Դպրեվանքեան սաղմնաւորումը ձեզ պատրաստեց ձեր պատեանին մէջ քաշուած կրաւորական կեանքը ժխտելու եւ երէկի կարողականութիւնն ու այսօրուան կարելիութիւնը վաղը իրագործուած բարիքի ու արժէքի վերածելու:**

**Սրտագինս կը չնորհաւորենք ձեզ, բարի առաքելութիւն եւ ատոք վարձատրութիւն մաղթելով ձեզի ձեր քրիստոսակեղրոն կեանքով ու անձնազոհ ուխտով մեր ժողովուրդին երթարու ձեր նախաքայլերուն մէջ, որ անձնական վկայութեամբ միայն կրնայ տիրական դառնալ՝ ունկնդիր Յովհաննէս առաքեալի թելադրութեան. «Խսկ տրուած վկայութիւնը սա է, թէ Աստուած յախտենական կեանք տուաւ մեզի եւ այդ կեանքին աղբիւրը Որդին ինքն է» (Ա. Յ. 5.11):**

### Ը) ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**Աստուածային չնորհին Անթիկիաս վերհեղումով, Հոգեգալուստի տօնին, Կիրակի 19 Մայիս 2013-ին, Գերշ. Տ. Կորիւն Արք. Պապեանի ձեռամբ, Խաժակ Կիս. Սրկ. Նալպանտեան եւ Բ. Հնծայարանէն Յարութիւն Կիս. Սրկ. Բանձարձեան, Սարգիս Կիս. Սրկ. Կարապետեան, Պետրոս Կիս. Սրկ. Մանձիկեան, Կարապետ Կիս. Սրկ. Նաձարեան եւ Շանթ Կիս. Սրկ. Շառոյիեան Սարկաւագ ձեռնադրուեցան:**

**Կիրակի 2 Յունիս 2013-ին, Գերշ. Տ. Նորայր Եպս. Աշրգեանի ձեռամբ, Գէորգ Նալպանտեան եւ Ա. Հնծայարանէն Սարգիս Անձմեան, Համլիկ Զաքարեան, Մովսէս Խաչատուրեան, Յարութիւն Կիւլյեան, Յովհաննէս Զուալերթանեան եւ Պօղոս Քեսապլեան Կիսասարկաւագ ձեռնադրուեցան ու Գ. եւ Ա. Ժառանգաւորացէն Տիգրան Զապոնեան, Եսայի Մանուկեան, Ներսէս Գողանեան, Բաֆֆի Գասապեան, Շանթ Գարակէօգեան, Կարապետ Էօրտէքեան, Զօհրապ Մանուկեան, Յարութիւն Զիւլարչեան, Ղազար Քէօշէկրեան եւ Յակոր Քիւրտեան Դպրութեան կարգ ստացան:**

**Կիրակի 23 Յունիս 2013-ին, Գերշ. Տ. Շահէ Եպս. Փանոսեանի ձեռամբ, Գ. Հնծայարանէն Բրշ. Սերաստիա Աւ. Սրկ. Ղարախանեան, Բրշ. Համբարձում Աւ. Սրկ. Պալլքճեան եւ Բրշ. Անդրանիկ Աւ. Սրկ. Տալզլըճեան Արեղայական ձեռնադրութիւն պիտի ստանան: Խսկ Վիգէն Աւ. Սրկ. Քիւրքեան ապագային որպէս ամուսնացեալ քահանայ Դպրեվանքը պիտի տանի մեր հաւատացեալ ժողովուրդին:**

**Կր չնորհաւորենք մեր նորոգ ձեռնադրեալ սաները, մաղթելով որ եկեղեցական աւելի բարձր աստիճաններու արժանանան եւ նորոգեալ նորիրումով շարունակեն իրենց ծառայական կեանքը:**

**Թ) ԾՐԱԳԻՐՆԵՐ ԵՒ ՄԱՐՏԱՀՐԱՄԱԿԻՐՆԵՐ**

իր սրբազն առաքելութեան իրագործման համար, Դպրեվանքը շարունակակա-նօրէն ինքինք վերատեսութեան եւ վերարժելորման կ'ենթարկէ:

**Ապագայի մեր ծրագիրներն են.-**

ա. Կրթական համակարգի, ուսուցչական կազմի եւ ուսանողութեան մասնագի-տական եւ հետեւողական բարելաւում ու վերադասաւորում:

բ. Ա. Ժառանգաւորացէն Դ. Հնծայարան լեզուներու դասաւանդում նոյն ուսու-ցիչներուն կողմէ:

գ. Մատենադարանի վերադասաւորում եւ արդիականացում:

դ. Նախկին դպրեվանքեցիներէ բաղկացած միութեան կազմութիւն:

ե. Համալսարանական երիտասարդներու յատուկ դասարանի բացում:

զ. Ի պահանջել հարկին Սուրբոյ, իրանի եւ Հիւսիսային Ամերիկայի մէջ Դպրե-վանքի մասնաճիւղերու հաստատում:

է. Փակ մարզադաշտի կառուցում:

ը. 14 սաներու ճամբորդութիւնը ապահովող փոխադրակառքի ձեռքբերում:

իսկ Դպրեվանքին դիմաց ծառացող գլխաւոր երեք մարտահրաւէրներ կան.-

ա. Սուրբոյ մտահոգիչ կացութեան երկարագումը կը պարտաւորէ Տեսչութիւնը մեր սուրբահայ սաները ամբողջ տարուան ընթացքին, ներառեալ ամառնային երեք ամիսներու արձակուրդը, Դպրեվանք պահելու: Դժբախտաբար Սուրբիան մօտակայ խաղաղութեան յոյս չի՝ ներշնչեր տակաւին եւ այս տագնապը գալ տարեշրջանէն սկսեալ կրնայ ժիստական անդրադարձ ունենալ մեր սաներու ընդհանուր քանակին վրայ, որովհետեւ դպրեվանքեցիներուն ջախճախիչ մեծամասնութիւնը սուրբահայ է:

բ. Լիրանանէն դպրեվանքեցիներ ունենալու աշխատանքը Դպրեվանքի Տեսչու-թեան առաջնահերթութիւններէն մին է: Լիրանանահայ սաներու թիւի աճման աշխա-տանքները աշխոյժօրէն պիտի շարունակինք եւ կը յուսանք դրական արդիւնքի յան-դիլ մեզի օժանդակող պատասխանատուներուն ջանքերով:

գ. Միջին Արեւելքի ընկերա-քաղաքական ընդհանուր վիճակը եւ առաւել տարա-ծուն սփիւռքահայութեան առկայութիւնը, աւելի կը համոզէ մեզ, որ մեր բոլոր թեմե-րէն եւ ամբողջ Հայ Սփիւռքէն ուսանողներ ապահովելու յատուկ ճիզ պէտք է կատա-րենք: Անցած են այլեւս Միջին Արեւելքէն մարդոյց ներածելու օրերը: Դպրեվանքի Տեսչութիւնը ճիշդ կը նկատէ, որ մեր սաները իրենց ծննդավայրերէն Դպրեվանք գան, կազմաւորուին եւ ապա իրենց հարազատ շրջապատը վերադառնալով առաւել արդիւնաւորութեամբ լծուին մեր ծով կարիքներու գոհացման սրբազն առաքելու-թեան:

**Ժ) ՇՆՈՐՀԱԿԱԼԻՒՔ**

Որդիաբար երախտագիտութիւն կը յայտնեմ Սրբազնագոյն Հայրապետին, որ իր Հայրական հոգածութեան եւ մնայուն գուրգուրանքին առարկան դարձուց Դպրե-վանքը:

Եղբայրական չնորհակալութիւն կը յայտնեմ Ս. Աթոռիս Միաբանութեան բոլոր անդամներուն, որոնք իրենց ստնտու մօր՝ (alma mater) Դպրեվանքի առաքելութեան զօրավիզ հանդիսացան եւ Տեսչութեան հետ գործակցեցան:

Շնորհակալութիւն կը յայտնեմ Դպրեվանքին նիւթա-բարոյապէս նեցուկ կանգ-

նած մեր բոլոր ներկայ եւ բացակայ բարերարներուն ու բարեկամներուն, որոնք մեր մարդու ճարտարապետումի աշխատանքին մասնակցեցան:

Դպրեվանքի անկորնչելի դրամագլուխը ՄԱՐԴՆ է: Դպրեվանքը կենսունակ եւ առողջ պահել կը նշանակէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բազմերես եւ յարաճուն առաքելութեան ներգործութիւնը խորանարդել ՄԱՐԴով, մանաւանդ երբ այսօր մեր ժողովուրդը ճակատագիրին հեծանով սփռուած է աշխարհի չորս կողմերը եւ աճող ակնկալութիւններ կը սնուցուին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ անոր Դպրեվանքին հանդէպ:

ՆԱՐԵԿ Ա.ՐԳ. ԱԼԵԿՄԵԶԵՍՆ

## «ԴՊՐԵՎԱՆՔԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

**Անեղծելի փաստ է որ Հայ ժողովուրդի պատմութեան ընթացքին վանքերն ու վանական համալիրները եղած են զիսութեան, կրթութեան, լուսաւորութեան կեղուններ եւ համարաբաններ, ուր ուսում ստացած են ընարեալներու փաղանդ մը, դառնալով Հայ ժողովուրդի կրօնական եւ ազգային ուահկիրանները:**

Հակառակ այն ցաւալի իրականութեան որ գիրքը սկսած է դառնալ լուսանցքային մեր կեանքէն ներս, այսուհանդերձ, տակաւին կան եւ պիտի մնան նուիրեալ հեղինակներ, գրողներ եւ հրատարակիչներ:

**Կ'արժէ խօսիլ «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Դպրեվանք Մատենաշար»-ին, եւ անոր երկու հրատարակութիւններուն մասին:**

Մեծ յանդգնութիւն եւ գնահատանքի արժանի գործ է Տեսչութեան եւ առաւելապէս Տեսուչ՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէգեանի ձեռնարկած՝ մատենաշար հաստատելու ազգանուէր գործը, որ իր իսկ բառերով կը միտի «Դպրեվանքին անցած սաներու անտիպ կամ մասուլի մէջ ցրուած գրութիւնները հատորով լոյս ընծայել եւ Դպրեվանքի առաքելութեան մասնակից ընթերցողներուն հասցնել»:

**Ահաւասիկ այս մատենաշարին արգասիքը հանդիսացող երկու հատորներ:**

Առաջին հատորը մեծ ուսուցիչ, վաստակաւոր եկեղեցական եւ ուսանողներու շրջանակին մէջ «Չրչուն համայնագիտարան» նկատուած՝ Գերշ. Տ. Արտաւագդ Արք. Թրթուեանին գործն է, լոյս տեսած 2012-ին, որուն առաջին մասին մէջ կը հանդիպինք տասնեակ քարոզներու, պարզ հասկնալի եւ տրամարանական ոճով:

Երկրորդ բաժինը կը պարփակէ ուսումնասիրութիւններ, որոնք ակնյայտօրէն ցոյց կու տան հեղինակին հայագիտական եւ միջ-եկեղեցական շարժման մասին հմտութիւնը:

Երրորդ բաժինով կը պարփակէ ուսումնասիրութիւններ, որոնք ակնյայտօրէն ցոյց կու տան հեղինակին հայագիտական եւ միջ-եկեղեցական շարժման մասին հմտութիւնը:

Ի վերջոյ հատորը կ'աւարտի յօղուածներու շարքով, որ երբեմն յուշագրութիւններու տպաւորութիւն կը թողու ընթերցողներուն վրայ, կապուած գանազան մեծա-

**նուն մարդոց հետ, ինչպէս՝ Խորէն Ա. Կաթողիկոսին, Շահան Պէրպէրեանին եւ Խորէն Գարիկեանին:**

**Գալով հատորի անուանումին, միայն Արտաւազդ Արք. Թրթուեանը ճանչցողը զիտէ «Հաւատարմութիւն, հեզութիւն եւ աշխատասիրութիւն» բառերուն իմաստն ու մարմնացումը:**

**Մատենաշարի երկրորդ արդասիքը երկար տարիներու կրթական մշակ՝ Սարգիս Փանոսեանի «Ազգային եւ միջազգային ընդհանուր զարգացման հարցումներ եւ պատասխաններ» հատորն է, լոյս տեսած 2013-ին, որ ունի հանրագիտական տիպի հարցպատասխանի ձեւ, եւ կը բովանդակէ զանազան նիւթերու շուրջ Հայ աշակերտին միտքը յուզող հարցումներ եւ պատասխաններ:**

**Վարձքը կատար այս հատորներուն հրատարակման մաս եւ բաժին ունեցող բոլոր աշխատակիցներուն եւ մեկենասներուն, նորանոր յաջողութիւններ «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Դպրեվանք Մատենաշար»-ին, Դպրեվանքի Տեսչութեան եւ սաներուն:**

**Թող Հայ գիրքը մնայ բոլորին հասանելի, սիրելի եւ ընթերցելի մեր բոլորին կողմէ, որովհետեւ կրթութիւնն ու լուսաւորութիւնն է Հայ ժողովուրդի գոյութեան երաշխիքը:**



ԳՐԻՍԱ.ՓՈՐ ՄԻՔԱՅՈՒՄԵՍՆ

## ԴՊՐԵՎԱՆՔԻ ՆՈՐԱՐԱՍՏԱՏ ԵՐԻԶԱՇԱՐԸ

**Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը կը գտնուի Պիքֆայայի բարձունքին, ուր զանազան հայագաղութիւններէ եկած Հայ պատանիներ ու երիտասարդներ ուսում եւ հայեցի կրթութիւն կը ստանան, հոգեպէս եւ բարոյագէս կը թրծուին ու Հայ եկեղեցւոյ եւ ազգին ծառայութեան նուիրուելու կը պատրաստուին:**

**Դպրեվանքը մեկուսացած պարզ զիշերօթիկ չէ, այլ ան 1930-էն ի վեր կը դարբնէ այնպիսի նուիրեալ մտաւորականներ եւ հոգեւորականներ, որոնք ամբողջական նուիրումով մեր ժողովուրդին կ'երթան: Անոնք աշխատանքի եւ ծառայութեան ողին կ'առնեն Դպրեվանքէն եւ մեր ազգին երթալով՝ Հայ ժողովուրդը դէպի Աստուած կ'առաջնորդեն:**

**Դպրեվանքին գլխաւոր նպատակը հայակերտումն է, որ երկու հանգրուաններով կ'իրագործուի: Դպրեվանեցիներ, նախ Ժառանգաւորաց բաժինին մէջ, մեր ժողովուրդի հոգեւոր եւ իմացական գանձերուն ժառանգորդը կը դառնան եւ ապա, Հնծայարանի բաժինին մէջ, իրենց անձնղիր ընծայման նախաքայլերը կ'առնեն:**


**Դպրեվանեցիներ արդէն իսկ իրենց առաքելութեան կը լծուին երբ ընծայարանական կը դառնան: Հնծայարանականներ պարտաւոր կը զգան Դպրեվանքէն իրենց**

**ստացածը մեր ժողովուրդի գաւակներուն փոխանցելու:** Անոնք հոգեւոր խորհրդածութիւններ կ'ընեն, եկեղեցիներ ու հայկական դպրոցներ կ'այցելեն եւ քարոզներ ու դասախոսութիւններ կու տան:

Վերջին երկու տարեշրջաններու ընթացքին, Լիբանանի Թեմի եկեղեցիներուն մէջ, Մեծ Պահքի ընթացքին, աւարտական չորրորդ ընծայարանի աւագ սարկաւագներ քարոզեցին, իսկ սարկաւագներ եւ կիսա-սարկաւագներ իրենց հոգեւոր խորհրդածութիւնները սփռեցին «Վանայ Զայն» ռատիոկայանէն:

Դպրեվանքը Լիբանանէն անդին տանելու համար, 2011-2012 տարեշրջանի Տեսչութեան նոր նախաձեռնութիւններէն մին հանդիսացաւ Դպրեվանքի երիգաշարի հաստատմբ:

Անցեալ տարեշրջանին այս երիգաշարով մեր ժողովուրդին հրամցուեցան DVD մը եւ CD մը: DVD-ն կը կոչուէր «Դպրեվանք – Կրօնի հուրն եւ ազգի սէրն» եւ կը ներկայացնէր Դպրեվանքին մէջ ապրող, աղօթող, ուսանող եւ կազմաւորուող սաներուն առօրեան: Իսկ CD-ն կը ներառէր Դպրեվանքի սաներուն կողմէ երգուած չորս ժամերգութիւններ եւ «Վանայ Զայն» ռատիոկայանէն սփռուած «Քրիստոնէական աստιածպաշտութիւնը եւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Սուրբ Պատարագը» շարքը, որ նաեւ ունէր իր համապատասխան դրքոյլը, պատրաստուած Դպրեվանքի Տեսուչ՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեանին կողմէ:



2012-2013 տարեշրջանի աւարտին DVD մը եւ CD մը եւս կը տրամադրուին մեր ժողովուրդին: DVD-ն Դպրեվանքի սաներուն կողմէ կատարուած եւ «Վանայ Զայն» ռատիոկայանէն սփռուած շարք մըն է, որ Մեծ Պահքի հասկացողութիւնը կը բացատրէ: Իսկ CD-ն կը փոխանցէ Դպրեվանքի Տեսուչին հետ Փարիզի «Այր Էֆ Էմ» ռատիոկայանի հարցագրոյցը եւ Դպրեվանքի սաներուն «Վանայ Զայն» ռատիոկայանի «Եկեղեցին հայկական» յայտագիրի հարցագրոյցները, որոնք Դպրեվանքի մասին դպրեվանքիներուն ըմբռնողութիւնը կը պատմեն:

Դպրեվանքի երիգաշարի չորս DVD/CD-ները կարեի է ստանալ Անթիլիասի Մայրավանքի գրաստունէն կամ Դպրեվանքի Տեսչութենէն:

Ահա այսպիսով Դպրեվանքը առաւել պիտի բացուի հայաշխարհին եւ մեր ժողովուրդի տուններէն ներս պիտի մտնէ, որպէսզի հայորդիներ աւելի մօտէն շփում ունենան Դպրեվանքին հետ եւ թերեւս փափաքին նաեւ դպրեվանքի դառնալ:

Ի՞նչ լաւ պիտի ըլլար, եթէ Հայ ծնողներ իրենց ամենէն ուշիմ զաւակները Դպրեվանք դրկէին այն հաստատ համոզումով, որ օրին մէկը անոնք պիտի երթան մեր մեծ ընտանիքին՝ Հայ Եկեղեցւոյ ու ազգին ծառայութեան:

Վահե Սրբ. Գիտբարին  
(Դ. Ընծայարան)

## ԶԵՌ-ՆԱՌ-ՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

### ԴՊԻՐՆԵՐՈՒ ԵՒ ԿԻՍԱՍԱՐԿԱՒՎՆԵՐՈՒ ԶԵՌՆԱՌՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵԶ

**Կիրակի 2 Յունիս 2013-ի առաօտուն, յընթացս Սուրբ եւ Անմահ Պատարագին, Մեծի Տաճար Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Ա., Բ. եւ Գ. Ժառանգաւորացի սաները Դպրութեան աստիճան ստացան, իսկ Ա. Հնծայարանի սաները Կիսասարկաւագութեան կարգ ստացան:**

**Ս. Պատարագը մատոյց՝ Հոգչ. Տ. Տաճատ Աբդ. Աշրգեան: Նախքան «Հայր Մեր», Գերշ. Տ. Նորայր Եպս. Աշրգեանը ձեռնադրութեան կարգը կատարեց եւ իր հայրական խօսքը փոխանցեց նոր ձեռնադրուած սաներուն:**



**Կիսասարկաւագ եղան Գէորգ Նալպանտեան եւ Ա. Հնծայարանի վեց սաներ՝ Սարգիս Աճէմեան, Համլիկ Զաքարեան, Մովսէս Խաչատուրեան, Յարութիւն Կիւլոյ-եան, Յովհաննէս Չուալերթանեան եւ Պօղոս Քէսապլեան:**

**Իսկ Դպիր եղան Ա., Բ. եւ Գ. Ժառանգաւորացի սաներէն՝ Տիգրան Զապոնեան, Եսայի Մանուկեան, Ներսէս Գողանեան, Յակոբ Գագանձեան, Ռաֆֆի Գասապեան, Շանթ Գարակէօզեան, Կարապետ Էօրտէքեան, Զօհրապ Մանուկեան, Յարութիւն Զիլարոշեան, Ղազար Քէօշկէրեան եւ Յակոբ Քիւրտեան:**

**Ս. Եւ Անմահ Պատարագէն ետք, նոր ձեռնադրուած կիսասարկաւագները, Տեսչութեան անդամներուն եւ Ձեռնադրիչ Սրբազնին Հետ, բարձրացան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին մօտ ու ստացան Անոր օրէնութիւնը:**

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ  
ՀԱՐՍՏԱՑԱԲ ԵՐԵՔ ՆՈՐ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՎ**

**Կիրակի 23 Յունիս 2013-ին, հոգեւոր խանաղավառութեան միջնորդ կը տիրէր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքէն ներս։ Արդարեւ, Դպրեվանքի ութնամեայ շրջանի աւարտական դասարանէն երեք սարկաւագներ՝ Բրշ. Սեբաստիա Սրկ. Ղարախանեան, Բրշ. Համբարձում Սրկ. Պալքճեան, եւ Բրշ. Անդրանիկ Սրկ. Տալգրյանեան, Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին կուսակրօն Քահանայ օծուելով ու ձեռնադրուելով միացան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութեան։**

**Շաբաթ 22 Յունիսի երեկոյեան, Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ կոչման արարողութիւնը, որու ընթացքին ընծայեալները հաւատքի խոստովանութիւն կատարեցին, Հայ եկեղեցւոյ դաւանանքին, ծէսին, աւանդութեանց ու մեր եկեղեցւոյ սրբազան Հայրապետներու հաստատած կանոններուն հաւատարմութիւն խոստացանապա, Վեհափառ Հայրապետին, Միաբանութեան եւ ժողովուրդին ներկայութեան, հրապարակաւ ծնրադիր ընթերցեցին Կիլիկեան Ս. Աթոռին զինուորագրուելու իրենց նուիրական ուժաւը։**



**Կիրակի օր, Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագին հանդիսապետեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս։ Սուրբ եւ Անմահ Պատարագը եւ օծումն ու ձեռնադրութիւնը կատարեց, Քուէյթի եւ Ծոցի Երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Շահէ Եպս. Փանոսեանը։ Խարտաւիլակն էր, Դպրեվանքի Հսկիչ՝ Հոգէ. Տ. Պօղոս Աբդ. Թինքնեանը։ Սրբալոյս Միւռոնով օծման պահուն, ձեռնադրիչ Սրբազնը դրոշմեց ընծայեալներուն ճակատը, աջ ու ձախ ձեռքերը նոր անուն տալով անոնց որպէս նորոգուած՝ Աստուծոյ ծառայութեան ընծայուած նոր մարդ։ Անուանակոչութեան հոգեթով պահուն, Բրշ. Սեբաստիա Սրկ. Վերանուանւեցաւ՝ Տ. Վահրին Աբեղայ, Բրշ. Համբարձում Սրկ.՝ Տ. Վահէ Աբեղայ եւ Բրշ. Անդրանիկ Սրկ.՝ Տ. Վիոքն Աբեղայ։**



**Ձեռնադրիչ Սրբազնության իր քարոզին սկիզբը չնորհակալութիւն յայտնեց Ամենակալ Աստուծոյ, որ առիթ տուաւ այս ձեռնադրութեան կատարման, եւ ըսաւ. «Աքեղայական այս ձեռնադրութեամբ, Աստուած մեզի իմացնել կու տայ, որ մերօրեայ դժուար պայմաններուն մէջ, տակաւին կայ հաւատք, կայ կոչում եւ կայ այդ կոչումին ընդառաջում»: **Ապա, Շահէ Սրբազնության իր խօսքը նորընծաներուն ուղղելով ըսաւ.** «Սիրելի նորընծայ եղբայրներ, դուք անսալով Աստուծմէ ձեզի եղած կոչին ու հրաւերին, ընտրեցիք հոգեւորականի համբան, քաջ գիտնալով որ Քրիստոս դիւրին կեանք չխոստացաւ իրեն հետևողներուն: Դուք ուխտեցիք ըլլալ հոգեւորական, ըլլալ Աստուծոյ գործակիցներ այս աշխարհէն ներս: Իր քարոզին վերջին բաժինով Սրբազն Հայրը, իր երախտագիտութիւնը յայտնեց Սուրբ Աթոռոյն Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, ու ապա չնորհաւորեց Դպրեվանքի Տեսչութիւնն ու Դպրեվանքի Մեծ Ընտանիքը:**

**Ս. Պատարագէն ետք նորընծաները բարձրացան Վեհարան, ուր Սիարանութեան ու ժողովուրդին ներկայութեան ստացան Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը՝ Ապա, Մայր Տաճարի դասին մէջ ներկայ հաւատացեալները մօտեցան նորընծաներուն՝ աջահամբոյրով ստանալու համար անոնց առաջին օրհնութիւնը:**

## ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԵԶ ԾԱՂԿԻԼ, ՊՏՂԱՎԲԵՐԻԼ ՈՒ ԵՐՋԱՆԿԱՆԱԼ

**Սիրելի հաւատացեալներ,**

**Գոհութիւն եւ փառք կու տամ Աստուծոյ, որ ահաւասիկ, Աբեղայական ձեռնադրութեան խորհրդակից այս առիթով, չօշափելի կերպով մեզի ցոյց կու տայ, թէ մեր ժամանակներուն այ հաւատք ու կոչումի գիտակցութիւն կայ ընկերութեան մէջ ու երիտասարդութեան մօտ կայ կոչումի ընդաւաջում: Ահաւասիկ, Աստուծոյ օգնականութեամբ ու տարուէ-տարի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն Սիարանութիւնը ինքինք կը նորոգէ երիտասարդ անդամներով, որպէսզի, անոնց մասնակցութեամբ, նոր կենսունակութիւն ու եռանդ ստանայ մեր ժողովուրդի կեանքէն ներս Կիլիկեան Ս. Աթոռին միջոցաւ տարուող ծառայական առաքելութիւնը:**

**Այսօր խօսքս առաւելաբար պիտի ուղղեմ մեր երեք նորընծաներուն, որոնք նորաբած դառնալու խոստումով, ստացան կուսակրօն քահանայական կարգ:**

**Միրելի նորընծայ եղբայրներ,**

Ահաւասիկ, ամբողջացնելիք ետք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրե-  
վանքեան ուսումնական ընթացքը եւ անսալով աստուածային կոչին, դուք ընտրեցիք  
հոգեւորականութեան ճամբան եւ ստացաք քահանայական կարգ:

Քահանայական կարգը մենաշնորհ կամ պատիւ չէ աշխարհիկ հասկացողու-  
թեամբ եւ ձեզի արուած իշխանութիւնը ոչինչ կ'արժէ, եթէ ձեր կատարած ուխտը  
չ'ապրիք հաւատարմութեամբ ու նուիրումով:

Վստահաբար գիտէք, որ մեր Տէրը Յիսուս Քրիստոս դիւրին կեանք չխոստացաւ  
իր հետեւորդներուն եւ գիտէք նաեւ, խաչը, զոր ամէն քրիստոնեայ պարտի կրել,  
աւելի ծանր պիտի կշռէ ձեր ուսերուն: Դուք ծառայութեան նուիրեցիք ձեր անձերը  
եւ հետեւաբար, այսուհետեւ միայն ծառայութեան մէջ կրնաք ծաղկիլ, պտղաբերիլ ու  
երջանկանալ:

Այնքան ալ դիւրին եւ հեղասահ չէ ձեր ընտրած ճամբան: Վստահաբար գիտէք, որ  
այդ ճամբուն մէջ, ոմանք կը սայթաքին ու կ'իյնան, ոմանք կը յոգնին ու կը հեռանան,  
խև ոմանք ալ անպայմանօրէն կը հասնին բարոյական կեանքի բարձունքներուն:

**Մատթէոսի Աւետարանի 19-րդ գլուխին մէջ կը կարդանալ.**

«Եւ ահա մէկը մօտեցաւ Յիսուսի եւ հարցուց. Բարի վարդապետ, ի՞նչ բարի գործ  
պէտք է կատարեմ, յախտենական կիանքը ընդունելու համար: Յիսուս պատասխանեց.՝  
ինչո՞ւ բարի մասին կը հարցնես ինձի: Բարին մէկ է, միայն Աստուած բարի է: Եթէ  
կ'ուզես յախտենական կիանքը մտնել՝ պատուիրանները պահէ: Անիկա հարցուց. Ո՞ր  
պատուիրանները: Յիսուս ըսաւ.՝ Հետեւալները.՝ «Մի սպաններ, մի շնար, մի գողնար,  
սուտ վկայութիւն մի տար, պատուէ հայրդ ու մայրդ եւ սիրէ ընկերդ քու անձիդ պէս:  
Երիտասարդը ըսաւ. Այդ բոլորը պատանութենէս ի վեր պահած եմ. դեռ ի՞նչ կը պակսի  
ինձի: Յիսուս պատասխանեց. Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս ծախէ եւ  
աղքատներուն տուր. այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս եւ յետոյ հետեւէ ինձի:  
Երիտասարդը երբ ասիկա լսեց, տրտում-տիսուր գնաց, որովհետեւ շատ հարուստ էր»  
(Մո 19:16-22):

Երեւութապէս, ոչինչ կը պակսէր Յիսուսին մօտեցող հրեայ երիտասարդէն, որ  
պատանեկութեան տարիքէն սկսեալ, սնած էր կրօնական ուսուցումով, եղած էր օրի-  
նապահ եւ իր կեանքը վարած, համաձայն տասնարաննեայ պատուիրաններու ցուց-  
մունքներուն ու թելաղրութիւններուն:

Բայց, այդ երիտասարդը, ինք ալ կը զգար, որ բան մը կը պակսի իր մօտ: Հա-  
կառակ իր օրինապահ կեանքի ընթացքին, կ'անդրադառնար, որ տակաւին չէր կրցած  
Աստուծոյ հետ յարաբերելու ճիշդ եղանակը զարգացնել ու չէր յաջողած հանդիպիլ  
Աստուծոյ եւ ապրիլ յաւերժութեան կնիքը կրող հասաքի կեանք մը:

Որոշապէս, սիրելի նորընծաներ, մեր Տէրող Յիսուսի առօրեայ կեանքէն  
քաղուած այս փոքր դրուազը ես կը յանձնեմ նախ ձեր ուշադրութեան ու նաեւ,  
ներկայ հաւատացնամերուն ուշադրութեան, որպէսզի գէթ այս հոգեպարար մթնո-  
լուրտին մէջ, բարեխղճութեամբ վերանայինք քրիստոնէական մեր ըմբռնումներուն,  
նայնք մեր կեանքին, որպէսզի յայտնաբերենք այն բոլոր երեւոյթները, որոնք մեզ  
անորոշութեան կը մատնեն ու հեռու կը պահեն Աստուծմէ:

Ի՞նչ կը պակսի մեզի եւ ինչո՞վ կը տարբերինք մենք, հրեայ այդ երիտասարդէն,  
որովհետեւ, մեզմէ ալ շատեր լաւապէս սերտած են Աստուածաշունչը, ծանօթ են Աս-  
տուծոյ պատուէրներուն: Որպէս օրինապահ քրիստոնեաներ, մենք ալ, բարոյական  
կատարելութեան հասնելու փափաքով, հեռու կը մնանք մեզէն ու կը ջանանք մեր  
կեանքը վարել եկեղեցուոյ ցուցմունքներով: Հետեւաբար, ի՞նչ պէտք է ընենք, որպէսզի

հասնինք բարոյական կատարելութեան ու ժառանգենք արքայութեան կեանք:

**Այսօրուան** աւետարանական դրուագէն ըխող մտածումներուն հետեւողութեամբ, հետեւեալ մտածումները կը փոխանցեմ ձեր եւ ներկայ հաւատացեալներուն ուշադրութեան.-

ա- Համելու համար բարոյական կատարելութեան, նախ պարտիք հաւատարիմ գտնուիլ Աստուծոյ խօսքին ու պատուէրներուն նկատմամբ, որովհետեւ, աշխարհէն ներս, միայն Աւետարանական ճշմարտութիւնները կրնան լոյս տալ ձեր կեանքին եւ ձեր կարգին, միայն Աւետարանական ճշմարտութիւններուն առաջնորդութեամբ կրնաք լոյս եւ յոյս տալ ձեր շրջապատին ու հոգեւոր շունչով լուսաւորել կեանքին ներս մարդոց ունեցած հասկացողութիւնները:

բ- Շատեր կ'ենթաղեն, որ հոգեւորականութիւնը, աշխարհէն կտրուելու եւ հեռանալու ասպարէզ է. մինչդեռ, Աւետարանը մեզի կը յիշեցնէ, որ աշխարհն է այն վայրը, ուր կրնանք հանդիպիլ Աստուծոյ եւ աշխարհն է այն վայրը, ուր կրնանք մեր անձնական նուիրումով դառնալ Աստուծոյ գործակիցները, գտնել Աստուծոյ հետ յարաբերութեան ճշմարիտ եղանակ եւ յայտնաբերել յաւերժութեան կնիքը կրող արժէքներ: Ահաւասիկ, այսօր, Աստուած իր Հոգիով նորոգեց ձեզ, որպէսզի այս պահէն սկսեալ, ձեր գոյութիւնը տեսնէք նոր լոյսի տակ: Այս կը նշանակէ, որ դուք, այսուհետեւ պարտիք տարբեր ձեւով վարուիլ ձեր անձերուն եւ ձեզի վստահուած պարտականութիւններուն հետ, որովհետեւ, Աստուած ձեզ նորոգեց ոչ թէ ձեր անձերուն համար, այլ իր եկեղեցւոյ համար, աշխարհին ու մարդկութեան համար:

գ- Համելու համար բարոյական կատարելութեան, պարտիք քայիլ Աստուծոյ ճամբարէն եւ առաջնորդուիլ Յիսուսի կեանքին օրինակով, խոնարհարար աստուածային սիրոյ զգացումը փոխանցելով՝ ամրդոց՝ ամբողջականօրէն բաժնելով այն ինչ որ Աստուծոյ կողմէ ձեզի տրուած է որպէս կարողութիւն, չնորհք եւ տաղանդ: Մառայել կը նշանակէ Աստուծոյ սէրը արտայայտել աշխարհէն ներս, որ միայն կրնայ իրականանալ ամբողջական ինքնընծայումով: Դպրեվանքի յարկին տակ, դուք ապրեցաք կրօնաբերոյր մթնոլորտին մէջ եւ վստահարար, Դպրեվանքէն ձեր ստացածը, ձեզի հետ պիտի մնայ որպէս նկարագիր, այլ սակայն, երբ քայիք Աստուծոյ ճամբարէն, պիտի անդրադառնաք, որ ձեր սորվածը, շատ աւելի նուազ է քան աշխարհէն ներս ձեր յայտնաբերելիքները:

դ- Այսօր, Հայ եկեղեցին ձեր դիմաց կը բանայ դէպի ազգ եւ հայութիւն առաջնորդող նոր դուռ մը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միարանութեան յարիլ կ'ենթաղրէ յանձնառութիւն եւ նուիրեալ մասնակցութիւն մեր Աթոռին կողմէ մեր ժողովուրդի կեանքէն ներս ծաւալած բազմարովանդակ ծառայական առաքելութեան: Եթէ կ'ուզէք հասնիլ բարոյական կատարելութեան, եղէք ազգի կեանքէն ներս եւ մեր եկեղեցւոյ սկզբունքներով հաւատարմօրէն ծառայեցէք մեր ժողովուրդին, որպէսզի Աստուծոյ սիրոյն ճառագայթը առաւել պայծառութեամբ շողայ մեր հաւաքական կեանքէն ներս:

Այս առիթով, որդիական երախտիքս կը յայտնեմ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ. Վեհափառ Հայրապետին, Արեղայական այս ձեռնադրութիւնը կատարելու եզակի պատիւը ինծի չնորհերուն համար: Նաեւ, սրտազինս կը չնորհաւորեմ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Տեսչութիւնն ու Դպրեվանքէան մեծ ընտանիքը, մաղթելով, որ ի խնդիր մեր ազգի ու եկեղեցւոյ սպասաւորութեան, Դպրեվանքը կը դառնայ առաւել եւս պտղաբեր ու արդիւնաւոր:

ՇԱՀԱՀ ԵՊՍ. ՓԱՌԱՌԵՍՆ

## ԻԱ. ԴԱՐԸ ԵՒ ԴՊՐԵՎԱՆՔԻ ԱՌԱՋԵԼՈՒԹԻՒՆԸ

**ԻԱ.** դարու արհեստագիտութեան աննախրնթաց զարգացումը, մեծ փոփոխութիւններ յառաջացուց մարդկային կեանքին մէջ: Այս փոփոխութիւններու ծիրին մէջ դրականին կողքին, եղան ժիտական ազդեցութիւններ, որոնք գերազանցեցին դրականը: Այլ իսօսքով, մարդոց ջերմ յարաբերութիւնները պաղեցան, հետաքրքրութիւնները «աժանցան», ծուլութիւնը թանձրացան մարդոց կեանքին մէջ եւ տակաւին ուրիշ բազմաթիւ երեւոյթներ...: Այս բոլորը կը պատկանին ամբողջ մարդկութեան կեանքի ցաւալի իրականութեան:

Պատկերացնենք սփիւռքահայութեան իրավիճակը այս իրականութեան առջեւ, երբ ան ունի առաւել պատասխանատուութիւններ եւ մարտահրաւէրներ: Սփիւռքահայը մարդկային արժէքներուն զուգահեռ, ունի Հայ ինքնութեան կերպարը պահպանելու ամէնօրեայ յանձնառութիւնը: Եւ կարելի է նկատել, թէ սփիւռքահային համար որքան կը դժուարանայ Հայ մնալու եւ զոյատեւելու հրամայականը, բազմապիսի հոսանքներու առջեւ:

Բազմացող մարտահրաւէրներու առջեւ կը գտնուի մանաւանդ Հայ ժողովուրդին թիւ մէկ պատասխանատուն՝ Հայ եկեղեցին, մասնաւրաբար՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որ ստանձնած է Հայուն եւ անոր պատկանող ինքնութեան ըոլոր արժէքներու պատասխանատուութիւնը: Հայ ժողովուրդի մեծ զանգուածը քաջատեղեակ է եւ միաժամանակ՝ վկայ, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը հոգեւոր սնունդ մատակարարելու կողքին, է ու կը մնայ նաեւ պաշտպանն ու քաջալերողը Հայ մշակոյթին, Հայ լեզուին, եւ առհասարակ հոգեւոր ու ազգային արժէքներուն ու հարստութիւններուն: Այս իսկ պատճառով, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար մեծ եւ անփոխարինելի տեղ ունի Դպրեվանքը, որովհետեւ Դպրեվանքին դուրս կու գան ազգին ծառայողներ եւ ղեկավարներ: Առանց Դպրեվանքի, Կաթողիկոսութիւնը եւ միաժամանակ Սփիւռքի մէջ գտնուող Հայ ժողովուրդի մեծ հատածը, պիտի գտնուին լուրջ դժուարութեան առջեւ: Դպրեվանքին պատասխանատուութիւնն է դպրեվանեցին տալ ծառայական այնպիսի ոգի, որ ան իր ազգին եւ եկեղեցւոյ հանդէպ պատասխանատուութեան զիտակցութիւնը ունենայ. այնպիսի ծառայողներ դուրս գան Դպրեվանքին, որոնք պատրաստ ըլլան վերեւ յիշուած ներկայ դարու մարտահրաւէրները դիմագրաւելու: Իսկ դիմագրաւելու առաջին հրամայականն է՝ ծառայական անսակարկ ոգին ու ամբողջական նուիրուածութիւնը: Ինչպէս Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Վեհափառ Հայրապետը միշտ կը յիշեցնէ, թէ ծառայութեան ոգին աւելի կարեւոր ու անհրաժեշտ է, քան զիտութիւնը: Ծառայական այդ ոգին փոխանցելու երեւոյթին ամէնէն յատկանշական կէտը այն է, որ աւելի քան ութսուն տարիներ, զանազան տեսակի եւ ժամանակի սերունդներ կը պատրաստուին նոյն ոգիով: Փոխանցումի այս պատասխանատուութեան մէջ կը կայանայ Դպրեվանքի առաքելութեան յաջողութիւնը:

Մարտահրաւէրներով լեցուն եւ տակաւին բազմացող դժուարութիւններու իրավիճակին դիմաց, Դպրեվանքը, Աստուծոյ նախախնամութեամբ, տակաւին կը շարունակէ պատրաստել այնպիսի տղաք, որոնք կամքն ունին իրենց կեանքով պայքարելու՝

ի խնդիր Հայ եկեղեցին եւ Հայ ազգին: Փաստօրէն, Կիրակի 23 Յունիս 2013-ին, երեք երիտասարդներ ծունկի գալով Աստուծոյ Ս. Խորանին առջեւ, եւ հաւատացեալ ժողովուրդի վկայութեամբ, ուխտեցին իրենց կեանքը նուիրել եկեղեցին եւ ազգին: Իրենց ուխտով քաջալերելով ուրիշներ եւս, պատգամեցին, թէ կեանքի նուիրական մէկ իրականութիւնն է եկեղեցւոյ եւ ազգին ծառայութիւնը:

Որքան խրախուսիչ պահ էր, երբ տեսանք մատղաշ երիտասարդներու զինուուրագրումը Հայ եկեղեցւոյ բանակին, ուր հանգիստ կեանքի խոստումներ չկան, այլ՝ տագնապ, պատասխանատուութիւն, ծառայութիւն եւ անձնուրացութիւն: Իսկ զինուոր-եկեղեցականին կատարելագործութիւնը կ'ըլլայ այն ժամանակ, երբ «կը պարտինի՞ բայել նոյնինքն Քրիստոսի օրինակով, խոնարհութեամբ եւ հեզութեամբ», ինչպէս ընդգծեց ձեռնաղրիչ Մրբազան՝ Շահէ Եպս. Փանոսեանը: Ամէնչն ոգեւորիչ պահը եղաւ, երբ Վեհափառ Հայրապետը նորընծաներուն ճակատները համբուրեց իր Հայրական օրհնութեամբ՝ զանոնք ողջունելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան ընտանիքին մէջ: Այդ Հայրական ջերմ համբուրեց քաջալերանք եւ ոյժ էր նորաօծներուն համար, որպէսզի սէր ու հոգի դնեն իրենց կեանքի բոլոր զործերուն մէջ՝ ի խնդիր Հայ եկեղեցին եւ ազգին:

Հայ ժողովուրդը կարիքը ունի մարդոյժի, որոնք անշահախնդիր պատրաստակամութեամբ ծառայեն բոլոր հայրական մարզերուն մէջ: Հայ ժողովուրդի կեանքին մէջ, հայկական բազմաթիւ արժէքներ եւ իրականութիւններ նահանջ կ'արձանագրեն, որոնց յառաջդիմումին համար միակ նախապայմանը՝ անձնուէր մարդոյժն է: Այս մտահոգութեամբ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի անմիջական ու Հայրական խնամատարութեամբ ու Հսկողութեամբ, Դպրեկանքը իր առաքելութիւնը կը շարունակէ: Նորին Մրբութեան տիպարը, քաջալերանքն ու խրատները յառաջ կը մղեն դպրեվանեցիները, որպէսզի անոնք նետուին ծառայելու առաքելութեան նուիրական գործին մէջ, որուն մէկ արդիւնքին ականատեսը եղանք Կիրակի 23 Յունիս 2013-ի Աբեղայական ձեռնաղրութեամ: Յոյսով ենք բոլորս, որ Աստուծոյ օրհնութեամբ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի անմար կանթեղով եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայական ոգիով, կեանքի բոլոր մարտահրաւէրները պիտի յաղթահարուին՝ ի խնդիր Հայ ժողովուրդի պայծառ ապագային:

ՊԱՐՈՅՐ Ա.Բ.Ղ. ՇԵՐԱԶԵՍՆ



## ՄՇԱԿՈՒԹԱՅՑԻՆ

### «ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ՄՐՑԱՆԱԿԱԲԱԾԽՈՒԹԻՒՆ

**Իրերայաջորդ հինգ շաբաթներու վրայ երկարած սուր մրցակցութենէ ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին Հայրական քաջալերանքով եւ օրհնութեամբ չորս տարի առաջ սկսած «Խաչիկ Պապիկեան» Հիմնադրամի աշակերտական ամենամեայ մրցումներուն չորրորդ հանգրուանը վերջ գտաւ եղափակիչ հանդիսութեամբ, Կրոակի 16 Յունի 2013-ի կէսօրին, Կաթողիկոսարանի Վեհարանին մէջ: Յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագին, Վեհարանը ամբողջութեամբ զրաւուած էր բախտաւոր աշակերտ-աշակերտուհիներու, ուսուցիչ-ուսուցչուհիներու, տնօրէններու, ծնողներու եւ ազգայիններու կողմէ, որոնք եկած էին ներկայ գտնուելու մրցանակարաշխութեան հանդիսութեան եւ աջահամբոյցով չնորհաւորելու Արամ Ա. Կաթողիկոսը՝ իր գահակալութեան 18-ամեակին առիթով:**

**Հանդիսութեան բացումը կատարելով՝ կազմակերպիչ մարմինի անունով Կաթողիկոսարանի Կրթական եւ Հայագիտական հարցերու գրասենեակի վարիչ՝ Սարգիս Կիրակոսեան ուրախութեամբ անդրադարձաւ, որ ինչպէս նախորդ երեք տարիներուն՝ այս տարի ալ իրանանահայ միջնակարգ եւ երկրորդական գրեթէ բոլոր վարժարանները բերին իրենց ամբողջական մասնակցութիւնը: 2012-2013 կրթական տարեշրջանի Հայ Լեզուի եւ Գրականութեան, Հայոց Պատմութեան, Հայ Մշակոյթի եւ կրօնագիտական նիւթերու եւ Ասմոնքի երեք մրցումներուն, այս տարի մասնակցեցան 4 միջնակարգ եւ 12 միջնակարգ ու երկրորդական բաժիններ ունեցող դպրոցներ՝ 115 աշակերտ-աշակերտուհիներով:**

**«Մրցակցութիւնը եղաւ սուր: Ընդհանուր միջինները՝ շատ մօտ իրարու, իսկ մրցակցութիւնը՝ աւելի քան գոհացուցիչ: Փաստօրէն, տասնվեց մասնակից դպրոցներէն այս տարի տասը դպրոցներ մրցանակներու տիրացան», յայտարարելէ ետք, Սարգիս Կիրակոսեան ուրախութեամբ նշեց, թէ այս իրողութիւնը պերճախօս ապացոյցն է մրցումին անփոխարինելի պահանջին, անոր յառաջացուցած համընդհանուր խանդակառութեան եւ Կաթողիկոսարանի վարկին ու հեղինակութեան, ինչպէս նաև՝ մրցանքին բժանդիր պատրաստութեան եւ դատակազմերուն որդեգրած անաշառ արժեւորումին:**

**«Ահա թէ ինչու յաղթեցին բոլորը: Յաղթեց լիբանանահայ վարժարանը, յաղթեց ողջ լիբանանահայութիւնը, եւ առաջին հերթին՝ իր գաւակը Հայ ոգիի եւ միտքի Մեսրոպաշունչ դարբնոցին վստահած Հայ գիտակից ծնողքը» շեշտելէ ետք, Ս. Կիրակոսեան եղափակից, որ մրցանակակիր 18 աշակերտները կը կազմեն Արամ Ս. Վեհափառի ընտրութեան եւ օծման 18-րդ տարեդարձը շնորհաւորող գեղեցիկ ծաղկեփունջը՝ «քոլորիս անունով Զեզի մադրելու բազուղութիւն, մշտամնայ պայծառութիւն ու երկարամեայ բազմաբեղուն գահակալութիւն»:**

**Անուհետեւ գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր, երբ միջնա-**



**Կարգ ու երկրորդական բաժիններու ասմունքի մրցանակակիրներ՝ Անժելինա Սարգսիսեան և Նարեկ Լաքրափեան յաջորդաբար արտասանեցին Հենրիկ Թումանեանի «Հերոսուի մայր» և Պարոյր Սեւակի «Մարդ կ կայ, մարդ կ» բանաստեղծութիւնները:**

**Ապա, Արամ Ա. Վեհափառ Հայրապետի ձեռամբ կատարուեցաւ մրցանակաբաշխութիւնը (մրցանակակիրներուն անուանացանկը տեսնել քիչ անդին): Հասած էր եղրափակիչ սրտայոյզ պահը՝ լսելու Վեհափառին Հայրական խօսքը:**

«Վերջին տարիներուն յանախ խօսեցանք Հայ լեզուի անբառունակ ներկային եւ տարուետարի աւելի շեշտուող որակական նահանջին մասին: Տագեապեցաւ նաեւ արեւմտահյերէնի պաշտպանութեան ու զարգացման շահակիր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որ խօսէն գործի անցնելով՝ կազմակերպեց յատուկ խորհրդաժողովներ, յառաջացուց Սրբամտահյերէնի Պաշտպանութեան Յանձնամտովը եւ սկսաւ առնել գործնական Քայլեր: Այս բոլորը անշուշտ գնահատելի եւ անյետաճգելի Քայլեր են: Պէտք է կատարուին եւ կը կատարուին: Բայց մեր խոր համոզումն ու սպասումն է, որ Հայ ընտանիքը ըլլայ առաջին նախաձեռնողը այս համազգային պայքարին, որովհետեւ արեւմտահյերէնին եւ մեր ազգային արժեքներուն, աւանդներուն ու սրբութիւններուն առաջին պաշտպանն ու ուսուցիչը Հայ ընտանիքն է» Հաստատումը կատարելէ ետք, **Արամ Ա. Վեհափառ յայտնեց իր խոր ուրախութիւնն ու գոհունակութիւնը եւ առ այդ շեշտեց «Դուք էք հապատութիւն ու վստահութիւն ներշնչող այն պատասխանը, որ երիտասարդ սերունդը տէրն է իր ազգային գիտակցութեան եւ յատկապէս արեւմտահյերէնի պաշտպանութեան գոյապայքարին»:**

**Ապա, Հաւաքական գոյապայքարի դաշտերն ու գէնքերը մասնաւորելով՝ Վեհափառը հանգամանօրէն կանգ առաւ Հայ գիրքի եւ ընթերցանութեան անփոխարինելի կարեւորութեան վրայ եւ առ այդ շեշտեց. «Կ'ապրինք դժուարին օրեր, բազմատեսակ արդիական մարտահրաւերներ կը սպանեան ո՛չ միայն մեր մեծասահմչին, այլև՝ մեր ազգային ինքնութեան: Հետեւարար, գիրքը կ' եւ կը մնայ մեր մեծագոյն գէնքը, մեր ինքնութեան դարբնոցն ու հենցը: Ահա թէ ինչու որքան կարեւոր է Հայ գիրքը, որովհետեւ առանց Հայ գիրքի ամենօրեայ ընթերցանութեան՝ աղքատ պիտի մնայ մեր կեանքը, առանց Հայ գիրքի էջերէն յորդող կենարար աւիշիմ՝ խոցելի պիտի դառնայ մեր ազգային ինքնութեան կազմաւորումը եւ մութ ու անորոշ՝ մեր ներկան ու ապագան»:**

**Եղրափակելով՝ Արամ Ա. Կաթողիկոս կրկին անդամ բարձր գնահատեց լիբանա-նահայ վարժարաններու կրթական պատասխանատուներուն, տնօրէններուն եւ ուսուցիչ-ուսուցչուհիներուն անխոնջ նույրումն ու ճիզերը եւ մրցանակակիր աշակերտները նկատեց իրեն ընծայուած լաւագոյն նուէրը՝ իր գահակալութեան 18-ամեակին առիթով:**

**Ստորեւ կու տանք մրցանակակիր աշակերտ-աշակերտուհիներուն անուանացան-կը.-**

### **«ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ՄՐՑԱՆՔ ՄԻԶՆԱԿԱՐԳ**

**ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ Ա.ՐԺԱՆԻՆԵՐ**

**ԵՐՐՈՐԴ.- Սարին Մանուկեան (Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ), ԵՐԿՐՈՐԴ.- Նարինէ Մարգարեան (Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Սրբուհի Ագնէս Վարժարան), Ա.ՌԱ.ԶԻՆ.- Սեւանա Պոյաճեան (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան):**

**ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ**

**ԵՐՐՈՐԴ.- Նարեկ Շարոյեան (Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ), ԵՐԿՐՈՐԴ.- Վարդ Զէյթլեան (Ազգ. Յառաջ Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան), Ա.ՌԱ.ԶԻՆ.- Միրնա Գասամանեան (Ազգ. Յառաջ Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան):**

### **«ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ՄՐՑԱՆՔ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ**

**ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ Ա.ՐԺԱՆԻՆԵՐ**

**Ա.ՌԱ.ԶԻՆ.- Դանիէլ Աւետիքեան (Հայ Աւետարանական Շամլեան-Թաթիկեան Երկրորդական Վարժարան), Շուշան Քէշշիշեան (Հայ Աւետարանական Գոլէճ):**

**ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ**

**ԵՐՐՈՐԴ.- Նաթալի Մարկոսեան (Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ), ԵՐԿՐՈՐԴ.- Լուսին Գափլանեան (Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ), Ա.ՌԱ.ԶԻՆ.- Հրայր Սրկ. Տաղրլեան (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեկանք):**

### **«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ»-ՐԻ ՄՐՑԱՆՔ ՄԻԶՆԱԿԱՐԳ**

**ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ Ա.ՐԺԱՆԻՆԵՐ**

**ԵՐՐՈՐԴ.- Ռիթա Քերթէնեան (Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ), ԵՐԿՐՈՐԴ.- Ռիթա Մելքիքեան (Հայ Աւետարանական Կեղրոնական Բարձրագոյն Վարժարան), Ա.ՌԱ.ԶԻՆ.- Նարօտ Սերուժեան (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան):**

### ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԵՐԲՈՐԴ.- Ժանէթ Օհանեան (Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ), ԵՐԿՐՈՐԴ.- Արենի Խաչատուրեան (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան), ԱՌԱՋԻՆ.- Մելիսա Գուճանեան (Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ):

### «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ ԵՒ ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ»-Ի ՄՐՑԱՆՔ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

#### ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ Ա.ՐԺԱՆԻՆԵՐ

ԵՐԲՈՐԴ.- Մերուժ Հանտեան (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան), ԵՐԿՐՈՐԴ.- Թամար Բախտիկեան (Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ), ԱՌԱՋԻՆ.- Գարին Գէորգեան (Ազգ. Յառաջ Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան):

### ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԵՐԲՈՐԴ.- Պետրոս Կիս. Մըկ. Մանձիկեան (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք), ԵՐԿՐՈՐԴ.- Բալիկ Պալապանեան (Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ), ԱՌԱՋԻՆ.- Մեղրի Երէցեան (Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ):

### «ԱՍՄՈՒԻՆՔ»-Ի ՄՐՑԱՆՔ ՄԻԶՆԱԿԱՐԳ

#### ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ Ա.ՐԺԱՆԻՆԵՐ

ԱՌԱՋԻՆ.- Ռազմիկ Տէրունեան (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան):

### ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԵՐԲՈՐԴ.- Հերա Տէտէյեան (Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան), ԵՐԿՐՈՐԴ.- Շահէն Արագօղլեան (Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ), ԱՌԱՋԻՆ.- Անժելինա Սարգիսեան (Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ):

### «ԱՍՄՈՒԻՆՔ»-Ի ՄՐՑԱՆՔ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

#### ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ Ա.ՐԺԱՆԻՆԵՐ

ԱՌԱՋԻՆ.- Մեղրի Պետրոսեան (Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Գոլէճ):

### ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԵՐԲՈՐԴ.- Արին Պուրսալեան (Ազգ. Յառաջ Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարան), ԵՐԿՐՈՐԴ.- Սարին Էքմէքմեան (Հայ Աւետարանական Կեղրոնական Բարձրագոյն Վարժարան), ԱՌԱՋԻՆ.- Նարեկ Լաքլաքեան (Հ.Բ.Հ.Մ.-ի Դարուհի-Յովակիմեան Երկրորդական Վարժարան):

## ԹԵՇՎԱԿԱՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄՈՏԵՆ ԿԸ ՀԵՏԵՒԻ  
ԱՊՈՒ ՏԱՊԻԻ ՆԱՐԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԹԵԱՆ**



**Անցեալ տարի Վեհափառ Հայրապետը  
Ապու Տապիի մէջ Հիմնարկէքը կատարեց  
«Ս. Նահատակաց» եկեղեցւոյ: Շինարարա-  
կան յանձնախումբը անմիջապէս լծուեցաւ  
աշխատանքի, իրեն որպէս նեցուկ ունենա-  
լով Ապու Տապիի, Տուպայի ու Շարժայի  
մեր ժողովուրդի գաւակները: Շինարարա-  
կան յանձնախումբին մաս կը կազմեն՝  
Հրայր Սողոմոնեան, Վարուժան Ներկիզ-  
եան, Գրիգոր Մահսէրէճեան եւ Արա Խա-  
նոյեան: Իսկ եկեղեցւոյ ճարտարապետն է՝  
Սուրէն Գոչաքեան:**

**Վեհափառ Հայրապետը եկեղեցւոյ  
ճարտարապետը ընդունելով ուրախու-  
թեամբ հաստատեց, որ շինարարական  
աշխատանքները դրական ընթացքի մէջ են  
եւ պիտի աւարտին յառաջիկայ Յունուա-  
րին: Եկեղեցին Ապու Տապիի մէկ կարեւոր  
շրջանին մէջ կը գտնուի: Ան պիտի ունենայ  
նաեւ քահանայի ու առաջնորդի յատուկ  
բաժիններ եւ ժողովրդային հաւաքներու յարմար սրահ: Շրջանի Կաթողիկոսական  
Փոխանորդ՝ Հոգէ. Տ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեան շինարարական յանձնախումբին հետ  
միասին մօտէն կը հետեւի շինարարական աշխատանքներուն:**

## ԼՈՒՐԵՐ ԿԱՌԱՋԱԿԱՌԱՄՆԵՐ

**“ԳԱՐԱԿԵՕՁԵԱՆ” ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՈՐԵՆԸ ԱՅՑԵԼԵՅ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

Ծարաթ 1 Յունիս 2013-ի առաջատարության, Վեհափառ Հայրապետը ընդունեց “Հառուրտ Գարակէօձեան” հաստատութեան Ընդհ. Տնօրէնը՝ Դոկտ. Ռուբեն Պանտագեանը, ընկերակցութեամբ նոյն հաստատութեան Լիրանանի Տնօրէնին՝ Անդրք Օհանեանին: Յայտնեամք, որ “Գարակէօձեան” հաստատութեան գործունեութեան ժիրէն ներս կը գործեն երեք կեղրոններ՝ Լիրանանի, Սուրբույզ և Հայաստանի մէջ: Դոկտ. Պանտագեան, որուն գրասենեակը կը գտնուի Նիւ Եղրքի մէջ, ընդհանուր պատասխանատուն է յիշեալ կառոյցներու աշխատանքներուն:

Վեհափառ Հայրապետին հետ հանդիպումը աղիթ եղաւ Գարակէօձեանի պատասխանատուններուն ընդհանուր գեկոյց տպու հաստատութեան յատկապէս Լիրանանի ու Սուրբույզ կեղրոններու աշխատանքներուն մասին: Դոկտ. Պանտագեան Վեհափառ Հայրապետին յայտնեց, որ ներկայ տարուան ընթացքին հաստատութիւնը արդէն իսկ 75000 տոլար տրամադրած է Սուրբույզ կարիքաւոր ընտանիքներուն Գարակէօձեանի ճամբով, իսկ 50000 տոլար Լիրանանի կեղրոննին՝ նոյն նպատակին համար:

Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց Գարակէօձեանի կատարած աշխատանքներուն ու շեշտեց սուրբահայերու օգնութեան յատուկ կարեւորութիւն տպու հրամայականը, Լիրանանի թէ Սուրբույզ մէջ: Այս աղիթով, Վեհափառ Հայրապետը նաեւ թելադրեց,

որ Լիրանանի մէջ հայկական դպրոցներ յաճախող ու հոգերանական օգնութեան կարիք ունեցող շուրջ 100 աշակերտներու, ինչպէս նաեւ դանդաղ սորվող շուրջ 25 աշակերտներու “Գարակէօձեան” հաստատութիւնը աւելի կազմակերպ ու մասնագիտական մօտեցումով շարունակէ օգտակար դառնալ՝ խորհրդակցաբար դպրոցներու տնօրէններուն հետ:

### ՈՈՒՄԱՆԻՈՅ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ

**ՆԱԽԱՐԱՐ Վ. ՌՍԿԱՆԵԱՆ**

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Երկուշաբթի 3 Յունիս 2013-ի կէսօրէ եւոք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, շրջապատուած Լիրանանահայ պետական նախարարներով ու երեսփոխաններով, ընդունեց այցելութիւնը Ռումիանիոյ Տնտեսութեան ու Առեսուրի Նախարար Վարուժան Ուկանեանին: Նախարար Ուկանեան շուրջ հինգ տարիներ առաջ դարձեալ այցելած էր Անդրիլիաս և այդ աղիթով որպէս գնահատանք իր մտաւորական ու պետական գործունեութեան, Վեհափառ Հայրապետը Մեծի Տաճա Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ասպետի կարգի շքանշանով պատուած էր զիմք:



Շուրջ երկու ժամ տևող հանդիպումը առիթ եղաւ լայօրէն քննարկելու ռուսահայութեան, Լիբանանի այժմու կացութեան, Լիբանան-Ռուսանիա տղանտեսական գործակցութեան, լիբանահայութեան, Հայ դատին ու Հայաստան-Սփիտք գործակցութեան հետ աղերս ունեցող շարք մը հարցեր: Վեհափառ Հայրապետը իր մօտեցումները պարզելով յատկապէս Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի նշման գծով, շեշտեց սովորական հանդիսութիւններէ դուրս գալու ու համահայկական մաշտապով մեր ժողովուրդի արդար իրաւունքներու պահանջըքը քաղաքական ու իրաւական երեսներով միջազգային հանրութեան ներկայացներու անհրաժեշտութիւնը: Լիբանանահայ երեսփոխաններու ու նախարարներ իրենց կարգին անդրադարձան Լիբանանի դիմագրաւած այժմու դժուարութիւններուն ու խօսեցան Ռումանիոյ ու Լիբանանի միջեւ տնտեսական յարաբերութիւնները զարգացնելու կարելիութիւններուն մասին:

Նախարար Ուկանեան իր շերմուրախութիւնը յայտնեց, որ դարձեալ կը գտնուի Անթիլիասի Մայրավանքին մէջ եւ կ'իմանայ Վեհափառ Հայրապետին տեսակէտները Հայ ժողովուրդը յուզող հարցերուն շուրջ: Իր կարգին, նախարարը եւս ընդգծեց Ցեղասպանութեան 100-ամեակը առաւելագոյն չափով օգտագործելու կարեւորութիւնը: ԱՅ նաեւ ներկաները տեղեակ պահեց Լիբանանի Հանրապետութեան Նախագահին հետ ունեցած հանդիպման մասին, ինչպէս նաեւ տեղեկութիւններ փոխանցեց ընդհանրապէս Ռումանիոյ ու մասնաւորաբար ռումանահայ գաղութին մասին:

Հանդիպման աւարտին, նախարար Ուկանեան այցելեց Նահատակաց Յուշարձանը եւ իր յարգանքը մատուցեց մեր մէկուկէս միլիոն նահատակներու անթառամ յիշատակին:

### ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ  
ՄԱՍՆԱԿՑԵՑԱԽ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ  
ՀԱՅՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ  
ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Երուսաղէմի Հայոց նորընտիր Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանին գահակալութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի Յունիս 4-ին:

Յանուա Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, գահակալութեան հանդիսութեան ներկայ գտնուեցան՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան Կաթողիկոսական Փոխանորդ Կիպրոսի Հայոց թեմին եւ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Ս-Սարգիսին Առաջնորդ թեհրանի Հայոց թեմին:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը ողջոյնի ու Օրհնութեան յատուկ Գիրուղութիւնը նորընտիր Պատրիարք Արքացնին:

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԱՐԱԲ

ԻՐԱԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՆԹԻԼԻԱՍ

Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, Մայրավանքի իր գրասենեակին մէջ ընդունեց Միջազգային Հայ Արարական Խորհուրդը ներկայացնող պատուիրակութիւն մը, առաջնորդութեամբ Եղիպատոսի Փաստարաններու Սենտիքայի Նախագահ եւ Արար Փաստարաններու Միութեան Ընդհանուր Քարտուղար՝ Սամէհ Աշուրի, Յորդանազի Միութեան Փոխ Նախագահ Սամիհ Խըրէյսի, ինչպէս նաեւ Սարոքէն, Լիբանանէն եւ Սուլիայէն իրաւաբաններ, որոնք մաս կը կազմեն յիշեալ Խորհուրդին: Հանդիպումին ներկայ էր Երեսփոխան՝ Յակոբ Բագրատունի:

Պատուիրակութեան անդամները Վեհափառ Հայրապետին ներկայացուցին Միջազգային Հայ Արար Իրաւարանական Խորհուրդի կազմութեան նպատակը, որ կը բխի Հայոց Ցեղասպանութեան հարցը իրաւական հիմունքներով փաստարկելու եւ զայն միջազգային աստեաններու ներկայացնելու անհրաժեշտութեանէ:

Վեհափառ Հայրապետը ողջունելով նախաձեռնութիւնը կարեւորութեամբ շեշտեց.-

ա) Հայոց Ցեղասպանութիւնը կրօնական խնդիր չէ, այլ քաղաքական խնդիր է:

բ) Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը համամարդկային խընդիր է եւ մարդու իրաւանց հարց:

գ) Հայոց Ցեղասպանութեան խընդիրը արդարութեան եւ իրաւունքի խնդիր է, հետեւարար, բոլոր աննք որոնք կը հաւատան արդարութեան, իրաւունքի եւ մարդկային իրաւունքներու, պարտին հետամուս ըլլայ պահանջելու Հանդէա գործուած անարդարութեան վերացումը անկախ կրօնական, համայնքային, դաւանական թէ ազգային պատկանելիութիւններէ:

Վեհափառ Հայրապետը նաեւ շեշտեց, որ անհրաժեշտ է իպամական աշխարհին եւ յատկապէս արարական աշխարհին մէջ ծանօթացնել հայութեան իրաւունքներուն հարցը եւ Օսմանեան թուրքերու կողմէ գործուած Ցեղասպանութեան արհամարդը, մանաւանդ որ արարական աշխարհը ինք ընդունած է Ցեղասպանութեան ենթարկուած հայութեան թեկորները ու ծանօթ է անոնց պատմութեամ, իսկ այսօր ականատես է թրքական լայնատարած միջամտութեան արարական աշխարհին մէջ:

Մէկ ժամ տեւած հանդիպումի աւարտին, պատուիրակութեան անդամները յուշանուէր մը յանձնեցին Վեհափառ Հօր, ապա այցելեցին Ապրիեան նահատակաց մատուոր:

**ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՀՈԳԵԽՈՐ ԼՍԱՐԱՆԻ  
ՏԱՐԵԾՇԱՆԻ ԱՒԱՐՏԻՆ Ն.Ս.Օ.Տ.Տ.**  
**ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ  
ՀԱՍՏԱՏԵՑ՝ «ՀԱՅ ՄՈՐ ԴԵՐԸ  
ՎՃՈԱԿԱՆ Է ՄԱՐԴԱԿԵՐՏՈՒՄԻ ՈՒ  
ՀԱՅԱԿԵՐՏՈՒՄԻ ՄԷՋ»**

Երեքարթի 18 Յունիս 2013-ի առաւոտուն, իր խօսքը Անթիլիասի Մայրավանքին մէջ հաւաքուած շուրջ երկու հարիւր տիկիններուն ուղղելով, որոնք անցնող ամիսներու ընթացքին Կաթողիկոսարանի Թրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին նախաձեռնութեամբ ամէն Երեքարթի հետեւեցան սերտողութեան՝ կրօնական ու բարոյական հարցերու առնչուած, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Հայ մօր կարեւոր դերակատարութիւնը շեշտելով մեր Հայ կեանքէն ներս, ըստ. «Խօսելով Հայ դպրոցին մասին, յաճախ եւ արդարօրէն զայն կը բնութագրենք որպէս մարդակերտումի ու հայակերտումի դարբնոց: Այս խոր գիտակցութենքն ու յանձնառութենքն մղուած, մեր եկեղեցին ու մեր կառոյցները միշտ աջակից դարձած են Հայ դպրոցին: Սակայն յաճախ կը մոռնանք, որ մարդակերտումի ու հայակերտումի հիմքը կը դրուի Հայ ընտանիքն ներս, Հայ մօր առանցքային դերակատարութեամբ: Յաճախ կը մոռնանք, որ դպրոցէն աւելի Հայ ընտանիքի յարկին տակ է որ Հայ աշակերտը իր կեանքի օրերը կ'ապրի: Յաճախ կը մոռնանք, որ Հայ մայրը իր զաւակին մնայուն դաստիարակն է, ինչ տարիք կամ հանգամնք ալ ունենայ ան: Արդ, որքան ճակատագրական է դերը Հայ մօր»:

Իր հայրապետական պատգամին մէջ Վեհափառ Հայրապետը անդադաւ երկու հիմնական հարցերու: Հայ Մօր Տարուան առիթով ան նկարգրեց Հայ մօր իրայատուկ կոչումը եւ մեր եկեղեցւոյ ու ազգին սպասումը Հայ մայրէն: Վեհափառը յիշեցուց ներ-



Կամերուն,թէ «Մեր կեանքին հետ  
աղերս ունեցող դրական կամ բացա-  
սական երեւյթները ուղղակի կամ  
անուղղակիկօրէն առնչուած են Հայ  
մօր, որովհետեւ Հայ ընտանիքին  
կերտման, կազմաւորման ու կազմա-  
կերպման գլխաւոր դերակատարը  
մայրն է: Հայ մայրը սովորական  
իմաստով կին չէ, դաստիարակ չէ,  
այլ հիմքն է այն շնչքին, ընտանիքին,  
որուն վրայ կը կառուցուին թէ՝ Եկե-  
ղեցին, թէ՝ ազգը եւ թէ հայրենիքը:  
Երբ այդ հիմքը տոկուն չէ, կը նշա-  
նակէ որ անոր վրայ բարձրացած  
որեւէ մէկ կառոյց ուշ կամ կանուխ  
պիտի տատանի»:

Վեհափառ Հայրապետը մեր կեաց-  
քին առնչուած դրական երեւյթներուն  
առջնորդ նաեւ մատնանշեց մի քանի  
բացասական երեւյթներ: ԱՅ ըստ-  
«Հարց կու տանք, ինչո՞ւ խառն ա-  
մուսնութիւնները սկսած են աճիլ մեր  
կեանքեն ներս: Ինչո՞ւ օտար դպրոց  
յաճախող աշակերտներուն թիւը սկը-  
սած է բարձրանալ: Այս “ինչո՞ւ”-ներուն  
պատասխանը ուրիշ տեղ մի փնտռէք,  
այլ Հայ ընտանիքեն ներս: Արդարեւ,  
Հայ մայրն է որ իր փոքրիկին ծեռքեն  
բռնած օտար դպրոց կ'առաջնորդէ:  
Հայ մայրն է որ կոչուած է այնպիսի  
կրթութիւն տալու իր զաւակին, որ իր  
կեանքի բոլոր հանգրուաններուն ու  
բոլոր որոշումներուն մէջ չհեռանայ  
իր արմատներէն, իր պատկանելիու-  
թենէն»:

Իր խօսքի երկրորդ բաժինին մէջ,  
Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ

Աստուած-մարդ յարաբերութեան  
«Աստուածաշունչը Աստուած-մարդ  
յարաբերութեան պատմութիւնն է:  
Աստուած ի նքն է որ մօտեցաւ մար-  
դուն: Աստուած ինքն է որ ընտրեց  
մեղաւոր մարդը. Աստուած ինքն է որ  
իր Միաձին Որդին որկեց մարդուն  
փրկութեան համար: Ինչպէս Աւետա-  
րանը կը վկայէ, Աստուած այնքան  
սիրեց մարդը, որ նոյնիսկ իր արիւնը  
թափեց մարդուն համար: Զրիստոն-  
եայ ըլլալ կը նշանակէ Աստուածոյ հետ  
ըլլալ, որովհետեւ Աստուած մեզի հետ  
եղաւ: Եկեղեցին, որպէս Զրիստոսի  
խորհրդական մարմինը Աստուածոյ  
ներկայութիւնն է մեր կեանքին մէջ:  
Արդ, Եկեղեցի կ'երթանք Աստուածոյ  
հետ ըլլալու համար: Աստուած միշտ  
պատրաստ է մեզի հետ ըլլալու.  
արդեօք մենք պատրաստ ենք Աս-  
տուածոյ հետ ըլլալու»: Շարունակելով  
իր խօսքը, Վեհափառը ըսաւ. «Դժբախ-  
տաբար մեր կեանքը այնքան խճող-  
ուած է, որ կարծեք ժամանակ չունինք  
Աստուածոյ հետ ըլլալու, մեր ժամադ-  
րութիւնը յարգելու: Մեր առօրեայ  
կեանքին մէջ երբ որեւէ հանդիպում  
ունինք, ուշադիր կ'ըլլանք մեր հա-  
գուստ-կապուստին, ուշադիր նաև՝  
մեր ժամադրութիւնը յարգելու մէջ:  
Դժբախտաբար, այսօր Եկեղեցի կու  
գան մեր զաւակները, այր թէ կին,  
այնպիսի հագուածքով, որ երբեք  
ընդունելի չէ: Եկեղեցին սպահրական  
վայր չէ, Աստուածոյ տունն է. ա'յս  
գիտակցութեամբ պէտք է մօտենանք  
Եկեղեցու»:

Իր պատգամի աւարտին, Վեհափառ Հայրապետը նաեւ առիթ տուաւ տիկին-Աերուն, որ հարցումներ ուղղեա իրեա: Հանդիպումին սկիզբը եւ վերջը խօսք առին Հայ Կանանց Հոգեւոր Լսարածի պատասխանատումներ՝ ՀոգԶ. Տովկաննես Արդ. Սաղութեանն ու ՀոգԶ. Տ. Նշան Արդ. Լախոյեանը, որոնք իրեանց շնորհակալութիւնը լայտնեցին Վեհա-

փառ Հայրապետին եւ խոստացան նոյն նուիրումով՝ շարունակել տիկի Շնորհութեան յատուկ հոգեւոր սերտողութիւնը Կաթողիկոսարանէն ներ:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՆ  
ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ  
ՀՈԳԵԽՈՐ Ա.ՌԱԶՆՈՐԴ՝ ԱՅԱԹՈԼԼԱՀ  
ԱԼԻ ԽԱՄԵՆԷԽԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**

Երեքշաբթի 25 Յունիս 2013-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետութեան Հոգեւոր Առաջնորդ՝ Այաթոլլահ Ալի Խամենէխի խորհրդական՝ Այաթոլլահ Ղուլան Ալի Նայիմ Ապատիհ, ընկերակցութեամբ Լիբանանի մօտ հրամի ՚Նեսպան՝ Տոքը. Ղատանֆարի եւ դեսպանատան քաղաքական ու մշակութային կցորդներու:

Այաթոլլահ Ապատիհ Վեհափառ Հայրապետին ներկայացուց Այաթոլլահ Խամենէխի բարեմաղթութիւնները եւ



յատուկ գնահատանքով անդրադարձաւ հրամի հսկամական Հանրապետութեան եւ Մեծի Տաճա Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յարաբերութեան, ինչպէս նաև իրանահայութեան մասին: Խօսելով հրամի Հայ համայնքին մասին Այաթոլլահ Ապատիհ յիշեց, Այաթոլլահ Խումեյմի եւ Այաթոլլահ Խամենէխի որական վկայութիւնները Հայութեան մասին անընալ. «Մենք ամբողջական ազատութիւն տուած ենք Հայ համայնքին իրենց կրօնական ու ազգային աւանդութիւնները պահելու»:

Վեհափառ Հայրապետու իր կարգին ողջունելով բարձրաստիճան հիւրը, անդրադարձաւ Մեծի Տաճա Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ հրամի հսկամական Հանրապետութեան միջև փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած յարաբերութեան ու երկխօսութեան: Վեհափառը իր գնահատանքը յայտնեց մեր ժողովուրդին նկատմամբ հրամի Պետութեան ցուցաբերած յատուկ նախանձախնդրութեան գծով:

Անկան քամ մէկ ժամ տեսող հանդիպումը առիթ հանդիսացաւ նաև անդրադարձալու Լիբանանի, Սուլիոյ եւ ընդհանրապէս շրջանի կացութեան մասին: Այս ժիրէն ներս, Նորին Սրբութիւնը ողջունեց թէ՝ Ղարաբաղի եւ թէ ալ Հայոց Յեղասպանութեան գծով Հայ ժողովուրդին նկատմամբ հրամի պետութեան ցուցաբերած զօրակցութիւնը:

**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ  
Ս. ԱԹՈՌՈՅՑՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԵ**

ԿԻՐԱԿԻ 2 ՅՈՒՆԻՍ 2013: Բ. ԶԿՆԻ ՀՈԳ.: ՏՕՆ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ:

**Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարազեց՝  
Հոգչ Տ. Տաճատ Արդ. Աշրգեան, Դպիրներու եւ Կիսասարիկաւագներու ձեռնադրու-  
թիւնը կատարեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Նորայր Եպս. Աշրգեան:**

ԿԻՐԱԿԻ 9 ՅՈՒՆԻՍ 2013: Գ. ԶԿՆԻ ՀՈԳ.:

**Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարազեց եւ  
քարոզեց՝ Հոգչ Տ. Նշան Արդ. Լախոյեան:**

ԿԻՐԱԿԻ 16 ՅՈՒՆԻՍ 2013: Դ. ԶԿՆԻ ՀՈԳ.:

**Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարազեց եւ  
քարոզեց Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան:**

ԿԻՐԱԿԻ 23 ՅՈՒՆԻՍ 2013: Ե. ԶԿՆԻ ՀՈԳ.: ՏՕՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ Ա.ՍՏՈՒՄ-  
ԾԱԾՆԻ ՏՓՈՅ ԳՏՄԱՆՆ:

**Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարազեց,  
Քահանայական Օծումը եւ Աբեղայական ձեռնադրութիւնը կատարեց եւ յաւուր  
պատշաճի քարոզեց Քուէլթի եւ Ծոցի Երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ՝  
Գերշ. Տ. Շահէ Եպս. Փանոսեան:**

ԿԻՐԱԿԻ 30 ՅՈՒՆԻՍ 2013: Զ. ԶԿՆԻ ՀՈԳ.:

**Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարազեց եւ  
քարոզեց՝ Հոգչ Տ. Պարոյր Արդ. Շէրնէզեան:**